ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ

ԳԻՐՔ 1

ՃԱՆԱՉԵԼ ԿԵՆԴԱՆԻ

ԱՍՏԾՈՒՆ

ՓՈԼ ԴԵՅՎԻԴ ՎՈՇԵՐ

ՃԱՆԱՉԵԼ ԿԵՆԴԱՆԻ

ԱՍՏԾՈՒՆ

ՓՈԼ ԴԵՅՎԻԴ ՎՈՇԵՐ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ

ՓՈԼ ԴԵՅՎԻԴ ՎՈՇԵՐ

Ճանաչել կենդանի Աստծուն
Հասկանալ մարդու իրական վիճակը
Բացահայտել փառավոր Ավետարանը
Վարժվել ծոմապահության մեջ
Ուսումնասիրել Սուրբ գիրքը

Հասանելի է mediagratiae.org կայքում

«Փոլ Վոշերի ուսումնական ձեռնարկը՝ Աստծո մասին վարդապետությունը ներկայացնող լավագույն ներածական աշխատանքն է, որը հայտնի է ինձ»:

— **Յան Հ. Մյուրի, «Ճշմարտության դրոշ»** հիմնադրամի համահիմնադիր և գլխավոր խմբագիր

«Մեր եկեղեցին բազում անգամներ օգտագործել է Փոլի աշխատությունը, որը ներկայացնում է վարդապետությունն Աստծո մասին՝ կիրակնօրյա դպրոցների, փոքր խմբերի և աշակերտական հավաքույթների ժամանակ: Ես հաճախ եմ խորհուրդ տալիս ընթերցել այս աշխատությունը նրանց, ովքեր փնտրում են աստվածաշնչյան, գործնական և սրտից գրված ձեռնարկ՝ Աստծո մասին անհրաժեշտ գիտելիքներ ստանալու համար»:

— **Ջոն Սնայդեր, հովիվ, «Նայի՛ր քո Աստծուն. փոխել մեր պատկերացումն Աստծո մասին՝ համաձայն Աստվածաշնչի»** գրքի հեղինակ

«Դուք կիմանաք, թե ինչ է սովորեցնում Աստվածաշունչը մեր անզուգական Աստծո էության և հատկանիշների մասին: Սա հրաշալի աշխատություն է, և ես աղոթում եմ, որ այն օգնի շատերին է՛լ ավելի ճանաչել Աստծուն: Կարդացե՛ք այն և օրհնված եղեք: Կարդացե՛ք այն և երկրպագե՛ք ձեր Աստծուն»:

— **Դենիել Լ. Էյքին, «Հարավ-Արևելյան Մկրտական աստվածաբանական սեմինարիայի»** տնօրեն

«Փոլ Վոշերը տրամադրել է ողջամիտ և հիմնավոր աստվածաբանական ուսուցում նրանց համար, ովքեր փափագում են ավելին: Յուրաքանչյուրը, ով ձգտում է ամրապնդել իր վարդապետական գիտելիքներն Աստծո մասին, չափազանց արժեքավոր կհամարի այս ուսումնական ձեռնարկը: Այն նույնպես կարելի է օգտագործել՝ նորահավատների կյանքում հաստատ հիմք կառուցելու կամ անհավատներին Բարի լուրը հայտնելու համար»:

— **Վոդի Բաքամ Կրտսեր, «Աֆրիկյան քրիստոնեական համալսարանին»** կից Սեմինարիայի դեկան

ՃԱՆԱՉԵԼ ԿԵՆԴԱՆԻ **ԱՍՏԾՈՒՆ**

Հեղինակային իրավունքները՝ 2016թ., Փոլ Դեյվիդ Վոշեր

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող օգտագործվել կամ կրկնօրինակվել ցանկացած կերպով՝ առանց գրավոր թույլտվության, բացառությամբ կարճ մեջբերումների՝ քննադատական հոդվածների և ակնարկների մեջ: Հղե՛ք ձեր խնդրանքները հրատարակչին հետևյալ հասցեով.

Անգլերեն տարբերակը տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, 2016թ.
Առաջին հրատարակություն:
Թարգմանված է անգլերենից, 2017թ.:

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան
«Արարատ» թարգմանությունից են (1869թ.):

Հատուկ նշումների դեպքում, «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչից» (NASB),
«Ամերիկյան ստանդարտ թարգմանությունից» (ESV) և «Նոր անգլերեն թարգմանությունից» (NET):
ISBN 978-0-9886681-3-3

Խմբագիրներ՝ Մեգան Նեշ, Էլզելին Հայթ և Ֆորեսթ Հայթ,
Էջադրումը և ձևավորումը՝ Ջոն Գրին և Մեթյու Ռոբինսոն

ՃԱՆԱՉԵԼ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈՒՆ

Բովանդակություն

	Ներածություն	7
	Ուսումնական ծրագիր՝ ըստ ցանկության	9
1.	Ճանաչել Աստծուն	11
2.	Աճել Աստծուն ճանաչելու մեջ	17
3.	Աստված Մեկ է և Երեք է	23
4.	Որդու և Հոգու աստվածությունը	29
5.	Աստված Հոգի է	34
6.	Աստված Անձ է	39
7.	Աստված հաղորդակցվում է	45
8.	Աստված մեծ է	51
9.	Աստված կատարյալ է	54
10.	Աստված հավիտենական է	61
11.	Աստված ինքնագո և ինքնաբավ է	66
12.	Աստված անփոփոխ է	69
13.	Աստված ամենակարող է	74
14.	Աստված ամենագո է	80
15.	Աստված ամենագետ է	83
16.	Աստված սուրբ է	89
17.	Մեր արձագանքն Աստծո սրբությանը	97
18.	Աստված արդար է	105
19.	Մեր արձագանքն Աստծո արդարությանը	110
20.	Աստված ճշմարիտ է	116
21.	Աստված ճշմարտացի է	124
22.	Մեր արձագանքն Աստծո ճշմարտացի լինելուն	128

ՃԱՆԱՉԵԼ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈՒՆ

23.	Աստված հավատարիմ է	134
24.	Մեր արձագանքն Աստծո հավատարմությանը	138
25.	Աստծո հավատարմության դրսևորումները	143
26.	Աստված սեր է	150
27.	Աստծո սիրո դրսևորումները	155
28.	Աստծո ողորմությունը	162
29.	Աստծո շնորհքը	167
30.	Աստծո համբերությունը	173
31.	Աստված Արարիչ է	177
32.	Աստված արարչագործության Պահապանը և Տիրակալն է	184
33.	Արարչագործության նպատակը	191
34.	Մեր արձագանքն Արարիչ Աստծուն	195
35.	Աստված Տեր է և գերագույն իշխանություն ունի ամեն ինչի վրա	199
36.	Աստծո գերիշխանության տիտղոսները	203
37.	Աստծո անսահման գերիշխանությունը	208
38.	Մեր արձագանքն Աստծո գերիշխանությանը	213
39.	Աստված Օրենսդիր է	221
40.	Աստված Դատավոր է	227
41.	Դատաստանի հավաստիությունը	232
42.	Աստված Փրկիչ է	238
43.	Հոր աշխատանքը փրկության մեջ	245
44.	Որդու աշխատանքը փրկության մեջ (Մաս մեկ)	251
45.	Որդու աշխատանքը փրկության մեջ (Մաս երկու)	258
46.	Որդու աշխատանքը փրկության մեջ (Մաս երեք)	265
47.	Հոգու աշխատանքը փրկության մեջ	269
48.	Աստծո անունները	275

ՃԱՆԱՉԵԼ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈՒՆ

Ներածություն

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԱՅՍ ՁԵՌՆԱՐԿԻՑ

Այս դասընթացի ամենամեծ նպատակն է, որ ուսանողը *հանդիպում ունենա Աստծո հետ Նրա խոսքի միջոցով:* Այս ուսումնական ձեռնարկը հիմնված է այն համոզմունքի վրա, որ Աստվածաշունչը Աստծո ոգեշնչված և անսխալական խոսքն է, և այնպես է կազմված, որ ուսանողը բառացիորեն *անկարող է* ընթերցել այն՝ *առանց Աստվածաշնչի:* Նպատակն է՝ օգնել ընթերցողին հնազանդվել Պողոս առաքյալի հորդորին՝ Բ Տիմոթեոս 2.15-ում.

«Ձանք արա, որ քո անձն ընտիր կանգնեցնես Աստծո առջև՝ իբրև մի մշակ՝ առանց ամոթի, որ ճշմարտության խոսքն ուղիղ մատակարարես»:

Ամեն գլուխ Աստծո էության և գործերի որոշակի կողմի մասին է: Այն ավարտելու համար ուսանողը պետք է պատասխանի հարցերի և կատարի առաջադրանքներ, որոնք տրված են՝ համաձայն օգտագործված աստվածաշնչյան հատվածների: Ուսանողին առաջարկվում է մտորել ամեն մի աստվածաշնչյան հատվածի շուրջ և գրի առնել մտքերը: Այս դասընթացի օգտավետությունն ուղիղ համեմատական է ուսանողի ջանքերին: Եթե ուսանողը պատասխանի հարցերին առանց մտածելու, գրեթե արտագրելով համապատասխան աստվածաշնչյան հատվածը և չձգտելով հասկանալ դրա իմաստը, այս գիրքը քիչ օգտավետ կլինի:

«Ճանաչել կենդանի Աստծուն» գիրքը գլխավորապես աստվածաշնչյան ուսումնական ձեռնարկ է և չի պարունակում գունազարդ պատկերներ, հետաքրքրաշարժ պատմություններ և նույնիսկ աստվածաբանական մեկնություններ: Հեղինակը ցանկացել է ստեղծել այնպիսի աշխատություն, որը պարզապես մատնացույց է անում Աստվածաշունչը և թույլ է տալիս, որ Աստծո Խոսքը խոսի իր փոխարեն:

Այս ուսումնական ձեռնարկը կարող է օգտագործվել անհատական ուսումնասիրության համար, փոքր խմբերում և կիրակնօրյա դպրոցների դասարաններում: Շատ կարևոր է, որ ուսանողն ինքնուրույն ավարտի ամեն գլուխը՝ մինչև-փոքր խմբի կամ կիրակնօրյա դպրոցի դասարանի հավաքույթը, որտեղ նրանք խմբի կամ աշակերտական թիմի առաջնորդի հետ քննարկելու են այդ գլուխը և պատասխանելու են դրանում եղող հարցերին:

ՀՈՐԴՈՐ ՈՒՍԱՆՈՂԻՆ

Մենք հորդորում ենք ամեն ուսանողի զբաղվել աստվածաշնչյան վարդապետության ուսումնասիրությամբ և բացահայտել դրա վեհ դիրքը քրիստոնեական կյանքում: Ճշմարիտ քրիստոնյայի համար շատ դժվար կլինի գործել և նույնիսկ՝ գոյատևել, եթե նրա զգացմունքները հակասեն նրա մտքին կամ, այլ կերպ ասած, եթե նրա պատկերացումն Աստծուն ընծայվելու մասին՝ հակասի Աստծո մասին նրա վարդապետական գիտելիքին: Համաձայն Աստվածաշնչի՝ ո՛չ մեր զգացմունքները, ո՛չ էլ փորձառությունը բավարար հիմք չեն քրիստոնեական կյանքի համար: Միայն Աստվածաշնչի ճշմարտությունները, որոնք փոխանցվում են վարդապետության ուսուցման միջոցով և հասկացվում են մտքով, կարող են լինել այդ հաստատ հիմքը, որի վրա պետք է կառուցենք մեր համոզմունքներն ու վարքը, և որոշենք մեր զգացմունքների և փորձառությունների վավերական լինելը: Միտքը սրտի թշնամին չէ, իսկ վարդապետությունը չի խոչընդոտում նվիրմանը: Երկուսն էլ անփոխարինելի են և պետք է անբաժան լինեն: Սուրբ գիրքը պատվիրում է մեզ՝ սիրել մեր Տեր Աստծուն ամբողջ սրտով, ամբողջ անձով և ամբողջ մտքով (Մատթեոս 22.37), և երկրպագել Աստծուն և՛ հոգով, և՛ ճշմարտությամբ (Հովհաննես 4.24):

Վարդապետական ուսուցումը և՛ զարգացնում է մեր միտքը, և՛ ամրապնդում է մեր նվիրումը: Այն ջերմեռանդ որոնում է, Աստծո հանդեպ ձգտում, որը պետք է առաջնորդի ուսանողին ավելի մեծ անձնական վերափոխման, հնազանդության և սրտանց երկրպագության: Գոյություն ունի մի մեծ սխալմունք, որից ուսանողը պետք է զգուշանա. նա չպետք է պարզապես փնտրի գիտելիք՝ Աստծո Անձը որոնելու փոխարեն: Թե՛ չգիտակցված նվիրումը, թե՛ սոսկ տեսական գիտելիք ստանա լուծգտումը անօգուտ են, որովհետև երկու դեպքում էլ մարդը կորցնում է Աստծուն:

ՆՈՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Այս գրքի անգլերեն հրատարակության մեջ օգտագործվել է Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչը (NASB): Աստվածաշնչի այս թարգմանությունն ընտրվել է հետևյալ պատճառներով. (1) թարգմանիչների անվարան համոզվածությունը, որ Աստվածաշունչը՝ Աստծո անսխալական խոսքն է, և (2) ճշգրիտ թարգմանությունը բնագրային լեզուներից: Ներկա հայերեն հրատարակության մեջ Աստվածաշնչի այս թարգմանությունը (NASB) օգտագործվում է՝ երբ առկա է մեջբերված հատվածների իմաստային երկվություն հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանության (1869թ.) հետ: Այն ավելանում է գրքի տեքստին և աստվածաշնչյան մեջբերումներին՝ փակագծերի մեջ, որպես այլընտրական տարբերակ:

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ

Ինչպե՞ս կարող է որևէ մարդ կամ հրեշտակ պատշաճ գիրք գրել անձամբ Աստծո մասին: Ավելի հեշտ կլիներ հաշվել բոլոր աստղերը երկնքում: Հասկանալով սա՝ ես խոստովանում եմ, որ ամեն սուրբ, բարի և օգտակար բան այս գրքի էջերում միմիայն Աստծո շնորհքի արդյունքն է: Հասկանալով, թե որքան կարևոր թեմայի եմ անդրադառնում՝ ես գրել եմ այս ուսումնական ձեռնարկն ահով ու դողով՝ հիշելով Հակոբոս 3.1-ում գրվածը.

«Ձեզնից շատերը չէ, որ պետք է ուսուցիչներ դառնան, իմ եղբայրնե՛ր, որովհետև դուք գիտեք, որ մենք (ովքեր սովորեցնում են) դատվելու ենք ավելի մեծ խստությամբ» (NASB):

Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել իմ կնոջը՝ Չարոյին, ով «զորանում է Տիրոջ մեջ», և իմ չորս երեխաներին, ովքեր կարող են մեկ հայացքով շեղել ինձ աշխատանքից: Ես նույնպես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել «Հարթ Քրայ» ծառայության աշխատակից Ֆորեսթ Հայթին, ով ջանասիրաբար և մանրակրկիտորեն խմբագրել է ինձնից ստացած մի քանի ձեռագիր: Նրա ներդրումն այս աշխատության համակարգման և ընդհանուր ընթեռնելիության մեջ շատ կարևոր է, և ես բարձր եմ գնահատում այն: Ես նույնպես շնորհակալ եմ «Հարթ Քրայ»-ի բոլոր աշխատակիցներին, ովքեր մշտապես խրախուսում էին ինձ այս գրքի հրատարակման ամբողջ ընթացքում, և հովիվ Չարլզ Լեյթերին՝ Միսսուրի նահանգի Կիրկսվիլ քաղաքից, ում առաջարկներն այս աշխատության վերաբերյալ անգնահատելի էին:

ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔ

«Ճանաչել կենդանի Աստծուն» գիրքը կազմվել է Փոլ Վոշերի նախորդ աշխատություններից մեկի՝ «Միակ ճշմարիտ Աստված» գրքի հիման վրա: Այն զգալիորեն ընդլայնվել է, վերանայվել և փոփոխությունների է ենթարկվել: Այս երկու գրքերի նմանության շնորհիվ, այս ձեռնարկի նյութը մասամբ ծանոթ կլինի նրանց, ովքեր արդեն ուսումնասիրել են «Միակ ճշմարիտ Աստված» ձեռնարկը: Որոշ գլուխներ հարաբերականորեն անփոփոխ են մնացել (օրինակ՝ գլուխներ 10-14-ը և 48-ը), իսկ մի քանիսը բոլորովին նոր են (օրինակ՝ գլուխներ 1, 2-ը, 4-ը և 42-47-ը): Ընդհանուր առմամբ, ամբողջ գրքում կան թե՛ անփոփոխ, թե՛ բոլորովին նոր հատվածներ: Անձամբ ես համոզված եմ, որ *«Ճանաչել կենդանի Աստծուն»* գիրքն օգտավետ կլինի բոլորի համար, անկախ այն բանից՝ նրանք ծանո՞թ են *«Միակ ճշմարիտ Աստված»* գրքին, թե՞ ոչ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ՝ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Աստծո հատկանիշները», Ա.Վ.Փինք
«Սուրբի գիտությունը», Ա.Վ.Թոզեր
«Ճանաչել Աստծուն», Ջ.Ի.Փեքեր
«Աստծո գոյությունը և հատկանիշները», Սթիվեն Չարնոք
«Աստվածաբանությունը՝ բացատրված և սահմանված», Թիմոթի Դուայթ
«Նայի՛ր քո Աստծուն. փոխել մեր պատկերացումն Աստծո մասին՝ համաձայն Աստվածաշնչի», աշխատանքային ձեռնարկ և «DVD» սկավառակների հավաքածու, Ջոն Սնայդեր
«Աստծո սրբությունը», աշխատանքային ձեռնարկ և «DVD» սկավառակների հավաքածու, Ռ.Չ.Սփրոուլ
«Աստծո հատկանիշները», դասընթաց, Ռ.Չ.Սփրոուլ
«Վարդապետություն Աստծո մասին», Ջոն Ֆրեյմ (առաջադեմ ուսանողների համար)

Ուսումնական ծրագիր՝ ըստ ցանկության

Շաբաթ մեկ	**Ճանաչել Աստծուն. վարդապետություն Երրորդության մասին**
Օր մեկ	Գլուխ 1
Օր երկու	Գլուխ 2
Օր երեք	Գլուխ 3, բաժին 1
Օր չորս	Գլուխ 3, բաժիններ 2-4
Օր հինգ	Գլուխ 4
Շաբաթ երկու	**Աստծո էությունը**
Օր մեկ	Գլուխ 5
Օր երկու	Գլուխ 6, Բաժիններ 1, 2
Օր երեք	Գլուխ 6, Բաժին 3
Օր չորս	Գլուխ 7, Գլխավոր կետեր 1-5
Օր հինգ	Գլուխ 7, Գլխավոր կետեր 6-10
Շաբաթ երեք	**Աստծո գերազանցությունները, Մաս 1**
Օր մեկ	Գլուխ 8
Օր երկու	Գլուխ 9
Օր երեք	Գլուխ 10
Օր չորս	Գլուխ 11
Օր հինգ	Գլուխ 12
Շաբաթ չորս	**Աստծո գերազանցությունները, Մաս 2**
Օր մեկ	Գլուխ 13, Գլխավոր կետեր 1-3
Օր երկու	Գլուխ 13, Գլխավոր կետեր 4-6
Օր երեք	Գլուխ 14
Օր չորս	Գլուխ 15, Գլխավոր կետեր 1-5
Օր հինգ	Գլուխ 15, Գլխավոր կետեր 6-8
Շաբաթ հինգ	**Աստծո սրբությունը և արդարությունը**
Օր մեկ	Գլուխ 16
Օր երկու	Գլուխ 17, Բաժին 1
Օր երեք	Գլուխ 17, Բաժին 2
Օր չորս	Գլուխ 18
Օր հինգ	Գլուխ 19
Շաբաթ վեց	**Միակ ճշմարիտ Աստված**
Օր մեկ	Գլուխ 20, Գլխավոր կետեր 1-3
Օր երկու	Գլուխ 20, Գլխավոր կետեր 4-6
Օր երեք	Գլուխ 21
Օր չորս	Գլուխ 22, Բաժիններ 1, 2
Օր հինգ	Գլուխ 22, Բաժիններ 3, 4
Շաբաթ յոթ	**Աստծո հավատարմությունը**
Օր մեկ	Գլուխ 23
Օր երկու	Գլուխ 24, Բաժին 12

Օր երեք	Գլուխ 24, Բաժիններ 2, 3
Օր չորս	Գլուխ 25, Բաժիններ 1, 2
Օր հինգ	Գլուխ 25, Բաժիններ 3, 4
Շաբաթ ութ	**Աստծո սերը**
Օր մեկ	Գլուխ 26
Օր երկու	Գլուխ 27
Օր երեք	Գլուխ 28
Օր չորս	Գլուխ 29
Օր հինգ	Գլուխ 30
Շաբաթ ինը	**Արարիչ Աստված**
Օր մեկ	Գլուխ 31, Բաժին 1
Օր երկու	Գլուխ 31, Բաժին 2
Օր երեք	Գլուխ 32
Օր չորս	Գլուխ 33
Օր հինգ	Գլուխ 34
Շաբաթ տասը	**Գերիշխան Աստված**
Օր մեկ	Գլուխ 35
Օր երկու	Գլուխ 36
Օր երեք	Գլուխ 37
Օր չորս	Գլուխ 38, Բաժին 1
Օր հինգ	Գլուխ 38, Բաժին 2
Շաբաթ տասնմեկ	**Աստված՝ Օրենսդիր և Դատավոր**
Օր մեկ	Գլուխ 39, Բաժիններ 1, 2
Օր երկու	Գլուխ 39, Բաժիններ 3, 4
Օր երեք	Գլուխ 40
Օր չորս	Գլուխ 41, Բաժին 1
Օր հինգ	Գլուխ 41, Բաժին 2
Շաբաթ տասներկու	**Փրկիչ Աստված, Մաս 1**
Օր մեկ	Գլուխ 42, Բաժին 1
Օր երկու	Գլուխ 42, Բաժին 2
Օր երեք	Գլուխ 43
Օր չորս	Գլուխ 44, Բաժին 1
Օր հինգ	Գլուխ 44, Բաժին 2
Շաբաթ տասներեք	**Փրկիչ Աստված, Մաս 2**
Օր մեկ	Գլուխ 45, Բաժիններ 1, 2
Օր երկու	Գլուխ 45, Բաժիններ 3, 4
Օր երեք	Գլուխ 46
Օր չորս	Գլուխ 47
Օր հինգ	Գլուխ 48

Գլուխ 1. Ճանաչել Աստծուն

ՄԵԾԱԳՈՒՅՆԸ՝ ԲՈԼՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻՑ

Հավատացյալն ինչի՞ց պետք է սկսի ուսումնասիրել Քրիստոնեությունը: Պատասխանը պարզ է, թեև ոչ միշտ՝ ակնհայտ: Քրիստոնեությունը նախ և առաջ վերաբերում է Աստծո Անձին և գործերին: Այդ իսկ պատճառով, մենք պետք է սկսենք մեր ուսումնասիրությունը հենց Նրա՛ հետ:

1. Համաձայն Երեմիա 9.23, 24-ի՝ ո՞րն է ամենակարևոր և ամենաէական գիտելիքը, որը մարդը կարող է ունենալ: Բացատրե՛ք ձեր պատասխանը:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո հատկանիշները՝ Նրա հիմնարար, մշտական և անփոփոխ առանձնահատկություններն են, այսինքն՝ այն, թե իրականում ո՛վ է Նա: Ակնհայտ է, որ գիտելիքն Աստծո մասին՝ ամենակարևոր բանն է, որը կարող ենք ունենալ: Որպես քրիստոնյաներ՝ մենք պետք է նվիրենք մեր կյանքերն Աստծուն ճանաչելուն և Նրան հայտնի դարձնելուն:

2. Աստծուն ճանաչելն սկսվում է Նրա հատկանիշներից, բայց չի ավարտվում դրանցով: Այն նույնպես ընդգրկում է Նրա կամքը ճանաչելը: Ի՞նչ խրատ է տալիս Եփեսացիների 5.17-ը այս ճշմարտության մասին:

ա. *Նրա համար մի եղեք Ա_____, այլ՝ Ի_____, թե ինչ է Տիրոջ Կ_____:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո կամքը վերաբերում է Նրա նպատակներին, ծրագրերին և ցանկություններին: Մենք կանչված ենք փնտրելու Աստծո կամքը և ապրելու՝ ըստ Նրա կամքի: Սուրբ գրքում «անմիտ» *(կամ՝ «հիմար»)* բառն օգտագործվում է բարոյական իմաստով: Այն չի վերաբերում ոչ խելացի մարդուն, այլ՝ այնպիսի անձնավորության, ով չի գիտակցում Աստծուն ճանաչելու և Նրա կամքով ապրելու կարևորությունը:

3. Համաձայն Հովհաննես 17.3-ում գրված Հիսուսի խոսքերի՝ ի՞նչ է հավիտենական կյանքը: Ո՞րն է Աստծո հետ նոր փոխհարաբերությունների նպատակը հավատացյալի համար:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հավիտենական կյանքի իմաստը սոսկ տևողությունը չէ (կյանք՝ առանց ավարտի), այլ՝ կյանքի որակը. կյանքի բարձրագույն նպատակն է՝ ***ճանաչել Աստծուն*** և մտերիմ շփում ունենալ Նրա հետ:

ԱՍՏԾՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աստծուն ճանաչելու առավելություններն այնքա՞ն բազմազան են, որ անկարելի է մանրամասնորեն դիտարկել դրանք այս աշխատության մեջ: Այնուամենայնիվ, մենք կնշենք մի քանի հիմնական կետեր, որոնց մասին Աստվածաշունչը պարզորեն խոսում է: Ստորև կգտնեք Աստծո մասին աստվածաշնչյան գիտելիք ունենալու չորս հիմնական առավելությունները:

1. ՀԱՆՃԱՐ *(ԿԱՄ՝ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ)*

ա. *Առակաց 9.10. «Ի_____ սկիզբը Տիրոջ երկյուղն է, և Ամենասուրբին ճանաչելը՝ Հ_____»:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Ճշգրիտ պատկերացումն Աստծո մասին անհրաժեշտ է՝ մնացած ամեն ինչը պատշաճ կերպով հասկանալու համար: Մենք կարող ենք ճշմարտապես ընկալել իրականությունը միայն Աստծուն ճշմարտապես ճանաչելու լույսի ներքո, հատկապես այն հարցերում, թե ով ենք մենք, ինչպիսի կարիքներ ունենք և որն է մեր գոյության նպատակը:

2. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՀԱՎԱՏՔ

ա. *Սաղմոս 9.10. «Եվ Քեզ Կ_____(կամ՝ կվստահեն) Քո անունը Ճ_____, որովհետև Դու չես ձգում (կամ՝ թողնում) Քեզ խնդրողներին, Տե՛ր»:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշնչում Աստծո **անունը** ցույց է տալիս Նրա Անձը: Որքան ավելի մենք գիտենք Նրա մասին (Նրա կատարյալ բնավորության և անսահման զորության), այնքան ավելի կկարողանանք հավատալ և վստահել Նրան մեր կյանքի ամեն բնագավառում:

3. ՀՈԳԵՎՈՐ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

ա. *Դանիել 11.32. «Իրենց Աստծուն ճանաչողների ժողովուրդը պիտի Զ_____ և Գ_____»:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոնեական կյանքով ապրելու համար անհրաժեշտ է զորություն, որն ավելին է մեր ուժերից: Որքան ավելի գիտենք Աստծո մասին, այնքան ավելի հոգևորապես ուժեղ կլինենք, և այնքան ավելի կկամենանք և կկարողանանք ապրել ու գործել Նրա համար՝ անկախ դժվարություններից: Աստվածաշնչում գրված է, որ իր նեղություններից մեկի ժամանակ Դավիթը «մեծ տագնապի մեջ էր», բայց նա «զորացավ իր Տեր Աստծով» (Ա Թագավորաց 30.6):

4. ՀԱՐԱՏԵՎԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

ա. *Բ Տիմոթեոս 1.12. «Որ այդ պատճառով էլ չարչարանքները կրում եմ, բայց ամոթ չեմ համարում, որովհետև Գ_____, թե Ում եմ հավատացել, և Հ_____ եմ, թե Նա կարող է իմ ավանդը պահել մինչև այն օրը»:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Պողոս առաքյալը գրեց սա անմիջապես իր նահատակությունից առաջ. նա մահացավ Քրիստոսի համար Հռոմի կայսրության անօրեն իշխանության ներքո, բայց հավատարիմ մնաց Քրիստոսին և չուրացավ հավատքը: Նա համարձակ էր, առանց ամոթի էր և վստահ էր, որովհետև ***գիտեր*** Նրա բնավորությունը և զորությունը, Ում հավատացել էր:

ԱՍՏԾՈՒՆ ՉՃԱՆԱՉԵԼՈՒ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Աստծուն ճանաչելու առավելությունների պես, Աստծուն չճանաչելու կործանարար հետևանքներն այնքա՜ն բազմազան են, որ անկարելի է մանրամասնորեն դիտարկել դրանք այս աշխատության մեջ: Այնուամենայնիվ, մենք կնշենք վեց հիմնական կետեր, որոնց մասին Աստվածաշունչը պարզորեն խոսում է:

1. ԱՍՏԾՈՒՆ ՄԵՐ ՊԱՏԿԵՐՈՎ «ԴԱՐՁՆԵԼԸ»

ա. *Սաղմոս 50.21. «Այս բաներն արեցիր դու, և Ես լուռ մնացի. Կ_____, թե Ես էլ քեզ Ն_____ եմ. բայց Կ_____ քեզ և քո աչքի առջև կդնեմ»:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Երբ մարդը ճշմարտապես չի ճանաչում Աստծուն, նա կազմում է սեփական կարծիքը Նրա մասին և «դարձնում» է Աստծուն իր պատկերով: Արդյունքում՝ նա անխուսափելիորեն ունենալու է աղավաղված և թյուր պատկերացում Աստծո մասին և ենթարկվելու է Աստծո դատաստանին:

2. ԿԵՂԾ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

ա. *Ի՞նչ ասաց Հիսուսը սամարացի կնոջը Հակոբի ջրհորի մոտ՝ նրա, նրա ժողովրդի և նրանց կրոնի մասին: Հովհաննես 4.22.*

«Դուք Ե_____ եք նրան, որ դուք Չ_____»:

ՆՇՈՒՄՆԵՐ. Կռապաշտությունն այն է, երբ մենք երկրպագում ենք ցանկացած երևույթի, առարկայի կամ անձնավորության՝ բացի կենդանի Աստծուց: Նույնիսկ իրենց քրիստոնյա համարող մարդիկ ենթակա են այս սխալմունքին, եթե չունեն ճշմարիտ գիտելիք Աստծո մասին: Նրանք ստեղծում են կեղծ աստծո իրենց մտքում և հետո երկրպագում են այն աստծուն, որին ստեղծել են:

3. ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍ

ա. *Հռոմեացիների 10.14. «Արդ ինչպե՞ս կանչեն, որին չհավատացին: Եվ ինչպե՞ս Հ_____, որից Չ_____: Եվ ինչպե՞ս լսեն՝ առանց քարոզողի»:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Թեև այս հատվածն անմիջականորեն Ավետարանը քարոզելու մասին է, այն ավելի լայն իմաստ ունի՝ կապված Աստծուն ճանաչելու հետ. ինչպե՞ս մարդը կարող է հավատալ այն Աստծուն, որին չի ճանաչում: Սա վերաբերում է ոչ միայն մեղավորի փրկարար հավատքին, այլև Աստծո հանդեպ հավատացյալի հավատքին կամ վստահությանը, որն անհրաժեշտ է քրիստոնեական կյանքն ապրելու համար: Ինչպես արդեն տեսանք Սաղմոս 9.10-ից, Աստծուն վստահում են միայն Նրա անունը ճանաչողները:

4. ԱՆՏԱՐԲԵՐ ԵՎ ԱՆՓՈՒՅԹ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՄԵՂՔԻ ՀԱՆԴԵՊ. Ա Կորնթացիների 15.34-ում Պողոս առաքյալը հանդիմանեց Կորնթոսի եկեղեցուն, որովհետև այն մարդիկ, ովքեր դավանում էին, որ հավատքի մեջ էին, իրականում չէին ճանաչում Աստծուն: Այս անտեղյակության արդյունքում տեղի ունեցավ երկու վտանգավոր և ամոթալի միջադեպ:

ա. *Նրանք այնքան Ա_____ չէին, որքան պետք է լինեին:*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Արթո՛ւն կացեք» պատվիրանը կարելի է թարգմանել նաև «Սթափվե՛ք» (NET) կամ «Արթնացե՛ք հարբածության թմրությունից» (ESV): Աստծուն չճանաչելու պատճառով նրանք ապրում էին քնած կամ հարբած մարդկանց պես՝ անտեսելով մեղքի վտանգները և Աստծո կամքով ապրելու կարևորությունը:

բ. *Նրանք Մ_____ էին գործում:*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մեղք» բառը թարգմանված է հունարեն ***«համարտա՛նո»*** բառից, որը նշանակում է «վրիպել»: Քանի որ նրանք «վրիպում էին» Աստծո բնավորության հարցում (Նա արդար է), նրանք նույնպես «վրիպում էին» այն հարցում, թե ինչպես պետք է ապրեին Նրա առջև (արդարությամբ):

5. ԱՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ. «Անօրինություն» բառը նշանակում է՝ ապրել Աստծո օրենքից կամ կամքից անջատ, ապրել այնպես, ասես Աստված օրենք չունի կամ չի տվել Իր օրենքը մարդկանց: Սա Աստծո մասին անիրազեկ լինելու ամենադառը հետևանքներից մեկն է:

ա. *Առակաց 29.18. «Առանց Մ_____ (կամ՝ տեսիլքի) ժողովուրդը Կ_____ (կամ՝ անզուսպ կլինի), բայց ով որ օրենքը պահի, երանի՜ նրան»:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս համատեքստում «տեսիլք» բառը նշանակում է ոչ թե գերբնական երազ կամ տեսիլք, այլ Աստծո Անձի և կամքի հայտնությունը Սուրբ գրքի միջոցով: Երբ մարդիկ չեն ճանաչում Աստծո էությունը և օրենքը, նրանք անզուսպ և անկառավարելի են: «Անզուսպ» բառը թարգմանված է եբրայերեն ***«պարա»*** բառից, որը նշանակում է «թողնել բոլոր սահմանափակումները» կամ «վարվել առաջնորդի պես»: Աստծուն չճանաչող և Նրա կամքը չիմացող մարդիկ անզուսպ կերպով մեղքի մեջ են ապրում և վարվում են որպես ինքնահռչակ առաջնորդներ՝ Աստծուց անջատ: Մենք կարող ենք գտնել սրա օրինակը Դատավորաց գրքում. «Այն օրերում Իսրայելի մեջ թագավոր չկար. ամեն մարդ իր աչքերի հաճելի եղածն *(կամ՝ այն, ինչ ճիշտ էր թվում իրեն)* անում էր» (17.6, 21.25):

բ. *Ովսե 4.1,2. Այս հատվածում Տերը հանդիմանում է Իսրայելի ժողովրդին՝ Աստծուն չճանաչելու համար, և նկարագրում է անօրինության տեսակները, որոնք մշտապես ուղեկցում են նման անիրազեկությանը, կամ առաջանում են դրա հետևանքով: Թվարկեք այս խոսքերում նշված մեղքերը:*

Չկա Ճ_____(խոսք 1)

Ե_____*(կամ՝ հայհոյել)* (խոսք 2)

Ս_____ (խոսք 2)

Պ_____ (խոսք 2)

Չկա Ո_____ (խոսք 1)

Ս_____ (խոսք 2)

Գ_____ (խոսք 2)

Ա_____ *(կամ՝ բռնություն)* (խոսք 2)

ՆՇՈՒՄՆԵՐ. Դուք նկատո՞ւմ եք զուգահեռներ՝ Իսրայելի անիրազեկության պատճառով ի հայտ եկած մեղքերի և մեր հասարակության վարքի միջև: Աստծո օրենքը չի փոխվում, իսկ մարդու մեղավորությունը չի պակասում: Որքան ավելի ենք մերժում գիտելիքն Աստծո մասին, այնքան ավելի անզուսպ և անբարո ենք դառնում:

6. ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ ԵՎ ԿՈՐԾԱՆՈՒՄ. սա Աստծուն չճանաչելու ամենասարսափելի հետևանքն է: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Ովսե 4.6*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծուն չճանաչելը կործանարար հետևանքներ ունի: Դրա արդյունքում թե՛ առանձին անհատներ, թե՛ մարդկանց խմբեր չեն գործածվում որպես Աստծո գործիքներ և, ի վերջո, կործանվում են: Այն, որ մենք չենք ճանաչում Աստծուն, կործանարար հետևանքներ կունենա նույնիսկ մեր հաջորդ սերունդների համար:

բ. *Հռոմեացիների 1.18*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո բարկությունը՝ Նրա արդար զայրույթը կամ վրդովմունքն է՝ ընդդեմ մեղավոր մարդկանց: Կարևոր է նշել, որ մարդը՝ զոհ չէ: Աստվածաշունչը սովորեցնում է, որ անկում ապրած մարդն ատում է Աստծուն (Հռոմեացիների 1.30) և թշնամաբար է վերաբերվում Նրա օրենքին (Հռոմեացիների 8.7): Մարդու անաստվածության և անարդարության պատճառով նա մերժում է, անտեսում և նույնիսկ լռության է մատնում ճշմարտությունն Աստծո էության և օրենքի մասին:

Գլուխ 2. Աճել Աստծուն ճանաչելու մեջ

ՈՒՐԵՄՆ, ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ԱՊՐԵՆՔ

Տեսնելով, թե Աստվածաշունչը որքան կարևոր է համարում Աստծուն ճանաչելը՝ մենք պետք է հարցնենք մեզ. «Ուրեմն, ինչպե՞ս պետք է ապրենք» կամ՝ «Ինչպե՞ս պետք է արձագանքենք այս ճշմարտությանը»: Անհրաժեշտ է մշտապես հիշել, որ քրիստոնեական կյանքում մենք ոչ միայն մտածում ենք այն մասին, թե ինչ գիտենք, այլև այն մասին, թե ինչպես ենք ապրում մեր իմացածի լույսի ներքո:

1. Սաղմոս 105.4,5-ում գրված է Տիրոջը փնտրելու ամենագեղեցիկ հորդորներից մեկը: Ուշադրությա՛մբ կարդացեք այս խոսքերը, իսկ հետո գրի՛ առեք ձեր մտքերը: Ինչպե՞ս կարող ենք կիրառել այս հորդորը մեր կյանքում:

_____

_____

_____

_____

_____

2. Բավական չէ ***սկսել*** Տիրոջը փնտրելը. մենք պետք է փնտրենք Աստծուն մշտապես՝ մեր ամբողջ կյանքի ընթացքում: Ի՞նչ է հորդորում Ովսե 6.3-ը այս ճշմարտության վերաբերյալ, և ի՞նչ է այն խոստանում նրանց, ովքեր հարատևում են Տիրոջը ճանաչելու մեջ:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կհետևեք (ճանաչելու)» բառը թարգմանված է եբրայերեն «***ռադֆ***» բառից, որը նշանակում է «հետևել, վազել ետևից, հետապնդել կամ հալածել (բռնելու համար)»: Մենք չպետք է անփույթ կամ անտարբեր լինենք Աստծո անձին և կամքին ձգտելու հարցում, այլ՝ նպատակաուղղված, գործուն և նույնիսկ՝ հավակնոտ:

3. Աստված միայն չի պատվիրում, որ փնտրենք Իրեն. Նա նույնպես տվել է բազմաթիվ հրաշալի և թանկ խոստումներ, որպեսզի խրախուսի մեզ: Առակաց 2.2-5-ում գրված է Սուրբ գրքի ամենատպավորիչ խոստումներից մեկը Աստծուն ճանաչելու մասին: Ուսումնասիրե՛ք այս հատվածը և գրի՛ առեք ձեր մտքերը:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշնչի և աղոթքի միջև անբաժանելի կապ կա: Մենք պետք է աղոթքով բարձրացնենք մեր ձայներն Աստծուն, որ Նա շնորհի մեզ գիտելիք Իր և Իր կամքի մասին: Մենք նույնպես պետք է որոնենք այս գիտելիքն այնպես, ինչպես կորոնեինք արծաթ կամ թաքնված գանձ խորը հանքերում: Ուշադրություն դարձրեք, որ այս հատվածում անմիջական կապ կա Աստծուն ճանաչելու և Տիրոջ երկյուղի միջև: Որքան ավելի ենք ճանաչում Նրան, այնքան ավելի ենք պատիվ ու հարգանք ցուցաբերում Նրա հանդեպ մեր կյանքում:

4. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ո՞րն է արդարների (Աստծո հետ ճիշտ հարաբերություններ ունեցող մարդկանց) ամենաակնհայտ հատկանիշը:

ա. *Սաղմոս 27.8*

_____

_____

_____

_____

_____

բ. *Փիլիպեցիների 3.7,8*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Արդարների ամենաակնհայտ հատկանիշներից մեկն այն է, որ նրանք ձգտում են ճանաչել Աստծուն և Նրա կամքը: Թեև նույնիսկ ամենահասուն և ամենանախանձավոր հավատացյալները պետք է պայքարեն մեղքի և անտարբերության դեմ, բոլորս պետք է ձգտենք ճանաչել Աստծուն: Նրան ճանաչելը և հաճեցնելը պետք է լինի մեր կյանքի հիասքանչ մոլուցքը և այն ուղղորդող ճշմարտությունը:

5. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ո՞րն է ամբարիշտ կամ անօրեն մարդկանց ամենաակնհայտ հատկանիշը:

ա. *Հոբ 21.14,15*

_____

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 14.1-3*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք միշտ պետք է հիշենք, որ մի ժամանակ այնպիսի մարդիկ ***էինք***, որոնց մասին գրված է Հոբ 21.14,15 և Սաղմոս 14.1-3 խոսքերում: Մինչև օրս մենք կլինեինք այդպիսին, եթե չլիներ Աստծո շնորհքը: Այժմ մենք սիրում ենք Նրան, որովհետև սկզբում Նա սիրեց մեզ (Ա Հովհաննես 4.19): Մենք չէինք փնտրում Նրան. Նա՛ էր, որ փնտրեց մեզ: Մենք չընտրեցինք Նրան. Նա՛ ընտրեց մեզ (Հովհաննես 15.16): Ցանկացած բարի գործ, որը մենք գործել ենք, և այն ձգտումը, որն ունենք Աստծո հանդեպ, այն աշխատանքի արդյունքն է, որն Աստված կատարել է մեզանում (Եփեսացիների 2.10): Այդ իսկ պատճառով, «Նա, ով պարծենում է, թող Տիրոջով պարծենա» (Ա Կորնթացիների 1.31):

ԳԻՏԵԼԻՔԻ ՄԵԾ ԱՂԲՅՈՒՐԸ

Մենք արդեն սովորեցինք երեք կարևոր ճշմարտություն. (1) Աստված հորդորում է մեզ փնտրել Իրեն, (2) Նա խոստացել է հայտնել Իրեն նրանց, ովքեր փնտրում են Իրեն, և (3) արդարները փնտրում են Աստծուն: Այս երեքը՝ մեծ ճշմարտություններ են: Այնուամենայնիվ, մնում է ևս մեկ հարց. «Ինչպե՞ս պետք է փնտրենք ճշմարտությունն Աստծո մասին»: Այս հարցի պատասխանը՝ քրիստոնեական կյանքի հիմնադրույթներից մեկն է. մենք փնտրում ենք գիտելիքն Աստծո մասին և ճանաչում ենք Նրան, երբ աղոթքով ուսումնասիրում ենք Աստծո Խոսքը՝ Աստվածաշունչը: Մենք ավելի խորը կուսումնասիրենք այս ճշմարտությունը հետագա գլուխներում. այնուամենայնիվ, այս պահին ամենակարևոր փաստը, որն անհրաժեշտ է մտապահել, այն է, որ Աստվածաշունչը հավատացյալի **մեծագույն աղբյուրն է՝** Աստծուն ճանաչելու համար:

1. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչո՞ւ է Աստվածաշունչը միակ վստահելի աղբյուրը՝ Աստծուն ճանաչելու համար:

   ա. *Բ Տիմոթեոս 3.16. «Ա_____ Գիրք Ա_____ են (կամ՝ Ամբողջ Սուրբ գիրքը ոգեշնչված է Աստծուց) և օգտակար է վարդապետության և հանդիմանության և ուղղելու և արդարության խրատելու համար»:*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Աստվածաշունչ» բառը բառացիորեն նշանակում է «Աստծուց ոգեշնչված»: Այն թարգմանված է հունարեն ***«թեո՛պնեուստոս»*** բառից (***«թեո՛ս»***= Աստված + ***«պնեո՛»*** = շնչել): «Ամեն» *(կամ՝ «բոլոր»)* ածականը նույնպես շատ կարևոր է: Աստվածաշունչն ամբողջովին Աստծո բերանից է, և այդ պատճառով անսխալական է և լիովին արժանահավատ է:

   բ. *Սաղմոս 12.6. Ի՞նչ է հայտնում մեզ այս խոսքը Աստվածաշնչի արժանահավատ լինելու մասին:*

   _____

   _____

   _____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Արծաթի մաքրումը կամ ձուլումը տեղի է ունենում հետևյալ կերպով. արծաթը հասցվում է հեղուկ վիճակի՝ ուժգին տաքության միջոցով: Այդ ժամանակ բոլոր անմաքրություններ-ը բարձրանում են մակերես և հեռացվում են, և արծաթն ավելի մաքուր է դառնում: Արծաթի «յոթ անգամ պարզելը» խորհրդանշում է Աստծո Խոսքի բացարձակ մաքրությունը և արժանահավատությունը:

2. Քանի որ Սուրբ գիրքը՝ Աստծուն և Նրա կամքը ճանաչելու միակ անսխալական աղբյուրն է, ինչպե՞ս մենք պետք է արձագանքենք դրան: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները:

ա. *Բ Տիմոթեոս 2.15*

_____

_____

_____

_____

_____

բ. *Եզրաս 7.10*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Եզրասն անում էր այն, ինչ հետագայում Պողոսը պատվիրեց բոլորիս Բ Տիմոթեոս 5.15-ում. նա ջանասիրաբար ուսումնասիրում էր Աստծո Խոսքը: Ուշադրություն դարձրեք Եզրասի լիարժեք արձագանքին Աստծո Խոսքի հանդեպ. (1) նա ուսումնասիրում էր Սուրբ գրքերը, (2) նա կատարում էր դրանցում գրվածը կամ հնազանդվում էր Սուրբ գրքերին, (3) նա սովորեցնում էր մարդկանց Սուրբ գրքերը: Մենք պետք է անենք նո՛յնը:

3. Մենք արդեն նշեցինք, որ պետք է ձգտենք ճանաչել Աստծուն ոչ միայն Աստվածաշունչը ջանասիրաբար ուսումնասիրելու, այլև աղոթքի միջոցով: Աղոթքն էապես կարևոր է այն ամենի համար, ինչ անում ենք մեր քրիստոնեական կյանքում, հատկապես՝ Աստծուն ճանաչելու և Խոսքն ուսումնասիրելու համար: Ստորև բերված է երկու օրինակ այն մասին, որ անհրաժեշտ է աղաղակել Աստծուն՝ Նրա Անձը և կամքն ավելի խորապես ճանաչելու համար: Ի՞նչ խոստումներ կան այս հատվածներում: Ինչպե՞ս կարող ենք կիրառել այս հատվածները մեր որոնումների մեջ, որպեսզի ավելի լավ ճանաչենք Աստծուն:

ա. *Սաղմոս 119.18*

_____

_____

_____

_____

_____

բ. *Երեմիա 33.2,3*

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 3. Աստված Մեկ է և Երեք է

ԱՍՏՎԱԾ ՄԵԿ Է

Աստվածաշունչը վկայում է այն մասին, որ գոյություն ունի միայն մեկ ճշմարիտ Աստված: Հավատքը մեկ Աստծո հանդեպ՝ կոչվում է միաստվածություն՝ «մոնոթեիզմ» (հունարեն «**մոնո**» = «մեկ» + «**թեոս**» = «աստված»), իսկ հավատքը մեկից ավելի աստվածների հանդեպ՝ կոչվում է բազմաստվածություն՝ «պոլիթեիզմ» (հունարեն «**պոլի**» = «շատ»): Քրիստոնեական հավատքը դավանում է ***միաստվածություն***:

1. Երկրորդ Օրինաց 6.4-ում գտնվում է ամբողջ Աստվածաշնչի ամենակարևոր հայտարարություններից մեկը: Ինչի՞ մասին է այն:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Գոյություն ունի միայն մեկ ճշմարիտ Աստված: Սա Հին և Նոր կտակարանների հավատքի հիմնաքարն է: Կարևոր է հասկանալ, որ «մեկ» բառն Աստվածաշնչում եբրայերեն «**էխադ**» բառն է, որը հաճախ օգտագործվում է՝ ցույց տալու համար մեկից ավելի անձերի միասնությունը: Օրինակ՝ Ծննդոց 2.24. «...և (տղամարդը և կինը) ***մեկ*** մարմին կլինեն»: Եզրաս 3.1. «...ժողովուրդը ժողովվեց... ***մեկ*** մարդու պես»: Այս ճշմարտությունը շատ կարևոր դեր է խաղալու հաջորդ բաժնում, որում մենք ցույց ենք տալու, թե ինչ է նշանակում միակ ճշմարիտ Աստծո եռամիասնությունը՝ որպես Հայր, Որդի և Սուրբ Հոգի:

2. Ի՞նչ են հաստատում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո էության մասին: Արդյոք կա՞ն այլ աստվածներ՝ բացի Սուրբ գրքի Աստծուց: Բացատրե՛ք ձեր պատասխանը:

ա. *Երկրորդ Օրինաց 4.39*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Համոզմունքն այն մասին, որ գոյություն ունի միայն մեկ ճշմարիտ ու կենդանի Աստված, Ում մասին գրված է Աստվածաշնչում, պետք է խորապես արմատացած լինի մեր սրտում և մտքում: Այս ճշմարտությունը մեր հավատքի հիմնաքարն է: Բացի այդ՝ կարևոր է հասկանալ, որ Սուրբ գրքի Աստված պարզապես չի պատկանում որևէ վայրի կամ ոլորտի (ինչպես համարվում են հեթանոսական աստվածություններից շատերը): Երկինքը և երկիրը ներկայացնում են ամբողջ տիեզերքը՝ և՛ նյութական, և՛ հոգևոր:

բ. *Եսայի 43.10*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքում կան երեք կարևոր բառեր, որոնք ուղղորդում են մեզ Աստծո և մեր փոխհարաբերությունների մեջ: (1) «**Գիտենալ**». այս բառը նշանակում է ավելին, քան գիտելիքն Աստծո մասին: Այն նաև ընդգրկում է անձնական շփումը Նրա հետ: (2) «**Հավատալ**». Աստծո հետ փոխհարաբերություններ ունենալու համար պահանջվում է ոչ միայն գիտելիք, այլև վստահություն կամ հավատք: (3) «**Հասկանալ**». միակ ճշմարիտ Աստծուն հավատքով ընդունելուց հետո մենք պետք է ձգտենք հասկանալ, թե ինչ է դա նշանակում մեզ համար: Ինչպիսի՞ն պետք է լինի մեր կյանքը դրանից հետո:

գ. *Եսայի 45.18*

_____

_____

_____

_____

_____

3. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչպե՞ս պետք է ապրեն բոլոր մարդիկ՝ հաշվի առնելով այն ճշմարտությունը, որ Սուրբ գրքի Աստված միակ ճշմարիտ և կենդանի Աստված է:

ա. *Ելից 20.2-6*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բացի Ինձնից» (կամ՝ «Իմ առջև», բառացիորեն՝ «Իմ երեսի առջև», խոսք 3) արտահայտությունը նշանակում է, որ Տերը պետք է լինի մեր Աստված, և մեր սրտում չպետք է լինի ոչ մի նվիրվածություն, որը կմրցակցի Նրա հետ: Ցանկացած անձ, երևույթ կամ առարկա, որը մենք գնահատում ենք կամ որին ծառայում ենք ավելի, քան Աստծուն, կեղծ աստված է: Աստծո նախանձավորությունը (խոսք 5) չպետք է շփոթել մեղավոր մարդկանց խանդի հետ, որը նրանց նախանձի և եսասիրության արդյունքն է: Աստված նախանձավոր է այն առումով, որ չի դադարի հավակնել այն ամենին, ինչն իրավամբ Իրեն է պատկանում: Նա չի կարող ուրանալ այն, թե ո՛վ է Ինքը՝ միակ ճշմարիտ Աստված, երկնքի և երկրի Արարիչը:

բ. *Մարկոս 12.28-30*

_____

_____

_____

_____

_____

ԱՍՏՎԱԾ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ Է

«Երրորդություն» տերմինն առաջացել է լատիներեն ***«տրինիտաս»*** բառից, որը նշանակում է «եռապատիկ» կամ «երեքը՝ մեկում»: Աստվածաշունչը հաստատում է, որ միակ ճշմարիտ Աստված գոյություն ունի որպես Երրորդություն՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Նրանք երեք որոշակի Անձեր են՝ մեկը մյուսից առանձին. այնուամենայնիվ, Նրանք ունեն միևնույն աստվածային բնությունը կամ ***էությունը***, և ունեն անխաթար հաղորդություն Իրար հետ: Կարևոր է նշել, որ «Երրորդություն» բառը գրված չէ Աստվածաշնչում, այլ առաջին անգամ օգտագործվել է Տերտուղիանոսի աշխատություններում (ով Առաջին Եկեղեցու հայրերից էր): Այս բառով նա նկարագրում էր այն, ինչ Աստվածաշունչը սովորեցնում է Աստծո եռամիասնական էության մասին:

1. Մատթեոս 28.19-ում գրված է մի հայտարարություն, որն արվում է ամեն քրիստոնեական մկրտության ժամանակ, համաձայն՝ անձամբ Տեր Հիսուս Քրիստոսի պատվերի: Այն Աստծո միասնության և եռամիասնության հրաշալի օրինակ է:

ա. *Տեր Հիսուսը պատվիրեց մեզ մկրտել Հոր, Որդու և Սուրբ Հոգու Ա_____:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Ուշադրություն դարձրեք, որ «անուն» բառը գրված է եզակի թվով, չնայած որ այն ուղղված է երեք տարբեր Անձերի: Այս խոսքում գրված չէ՝ «Հոր, Որդու և Սուրբ Հոգու ***անուններով»***, այլ՝ Նրանց մեկ ***անունով***, որովհետև Երեքը՝ մեկ են:

2. Ամբողջ Աստվածաշնչում կան նաև այլ հատվածներ՝ նման Մատթեոս 28.19-ին, որտեղ Աստված դիտարկվում է որպես Երրորդություն: Կարդացե՛ք Բ Կորնթացիների 13.13-ը, իսկ հետո լրացրե՛ք հետևյալը:

   ա. *Տեր Հ*_____ *Ք*_____ *շնորհքը,*

   բ. *Եվ Ա*_____ *սերը,*

   գ. *Եվ Ս*_____ *Հ*_____ *հաղորդությունը ձեր ամենի հետ:*

> **ՆՇՈՒՄՆԵՐ.** Վերևում բերված հատվածի կառուցվածքը ցույց է տալիս բացարձակ հավասարություն: Ուշագրավ է, որ Որդին նշված է նույնիսկ Հորից առաջ: Որդուն և Հոգուն Հայր Աստծուն հավասար ներկայացնելը հայհոյություն կլիներ, եթե Նրանք հավասար չլինեին Հորը (նույնպես կարդացե՛ք Ա Կորնթացիների 12.4-6, Եփեսացիների 4.4-6, Ա Պետրոս 1.2):

3. Հայրը, Որդին և Սուրբ Հոգին ունեն միևնույն աստվածային էությունը և բնակվում են կատարյալ հավասարության և միասնության մեջ, բայց Նրանք նույնպես երեք հստակ Անձեր են, ոչ թե պարզապես մեկ Անձ, Ով հայտնում է Իրեն երեք տարբեր կերպով: Այս ճշմարտությունը պարզորեն հաստատվում է հետևյալ աստվածաշնչյան հատվածներում:

   ա. *Մարկոս 1.10,11*

   (1) Ո_____ մկրտվում է (խոսք 10):

   (2) Հ_____ իջնում է (խոսք 10):

   (3) Հ_____ խոսում է Երկնքից (խոսք 11):

   բ. *Հովհաննես 14.16,17*

   (1) Ո_____ աղոթում է Հորը (խոսք 16):

   (2) Հ_____ տալիս է Մխիթարիչին կամ Սուրբ Հոգուն (խոսք 16,17):

   (3) Հ_____ ապրում է քրիստոնյաների հետ և նրանց մեջ (խոսք 17):

> **ՆՇՈՒՄՆԵՐ.** Աստվածաշնչի այս հասարակ հատվածներից պարզ է դառնում, որ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին՝ երեք որոշակի Անձեր են: Աստված բաղկացած չէ երեք առանձին Էակներից կամ Աստվածներից, ո՛չ էլ՝ Աստված մեկ Անձ է, Ով երեք տարբեր դիմակներ է կրում և պարզապես հայտնում է Իրեն երեք տարբեր կերպով: Սուրբ գրքի Աստված՝ երեք առանձին, բայց հավասար Անձեր են, Ովքեր մեկ են Իրենց աստվածային բնությամբ կամ էությամբ, և Ովքեր բնակվում են կատարյալ հավասարության և միասնության մեջ:

4. Թեև Հայրը, Որդին և Սուրբ Հոգին հավասար են և գոյություն ունեն կատարյալ միասնության մեջ, Նրանք հաճախ կատարում են տարբեր գործառույթներ և հայտնում են Իրենց տարբեր կերպով: Ի՞նչ են

սովորեցնում մեզ հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին: Լրացրե՛ք բաց թողնված բառերը ճիշտ պատասխաններով, որոնք գրված են հետևյալ աստվածաշնչյան հատվածներում:

ա. Հ_____ *անտեսանելի Աստված է, Ում ոչ մի մարդ չի տեսել (Հովհաննես 1.18):*

բ. Ո_____ *մարմին դառած Աստված է և Հոր կատարյալ հայտնությունը (Հովհաննես 1.1,14,18, 14.9):*

գ. Հ_____ *Աստված է, Ով ապրում է քրիստոնյաների մեջ (Հռոմեացիների 8.9, Հովհաննես 14.16,17,23):*

ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հիմնվելով այն աստվածաշնչյան հատվածների վրա, որոնք ուսումնասիրեցինք այս գլխում՝ մենք կարող ենք հաստատել հետևյալ ճշմարտություններն Աստծո մասին.

1. **Աստված Մեկ է:** Երրորդությունը բաղկացած չէ երեք տարբեր Աստվածներից. այդ հերձվածությունը կոչվում է «եռաստվածություն» կամ «տրիթեիզմ»:

2. **Աստված Երեք է:** Աստված մեկ է, և գոյություն ունի որպես երեք Անձ՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին:

3. **Աստվածաշունչը պարզորեն հաստատում է այս երկու կարևոր ճշմարտությունները. Աստված Մեկ է, և Աստված Երեք է:** Թեև մենք չենք կարող լիովին ըմբռնել, թե ինչպես է սա հնարավոր, մենք պետք է հավատանք այս երկու ճշմարտություններին և վստահաբար սովորեցնենք դրանք: Հերձվածությունը (այսինքն՝ սուտ վարդապետությունը) առաջանում է, երբ մենք ընդունում ենք մեկ ճշմարտությունը և մերժում ենք մյուսը, կամ շեշտադրում ենք մեկ ճշմարտությունը՝ մյուսից ավելի: Մենք պետք է հարենք ամբողջ ճշմարտությանը՝ բոլոր ծայրահեղություններից խուսափելու համար:

4. **Երրորդության երեք Անձերն իրական և հստակ Անձեր են:** Երրորդությունը պարզապես մեկ Անձ չէ, Ով երեք դիմակ է կրում, կամ Ով հայտնում է Իրեն երեք տարբեր ձևերով կամ կերպերով: Այս հերձվածությունը կոչվում է «մոդալիզմ»:

5. **Երրորդության երեք Անձերը կատարելապես հավասար են:** Որդին ցածր չէ Հորից, ո՛չ էլ Հոգին է ցածր Որդուց:

6. **Երրորդության երեք Անձերը կարող են հայտնել Իրենց տարբեր կերպերով և կատարել տարբեր գործառույթներ:** Ոչ ոք չի տեսել Հորը. Որդին մարմին դարձավ և բնակվեց մարդկանց մեջ. Հոգին բնակվում է ամեն մարդու մեջ, ով հավատում է Քրիստոսին:

7. **Այն, որ Երրորդությունը առեղծված է, հիմք չէ՝ այն մերժելու համար:** Ոմանք ասում են, որ չեն կարող հավատալ այն բանին, ինչը չեն հասկանում. այն, ինչն անկարելի է բացատրել, չի կարող ճշմարտություն լինել: Եթե մենք կիրառեինք միևնույն տրամաբանությունը ամբողջ Աստվածաշնչի կամ նույնիսկ մեր գոյության վերաբերյալ, կմնային շատ քիչ բաներ, որոնց մենք կարող էինք հավատալ: Նույնիսկ ամենապարզ ճշմարտությունները՝ կապված Աստվածաշնչի և մեր իրականության հետ, վեր են մեր մտքից: Մեր համոզվածությունը հիմնված է ոչ թե մեր մտքի, այլ Սուրբ գրքի ճշմարիտ վկայության վրա:

8. **Օրինակների մեծ մասը, որոնցով մարդիկ բացատրել են Երրորդությունը, ցավալիորեն անլիարժեք է:** Աստվածաշունչն ուսումնասիրող մարդիկ հաճախ դիմել են տարբեր օրինակների՝ փորձելով բացատրել

Երրորդությունը: Ցավոք, այդ օրինակները հաճախ ավելի շատ վնաս են տվել՝ օգուտի փոխարեն: Օրինակ՝ երբեմն Երրորդությունը համեմատում են ջրի հետ, որն ունի երեք վիճակ՝ հեղուկ, սառույց և գոլորշի: Նման օրինակը Երրորդության աղավաղում է, որը ենթադրում է (ինչպես վերևում նշված մոդալիզմը), որ Աստված մեկ Անձ է, Ով երեք տարբեր ձև է ընդունում: Ավելի լավ է պարզապես հաստատել Աստծո և՛ մեկ, և՛ եռամեկ լինելը՝ առանց բացատրությունների կամ օրինակների, քան օգտագործել այնպիսի բացատրություն կամ օրինակ, որն ապակողմնորոշում է և նույնիսկ մոտ է հերձվածության:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վարդապետությունը Երրորդության մասին՝ պարզապես աստվածաբանական վարկած չէ. Աստվածաշունչը պարզորեն սովորեցնում է այս մասին: Այնուամենայնիվ, բավական չէ միայն համարել, որ Երրորդությունը՝ աստվածաշնչյան ճշմարտություն է. մենք նույնպես պետք է որոշ հետևություններ անենք այս փաստից: Ստորև կնշենք ամենաակնհայտ և ամենակարևոր հետևությունները:

1. **Երրորդությունը սովորեցնում է մեզ, որ Աստված հաղորդակցվող է:** Հայրը, Որդին և Հոգին միասին գոյություն են ունեցել ամբողջ հավիտենության ընթացքում՝ կատարյալ միասնության և փոխադարձ սիրո մեջ: Հավատացյալը այս շփման մեջ մուտք գործելու հրավեր է ստացել (Հովհաննես 14.16,23):

2. **Երրորդությունը սովորեցնում է մեզ, որ Աստված չունի ոչ մի կարիք:** Աստված չի ստեղծել մարդուն և չի փրկել նրան, որովհետև Նա միայնակ էր կամ կարիքներ ուներ, այլ՝ Իր փառքի համար և Իր առատության պատճառով: Երրորդության երեք Անձերը կատարյալ բավականություն ունեն մեկը մյուսում: Աստված չունի լիարժեք դառնալու կարիք որևէ առարկայի, երևույթի կամ անձի միջոցով՝ Իրենից դուրս:

3. **Երրորդությունը սովորեցնում է մեզ, որ Աստված սեր է:** Սերը պարզապես գործողություն չէ. այն Աստծո հատկանիշներից մեկն է: Այս հատկանիշը հավիտենական է. այն սկիզբ չի առել արարչագործության ժամանակ: Տիեզերքի արարումից շատ առաջ Աստված սեր էր, և այս սերը կատարելապես արտահայտվում է Երրորդության Անձերի միջև:

4. **Երրորդությունը սովորեցնում է մեզ, որ մեր փրկությունը՝ Աստծո աշխատանքն է:** Հայրը, Ով ծրագրեց մեր փրկությունը և վերահսկում է այն ամենայն մանրամասնությամբ, Աստված է: Որդին, Ում Անձից և աշխատանքից կախված է մեր փրկությունը, Աստված է: Հոգին, Ով ներբնակվում է մեզանում և կնքում է մեզ փրկության օրվա համար, Աստված է (Եփեսացիների 4.30): Երրորդության ամեն մի Անձ, Ով ներգրավված է մեր փրկության մեջ, լիարժեք Աստված է: Այդ իսկ պատճառով, մենք կարող ենք անսասան վստահություն ունենալ, որ Աստված, Ով սկսեց Իր բարի գործը մեզանում, անպայման կավարտի այն (Փիլիպեցիների 1.6):

5. **Երրորդությունը՝ օրինակ է մեր մարդկային փոխհարաբերությունների համար:** Երրորդության երեք Անձերը միասին բնակվում են բացարձակ հավասարության և միասնության մեջ, բայց տարբեր դերեր կամ գործառույթներ ունեն: Սա հատկապես ակնհայտ է դառնում, երբ տեսնում ենք Որդու հնազանդությունը Հոր հանդեպ: Լինելով հավասար Հորը՝ Նա հնազանդվեց Հոր կամքին և խոնարհեցրեց Իրեն՝ հնազանդվելով մինչև մահ (Փիլիպեցիների 2.6-8): Այս փաստն ապացուցում է, որ հնազանդությունը պատշաճ միջավայրում չի արժեզրկում անհատի արժանապատվությունը կամ ավելի ցածր չի դասում նրան: Այս փաստը հատուկ կիրառում ունի մարդկային հարաբերությունների ամեն բնագավառում, հատկապես՝ եկեղեցու կյանքում (առաջնորդները և համայնքը), ամուսնության մեջ (ամուսինները և կանայք), ընտանիքում (ծնողները և երեխաները) և աշխատավայրում (ղեկավարները և աշխատողները):

Գլուխ 4. Որդու և Հոգու աստվածությունը

«Աստվածություն» բառը լատիներենում ***«դեիտաս»*** բառն է, որը նշանակում է «աստվածային էություն» կամ «Աստված լինելը»: Որդու և Հոգու աստվածությունը քրիստոնեության երկու ամենակարևոր վարդապետությունների թվում է: Անհնար է քրիստոնյա լինել՝ առանց ընդունելու, որ Որդին և Հոգին՝ Աստված են և Երրորդության երկրորդ և երրորդ Անձերն են: Որդին մարմին դարձավ մեր փրկության համար, իսկ Հոգին ներբնակվում է ամեն հավատացյալի մեջ:

Հոր աստվածության ճշմարիտ լինելը հազվադեպ է վիճարկվում: Նույնիսկ այն բազմաթիվ աղանդները, որոնք մերժում են Որդու և Հոգու աստվածությունը, ընդունում են, որ Հայրը Աստված է (Ա Կորնթացիների 8.6): Այդ իսկ պատճառով, կարիք չկա, որ դիտարկենք այն բազմաթիվ խոսքերն Աստվածաշնչից, որոնք հաստատում են Նրա աստվածությունը: Ինչ վերաբերում է Որդուն և Հոգուն, Նրանց աստվածությունը քրիստոնեության գրեթե երկհազարամյա պատմության ընթացքում ենթարկվել է մշտական հարձակումների: Այդ իսկ պատճառով, անչափ կարևոր է, որ Քրիստոսի ամեն ճշմարիտ հետևորդ իմանա Աստվածաշնչից, որ և՛ Որդին, և՛ Հոգին Աստված են՝ այս բառի լիարժեք իմաստով:

ՈՐԴԻՆ ԱՍՏՎԱԾ Է

Հովհաննես 1.1-ը Սուրբ գրքի ամենակարևոր հատվածներից մեկն է Աստծո Որդու աստվածության մասին: Ուշադրությա՛մբ կարդացեք այն, իսկ հետո կատարեք վարժությունը՝ լրացնելով բաց թողնված բառերը:

ա. *«Ս_____»:* Այստեղ գրված է արարչագործության սկզբի մասին (Ծննդոց 1.1):

բ. *«էր Բ_____ (կամ՝ խոսքը)»:* Այս բառը թարգմանված է հունարեն ***«լոգոս»*** բառից: Հունական փիլիսոփայության մեջ «լոգոս»-ը նշանակում էր անանձնական ուժ կամ դատողություն, որը միասնություն և կարգ ու կանոն հաղորդեց տիեզերքին: Հին կտակարանում խոսքը՝ Աստծո հաղորդակցման կամ ինքնարտահայտման միջոցն էր: Աստված ստեղծեց ամեն ինչ խոսքով (Ծննդոց 1.3,9), և Նա հայտնվում է մարդկանց խոսքի միջոցով: Մինչև խոսք 14-ը Հովհաննեսը չներկայացրեց «խոսքի» ինքնությունը, որում մենք տեսնում ենք, որ «խոսքը»՝ Որդին է, Ով մարմին դարձավ և բնակվեց մեր մեջ: Պողոս առաքյալը գրում է, որ Որդին ամեն ինչից առաջ էր (Կողոսացիների 1.17), և որ Աստված ստեղծեց ամեն ինչ Նրանով (խոսք 16): Հովհաննես առաքյալը գրում է, որ Աստված ցույց տվեց կամ հայտնի դարձրեց Իրեն հենց Որդու միջոցով (Հովհաննես 1.18):

գ. *«և Բանն (կամ՝ խոսքն) Ա _____ էր»:* Հովհաննեսի համար դժվար կլիներ (եթե ոչ՝ անհնարին) ավելի հասկանալի կերպով ցույց տալ Որդու աստվածությունը: Որոշ աղանդներ սովորեցնում են, որ Որդին պարզապես «աստված» է, ոչ թե «Աստված», որովհետև Նոր կտակարանի բնագրում «աստված» (հունարեն ***«թեոս»***) բառը չունի որոշյալ հոդ: Գոյություն ունի երկու հիմք՝ նրանց փաստարկը մերժելու համար: Առաջինը՝ Հովհաննես 1.6,12,13,18 խոսքերում հունարեն ***«թեոս»*** (Աստված) բառը կրկին օգտագործվում է առանց որոշյալ հոդի, սակայն ակնհայտորեն վերաբերում է Աստծուն: Այս բառի նշանակությունը մշտապես որոշվում է իր համատեքստով: Երկրորդը՝ պնդումն այն մասին, որ Որդին պարզապես «աստված» է, հակասում է բոլոր այն աստվածաշնչյան խոսքերին, որոնցում գրված է, որ այլ աստվածներ գոյություն չունեն (Եսայի 44.6,8, 45.5,21, 64.4, Ա Կորնթացիների 8.4):

դ. *«և Բանն (կամ՝ խոսքն) Աստված Է_____»:* Այստեղից մենք սովորում ենք երկու մեծ ճշմարտություն. (1) Որդին՝ Անձ է, Ով առանձին է Հայր Աստծուց, և (2) Որդին ապրում էր Հայր Աստծո հետ կատարյալ հաղորդության մեջ արարչագործությունից առաջ:

2. Հովհաննես 1.18-ը ևս մեկ կարևոր խոսք է Որդու աստվածության մասին: Կարդացե՛ք այս խոսքը և ուշադրություն դարձրեք դրանում ներկայացված ճշմարտություններին, իսկ հետո կատարե՛ք հաջորդ վարժությունը՝ լրացնելով բաց թողնված բառերը:

ա. *«Ա_____ ոչ ոք երբեք չի տեսել»:* Այս խոսքն ակնհայտորեն Հայր Աստծո մասին է, Ով բնակվում է անմատույց լույսում (Ա Տիմոթեոս 6.16): Հին կտակարանի բոլոր դեպքերն այն մասին, որ մարդիկ տեսել էին Աստծուն, միայն սահմանափակ հայտնություններ էին: Ոչ ոք չէր տեսել և չէր էլ կարող տեսնել Աստծուն Նրա փառքի լիությամբ (Ա Տիմոթեոս 6.16):

բ. *«բայց Մ_____ Ո_____ (կամ՝ Աստված)»:* «Միածին» բառն ավելի ճիշտ կլիներ թարգմանել «միակ» կամ «մեկ և միակ»: Հունարենում սա «***մոնոգենես***» բառն է *(* «***մոնո***» = մեկ + «***գենես***» = տեսակ), որը մատնանշում է ինչ-որ բանի եզակիությունը կամ իր տեսակի մեջ միակը լինելը: Այս խոսքը չի նշանակում, որ Որդին ծնվել է, այլ որ Նա «մեկը և միակն» է: Որոշ թարգմանություններում «Աստված» բառի փոխարեն գրված է «Որդի» բառը: Պատճառն այն է, որ երկու բառերն էլ գրված են տարբեր հունարեն բնագրերում: Այնուամենայնիվ, «Աստված» բառի գործածությունն այս խոսքում ավելի հիմնավոր է: Այլ թարգմանություններում գրված է. «Ոչ ոք երբևէ չի տեսել Աստծուն. Միակ Աստված, Ով Հոր կողքին է, Նա հայտնեց Նրան» (ESV), «Ոչ ոք երբեք չի տեսել Աստծուն: Միակը՝ Ինքը Աստված, Ով ամենամոտ հաղորդությունն ունի Հոր հետ, հայտնել է Աստծուն» (NET):

գ. *«Հ_____ Ծ_____ լինողը»:* Այս նկարագրությունն է՛լ ավելի գեղեցիկ կերպով է բացատրում Հովհաննես 1.1-ում հայտնված ճշմարտությունը. «Բանը (կամ՝ Խոսքը) Աստծո ***մոտ*** էր»: Որդին մշտապես բնակվում է կատարյալ և մտերիմ սիրո հաղորդության մեջ Հոր և Հոգու հետ: Որդու եզակի լինելը հայտնվում է այն բանում, որ Նա եզակի հաղորդություն ունի Հայր Աստծո հետ:

դ. *«Նա Պ_____ (կամ՝ Նա բացատրեց Նրան)»:* Միայն Աստված կարող է լիովին ընկալել և լիովին հայտնել Աստծուն: Աստվածության լիությունը բնակվում է միայն Որդու մեջ (Կողոսացիների 1.19): Միայն Նա է անտեսանելի Աստծո պատկերը (Կողոսացիների 1.15), և միայն Նա կարող է հայտնել Հորը մարդկանց:

3. Ի՞նչ է սովորեցնում Փիլիպեցիների 2.6-ը Աստծո Որդու մասին՝ նախքան Նրա մարմին հագնելը և մարդ դառնալը:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կերպարանք» բառը թարգմանված է հունարեն «***մորֆե՛***» բառից, որը նշանակում է ոչ միայն ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի արտաքին տեսքը կամ երևույթը, այլև՝ դրա էությունը կամ դրա հիմքում ընկած իրողությունը: Այնպես չէր, որ Որդին սոսկ Աստծո նմանությունն ուներ. Նա իրականում Աստված էր:

«Հավասար» բառը թարգմանված է հունարեն *«ի՛սոս»* բառից, որը նշանակում է «լինել հավասար քանակով կամ որակով»: Սա անսխալական հղում է Քրիստոսի աստվածությանը: Նա եղել է ամբողջ հավիտենության ընթացքում՝ կրելով Աստծո կերպարանքը և լինելով հավասար Աստծուն ամեն առումով: Նույնիսկ երբ Նա ունայնացրեց Իրեն և մարդ դարձավ, Նա չդադարեց Աստված լինելուց (Փիլիպեցիների 2.7): Նա ունայնացրեց Իրեն՝ զրկելով Իրեն աստվածության արտոնություններից, բայց ոչ՝ աստվածությունից:

4. Ի՞նչ է սովորեցնում մեզ Կողոսացիների 1.15-ը Աստծո Որդու աստվածության մասին և այն մասին, որ Նա վեր է ամբողջ ստեղծագործությունից:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պատկեր» բառը թարգմանված է հունարեն *«էյկոն»* բառից, որի ճիշտ թարգմանությունը «պատկեր» կամ «նմանություն» բառերն են: Ո՞վ կարող է լինել Աստծո ճշգրիտ պատկերը՝ բացի Աստծուց: Բոլոր ստեղծվածները ցածր են Աստծուց, և նրանցից ոչ մեկը չի կարող լինել Աստծո անսահման գերազանցության ճշմարիտ պատկերը, այլ սոսկ՝ դրա աննշան և աղավաղված օրինակը: Որդին կարող է լինել Աստծո պատկերը, որովհետև «Նրա փառքի լույսն» է և «Նրա էության նկարագիրը» (Եբրայեցիների 1.3): *«Առաջ ծնված»*-ը թարգմանված է հունարեն *«պրոտո՛տոկոս»* բառից (*պրոտոս* = առաջին + *«տի՛կտո»* = ծնել»): Այս բառը հաճախ սխալմամբ օգտագործվել է Քրիստոսի աստվածությունը հերքելու համար: Առաքյալը չէր օգտագործում այս բառը՝ ցույց տալու համար, որ Որդին ստեղծված էակ է, այլ՝ ապացուցելու համար, որ Նրա դիրքը վեր է ամբողջ ստեղծագործությունից, և որ Նա առանձին է ստեղծագործությունից: Այն, թե ինչ իմաստով է «Առաջ ծնված» արտահայտությունը նկարագրում Որդուն, պարզորեն ներկայացված է Սաղմոս 89.27-ում, որտեղ այս հասկացությունն օգտագործվում է դիրքի, ոչ թե ծագման կամ ծննդի վերաբերյալ: Աստված խոսում է Դավթի մասին. «Եվ Ես առաջնեկ կդնեմ նրան՝ երկրի թագավորների վրա բարձրացած»: Ակնհայտ է, որ Դավիթն Աստծո «առաջնեկն» էր այն իմաստով միայն, որ նա վեր դասվեց մնացած բոլոր թագավորներից: Աստծո Որդին «առաջ ծնված» կամ «առաջնածին» է նույն (բայց շատ ավելի լայն) իմաստով, այսինքն՝ Նա վեր է ամբողջ ստեղծագործությունից:

5. Կողոսացիների 1.19-ում գտնում ենք ևս մեկ հաստատում Որդու աստվածության մասին: Ի՞նչ մեծ ճշմարտություններ եք տեսնում այս խոսքում, և ինչպե՞ս են դրանք ցույց տալիս, որ Որդին՝ Աստված է:

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Օվկիանոսի լիությունը չի կարող պարփակվել ինչ-որ մեկի ձեռքում գտնվող բաժակի մեջ: Նույն կերպով, հնարավոր չէ, որ Աստծո լիությունը բնակվի Աստծուց ցածր որևէ էակի մեջ:

6. Մենք կամփոփենք այս բաժինը՝ դիտարկելով ևս մի քանի կարևոր հատվածներ, որոնցում Որդին ուղղակիորեն Աստված է անվանվում: Կարևոր է նշել, որ այս հղումները Որդու Աստվածության մասին արվել են նույնիսկ Նրա մարմնավորումից հետո: Սա ցույց է տալիս ճշմարտությունն այն մասին, որ երբ հավիտենական Որդին մարդ դարձավ, Նա չդադարեց Աստված լինելուց՝ ցանկացած իմաստով:

   ա. *«Ո՛վ իմ Տ_____, և ո՛վ իմ Ա_____» (Հովհաննես 20.28):* Առաջին տիտղոսը թարգմանված է հունարեն ***«կյուրիոս»*** բառից, որն օգտագործվում է ամբողջ Յոթանասունից թարգմանության մեջ (Հին կտակարանի հունարեն թարգմանությունը) «Յահվեհ» (կամ՝ «Եհովա») բառի փոխարեն: Երկրորդ տիտղոսը թարգմանված է հունարեն ***«թեոս»*** բառից, որը նշանակում է «Աստված»: Եթե Թովմասը պարզապես սխալված լիներ իր նախանձավորության պատճառով, Հիսուսն անպայման կշտկեր Նրան: Եթե Հիսուսը չլիներ Տեր և Աստված, Թովմասը և Հիսուսը հավասարապես մեղավոր կլինեին հայհոյության մեջ, որն ամենածանր հանցանքն է Աստծո դեմ:

   բ. *«Մեծ Ա_____ և մեր Փ_____ (կամ՝ Մեր մեծ Ա_____ և Փ_____)» (Տիտոս 2.13):* Սա ևս մեկ ուղղակի հղում է այն մասին, որ Որդին՝ Աստված է: Այնուամենայնիվ, մենք չպետք է անտեսենք այն փաստը, որ «Փրկիչ» տիտղոսը նույնպես Որդու աստվածության կարևոր ապացույցներից է: Եսայի 43.10,11-ում Աստված հայտարարում է. «Ես՝ Ես եմ Եհովա, և Ինձնից ջոկ Փրկիչ չկա»: Եթե Քրիստոսը մեր Փրկիչն է, ուրեմն Նա նույնպես Աստված է: Եթե Նա Աստված չէ, Նա չի կարող լինել մեր Փրկիչը: Պետրոսն ասում է Որդու մասին. «Եվ էլ մի ուրիշ ոչ մեկով փրկություն չկա» (Գործք 4.12): Ուրեմն, Նա պետք է որ Աստված լինի:

   գ. *«...որ է ամենի վրա Ա_____, օրհնյալ հավիտյանս» (Հռոմեացիների 9.5):* Հաստատելով Որդու մարմնավորման փաստը («Քրիստոսը մարմնի կողմանե»)՝ Պողոսը շարունակում է՝ պնդելով, որ Նա Աստված է: Այս հատվածը նույնպես կարելի է թարգմանել. «Ով՝ Աստված է ամենի վրա, օրհնյալ հավիտյան» (ESV/NET):

   դ. *«Քո Ա_____ (կամ՝ գահը), ով Ա_____» (Եբրայեցիների 1.8):* Այս համատեքստում Ինքը՝ Հայրը, Աստված է անվանում Իր Որդուն: Իր մահից և հարությունից հետո Աստծո Որդին ևս մեկ անգամ բարձրացվեց Իր Հոր աջ կողմը, որտեղ Նա թագավորում է՝ որպես Աստված և Մարդ:

ՀՈԳԻՆ ԱՍՏՎԱԾ Է

1. Գործք 5.3,4-ում Պետրոս առաքյալը հակառակվեց Անանիային՝ նրա և նրա կնոջ ագահության և խաբեության պատճառով: Անելով սա՝ նա նույնպես պատկերացում տվեց մեզ Հոգու էության և աստվածության մասին: Կարդացե՛ք այս հատվածը, մինչև որ հասկանաք այն, իսկ հետո լրացրե՛ք բաց թողնված բառերը:

   ա. *Խոսք 3-ում Պետրոսը հայտարարեց, որ Անանիան ստեց Ս _____ Հ _____:*

   բ. *Խոսք 4-ում Պետրոսը հայտարարեց, որ Անանիան ստեց Ա _____:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը կարևոր հաստատում է ոչ միայն Հոգու աստվածության մասին, այլև այն մասին, որ Հոգին Անձ է, ոչ թե անանձնական ուժ: Սուրբ Հոգուն ստելը հավասար է Աստծուն ստելուն, որովհետև Սուրբ Հոգին Աստված է:

2. Ա Կորնթացիների 3.16-ում և 6.19-ում Պողոս առաքյալը սովորեցնում է մեզ, որ հավատացյալը Աստծո տաճարն է: Սրանով նա է՛լ ավելի է բացահայտում մեզ համար Հոգու աստվածությունը: Կարդացե՛ք այս երկու հատվածները, իսկ հետո կատարե՛ք հետևյալ վարժությունը:

   ա. *Ա Կորնթացիների 3.16-ում հավատացյալը կոչվում է Ա_____ տաճարը:*

   բ. *Ա Կորնթացիների 6.19-ում հավատացյալը կոչվում է Ս_____ Հ_____ տաճարը:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս երկու հատվածները միանշանակ կերպով հաստատում են Հոգու աստվածությունը: Ա Կորնթացիների 3.16-ում հավատացյալը կոչվում է Աստծո տաճար, իսկ Ա Կորնթացիների 6.19-ում՝ Սուրբ Հոգու տաճար: Այս երկու հասկացությունները որպես համարժեքներ օգտագործելն անընդունելի կլիներ Պողոս առաքյալի համար, եթե նա չհամարեր, որ Հոգին լիովին Աստված է և իրական Անձ է՝ Երրորդության Անձերից մեկը:

3. Հռոմեացիների 8.9-ը ոչ միայն հայտարարում է Հոգու աստվածության մասին, այլև գեղեցիկ և վառ կերպով նկարագրում է Երրորդությունը: Լրացրե՛ք բաց թողնված բառերն այս խոսքի այն մասերից, որոնցում գրված է Սուրբ Հոգու մասին:

   ա. *«այլ՝ Հ_____»:* Սուրբ Հոգին՝ իրական Անձ է, առանձին՝ Հորից և Որդուց:

   բ. *«Ա_____ Հ_____»:* Հայր Աստված և Սուրբ Հոգին մեկ են:

   գ. *«Ք_____ Հ_____»:* Որդի Աստված և Սուրբ Հոգին մեկ են:

Գլուխ 5. Աստված Հոգի է

Աստված նյութական կամ մարմնեղեն չէ (այսինքն՝ Նա չունի ֆիզիկական մարմին)։ Այս ճշմարտությունից կարելի է երկու նշանակալի հետևություն անել. (1) Աստված չունի որևէ ֆիզիկական սահմանափակում, որը հատուկ է մարդկանց, և (2) Աստված տեսանելի չէ, այդ պատճառով էլ Նրա պատկերը չպետք է նվազեցվի մարդկանց կողմից պատրաստված պատկերների։ Երբեմն Սուրբ գիրքը խոսում է Աստծո մասին այնպես, ասես Նա ֆիզիկական մարմին ունի։ Աստվածաշնչում գրված է Նրա ձեռքերի, մեջքի, շնչի, ականջների, աչքերի, դեմքի, ոտքերի, մատների մասին և այլն։ Ինչպե՞ս կարելի է բացատրել այս հղումները՝ հաշվի առնելով, որ Աստված Հոգի է։ Աստվածաբանության մեջ այս հղումները համարվում են ***անտրոպոմորֆիկ*** («***անտրո՛պոս***»= մարդ + «***մորֆե՛***» = ձև) արտահայտություններ։ Այլ կերպ ասած՝ Աստված պարզապես վերագրում է Իրեն մարդկային հատկանիշներ, որպեսզի փոխանցի որոշակի ճշմարտություններ Իր մասին այնպես, որ մարդիկ կարողանան հասկանալ։ Օրինակ՝ Աստվածաշնչում գրված է Աստծո «թևերի» մասին, նաև այն մասին, որ Նրա ժողովուրդը պատսպարվում է Նրա թևերի շուքի ներքո (Ելից 19.4, Հռութ 2.12, Սաղմոս 17.8, 36.7, 57.1, 61.4, 63.7, 91.4)։ Նման արտահայտությունները բառացիորեն մեկնելն անմտություն կլիներ։

1. Ինչպե՞ս է Աստվածաշունչը նկարագրում Աստծուն Հովհաննես 4.24-ում։

   ա. *Աստված Հ_____ է։*

   բ. *Հիմնվելով մեր ներածական պարբերության վրա՝ կարճ նկարագրե՛ք, թե ինչ է նշանակում «Աստված Հոգի է» արտահայտությունը։*

   _____

   _____

   _____

   _____

   _____

2. Ինչպե՞ս մենք պետք է ապրենք՝ հասկանալով, որ Աստված Հոգի է։ Գրի՛ առեք ձեր մտքերը՝ հիմնվելով հետևյալ խոսքերի ճշմարտությունների վրա։

   ա. *Մենք պետք է անկեղծորեն երկրպագենք Աստծուն (Հովհաննես 4.24)։*

   _____

   _____

   _____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծուն «հոգով» երկրպագելն ունի երկու հնարավոր բացատրություն. (1) մենք պետք է երկրպագենք Աստծուն մեր ամբողջ էությամբ, անկեղծորեն և խորապես, կամ (2) մենք պետք է երկրպագենք Աստծուն Սուրբ Հոգու զորությամբ և առաջնորդությամբ: Աստծուն «ճշմարտությամբ» երկրպագելը նույնպես երկու հնարավոր իմաստ ունի. (1) մենք պետք է երկրպագենք Աստծուն ճշմարտապես, ազնվությամբ և անկեղծությամբ, կամ (2) մենք պետք է երկրպագենք Աստծուն՝ համաձայն ճշմարտության, այսինքն՝ համաձայն Աստծո կամքի, որը հայտնված է Սուրբ գրքում:

բ. *Մենք չպետք է նույնացնենք Աստծուն որևէ կրոնական շինության հետ, ոչ էլ ցանկացած մարդկային սահմանափակումներ կամ կարիքներ վերագրենք Նրան (Գործք 17.24,25):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն, որ Աստված ոչնչի կարիք չունի, հրաշալի կերպով ներկայացվում է Սաղմոս 50.10-12-ում. «Որովհետև Իմն են անտառի բոլոր գազանները և հազարավոր սարերի անասունները: Ես գիտեմ սարերի բոլոր թռչունները, և վայրի գազաններն Իմ առջև են: Եթե սովածանամ, քեզ չեմ ասի, որովհետև Իմն է աշխարհը և նրա լիությունը»:

3. Ինչպե՞ս է Աստվածաշունչը նկարագրում Աստծուն Եբրայեցիների 11.27-ում:

ա. *Աստված Ա_____ է:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Եթե Աստված անտեսանելի է, ինչպե՞ս կարելի է բացատրել աստվածաշնչյան այն հատվածները, որտեղ Նա, թվում է, հայտնում է Իրեն տեսանելի կերպով: Այս հարցին պատասխանելու համար մենք նախ՝ պետք է հասկանանք Աստվածաշնչի մեկնության երկու սկզբունք: Առաջինը՝ Աստվածաշունչը չի հակասում ինքն իրեն: Երկրորդը՝ այն աստվածաշնչյան հատվածները, որոնք դժվար է մեկնել միանշանակ կերպով, պետք է մեկնվեն այնպիսի աստվածաշնչյան հատվածներով, որոնց մեկնությունը որևէ կասկած չի առաջացնում: Սուրբ գիրքը պարզորեն պնդում է, որ Աստված անտեսանելի է. նշանակում է՝ Աստծո «տեսանելի» կերպով երևալու դեպքերը Աստվածաշնչում (բացառությամբ՝ Աստծո Որդու մարմնավորումը) պետք է մեկնել որպես «տեսիլքներ»՝ հոգևոր իրողության խորհրդանշանային պատկերումներ: Եզեկիելը գրում է, որ (1.1) «երկինքը բացվեց, և ես տեսա Աստծո ***տեսիլքները»:*** Խոսք 28-ում մարգարեն ամփոփում է

այս ***տեսիլքները*** որպես «Տիրոջ փառքի նմանության կերպարանք»: Դանիել 7.9-15-ում Դանիելը տեսնում է Հայր Աստծո խորհրդանշանային տեսիլքը՝ որպես «Հինավուրցը»: Ղուկաս 3.21,22-ում Հովհաննես Մկրտիչը ***տեսիլք*** է տեսնում, որում երկինքը «բացվում է», և Սուրբ Հոգին իջնում է աղավնու պես (ակնհայտ է, որ սա խորհրդանիշ է):

4. Ի՞նչ են հաստատում հետևյալ խոսքերը Աստծո մասին, հատկապես՝ Նրա անտեսանելի լինելու:

ա. *Ա Տիմոթեոս 1.17*

_____

_____

_____

բ. *Ա Տիմոթեոս 6.15,16*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո անտեսանելի լինելը նշվում է այն հատկանիշների թվում, որոնք տարբերում են Նրան Իր արարչագործությունից: Աստծո Անձը և գոյությունն անիմանալի են: Նա կարող է ճանաչվել այն չափով միայն, որով կորոշի հայտնել Իրեն:

5. Համաձայն հետևյալ խոսքերի, ինչպե՞ս մենք պետք է ապրենք՝ հասկանալով, որ Աստված անտեսանելի է:

ա. *Երկրորդ Օրինաց 4.11,12,15,16*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կենդանի Աստծուն քանդակի կամ նկարչության միջոցով պատկերելու ցանկացած փորձ աղավաղում է Նրա պատկերը և նվազեցնում է Նրա փառքը: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է ժանտախտի պես խուսափել կռապաշտության բոլոր ձևերից: Ավելին՝ մենք պետք է ձգտենք մտածել Աստծո մասին միայն այնպիսի բաներ, որոնք հիմնված են Աստվածաշնչի վրա և հաստատված են Աստվածաշնչով:

բ. *Ա Տիմոթեոս 1.17, 6.15,16*

_____

_____

_____

_____

6. Աստված աննյութական (այսինքն՝ հոգի) և անտեսանելի է: Այդ դեպքում, ինչպե՞ս մենք կարող ենք ճանաչել Նրան: Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչպե՞ս է Աստված հայտնել (այսինքն՝ ճանաչելի դարձրել) Իրեն մարդկանց:

ա. *Համաձայն Հովհաննես 6.46-ում գրված Հիսուսի խոսքերի՝ արդյո՞ք որևէ մարդ երբևէ տեսել է Հորը: Ո՞վ է տեսել Հորը:*

_____

_____

_____

բ. *Եթե ոչ ոք չի տեսել Հայր Աստծուն՝ բացի Որդուց, ինչպե՞ս է Հայրը ճանաչելի դարձրել Իրեն մարդկանց: Ինչպե՞ս մենք կարող ենք հասկանալ, թե ով է Աստված: Ո՞վ կարող է պատմել կամ բացատրել դա մեզ: Ի՞նչ է սովորեցնում մեզ Հովհաննես 1.18-ը:*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պատմել» (կամ՝ բացատրել) բառը թարգմանված է հունարեն «***էքսեգե՛ոմայ***» բառից, որը նշանակում է «մեկնաբանել, բացատրել, պարզաբանել կամ շարադրել»: Որդին պատմում է մեզ Աստծո մասին Իր կյանքի և ուսմունքների միջոցով: Աստվածաշնչի «Նոր անգլերեն թարգմանությունը» շատ դիպուկ կերպով է վերծանում այս խոսքը. «Ոչ ոք երբեք չի տեսել Աստծուն: Միակը՝ Ինքը Աստված, Ով ամենամոտ հաղորդությունն ունի Հոր հետ, ճանաչեցրել է Աստծուն» (NET):

գ. *Համաձայն հետևյալ խոսքերի՝ ինչո՞ւ միայն Հիսուսը կարող է հայտնել Հայր Աստծուն:*

(1) Կողոսացիների 1.15, Եբրայեցիների 1.3

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պատկեր» բառը թարգմանված է հունարեն «***էյկոն***» բառից, որի ճիշտ թարգմանությունը «պատկեր» կամ «նմանություն» բառերն են: Ո՞վ կարող է լինել Աստծո ճշգրիտ պատկերը՝ բացի Աստծուց: Բոլոր ստեղծվածները ցածր են Աստծուց, և նրանցից ոչ մեկը չի կարող լինել Աստծո անսահման գերազանցության ճշմարիտ պատկերը, այլ սոսկ դրա աննշան և աղավաղված օրինակը: Որդին կարող է լինել Աստծո պատկերը, որովհետև «Նրա փառքի լույսն» է և «Նրա էության նկարագիրը» (Եբրայեցիների 1.3):

(2) Հովհաննես 14.9

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարևոր է հասկանալ, որ Հիսուսի ասածը հայհոյություն կլիներ, եթե Նա Աստված չլիներ՝ այս բառի լիարժեք և ճշգրիտ իմաստով: Այն ամենը, ինչ մենք ցանկանում ենք կամ երբևէ կցանկանանք իմանալ Աստծո մասին, Հիսուս Քրիստոս Մարդու մեջ է. այս պնդումը քրիստոնեության հիմնարար ճշմարտություններից մեկն է:

Գլուխ 6. Աստված Անձ է

Սուրբ գրքի ամենակարևոր ճշմարտություններից մեկն այն է, որ Աստված՝ անանձնական ուժ չէ, որն անգիտակցաբար շարժման մեջ է դնում տիեզերքը, ո՛չ էլ քմահաճ զորություն, որը սառնասրտորեն շահարկում է Իր ստեղծագործությունը՝ տանելով այն ինչ-որ եսակենտրոն նպատակի: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Աստված Անձ է (այսինքն՝ Նա զատորոշելի անհատականություն ունի). Նա գիտի Իր գոյության մասին, Նա ունի և՛ միտք, և՛ կամք, և Նա կարող է անձնական շփում ունենալ մարդու հետ:

ԱՍՏՎԱԾ ԳԻՏԻ ԻՐ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Թվում է՝ կարիք չկա նշել, որ Աստված գիտի Իր գոյության մասին, բայց սա անձի ամենահիմնարար հատկանիշներից մեկն է: Գոյություն ունեն քրիստոնեության հետ առնչություն չունեցող բազմաթիվ կրոններ, որոնք ներկայացնում են «աստծուն» կա՛մ որպես անանձնական ուժ (Բուդդայականություն, Տաոիզմ), կա՛մ էություն, որը բնակվում է ամեն ինչի մեջ (բազմաստվածություն, հունարենում՝ «պանթեիզմ». «***պան***» = ամեն ինչ, + «***թեոս***» = «աստված»): Ի հակադրություն այս ամենին՝ Աստվածաշնչի Աստված անձնավոր Էակ է, Ով գիտի Իր գոյության և կյանքի մասին և անջատ է մնացած բոլոր էակներից, առարկաներից և երևույթներից:

1. Աստվածաշունչը պարզորեն նշում է, որ Աստված գիտի Իր գոյության մասին: Ինչպե՞ս է Աստված անվանում Իրեն Ելից 3.14-ում:

   ա. *«Ես Ե_____»:* Այս հայտարարությունը միանշանակ կերպով հաստատում է, որ Աստված գիտի Իր գոյության մասին: Նա գիտի, որ Նա է, և որ Նա անջատ է բոլոր ստեղծված անձերից, առարկաներից և երևույթներից:

2. Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ, որ Աստված գիտի ոչ միայն Իր գոյության մասին, այլև՝ Իր անհատականության (այսինքն՝ այն, որ Նա անջատ է բոլոր ստեղծված անձերից, առարկաներից և երևույթներից): Համաձայն Աստվածաշնչի՝ ի՞նչ է Աստված հռչակում Իր եզակի գոյության մասին, որն առանձին է ցանկացած անձից, առարկայից կամ երևույթից:

   ա. *Ու_____ Աստված չկա՝ Նրանից ջոկ (Եսայի 45.21):*

   բ. *Չկա ուրիշ Աստված՝ Բ_____ Նրանից (Եսայի 45.21):*

   գ. *Չկա ոչ ոք, ում կարելի է Ն_____ Նրան (կամ՝ համեմատել Նրա հետ)(Եսայի 40.25):*

   դ. *Չկա ոչ ոք, ով Ն_____ (կամ՝ հավասար) է Նրան (Եսայի 40.25):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հայտարարություններից ամեն մեկն ապացուցում է, որ Աստված և՛ առանձին է, և՛ անկախ է բոլոր անձերից, առարկաներից և երևույթներից:

ԱՍՏՎԱԾ ՈՒՆԻ ՄԻՏՔ

Միտքը համարվում է անձի գլխավոր հատկանիշներից մեկը: «Միտք» բառը լատիներենում «***ինտել-լեգերե***» բառն է («***ինտեր***» = «մեջտեղում» կամ «միջև» + «***լեգերե***» = ջոկել կամ ընտրել) և նշանակում է «դատողություն անելու, ընկալելու և հասկանալու կարողություն»:

Համաձայն Աստվածաշնչի՝ Աստծո միտքը վեր է մարդկային ընկալումից: Նրա գիտելիքը և իմաստությունն անսահման են:

1. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո մտքի մասին:

   ա. *Սաղմոս 92.5*

   _____

   _____

   _____

   բ. *Հռոմեացիների 11.33-36*

   _____

   _____

   _____

   _____

2. Ինչպե՞ս է մարդու միտքը կամ հասկացողությունը համեմատվում Աստծո մտքի կամ հասկացողության հետ հետևյալ խոսքերում:

   ա. *Սաղմոս 94.11, Ա Կորնթացիների 3.20*

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Եսայի 55.8-9*

   _____

   _____

   _____

   _____

գ. *Ա Կորնթացիների 1.20,25*

_____

_____

_____

_____

3. Աստված անսահմանորեն գերազանցում է սահմանափակ մարդկանց Իր գիտելիքով և հասկացողությամբ: Համաձայն հետևյալ խոսքերի՝ ինչպե՞ս մարդը կարող է հասկանալ (գոնե մասամբ) Աստծո անսահման իրողությունները:

ա. *Աստծո Որդու միջոցով (Հովհաննես 1.18):*

_____

_____

_____

_____

_____

բ. *Աստծո Հոգու միջոցով (Ա Կորնթացիների 2.11,12):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը հավատացյալի և Սուրբ Հոգու շփման մասին է: Հիմնական միջոցը, որով Հոգին սովորեցնում է Աստծո ժողովրդին, Աստծո Խոսքի ճշմարտությունները լուսավորելն է:

գ. *Աստծո Խոսքի միջոցով (Սաղմոս 119.97-100):*

_____

_____

_____

_____

4. Երկրորդ Օրինաց 29.29-ում Աստվածաշունչը հայտարարում է. «Ծածուկ բաները մեր Եհովա Աստծո համար են, բայց հայտնված բաները՝ մեզ... համար...»: Համաձայն Սաղմոս 131.1-3-ի՝ ինչպե՞ս մենք պետք է ապրենք (այսինքն՝ ինչպիսի՞ն պետք է լինենք)՝ գիտակցելով, որ Աստծո գիտելիքն անսահման է:

_____

_____

_____

_____

ԱՍՏՎԱԾ ՈՒՆԻ ԿԱՄՔ

Սուրբ գիրքը պարզորեն հայտնում է, որ Աստված ունի կամք, այսինքն՝ Նա ի զորու է որոշել Իր գործողությունները (այն, ինչ Նա ցանկանում է անել) և Իր ստեղծագործության վախճանը կամ նպատակը (Նա կարող է Իր ստեղծագործության հետ անել այն, ինչ կամենում է): Աստծո որոշումները բխում են Նրա Անձից. Նրա կամքը՝ Նրա էության և բնավորության արտահայտությունն է: Կարևոր է հասկանալ, որ Աստծո կամքը և մարդու կամքը շատ տարբեր են: Աստված միակն է, Ով բացարձակապես ազատ է՝ կատարելու այն, ինչ Ինքը որոշում է Իրենում՝ առանց որևէ սահմանափակումների և ձախողման հավանականության, այն դեպքում, երբ նույնիսկ ամենաազդեցիկ մարդկանց ամենավճռական որոշումները հաճախ անկատար են մնում:

1. Ի՞նչ են սովորեցնում մեզ հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո կամքի մասին: Արդյո՞ք Աստծո կամքը որևէ սահմանափակում ունի: Կարո՞ղ է որևէ բան խափանել Աստծո կամքը:

ա. *Առակաց 19.21*

_____

_____

_____

_____

բ. *Եսայի 14.27*

_____

_____

_____

_____

գ. *Եսայի 46.9,10*

_____

_____

_____

_____

դ. *Դանիել 4.34,35*

_____

_____

_____

_____

ե. *Եփեսացիների 1.11*

_____

_____

_____

_____

2. Թեև Աստծո կամքը չի կարող սահմանափակվել Իրենից դուրս գտնվող որևէ անձի կամ ուժի կողմից, կան այնպիսի բաներ, որոնք Աստված ոչ մի դեպքում չի անի զուտ այն պատճառով, որ դրանք հակասում են Նրա ամենասուրբ և արդար բնավորությանը: Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչ չի անի Աստված ոչ մի դեպքում: Ինչ կերպով է այս փաստը մխիթարում և օրհնում մեզ:

ա. *Տիտոս 1.2*

_____

_____

_____

_____

բ. *Բ Տիմոթեոս 2.13*

_____

_____

_____

_____

գ. *Հակոբոս 1.13*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը հայտնում է մեզ երկու կարևոր ճշմարտություն: Առաջինը՝ Աստված չի փորձվում (կամ՝ գայթակղվում), որովհետև Նա բարոյապես կատարյալ է, և չարի ցանկացած դրսևորում գարշելի է Նրա համար: Երկրորդը՝ Աստված չի գայթակղեցնում ոչ ոքի: Նա կարող է փորձել Իր ժողովրդին՝ նրանց բարու համար, բայց չի գայթակղեցնում կամ հրապուրում նրանց մեղքով:

Գլուխ 7. Աստված հաղորդակցվում է

Աստվածաշունչը վկայում է, որ Աստված ցանկանում է անձնական շփում ունենալ Իր ստեղծագործության հետ, հատկապես՝ մարդու, ով ստեղծվել է Իր պատկերով (Ծննդոց 1.27)։ Սա քրիստոնեության մեծագույն ճշմարտություններից մեկն է։ Աստված անանձնական էակ չէ, ով անկարող է հաղորդակցվել այլ էակների հետ, իսկ մարդը՝ պատահականության արդյունք չէ, ով մենակ է տիեզերքում։ Աստված ստեղծեց մարդուն այնպես, որ նա կարողանա ճանաչել և ընդունել Իր բարությունը։ Երբ մարդու շփումն Աստծո հետ խաթարվեց մեղքի պատճառով, Աստված ուղարկեց Իր Որդուն՝ այդ շփումը վերականգնելու համար։ Այն մարդիկ, ովքեր հաշտվել են Աստծո հետ՝ հավատալով Նրա Որդուն, կարող են լիովին վստահ լինել, որ Աստված ձգտում է իրենց հետ ունենալ անձնական, կյանքով լեցուն և մտերիմ շփում։

1. Սկսած Ծննդոցից մինչև Հայտնություն՝ Աստվածաշունչը հայտնում է մեզ, որ Աստված ցանկանում է հաղորդակցվել Իր ստեղծագործության հետ, հատկապես՝ մարդու, թեև նա մեղավոր է։ Աստվածաշունչը պատմում է Աստծո մասին, Ով փնտրում է մեղավոր մարդկանց և ջանում է վերականգնել Իր հարաբերությունները նրանց հետ՝ այս արտահայտության իրական իմաստով։ Այս ճշմարտությունն ակնհայտորեն երևում է նույնիսկ Ադամի և Եվայի անկման ժամանակ։

   ա. *Համաձայն Ծննդոց 3.8-10-ի, ինչպե՞ս Ադամի վերաբերմունքն Աստծո հանդեպ փոխվեց մեղանչելուց հետո։*

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Ինչպե՞ս Ադամի մեղքը փոխեց Աստծո հարաբերությունները նրա հետ Ծննդոց 3.23,24։*

   _____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ծննդոց 3.23,24-ում մենք միաժամանակ տեսնում ենք Աստծո դատաստանը և ողորմությունը մեղավոր մարդու հանդեպ: Աստծո դատաստանը այն է, որ Նա վտարեց Ադամին ու Եվային պարտեզից, ինչը խորհրդանշում է այն բաժանությունը կամ խաթարված հարաբերությունները, որոնք գոյություն ունեն Աստծո և մեղավոր մարդու միջև: Աստծո ողորմությունը երևում է երկու տարբեր կերպերով: Առաջինը՝ Աստված փակեց Ադամի ճանապարհը դեպի կյանքի ծառը, որպեսզի նա չուտեր դրանից և չապրեր՝ հավիտյան մնալով մեղավոր վիճակում և լինելով թշնամացած՝ Աստծո հետ (խոսք 22-24): Երկրորդը՝ Աստված վերցրեց անմեղ զոհի կյանքը՝ Ադամին և Եվային ծածկոցներ տալու համար (խոսք 21): Սա խորհրդանշում է անմեղ կողմի զոհը՝ մեղավորի փոխարեն, որի վերջնական լրումը Աստծո միակ Որդու զոհն է Գողգոթայում՝ ամբողջ աշխարհի մեղքերի համար:

2. Ինչպե՞ս է Եսայի 59.1,2-ը բացատրում Աստծո հարաբերությունների փոփոխությունը Ադամի հետ: Ի՞նչ է սովորեցնում մեզ այս հատվածը այն մասին, թե ինչպիսին է մեր մեղքը և ինչպես է այն ազդում մեր և Աստծո հարաբերությունների վրա:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը ցույց է տալիս Աստծո անհանդուրժողականությունը մեղքի հանդեպ: Քանի որ Աստված սուրբ և արդար է, մեղքը մշտապես բաժանություն կբերի Աստծո և մեղավորի միջև: Ամբակում 1.13-ում մարգարեն խոսեց հետևյալը Աստծո սրբության և մեղքի հանդեպ նրա վերաբերմունքի մասին. «Դու, որ աչքերդ մաքուր են չարություն տեսնելուց, և անիրավության մտիկ տալ (կամ՝ բարեհաճությամբ նայել) չես կարող»: Ահա թե ինչու Աստված ուղարկեց Իր միակ Որդուն՝ վճարելու համար մեղքի պարտքը, որպեսզի Նա անխաթար հարաբերություններ ունենա մեզ հետ հավատքի միջոցով (Հռոմեացիների 5.1):

3. Համաձայն Ծննդոց 3.8,9-ի՝ ո՞վ հետամուտ եղավ Ադամին և Եվային անմիջապես նրանց անկումից հետո: Ի՞նչ է սա սովորեցնում մեզ Աստծո բնավորության և անկում ապրած մարդու հետ հաղորդակցվելու ցանկության մասին:

_____

_____

_____

_____

_____

4. Համաձայն Գործք 17.26,27-ի՝ ինչո՞ւ Աստված Իր իշխանությամբ որոշեց բոլոր մարդկանց ծնվելու և ապրելու վայրերը: Ինչ կերպով է սա ցույց տալիս, որ Աստված հաղորդակցվող է և ցանկանում է հաղորդակցվել անկում ապրած մարդու հետ:

_____

_____

_____

_____

_____

5. Համաձայն Ղուկաս 19.10-ի՝ ինչո՞ւ Աստված ուղարկեց Իր Որդուն այս երկիր: Ո՞րն էր Նրա մարմնավորման նպատակը: Ինչ կերպով է սա ցույց տալիս, որ Աստված հաղորդակցվող է և ցանկանում է հաղորդակցվել անկում ապրած մարդու հետ:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարևոր է նշել, որ Հիսուսն ասաց այս խոսքերը, երբ Զաքեոսի տանն էր: Զաքեոսը հարկահավաք էր և տխրահռչակ մեղավոր: Իր իսկ խոստովանությամբ, նա զրկել էր մարդկանց՝ հարստանալու համար: Ղուկասի պատմությունը Հիսուսի և Զաքեոսի հանդիպման մասին պարզորեն ցույց է տալիս այն ճշմարտությունը, որը Հիսուսը հռչակեց Ղուկաս 19.10-ում. Նա «եկավ, որ որոնի և ապրեցնի կորածին»:

6. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչ կատարեց Աստծո Որդին՝ մարդու և Աստծո խաթարված հարաբերությունները վերականգնելու համար:

ա. *Հռոմեացիների 5.8-10*

_____

_____

_____

_____

_____

_____

բ. *Կողոսացիների 1.19-22*

_____

_____

_____

_____

_____

_____

7. Համաձայն Հովհաննես 17.3-ի՝ ո՞րն է հավիտենական կյանքի էությունը: Ինչպե՞ս է այս պնդումը ցույց տալիս, որ Աստված հաղորդակցվող է և ցանկանում է շփվել Իր ժողովրդի հետ:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ճանաչել» բառը նշանակում է շատ ավելին, քան պարզապես անանձնական կամ փաստացի գիտելիքը: Այն խոսում է մտերիմ, անձնական հարաբերությունների մասին: Հավիտենական կյանքը շատ ավելին է, քան պարզապես անվերջ տևող կյանքը: Այն կյանքի գերազանց որակ է, որը բնութագրվում է Աստծո հետ անխաթար հարաբերություններով: Սա Աստծո մեծագույն նպատակներից մեկն է, որոնց համար Նա հաշտեցրեց մեզ Իր հետ՝ Իր Որդու միջոցով:

8. Մեր՝ քրիստոնյաներիս հարաբերություններն Աստծո հետ վերականգնվել են այն կատարյալ աշխատանքի հիման վրա, որը Քրիստոսը կատարեց մեր փոխարեն: Այս նոր հարաբերությունները չեն կարող խաթարվել: Այնուամենայնիվ, այս ճշմարտությունը չպետք է անփույթ դարձնի մեզ մեղքի հանդեպ, այլ պետք է դրդի առանձնանալ ցանկացած բանից, ինչը կարող է խոչընդոտել մեր շփմանը Աստծո հետ: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Բ Կորնթացիների 6.14-18*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը չի պատվիրում մեզ հեռանալ բոլոր անհավատներից: Կորնթացիներին ուղղված իր առաջին նամակում Պողոսը գրում է. «Գրեցի ձեզ թղթում չխառնվել պոռնիկների հետ: Եվ ոչ թե ամենևին այս աշխարհի պոռնիկների կամ ագահների հետ, կամ հափշտակողների հետ, կամ կռապաշտների հետ, ապա թե ոչ՝ պետք էր ձեզ, որ հենց աշխարհից դուրս գնայիք» (Ա Կորնթացիների 5.9,10): Երկրորդ Կորնթացիների 6.14-18-ի գաղափարն այն է, որ մենք պետք է հեռանանք ցանկացած բանից, ինչն ուղղակիորեն արգելված է Աստվածաշնչում կամ ինչը կարող է մեղքի մեջ տանել մեզ:

բ. *Բ Տիմոթեոս 2.19*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. *«Ետ կենալ»*-ը թարգմանված է հունարեն «***աֆիստեմի***» բառից, որը նշանակում է «նահանջել, հեռացնել, հեռանալ կամ թողնել»: Մենք կանչված ենք ետ կանգնելու և հեռու մնալու ամեն անիրավությունից»:

9. Ինչպես արդեն նշեցինք, մեր հարաբերություններն Աստծո հետ վերականգնվել են Քրիստոսի կատարյալ աշխատանքի հիման վրա: Այնուամենայնիվ, այս ճշմարտությունը չպետք է անտարբերություն առաջացնի մեզանում: Այն պետք է դրդի մեզ ոչ միայն հեռանալ մեղքից, այլև գործուն կերպով փնտրել Աստծուն և ավելի խորը հարաբերություններ կառուցել Նրա հետ: Ինչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Ովսե 6.3*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 27.4*

_____

_____

_____

_____

գ. *Սաղմոս 27.8*

_____

_____

_____

_____

10. Մենք՝ քրիստոնյաներս, ոչ միայն պետք է պահպանենք մեր հարաբերություններն Աստծո հետ, այլև պարտավոր ենք ազդարարել Ավետարանն այլ մարդկանց, որպեսզի նրանք նույնպես ստանան այս վերականգնված շփումն Աստծո հետ: Ի՞նչ է սովորեցնում մեզ Բ Կորնթացիների 5.18-20-ը այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 8. Աստված մեծ է

Գոյություն ունի միայն մեկ Աստված, և միայն Նա է մեծ: Մնացած բոլոր էակները, առարկաները և երևույթներն ամբողջությամբ կախված են Նրա բարությունից և զորությունից: Մենք երբեք չպետք է համեմատենք Արարչին որևէ էակի, առարկայի և երևույթի հետ: Որպես ինքնագո Արարիչ՝ Նա անսահմանորեն վեր է Իրենից կախման մեջ գտնվող և սահմանափակ արարչագործությունից: Ամենազորավոր հրեշտակապետը նույնքան հեռու է Աստված լինելուց, որքան փոքրագույն մանրէն: Աստված անհամեմատելի՜ է: Այս ճշմարտությունն անչափ կարևոր է հավատացյալների մարմնի՝ Եկեղեցու համար: Թե՛ Աստվածաշնչում, և թե՛ Եկեղեցու պատմության ընթացքում գոյություն չունեն Աստծո մեծ ծառայողներ. նրանք ընդամենը տկար, մեղավոր և անհավատ մարդիկ են, ովքեր պատկանում են մեծ և ողորմած Աստծուն:

1. Ինչպե՞ս են հետևյալ աստվածաշնչյան հատվածները նկարագրում Աստծուն:

   ա. *Տերը մեծ Ա_____ է և մեծ Թ_____ (Սաղմոս 95.3):*

   բ. *Տերը Մ_____ և Ա_____ Աստված է (Դանիել 9.4):* «Ահավոր» բառը թարգմանված է եբրայերեն ***«յարե»*** բառից, որը նշանակում է «վախենալ, երկյուղածություն զգալ կամ վախեցած լինել»: Ամենափոքր հայտնությունն Աստծո մեծության և սրբության մասին զարմանք, երկյուղածություն և վախ կներշնչի նույնիսկ Նրա ամենափառավոր ստեղծագործությունների մեջ: Այդ իսկ պատճառով, նա արժանի է մեծագույն երկյուղածությանը:

   գ. *Տերը շատ Մ_____ է. Նա գեղեցկություն և փառք է հագած (Սաղմոս 104.1):* Աստծո գեղեցկությունը և մեծությունը՝ արտաքին պարագաներ չեն, որոնք Նա հանդերձի պես հագնում է, այլ՝ Նրա էության մասը: Ի տարբերություն մարդկանց՝ Աստված կարիք չունի որևէ բանի՝ Իր մեծությունը կամ գեղեցկությունն ավելի արտահայտիչ դարձնելու համար:

2. Ինչպե՞ս է Աստծո մեծությունը նկարագրվում Սաղմոս 145.3-ում:

   ա. *«Նրա մեծությանը Չ_____ չկա»:* Աստծո մեծությունն անքննելի և անիմանալի է. այն անկարելի է հայտնաբերել կամ որոշել: Շատ ավելի հեշտ կլիներ հաշվել ամբողջ աշխարհի ավազահատիկները բոլոր օվկիանոսներում և անապատներում, կամ բոլոր աստղերը՝ երկնքում, քան չափել Աստծո մեծությունը:

3. Ի՞նչ են հաստատում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո մեծության մասին: Ինչպե՞ս է միակ ճշմարիտ Աստված հակադրվում բոլոր կեղծ աստվածներին:

   ա. *Սաղմոս 77.13*

   _____

   _____

   _____

   _____

բ. *Սաղմոս 86.10*

_____

_____

_____

_____

գ. *Սաղմոս 95.3*

_____

_____

_____

_____

դ. *Սաղմոս 135.5*

_____

_____

_____

_____

4. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչպիսի՞ն պետք է լինի մեր վերաբերմունքը և արձագանքն Աստծո մեծությանը: Ինչպե՞ս մենք պետք է ապրենք՝ հասկանալով, որ Նրա մեծությունն անքննելի է:

ա. *Երկրորդ Օրինաց 32.3*

_____

_____

_____

_____

բ. *Ա Մնացորդաց 16.25*

_____

_____

_____

գ. *Սաղմոս 104.1*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Օրհնել» բառը թարգմանված է եբրայերեն «**բարակ**» բառից: Երբ այս բառն օգտագործվում է Աստծո վերաբերյալ, այն նշանակում է հիացմունքի, գոհության և փառաբանության ուրախալի բացականչություն:

դ. *Սաղմոս 111.2*

_____

_____

_____

ե. *Սաղմոս 138.5*

_____

_____

_____

Գլուխ 9. Աստված կատարյալ է

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Աստված կատարյալ է և ոչնչի կարիք չունի Իր անձի կամ գործերի համար: Աստծո մեջ չկա թերության որևէ նշույլ: Աստծո կատարելությունից կարելի է անչափ կարևոր հետևություններ անել: Առաջինը՝ Աստված չի փոխվում: Նա չի կարող դառնալ ավելի լավը, քան հիմա է, քանի որ Նա արդեն կատարյալ է, և Նա չի կարող որևէ պակասություն ունենալ, քանի որ այդ դեպքում Նա այլևս Աստված չէր լինի: Երկրորդը՝ այն հավաստիացնում է մեզ, որ Աստված արժանի է մեր բացարձակ վստահությանը:

ԱՍՏԾՈ ԳՈՐԾԵՐԸ ԿԱՏԱՐՅԱԼ ԵՆ

Աստված կատարյալ բնավորություն ունի բոլոր առումներով: Աստծո գործերը, որոնք բխում են Նրա բնավորությունից, նույնպես կատարյալ են: Այս զարմանալի ճշմարտությունից բխող հետևությունները պետք է այնպիսի վստահություն առաջացնեն մեզանում, որ հաղթահարեն մեր մեծագույն կասկածները: Այն ամենը, ինչ Աստված երբևէ արել է կամ կանի տիեզերքում և մեզնից յուրաքանչյուրի ներսում, կատարյալ է:

1. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո գործերի կատարյալ լինելու մասին:

ա. *Երկրորդ Օրինաց 32.3,4*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 18.30*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կատարյալ» բառը թարգմանված է եբրայերեն «**թամիմ**» բառից: Կարևոր է նշել, որ գոյություն ունի անմիջական կապ Աստծո բնավորության, գործերի և Խոսքի միջև: Քանի որ Աստծո բնավորությունը կատարյալ է, Նրա ճանապարհները և Խոսքը նույնպես կատարյալ են:

գ. *Ժողովող 3.14*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն, որ Աստծո գործերն ամբողջական կամ կատարյալ են, պետք է դրդի մեզ երկյուղածություն կամ վախ տածել Նրա հանդեպ:

2. Աստված գործում է ոչ միայն Իր ստեղծագործության, այլև՝ Իր ժողովրդի մեջ: Ամեն քրիստոնյա՝ Աստծո գործն է: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Եփեսացիների 2.10*

_____

_____

_____

բ. *Փիլիպեցիների 2.13*

_____

_____

_____

գ. *Փիլիպեցիների 1.6*

_____

_____

_____

3. Ամբողջ ստեղծագործության Աստված աշխատում է ամեն քրիստոնյայի կյանքում: Նրա գործը կատարյալ է, և Նա անպատճառ ավարտին կհասցնի այն: Այս ճշմարտությունն ավելին է, քան մարդկային միտքը կարող է հասկանալ. կատարյալ Աստված կատարյալ աշխատանք է կատարում մեզանում, որպեսզի կատարյալ դարձնի մեզ: Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչպե՞ս մենք պետք է արձագանքենք այս ճշմարտությանը:

ա. *Սաղմոս 92.4*

_____

_____

_____

բ. *Սաղմոս 107.22*

_____

_____

_____

գ. *Փիլիպեցիների 2.12,13*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Որպես հավատացյալներ՝ մենք պետք է ոչ թե «գործենք մեր փրկության համար», այլ «գործենք մեր փրկությունը»: Մենք պետք է ապրենք մեր քրիստոնեական կյանքն աստվածաշնչյան երկյուղածությամբ և վստահությամբ առ Աստված: «Դողալ» բառը, հավանաբար, ընդգծում է և՛ քրիստոնեական կյանքի լրջությունը, և՛ խոնարհության կարիքը, որի շնորհիվ մենք դադարում ենք վստահել մեր ուժերին և իմաստությանը, և ապրում ենք կախման մեջ՝ Աստծուց:

ԱՍՏԾՈ ԿԱՄՔԸ ԿԱՏԱՐՅԱԼ Է

Աստծո կամքը կատարյալ է, որովհետև այն հիմնված է Նրա կատարյալ և ամենասուրբ բնավորության վրա: Այս ճշմարտությունն այնքան կարևոր է: Աստծո նպատակը և ծրագիրը մեզ համար արժանի են բացարձակ վստահության: Մենք երբեք չպետք է ապավինենք մեր հասկացողությանը կամ ձգտենք վարվել այնպես, ինչպես ճիշտ ենք համարում: Փոխարենը՝ պետք է վստահենք Աստծուն և հնազանդվենք Նրա Խոսքին՝ Աստվածաշնչին:

1. Ինչպե՞ս է Աստծո կամքը նկարագրվում Հռոմեացիների 12.2-ում:

ա. *Բ_____:* Այս բառը թարգմանված է հունարեն «***ագաթո՛ս***» բառից և նշանակում է «բարի, օգտակար կամ ազնիվ»:

բ. Հ_____*(կամ՝ ընդունելի):* Այս բառը թարգմանված է հունարեն «***յուա՛րեստոս***» բառից և նշանակում է «հաճելի, հավանության արժանացած կամ ընդունելի»:

գ. Կ_____*:* Այս բառը թարգմանված է հունարեն «***տե՛լեյոս***» բառից և նշանակում է «ամբողջական և ոչնչի պակաս չունեցող»:

դ. *Ի՞նչ կերպով Աստծո կամքի նկարագրությունը Հռոմեացիների 12.2-ում պետք է դրդի մեզ հնազանդ լինել Աստծո կամքին:*

_____

_____

_____

_____

2. Հետևյալ աստվածաշնչյան հատվածները ցույց են տալիս, թե ինչպես արձագանքել Աստծո բարի, հաճելի (կամ՝ ընդունելի) և կատարյալ կամքին: Կարդացե՛ք դրանք և գրի՛ առեք ձեր մտքերը:

ա. *Համաձայն Մատթեոս 6.9,10-ի՝ ինչպե՞ս մենք պետք է խնդրենք Աստծո կամքը:*

_____

_____

_____

_____

բ. *Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչպե՞ս մենք պետք է կատարենք Աստծո կամքը:*

(1) Սաղմոս 40.8

_____

_____

_____

_____

(2) Եփեսացիների 6.6

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքի անմիջական համատեքստը Պողոսի խոսքերն են այն մասին, թե ինչպես քրիստոնյա ստրուկները պետք է ծառայեն իրենց տերերին: Այնուամենայնիվ, այս ճշմարտություններն ավելի լայն կիրառություն ունեն հավատացյալի կյանքի ամեն մի բնագավառում:

գ. *Ինչպե՞ս է Տեր Հիսուս Քրիստոսի կյանքը պատկերում պատշաճ վերաբերմունքը և արձագանքն Աստծո կամքին: Ինչպե՞ս մենք պետք է նմանակենք Նրան:*

(1) Հովհաննես 4.32-34

_____

_____

_____

_____

(2) Հովհաննես 5.30

_____

_____

_____

_____

3. Ամենակարևոր ճշմարտություններից մեկը քրիստոնեության մեջ այն է, որ Աստծո կամքը հայտնվում է նախ և առաջ Աստծո Խոսքում (այսինքն՝ Աստվածաշնչում): Ինչպես և Աստծո կամքը, Աստծո Խոսքը կատարյալ է, քանի որ Աստված է Խոսքի Հեղինակը և Պահապանը: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին: Ինչպե՞ս մենք պետք է արձագանքենք դրանց:

ա. *Սաղմոս 19.7*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Անարատ» (կամ՝ կատարյալ) բառը թարգմանված է եբրայերեն «***թամիմ***» բառից, որը նշանակում է «կատարյալ, ամբողջական, ողջամիտ կամ անարատ»: «Ճշմարիտ» (կամ՝ հաստատ) բառը թարգմանված է եբրայերեն «***ման***» բառից, որը նշանակում է «հաստատված, հուսալի և վստահելի»:

բ. *Սաղմոս 12.6*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշունչը բացարձակապես վստահելի է՝ Աստծո կամքն իմանալու հարցում: Հին ժամանակներում արծաթը զտելու կամ մաքրելու հետաքրքիր մեթոդ կար: Այն հալեցվում էր ուժգին տաքության միջոցով, դրանում գտնվող անմաքրությունները բարձրանում էին մակերես և հեռացվում էին: Համեմատությունն այն մասին, որ Աստծո Խոսքը նման է յոթ անգամ պարզված արծաթի, նշանակում է, որ այն բացարձակապես մաքուր և վստահելի է:

գ. *Բ Տիմոթեոս 3.16,17*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Աստվածաշունչ» (կամ՝ «Աստծուց ոգեշնչված») բառը թարգմանված է հունարեն «***թեո՛պնեուստոս***» բառից: Աստվածաշունչը բացարձակապես վստահելի վկայություն է Աստծո կամքի մասին, քանի որ այն ամբողջովին «դուրս է գալիս Աստծո բերանից» (Երկրորդ Օրինաց 8.3, Մատթեոս 4.4):

4. Աստծո Խոսքը՝ Աստծո կամքի հայտնության գլխավոր աղբյուրն է: Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչպիսի՞ն պետք է լինի մեր վերաբերմունքը և արձագանքն այս ճշմարտությանը:

ՃԱՆԱՉԵԼ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈՒՆ

ա. *Սաղմոս 1.1,2*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 119.47,48*

_____

_____

_____

_____

գ. *Սաղմոս 119.127,128*

_____

_____

_____

_____

դ. *Եզրաս 7.10*

_____

_____

_____

_____

ե. *Բ Տիմոթեոս 2.15*

_____

_____

_____

_____

Գլուխ 10. Աստված հավիտենական է

Աստծո ամենազարմանալի հատկանիշներից մեկը (և այն բազմաթիվ հատկանիշներից մեկը, որոնք առանձնացնում են Նրան ամբողջ ստեղծագործությունից) Նրա հավիտենական գոյությունն է. Նա չունի սկիզբ և վերջ: Երբեք չի եղել այնպիսի ժամանակ, որ Նա գոյություն ունեցած չլինի, և չի լինի այնպիսի ժամանակ, որ Նրա գոյությունը դադարի: Նա ամեն բաներից առաջ է, և Նա կլինի, երբ ամեն բան անցնի: Աստծո հավիտենական լինելը պարզապես չի նշանակում, որ Նա միշտ գոյություն է ունեցել և գոյություն կունենա տարիներ շարունակ. այս փաստը նաև նշանակում է, որ Աստված ենթակա չէ ժամանակին. Նա միշտ ***է*** և երբեք չի փոխվում: Ոչ մի անձ և ոչինչ ստեղծագործության մեջ չունի այս հատկանիշը: Մեր կյանքն ակնթարթային է, իսկ Աստծունը՝ հավիտենական: Նա ստեղծել է մեզ, բայց ոչ ոք չի ստեղծել Նրան: Մեր գոյությունն իսկ կախված է Նրանից, բայց Նա կախված չէ ոչնչից և ոչ ոքից: Մեր երկրային գոյությունն սպառվում է ավազի ժամացույցի սորացող ավազի պես, բայց Նա հավերժ կենդանի է: Նա Աստված էր, Աստված է և հավիտյան Աստված է լինելու:

1. Աստվածաշնչում մարդու անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ է վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում, և ի՞նչ են դրանք սովորեցնում մեզ Նրա հավիտենական լինելու մասին:

   ա. *Ես Ե_____, որ Ե_____ (Ելից 3.14):* Այս պնդումը ցույց է տալիս, որ գոյությունը՝ Աստծո էական հատկանիշներից մեկն է: Ի տարբերություն մարդուն՝ Աստված չի պահպանում Իր գոյությունը՝ գործադրելով Իր կամքը կամ ջանք անելով: Նա պարզապես ***է***:

   բ. Հ_____ *Աստված (Եսայի 40.28):* Նա, ով «հավիտենական» է, կմնա հավիտյան: Աստծո դեպքում, այս բառը վերաբերում է ոչ միայն ապագային, այլև՝ անցյալին: Նա միշտ եղել է և միշտ կլինի:

   գ. Հ_____ *(Դանիել 7.9):* Եթե օգտագործենք «ծեր» կամ «տարեց» բառերը՝ որևէ մարդու նկարագրելու համար, դրանք սովորաբար կնշանակեն զառամյալ տարիք, նաև՝ մտքի և մարմնի տկարություն: Այնուամենայնիվ, երբ Հինավուրց ենք անվանում Աստծուն, մենք շեշտադրում ենք Նրա մեծությունը, շուքը, զորությունը և իմաստությունը, Ով գոյություն ուներ, երբ դեռ չկային աշխարհի հիմքերը, և կշարունակի գոյություն ունենալ, երբ այս աշխարհն անցնի:

   դ. *Ա_____ և Օ_____ (Հայտնություն 1.8):* Սրանք հունարեն այբուբենի առաջին և վերջին տառերն են: Այս արտահայտությունը տպավորիչ կերպով ցույց է տալիս, որ Աստված առաջինը և վերջինն է (կարդացե՛ք նաև Եսայի 44.6): Նա ամեն բանից առաջ է, և կլինի՝ երբ ամեն բան անց կենա:

2. Մենք դիտարկեցինք Աստծո անունները, որոնք խոսում են Նրա հավիտենական էության մասին: Այժմ կդիտարկենք մի շարք կարևորագույն պնդումներ Աստվածաշնչից: Ի՞նչ են դրանք սովորեցնում մեզ Աստծո հավիտենական լինելու մասին և Նրա հարաբերությունների մասին Իր ստեղծագործության հետ: Ինչպե՞ս են այս հատվածները ցույց տալիս Նրա մեծությունը:

ա. *Հոբ 36.26*

_____

_____

_____

բ. *Սաղմոս 90.2*

_____

_____

_____

գ. *Սաղմոս 90.4, Բ Պետրոս 3.8*

_____

_____

_____

3. Աստված հավիտենական է. Նա չունի սկիզբ և վերջ: Ի՞նչ է նշանակում Նրա հավիտենական լինելը ամբողջ ստեղծագործության համար, հատկապես՝ Աստծո ժողովրդի: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները: Գրի՛ առեք ձեր մտքերը:

ա. *Աստծո թագավորությունը հավիտենական է*

(1) Երեմիա 10.10

_____

_____

_____

(2) Սաղմոս 45.6

_____

_____

_____

(3) Սաղմոս 145.13, Դանիել 4.34

_____

_____

_____

բ. *Աստծո խոսքը հավիտենական է (Եսայի 40.6-8, կարդացե՛ք նաև Ա Պետրոս 1.24,25):*

_____

_____

_____

_____

գ. *Աստծո փրկությունը և հոգատարությունն Իր ժողովրդի հանդեպ հավիտենական են:*

(1) Երկրորդ Օրինաց 33.27

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ապավեն» բառը նշանակում է, որ Աստված բնակավայր կամ ապաստան է Իր ժողովրդի համար: «Աստծո բազուկները ցածում» արտահայտությունը նշանակում է, որ Աստված աջակցում և ուժ է տալիս Իր ժողովրդին:

(2) Սաղմոս 48.14

_____

_____

_____

(3) Սաղմոս 102.25-28

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը հակադրում է ստեղծագործությունը (այսինքն՝ երկինքը և երկիրը) և Աստծո հոգատարությունն Իր ժողովրդի համար: Առաջինն անցողիկ է, իսկ երկրորդը՝ հավերժական:

(4) Եսայի 26.3,4

_____

_____

_____

(5) Եսայի 40.28-31

_____

_____

_____

(6) Մատթեոս 28.20

_____

_____

_____

4. Ինչպիսի՞ն պետք է լինի մեր արձագանքն Աստծո հավիտենական լինելուն: Ինչպե՞ս մենք պետք է ապրենք և վարվենք Նրա առջև: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները:

ա. *Ա Մնացորդաց 16.36*

_____

_____

_____

_____

բ. *Դանիել 4.34*

_____

_____

_____

_____

գ. *Ա Տիմոթեոս 1.17*

_____

_____

_____

_____

Գլուխ 11. Աստված ինքնագո և ինքնաբավ է

Ամենից երկյուղածություն ներշնչող և խոնարհեցնող ճշմարտություններից մեկն Աստծո մասին այն է, որ Նա բացարձակապես չունի ոչ մի կարիք և կախված չէ ոչնչից: Նրա գոյությունը, Նրա կամքի իրականացումը և Նրա ուրախությունը կամ հաճությունը ինքնագո, ինքնաբավ, ինքնապահպանվող, անկախ և ազատ են: Մնացած բոլոր էակներն ստանում են իրենց կյանքը և օրհնություններն Աստծուց, իսկ Աստված չունի ոչ մի պակասություն կամ կարիք և կախված չէ ոչ ոքից: Այն, որ ինչ-որ մեկը սովորեցնում է կամ նույնիսկ ակնարկում է, որ Աստված ստեղծեց մարդուն, որովհետև Նա միայնակ էր կամ անլիարժեք, կոպտորեն հակասում է Աստվածաշնչին: Աստված չէր ստեղծել տիեզերքը կամ մարդուն, որովհետև Նա ինչ-որ կարիք ուներ, այլ որովհետև Նա ցանկանում էր հայտնի դարձնել Իր կատարելությունների, փառքի և բարության առատությունը:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուն է Աստված վերագրում Իրեն Ելից 3.14-ում: Ի՞նչ է այն հայտնում մեզ Նրա ինքնաբավ լինելու մասին:

   ա. *«Ես Ե_____, որ Ե_____» (Ելից 3.14):* Այս անունը ցույց է տալիս, որ Աստծո գոյությունը սկիզբ չի առել և ո՛չ էլ կախված է ինչ-որ բանից կամ ինչ-որ մեկից՝ Իրենից դուրս: Լինելը՝ Աստծո էությունն է. Նա պարզապես ***է*** առանց ջանք անելու: Աստված չունի ոչ մի կարիք, որը պետք է հոգալ, ոչ մի բաց, որը պետք է լրացնել, և ոչ մի նպատակ, որն իրականացնելու համար կողմնակի օգնություն է անհրաժեշտ: Ա Կորնթացիների 15.10-ում Պողոս առաքյալը հայտարարեց այն, ինչը ճշմարիտ է բոլոր մարդկանց համար. «Աստծո շնորհքով եմ՝ ինչ որ եմ»: Միայն Աստված կարող է Իր գերազանցության և զորության հիման վրա հայտարարել՝ «ԵՍ ԵՄ, ՈՐ ԵՄ»:

2. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո ինքնագո և ինքնաբավ լինելու մասին: Ինչպե՞ս են այս հատկանիշները հայտնում Աստծո մեծությունը:

   ա. *Սաղմոս 36.9*

   _____

   _____

   _____

   _____

   _____

   բ. *Հովհաննես 5.26*

   _____

   _____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո կյանքը կամ գոյությունը չի բխում որևէ մեկից կամ որևէ բանից՝ Իրենից դուրս: Նա է կյանքը: Գոյություն ունենալը՝ Նրա իսկ էությունն է: Մնացած ամեն ինչի գոյությունը՝ տեսանելի կամ անտեսանելի, կենդանի կամ անկենդան, կախված է Նրանից: Միայն Աստված է ճշմարտապես ազատ կարիքից կամ կախում ունենալուց:

3. Աստծո ինքնաբավ լինելը արտահայտում է Նրա անսահման մեծությունը և բարձր դիրքն Իր ստեղծագործությունից: Բոլոր անձերի, առարկաների և երևույթների գոյությունն իսկ կախված է Նրանից, իսկ Նա կախված չէ ոչ ոքից: Գործք 17.22-31-ում գրված է Պողոս առաքյալի քարոզը՝ ուղղված էպիկուրյան և ստոիկյան փիլիսոփաներին, Մարսի բլրի վրա: Խոսքեր 24,25-ում նա հերքում է նրանց կռապաշտական պատկերացումները՝ անելով երեք շատ կարևոր հայտարարություն ճշմարիտ և կենդանի Աստծո մասին: Ի՞նչ են սովորեցնում մեզ այս հայտարարությունները Աստծո ինքնաբավ լինելու մասին և այն կապի մասին, որը Նա ունի Իր ստեղծագործության հետ:

ա. *Աստված չի բնակվում ձեռագործ տաճարներում (խոսք 24):*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Եսայի 66.1,2-ում Աստված հայտարարում է. «Երկինքը Իմ աթոռն է և երկիրը՝ Իմ ոտքերի պատվանդանը: Դա ի՞նչ տուն է, որ շինում եք Ինձ համար, և դա ի՞նչ տեղ է Իմ հանգստության համար: Այդ ամենն էլ Իմ ձեռքն է արել, և եղավ այդ ամենը,- ասում է Տերը»: Գ Թագավորաց 8.27-ում Սողոմոնն աղոթեց. «Բայց իրա՞վ Աստված կբնակվի այս երկրի վրա: Ահա երկինքը և երկինքների երկինքը չեն կարող Քեզ պարունակել, ուր մնաց իմ այս շինած տունը»:

բ. *Աստված մարդկանց ձեռքով չի պաշտվում (կամ՝ ծառայություն ընդունում) (խոսք 25):*

_____

_____

_____

_____

գ. *Աստված ոչնչի կարոտ չէ (կամ՝ ոչնչի կարիք չունի), (խոսք 25):*

_____

_____

_____

_____

4. Եզրափակելով մեր ուսումնասիրությունն Աստծո ինքնագո և ինքնաբավ լինելու մասին՝ մենք կդիտարկենք Սաղմոս 50.8-15-ը: Ի՞նչ է սովորեցնում այս հատվածը Աստծո այս հատկանիշների մասին, ինչպես նաև՝ Նրա և մեր հարաբերությունների մասին: Արդյո՞ք Աստծուն որևէ բան է պետք մեզնից: Ի՞նչ է ցանկանում Աստված Իր ժողովրդից:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծուն պետք չէ մեր օգնությունը և նույնիսկ՝ մեր զոհաբերությունները: Աստված Իր ժողովրդից ցանկանում է վստահություն, գոհություն և հնազանդություն: Առաջին Թագավորաց 15.22-ում Սամուել մարգարեն հայտարարեց. «Մի՞թե Տերը այնքան հավանում է ողջակեզների և զոհերի, ինչպես Տիրոջ ձայնը լսելուն: Ահա հնազանդությունը զոհից լավ է, և ականջ դնելը՝ խոյերի ճարպից»:

Գլուխ 12. Աստված անփոփոխ է

«Անփոփոխ» բառը լատիներենում «***իմմուտաբիլիս***» բառն է («***ին***» կամ «***իմ***» = ան + «***մուտաբիլիս***» = անհաստատ կամ փոփոխվող»: Այս աստվածային հատկանիշը հասկանալու համար մենք կարող ենք օգտագործել, օրինակ, «հաստատուն», «մնայուն» և «հավատարիմ» բառերը: Աստծո անփոփոխ լինելը նշանակում է, որ Նրա հատկանիշները և խորհուրդը երբեք չեն փոխվում: Աստված չի աճում, զարգանում կամ բարելավվում. Նա արդեն կատարյալ է: Նույնպես՝ Նա չի կարող նվազել, վատթարանալ կամ հետընթաց ապրել, քանի որ այդ դեպքում Նա արդեն Աստված չէր լինի: Աստված միշտ եղել է և կլինի այնպիսին, ինչպիսին Նա ***է***: Նա չի փոխում Իր միտքը: Նա չի փոխում Իր հրամաններն այլ հրամաններով: Նա չի խոստանում, իսկ հետո փոխում Իր խոսքը: Նա չի սպառնում և անկատար թողնում Իր ասածը: Սա հատկապես մխիթարող է մեզ համար, քանի որ հավանականությունը, որ Ամենակարող Աստված հանկարծ կարող էր չար դառնալ կամ փոխել Իր միտքը, սարսափելի կլիներ: Աստծո անփոփոխ լինելը՝ Նրա ամենակարևոր հատկանիշներից մեկն է, քանի որ այն երաշխավորում է, որ Նա և Նրա Խոսքը լինելու են նույնը երեկ, այսօր և հավիտյան (Եբրայեցիների 13.8): Նա Միակն է ամբողջ տիեզերքում, Ով մնայուն է, և Միակը, Ով արժանի է մեր բացարձակ վստահությանը:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ են վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում, և ի՞նչ են դրանք սովորեցնում մեզ Նրա անփոփոխ լինելու մասին:

   ա. *Ես Ե_____, որ Ե_____ (Ելից 3.14):* Այս անունն առաջացել է եբրայերեն *«հայահ»* բառից, որը նշանակում է «լինել» կամ «գոյություն ունենալ»: Այն մատնանշում է ոչ միայն Աստծո հավիտենական էությունը և ինքնագո լինելը, այլև՝ Նրա անփոփոխ լինելը: Նա ***միշտ է***, և Նա ***միշտ նույնն է***:

   բ. *«Ժայռը» (Երկրորդ Օրինաց 32.4, NASB):* Այս անունը շատ բացատրությունների կարիք չունի: Արարչագործության մեջ գոյություն ունեն քիչ բաներ, որոնք ավելի կայուն կամ անփոփոխ են, քան քարերը, ժայռերը և դրանցից կազմված սարերը: Այն, որ նույնիսկ այս փոխաբերությունը լիարժեք կերպով չի ներկայացնում Աստծո անփոփոխ լինելը, մխիթարություն է ներշնչում: Նույնիսկ երբ այս երկրի բոլոր ժայռերը փոշի դառնան, Աստված կմնա նույնը:

2. Մենք դիտարկեցինք Աստծո անունները, որոնք խոսում են Նրա անփոփոխ լինելու մասին: Այժմ կդիտարկենք մի շարք կարևորագույն պնդումներ Աստվածաշնչից այս հատկանիշի վերաբերյալ: Ի՞նչ են դրանք սովորեցնում մեզ Աստծո անփոփոխ էության և Նրա հարաբերությունների մասին Իր ստեղծագործության հետ: Ինչպե՞ս են այս հատվածները ցույց տալիս Նրա մեծությունը:

   ա. *Սաղմոս 102.25-27*

   _____

   _____

   _____

   _____

բ. *Մաղաքիա 3.6*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքը տպավորիչ կերպով ցույց է տալիս, թե ինչ ազդեցություն ունի Աստծո անփոփոխ լինելը Իր և Իր ժողովրդի հարաբերությունների վրա: Նույնիսկ այն ժամանակ, երբ Իսրայելն անհավատարիմ էր Աստծուն, Նա հավատարիմ էր, որովհետև Նա չի փոխվում, և Նրա խոստումներն անկատար չեն մնում:

գ. *Հակոբոս 1.17*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Նոր անգլերեն թարգմանության» մեջ գրված է. «Բոլոր առատաձեռն նվերները և ամեն մի կատարյալ պարգև վերևից է, իջնում է լույսերի Հորից, Ում մեջ չկա փոփոխության նույնիսկ չնչին ակնարկ» (Հակոբոս 1.17, NET):

դ. *Եբրայեցիների 13.8*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մեր փրկությունն ապահով է, որովհետև մեր Մեծ Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոսն (Տիտոս 2.13) անփոփոխ է: Նրա կատարյալ էությունը, Նրա փրկությունը և Նրա բոլոր խոստումները նույնն են երեկ, այսօր և հավիտյան:

3. Մենք դիտարկեցինք մի շարք աստվածաշնչյան հատվածներ Աստծո անփոփոխ լինելու մասին: Այժմ կդիտարկենք աստվածաշնչյան հատվածներ Նրա Խոսքի և խորհրդի անփոփոխ լինելու մասին: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածները Աստվածաշնչի անփոփոխ լինելու մասին: Ի՞նչ են դրանք սովորեցնում մեզ Աստծո հարաբերությունների մասին Իր ստեղծագործության հետ, հատկապես՝ մարդու:

ա. *Ա Թագավորաց 15.29*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ա Թագավորաց 15.29-ում Աստվածաշունչը հայտարարում է, որ Աստված «մարդ չէ, որ զղջա»: Այս և նման հատվածներից պարզ է դառնում, որ Աստծո անփոփոխ լինելը վերաբերում է նույնիսկ Նրա խորհուրդներին և կամքին: Նա կատարյալ է իմաստությամբ և այդ պատճառով էլ չի սխալվում Իր որոշումների մեջ: Բայց ինչպե՞ս կարելի է հասկանալ այս ուսմունքը, երբ թվում է՝ այլ սուրբգրային հատվածներ սովորեցնում են հակառակը: Ծննդոց 6.6-ում Աստված «զղջաց, որ երկրի վրա մարդուն ստեղծեց»: Ելից 32.9-14-ում Տերը «ետ առավ այն... որ ասել էր» (կամ՝ «փոխեց Իր միտքը») Իսրայելի անհնազանդ ժողովրդին կործանելու վերաբերյալ: Վերջապես, Հովնան 3.10-ում Աստված «զղջաց» այն արհավիրքի համար, որը խոսել էր Նինվե քաղաքի վրա: Կարելի՞ է ասել, որ այս աստվածաշնչյան հատվածները հակասում են իրար: Մի՞թե Աստված փոխում է Իր միտքը: Պատասխանն այնքան առեղծվածային կամ խճճված չէ, որքան կարելի է պատկերացնել: Աստվածաշունչը պարզորեն սովորեցնում է, որ Աստծո կատարյալ հատկանիշները, նպատակները և խոստումները մշտապես նույնն են: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ Նրա հարաբերություններն Իր՝ ***մշտապես փոփոխվող*** ստեղծվածների հետ և Իր վերաբերմունքը նրանց հանդեպ չեն կարող փոխվել: Ծննդոց 6.6-ը պարզապես ներկայացնում է Աստծո սուրբ արձագանքը մարդու մեղքի հանդեպ և Նրա որոշումը մարդուն երկրի երեսից ջնջելու մասին (խոսք 7, նույնը՝ Ա Թագավորաց 15.11,26-ում): Ելից 32.9-14-ում Աստված «փոխեց Իր միտքը» Իսրայելի կործանման վերաբերյալ՝ Իր ողորմությամբ պատասխանելով Մովսեսի աղոթքին (այն աղոթքին, որը Մովսեսն աղոթեց Աստծո առաջնորդությամբ և զորությունով): Հովնան 3.4-10-ում Աստված «զղջաց» Նինվեի կործանման համար, երբ Նինվեն «զղջաց» իր մեղքերի համար: Այս հատվածները հիշեցնում են մեզ, որ Աստծո ***անփոփոխ լինելը*** չի նշանակում, որ Նա ***չի գործում***: Նա անփոփոխ է, բայց անգործ և անտարբեր չէ, և ներգրավված է Իր ստեղծագործության կյանքի մեջ: Նա գործում է և հաղորդակցվում է Իր ստեղծագործության հետ: Նա միշտ նույնն է, բայց Նրա հարաբերությունները և վարքը փոփոխական մարդու հետ տարբերվելու են՝ համաձայն նրա արձագանքի (Երեմիա 18.7-10, Եզեկիել 18.21-24): Սա չի հակասում Նրա անփոփոխ լինելուն, այլ ապացուցում է դա: Նա մշտապես արձագանքում է մարդկանց գործերին՝ համաձայն Իր անփոփոխ հատկանիշների:

բ. *Թվոց 23.19*

_____

_____

_____

_____

գ. *Սաղմոս 33.11*

_____

_____

_____

_____

4. Կարևոր է հասկանալ, որ Աստծո անփոփոխ լինելը կախված է ոչ միայն Նրա կատարելությունից, այլև Նրա զորությունից: Աստված անփոփոխ չէր լինի, եթե գոյություն ունենար ինչ-որ էակ կամ ուժ, որը Նրանից ավելի մեծ կլիներ և կկարողանար պարտադրել Նրան իր կամքը կամ վերահսկել Նրան: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո գերիշխանության և զորության մասին: Կա՞ արդյոք որևէ ստեղծված էակ, երևույթ կամ առարկա, որը կարող է «փոխել» Աստծուն:

ա. *Եսայի 14.24*

_____

_____

_____

_____

բ. *Եսայի 46.9,10*

_____

_____

_____

_____

գ. *Դանիել 4.34,35*

_____

_____

_____

_____

Գլուխ 13. Աստված ամենակարող է

«Ամենակարող» բառը լատիներենում ***«օմնիպոտենս»*** բառն է (***«օմնիս»*** = ամեն ինչ + «***պոտենս»*** = զորավոր) և կրում է անվերջանալի կամ անսահմանափակ զորություն ունենալու իմաստը: Աստծո դեպքում, այս բառը նշանակում է, որ Նա կարող է անել այն ամենը, ինչ որոշել է, և ոչ մի մարդ կամ ուժ չի կարող խանգարել Նրան կամ պարտավորեցնել՝ անելու հակառակը: Այն, որ Աստված կարող է ամեն ինչ, նշանակում է, որ Նա կարող է անել այն ամենը, ինչ համաձայնության մեջ է Նրա ամենասուրբ, արդար և սիրով լի էության հետ: Նա ***չի կարող*** հակասել Ինքն Իրեն, այսինքն՝ Նա չի կարող դաժան կամ եսասեր լինել. Նա չի կարող ստել. Նա չի կարող խախտել Իր տված խոստումը. Նա չի կարող անհեթեթ բաներ անել (օրինակ՝ ստեղծել քառակուսի շրջանակներ, քառանկյուն եռանկյունիներ կամ այնքա՜ն ծանր քարեր, որոնք Ինքն էլ չկարողանա բարձրացնել): Աստծո ամենակարող լինելը բացարձակ վստահություն է ներշնչում քրիստոնյային, քանի որ Աստված զորավոր է՝ անելու այն ամենը, ինչ խոստացել է: Այնուամենայնիվ, Աստծո ամենակարող լինելը սարսափ է ներշնչում անհավատին, որովհետև ոչ մի մարդ չի կարող հակառակվել Նրա կամքին կամ խուսափել Նրա դատաստանից:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ և տիտղոսներ են վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում:

   ա. *Ա* _____ *Աստված (Ծննդոց 17.1, Հայտնություն 4.8, 19.6):*

   բ. *Տերը՝ Ու* _____ *Պ* _____ *մեջ (կամ՝ Ուժեղ և Զորավոր) (Սաղմոս 24.8):*

   գ. *Զորավոր Վ* _____ *(Սաղմոս 31.2):*

   դ. *Զ* _____ *Ա* _____ *(Սաղմոս 61.3):*

   ե. *Հ* _____ *Աստված (Եսայի 9.6, 10.21):*

   զ. *Հ* _____ *(Ղուկաս 1.49):*

2. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո ամենակարող լինելու մասին: Կա՞ արդյոք Աստծո զորությունից մեծ որևէ բան:

   ա. *Երեմիա 32.17,27*

   _____

   _____

   _____

բ. *Մատթեոս 19.26 (Ղուկաս 1.37)*

_____

_____

_____

3. Աստծո ամենակարող լինելը նախ և առաջ վստահություն է ներշնչում մեզ, որ Նա կարող է իրագործել այն ամենը, ինչ որոշել է: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Հոբ 42.1,2*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 115.3*

_____

_____

_____

_____

գ. *Սաղմոս 135.5,6*

_____

_____

_____

_____

դ. *Եսայի 14.24,27*

_____

_____

_____

_____

ե. *Դանիել 4.35*

_____

_____

_____

_____

զ. *Եփեսացիների 1.11*

_____

_____

_____

_____

4. Աստվածաշնչում Աստծո ամենակարող լինելը այն հատկանիշներից մեկն է, որոնք ամենից ուշագրավ ձևով տարբերում են Նրան բոլոր անկյանք կուռքերից, որոնք մարդկանց ձեռքի գործ են: Կարդացե՛ք Սաղմոս 115.3-11-ը և պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ա. *Ինչպե՞ս է Սաղմոս 115.3-8-ը հակադրում Աստվածաշնչի Աստծուն մարդու ստեղծած անարժեք կուռքերի հետ:*

_____

_____

_____

_____

_____

_____

բ. *Համաձայն Սաղմոս 115.9-11-ի՝ ինչպե՞ս պետք է հավատացյալները արձագանքեն այս ճշմարտությանը:*

_____

_____

_____

_____

_____

_____

5. Աստծո ամենակարող լինելը մեծ նշանակություն ունի այն քրիստոնյայի համար, ով վստահում է Նրան, Նրա կամքին և Նրա խոստումներին: Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչ է նշանակում Աստծո ամենակարող լինելը նրանց համար, ովքեր հավատում են:

ա. *Հեսու 23.14*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 121.4,5*

_____

_____

_____

_____

գ. *Հռոմեացիների 8.31*

_____

_____

_____

_____

դ. *Փիլիպեցիների 1.6*

_____

_____

_____

_____

ե. *Բ Կորնթացիների 3.4,5*

_____

_____

_____

_____

զ. *Փիլիպեցիների 4.13*

_____

_____

_____

_____

6. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ քրիստոնյայի արձագանքն Աստծո ամենակարող լինելուն պետք է լինի և՛ հավատքը, և՛ հնազանդությունը: Գրի՛ առեք ձեր գաղափարներն այս հատվածների մասին և ցույց տվեք, թե ինչ են դրանք շեշտադրում:

ա. *Հավատք (Հռոմեացիների 4.19-21)*

_____

_____

_____

_____

_____

բ. *Հնազանդություն (Ծննդոց 17.1)*

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 14. Աստված ամենագո է

«Ամենագո» բառը լատիներենում «***օմնիպրաեսենս***» բառն է («***օմնիս***» = «ամեն ինչ» + «***պրաեսենս***» = «ներկա») և կրում է միաժամանակ ամեն տեղ լինելու իմաստը: Երբ Աստվածաշունչը խոսում է Աստծո ամենագո լինելու մասին, այն նկատի ունի, որ Աստված մշտապես ներկա է ամեն վայրում՝ Իր լիությամբ: Ամենագո լինելը չի նշանակում, որ Աստծո մի մասը Չինաստանում է, իսկ մյուսը՝ Անգլիայում, այլ՝ որ Աստված լիարժեք կերպով և միաժամանակ ներկա է ամենուր: Թեև ամբողջ տիեզերքը չի կարող ընդգրկել Աստծուն, Աստված ներկա է ամեն տեղ՝ Իր ամբողջ լիությամբ: Աստծո ամենագո լինելը մեծ վստահություն և մխիթարություն է ներշնչում քրիստոնյային. ամեն հավատացյալ՝ թե՛ մեծ, թե՛ փոքր, օգուտ է ստանում Աստծո ներկայության լիությունից: Այնուամենայնիվ, Աստծո ամենագո լինելը սարսափ է ներշնչում անհավատին, քանի որ Նրա ներկայությունից անհնար է թաքնվել կամ փախչել:

1. Երրորդ Թագավորաց 8-րդ գլուխը պատմում է Երուսաղեմում Սողոմոնի կողմից կառուցված տաճարի նավակատիքի կամ ընծայման մասին: Ի՞նչ հռչակեց Սողոմոնը Գ Թագավորաց 8.27-ում: Ի՞նչ է սովորեցնում նրա հռչակումը Աստծո ամենագո լինելու մասին: Համաձայն այս խոսքի՝ կարո՞ղ ենք մտածել, որ Աստված «սահմանափակված» է մեր ժամանակակից «եկեղեցական շենքերով»:

_____

_____

_____

_____

_____

2. Ստորև ներկայացված են կարևոր աստվածաշնչյան հատվածներ Աստծո ամենագո լինելու մասին և այն մասին, թե ինչ նշանակություն ունի դա բոլոր մարդկանց համար: Գրի՛ առեք ամեն հատվածի ամփոփումը ձեր բառերով:

ա. *Սաղմոս 139.7-10*

_____

_____

_____

_____

_____

բ. *Երեմիա 23.23,24*

_____

_____

_____

_____

գ. *Գործք 17.24-28*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մենք Նրանով ենք ապրում և շարժվում և կանք» արտահայտությունը (խոսք 28) անչափ կարևոր է: Անկախ այն բանից, մարդը գիտակցում է, թե ոչ՝ անհնար է փախչել Աստծուց: Չկա այնպիսի վայր, որտեղ Նա չկա: Ավելին՝ ամեն բան ստեղծվել է Նրա կողմից և շարունակում է պահպանվել Նրանով: Նա է կյանքի կոչել տիեզերքը, և Նա է պահպանում այն: Ե՛վ ամենամեծ աստղը, և՛ ամենափոքր մասնիկը գոյություն ունեն Նրա շնորհիվ: Ամեն արարածի կյանքը՝ թե՛ մեծ, թե՛ փոքր, կախված է Նրանից:

3. Հետևյալ աստվածաշնչյան հատվածները ներկայացնում են հիմնարար ճշմարտություններ Աստծո ամենագո լինելու մասին՝ հատկապես նշելով, թե որքան կարևոր է այս փաստն Իր ժողովրդի համար: Ամփոփե՛ք ամեն հատվածում ներկայացված ճշմարտությունը ձեր բառերով:

ա. *Երկրորդ Օրինաց 4.7*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 46.1*

_____

_____

_____

_____

գ. *Սաղմոս 145.18,19*

_____

_____

_____

_____

դ. *Եսայի 43.1,2*

_____

_____

_____

_____

ե. *Մատթեոս 28.20*

_____

_____

_____

_____

Գլուխ 15. Աստված ամենագետ է

«Ամենագիտություն» բառը լատիներենում «***օմնիսիենս***» բառն է («***օմնիս***» = «ամեն ինչ» + «***սիենս***»-ը՝ «***սիրե***» բառից = «իմանալ») և նշանակում է ամբողջ գիտելիքն ունենալու հատկանիշը: Աստծո ամենագետ լինելը նշանակում է, որ Նա գիտի ամեն ինչ անցյալում, ներկայում և ապագայում՝ անմիջապես, առանց ջանք թափելու, միաժամանակ և սպառիչ կերպով: Չկա ոչինչ՝ թաքնված Աստծուց: Երբևէ չի եղել նույնիսկ աննշան տարբերություն Աստծո գիտելիքի և իրականության միջև: Նա գիտի այն ամենը, ինչ տեղի է ունեցել, և Նա մեկնաբանում է ամեն ինչ կատարյալ իմաստությամբ: Աստծո ամենագետ լինելը մեծ վստահություն և մխիթարություն է ներշնչում քրիստոնյային, քանի որ Աստված գիտի մեր բոլոր կարիքները, Նա հասկանում է մեր ամեն մի նեղությունը, և Նա տվել է Իր անսխալական խոսքը՝ մեզ այս կյանքում առաջնորդելու համար: Այնուամենայնիվ Աստծո ամենագետ լինելը սարսափ է ներշնչում անհավատին, քանի որ Աստված դատելու է ամեն մարդու՝ ըստ Իր կատարյալ գիտելիքի (այսինքն՝ ոչ մի մեղք թաքնված չի մնա Նրանից և չի մոռացվի Նրա կողմից): Ամեն ստեղծված, ամեն գործ և ամեն միտք Նրա առջև են՝ բաց գրքի պես:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ինչ անուն է վերագրվում Աստծուն Ա Թագավորաց 2.3-ում:

   ա. Գ_____ *Աստված:*

   բ. *Ինչ է հայտնում մեզ այս անունը Աստծո ամենագետ լինելու մասին:*

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Տերը՝ Աստված է, Ով տեսնում է և գիտի ամեն ինչ: Աստված կարիք չունի գիտելիք ձեռք բերելու, փնտրելու կամ մտապահելու. Նա տիրապետում է ամբողջ գիտելիքին՝ մշտապես, անմիջապես, առանց ջանք թափելու, միաժամանակ և սպառիչ կերպով:

2. Դանիել 2.20-22-ում գտնվում է Աստծո գիտելիքի ամենագեղեցիկ նկարագրություններից մեկն Աստվածաշնչում: Ինչ է սովորեցնում այս հատվածը:

   _____

   _____

_____

_____

_____

3. Հետևյալ աստվածաշնչյան հատվածներում օգտագործված են մի քանի բառեր՝ Աստծո ամենագետ լինելը նկարագրելու համար: Այս բառերը կօգնեն մեզ պատկերացում կազմել Աստծո գիտելիքի մեծության մասին: Լրացրե՛ք բաց թողնված բառերը՝ համաձայն նշված խոսքերի:

   ա. *Աստծո գիտելիքը Կ_____ է (Հոբ 37.16):* Այս բառը թարգմանված է եբրայերեն «***թամիմ***» բառից, որը նշանակում է «ամբողջ, լիարժեք, ամբողջական, անարատ և ոչնչի պակաս չունեցող»:

   բ. *Աստծո իմաստությանը Չ_____ Չ_____ (Սաղմոս 147.4,5):* Այս արտահայտությունը թարգմանված է եբրայերեն «***ային***» բառից, որը նշանակում է «անթիվ, անհաշվելի»: Այս բառի հոմանիշներից են. «անվերջ, անթափանցելի, անըմբռնելի, անքննելի»:

   գ. *Աստծո հանճարը Ա_____ է (Եսայի 40.28):* Այս բառը թարգմանված է եբրայերեն «***ային***» բառից (սահմանումը՝ վերևում):

4. Կարևոր է հասկանալ, որ Աստծո գիտելիքը չի սահմանափակվում ներկայով. Նա գիտի ամեն բան անցյալում, ներկայում և ապագայում: Ի՞նչ են սովորեցնում Եսայի 44.6-8-ը և Եսայի 46.9,10-ը այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

_____

5. Սաղմոս 139.1-4,11,12 խոսքերում գրված է ամենագեղեցիկ և սպառիչ նկարագրությունն Աստծո ամենագետ լինելու և մարդկանց գործերի մասին իմանալու մասին: Համաձայն ստորև բերված կետերի՝ նկարագրե՛ք Աստծո ամենագետ լինելը:

   ա. *Խոսք 1*

   _____

   _____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո գիտելիքը թափանցում է մարդու էության ամենախորը մասերը: Մարդու սրտի և մտքի ամենածածուկ մասերը Տիրոջ առջև նման են բաց գրքի:

բ. *խոսք 2*

_____

_____

_____

_____

գ. *խոսք 3*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Քննել» բառը եբրայերեն «***զարահ***»-ն է, որը նշանակում է «ցրել, հովհարել, մաղել»: Մաղելու ընթացքում ցորենն առանձնանում է հարդից: Նմանապես, բայց անսահմանորեն ավելի խորը կերպով Աստված կարող է մաղել մարդկանց սրտերը և կատարյալ ճշգրտությամբ զանազանել ամեն մի միտք:

դ. *խոսք 4*

_____

_____

_____

_____

ե. *Խոսքեր 11,12*

_____

_____

_____

_____

6. Համաձայն Աստվածաշնչի՝ մարդու սրտում չկա ոչ մի խորություն կամ գաղտնիք, որն Աստված չգիտի: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ խոսքերը այս ճշմարտության մասին:

ա. *Միայն Աստված գիտի բոլոր մարդկանց Ս_____(Գ Թագավորաց 8.39):*

բ. *Աստված Ս_____ և Ե_____(կամ՝ միտք) Ք_____ է (Սաղմոս 7.9):*

գ. *Աստված գիտի մարդու խ_____(Սաղմոս 94.11):*

դ. *Աստված Կ_____ բոլոր մարդկանց Ծ_____ բաները (կամ՝ գաղտնիքները) (Հռոմեացիներ 2.16):*

7. Աստծո ամենագետ լինելը մեծ վստահություն, մխիթարություն և ուրախություն է ներշնչում քրիստոնյային: Մենք կարող ենք ապահով լինել, որ Աստված հետևում է մեզ, գիտի մեր ամեն մի կարիքը և հասկանում է մեր ամեն մի նեղությունը: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Բ Մնացորդաց 16.9*

_____

_____

_____

_____

բ. *Մատթեոս 6.7,8,31,32*

_____

_____

_____

_____

գ. *Մատթեոս 10.29-31*

_____

_____

_____

_____

8. Ինչպես մենք տեսանք, Աստծո ամենագետ լինելը չի առաջացնում միևնույն արձագանքը բոլոր մարդկանց մոտ: Ամեն ինչ կախված է մարդու հարաբերություններից Աստծո հետ: Աստծո ամենագետ լինելը սարսափ է ներշնչում անհավատին, որովհետև Աստված կդատի ամեն մարդու՝ ըստ Իր կատարյալ գիտելիքի բոլոր փաստերի մասին. ոչ մի մեղք չի թաքնվի և չի մոռացվի: Ամեն ստեղծված, ամեն գործ, ամեն միտք Նրա առջև է՝ բաց գրքի պես: Ինչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Հոբ 34.21-23*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 33.13-15*

_____

_____

_____

_____

գ. *Առակաց 5.21*

_____

_____

_____

_____

դ. *Առակաց 15.3*

_____

_____

_____

_____

ե. *Երեմիա 17.10, 32.19*

_____

_____

_____

_____

զ. *Եբրայեցիների 4.13*

_____

_____

_____

_____

Գլուխ 16. Աստված սուրբ է

«ՍՈՒՐԲ» ԲԱՌԻ ԻՄԱՍՏԸ

«Սուրբ» բառը եբրայերենում «***կադոշ***» բառն է, որը նշանակում է «առանձնացված, սահմանագծված, առանձին դրված կամ հեռացված սովորական գործածությունից»: Աստծո վերաբերյալ այս բառը երկու կարևոր իմաստ ունի. Աստված վեր է Իր ստեղծագործությունից, և Աստված վեր է Իր ստեղծագործության ապականությունից:

Աստված վեր է Իր ստեղծագործությունից

Աստված վեր է կամ գերազանց է Իր ստեղծագործությունից: «Գերազանց» բառը լատիներենում «***տրանսենդերե***» բառն է («***տրանս***» = վրա + «***սկանդերե***» = մագլցել), որը նշանակում է «անցնել ինչ-որ բանից, բարձրանալ ինչ-որ բանից վեր, գերազանցել»: Որպես Արարիչ՝ Աստված վեր է Իր ստեղծագործությունից և լիովին առանձին է ամեն ստեղծված էակից: Աստծո տարբերությունը Իր ամբողջ ստեղծագործությունից պարզապես քանակական չէ (նույնը, բայց՝ ավելի մեծ), այլև՝ որակական (Աստված լիովին այլ Էակ է): Անկախ իրենց շուքից՝ մնացած բոլոր էակները երկրի վրա և երկնքում ընդամենը ստեղծվածներ են: Միայն Աստված է Աստված՝ առանձին, վեր և անմատույց:

Սրբությունը՝ Աստծո ամենաակնառու հատկանիշն է և մեծագույն ճշմարտությունը, որը մենք կարող ենք սովորել Նրա մասին: Ցանկացած այլ աստվածային հատկանիշ, որն արդեն ուսումնասիրել ենք կամ դեռ կուսումնասիրենք, պարզապես Նրա սրբության արտահայտությունն է՝ այն իմաստով, որ բոլոր այդ հատկանիշները ցույց են տալիս, որ Նա առանձին է Իր ստեղծագործությունից և բոլորովին այլ Էակ է: Աստծո եռամիասնական էությունը՝ Նրա սրբության արտահայտություններից մեկն է. կա՞ արդյոք որևէ ստեղծված էակ, որն այդքան անըմբռնելի, առեղծվածային և հրաշալի է: Այն, որ Աստված Հոգի է, կրկին արտահայտում է Նրա սրբությունը. կա՞ արդյոք որևէ ստեղծված էակ, ով այդ աստիճան ազատ և անսահմանափակ է: Աստծո կատարյալ, հավիտենական, ինքնագո, անփոփոխ, ամենակարող, ամենագո և ամենագետ լինելը՝ Նրա սրբության արտահայտություններն են. կա՞ արդյոք որևէ ստեղծված էակ, ով այդքան մեծ է և այդքան արժանի է երկյուղածության: Շարունակելով միասին ուսումնասիրել Աստծո հատկանիշները և վարվելով Նրա առջև մեր անձնական կյանքում՝ մենք պետք է մտապահնեք այս մեծ ճշմարտությունը. Աստված սուրբ է, և այն ամենը, ինչ Նա է, և ինչ նա անում է՝ Նրա սրբության արտահայտությունն է:

Աստված վեր է Իր ստեղծագործության ապականությունից

Աստծո սրբությունը նշանակում է, որ Նա վեր է Իր ստեղծագործության բարոյական ապականությունից և առանձին է ամեն մեղքից և պղծությունից: Աստված չի կարող մեղք գործել, չի կարող հաճություն ունենալ մեղքից և չի կարող հաղորդակցվել մեղքի հետ: Անկարելի է չափից ավելի շեշտադրել, թե որքան կարևոր է Աստծո սրբությունը: Մեր հարաբերությունները Աստծո հետ փոփոխության կենթարկվեն այնքանով, որքանով մենք կհասկանանք Նրա սրբությունը: Առակաց 9.10-ում Աստվածաշունչը հայտարարում է, որ «Ամենասուրբին ճանաչելը՝ հանճար» է:

ԱՍՏԾՈ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ

Կարևոր է հասկանալ, որ Աստծո սրբությունը ***ներհատուկ*** կամ ***բնորոշ*** է (այսինքն՝ ներքին, էական կամ Իր էությանը պատկանող) Նրան: Սրբությունը՝ սոսկ Աստծո որոշումը կամ վարքը չէ. այն ներհատուկ է Նրա էությանը: Աստված սուրբ ***է:*** Աստված այլևս Աստված չէր լինի, եթե դադարեր սուրբ լինելուց: Նա պետք է ուրանար Իր էությունը՝ որևէ անսուրբ արարքի դիմելու համար: Սա հրաշալի ճշմարտություն է, որը ներշնչում է մեծ վստահություն Աստծո մեջ:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ են վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում, և ի՞նչ են դրանք հայտնում մեզ Նրա սրբության մասին:

   ա. *Ես Ե_____, որ Ե_____ (Ելից 3.14):* Աստված սուրբ է, անջատ է և առանձին է բոլոր էակներից, առարկաներից և երևույթներից: Գոյություն չունի որևէ նկարագրություն կամ օրինակ, որը ցույց կտա, թե ինչպիսին է Նա: Եթե մենք խնդրենք որևէ մարդու նկարագրել իրեն, նա կարող է մատնացույց անել մեկ այլ մարդու և ասել. «Ես նրա նման եմ»: Աստված, ի տարբերություն այս օրինակի, անզուգական է: Նույնիսկ ամենամեծ հրեշտակապետը Երկնքում չի կարող պատշաճ օրինակ լինել՝ Նրան նկարագրելու համար: Երբ Մովսեսը հարցրեց Աստծուն. «Ո՞վ ես Դու», Աստված միայն կարող էր մատնացույց անել Իրեն և հայտարարել. «ԵՍ ԵՄ, ՈՐ ԵՄ»: Այս ճշմարտությունն օգնում է մեզ հասկանալ, թե որքան կարևոր էր Աստծո հայտնությունը Քրիստոսում: Հիսուսը մարմին հագած Աստված է և միակ ճշմարիտ պատկերը կամ օրինակն այն մասին, թե ով է Աստված (Հովհաննես 14.9, Կողոսացիների 1.15): Այժմ Աստված պատասխանում է բոլոր հարցերին Իր մասին՝ մատնացույց անելով Իր Որդուն և հայտարարելով. «Ես Նրա նման եմ»:

   բ. *Ս_____ և Ա_____ է Նրա անունը (Սաղմոս 111.9):* «Ահավոր» բառը եբրայերեն «***յարե***» բառից է, որը նշանակում է «վախենալ»: Այս համատեքստում այն ցույց է տալիս, որ Աստված երկյուղածություն և ահ է ներշնչում: Աստծո սրբությունը ճիշտ կերպով հասկանալը մշտապես խորին երկյուղածություն կառաջացնի Նրա հանդեպ:

   գ. *Բ_____ և Բ_____, հավիտենականության մեջ Բնակվողը, որի անունը Ս_____ է (Եսայի 57.15):*

   դ. *Նախորդ խոսքերում Աստծուն նկարագրելու համար օգտագործվում էին հետևյալ բառերը. «սուրբ», «ահավոր» և «բարձրյալ»: Ի՞նչ են ցույց տալիս այս բառերը Աստծո սրբության մասին:*

   _____

   _____

   _____

   _____

   _____

2. Աստվածաշնչում գրված է, որ Աստծո սրբությունը և՛ ակնառու է, և՛ վեր կամ գերազանց է: Այն ***ակնառու*** է, քանի որ ոչ մի այլ աստվածային հատկանիշ այդքան հաճախ չի նշվում և բացատրվում Աստվածաշնչում: Այն ***վեր*** կամ ***գերազանց*** է, քանի որ Աստծո սրբությունը պարզապես անկարելի է համեմատել ցանկացած այլ ստեղծված էակի, երևույթի կամ առարկայի սրբության հետ:

ա. *Աստծո սրբությունն ակնառու է (լատիներենում՝ «**պրեէմիներե**». «**պրե**» = առաջ + «**էմիներե**» = «նախագծել»):* Անհնար է հասկանալ Աստծո բնությունը՝ առանց Նրա սրբության: Ամենից առավել՝ Աստված սուրբ է: Ինչպե՞ս է այս ճշմարտությունն արտահայտվում Եսայի 6.3-ում և Հայտնություն 4.8-ում:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Եբրայերեն գրականության մեջ կրկնությունն օգտագործվում է շեշտադրման համար: Այն, որ Աստծո սրբությունն այս հատվածներում հռչակվում է երեք անգամ (հունարենում սա կոչվում է «***տրիհագիոն***». «***տրի***»= «երեք անգամ» + «***հագիոս***» = «սուրբ»), նշանակում է, որ Աստված բացարձակապես և անսահմանորեն սուրբ է: Ոչ մի այլ աստվածային հատկանիշ չունի նման շեշտադրում: Աստվածաշնչում մենք չենք տեսնի, որ Աստված «սեր, սեր, սեր» է կամ «ողորմած, ողորմած, ողորմած» է. այնուամենայնիվ, գրված է, որ Նա «սուրբ, սուրբ, սուրբ» է: Սրբությունը՝ Աստծո էության և գործերի հիմքն է: Սրբությունը, թերևս, Աստծո այն հատկանիշն է, որն անկարելի է չափից ավելի շեշտադրել:

բ. *Աստծո սրբությունը վեր է կամ գերազանց է (լատիներենում՝ «**տրանս**» = «վրա» + «**սկանդերե**» = «մագլցել»):* Աստծո սրբությունն անսահմանորեն գերազանցում է ցանկացած այլ ստեղծված էակի, երևույթի կամ առարկայի սրբությունը: Տիրոջ նման սուրբը չկա: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

(1) Ելից 15.11

_____

_____

_____

_____

(2) Ա Թագավորաց 2.2

(3) Հոբ 15.15

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքը չի նշանակում, որ Երկնքում կա մեղք կամ ապականություն. այն ցույց է տալիս մեզ երկու մեծ ճշմարտություն. (1) չկա ոչինչ՝ Աստծո պես սուրբ, նույնիսկ՝ Երկինքը և դրա բնակիչները, և (2) միայն Աստծո սրբությունն է ***ներհատուկ*** կամ ***բնորոշ*** (այսինքն՝ ներքին, էական կամ Իր էությանը պատկանող)։ Սրբությունը՝ սոսկ Աստծո որոշումը կամ վարքը չէ. այն ներհատուկ է Նրա էությանը։ Աստված սուրբ ***է***։ Ի հակադրություն այս ամենի՝ բոլոր ստեղծված էակները, երևույթները և առարկաները (նույնիսկ՝ Երկինքը և սուրբ հրեշտակները) ստանում են իրենց սրբությունն Աստծուց։ Նրանք չունեն սրբություն իրենցում. նրանց սրբությունը շնորհ-քի պարգև է, որը բխում է Աստծուց։ Եթե Աստված շրջվեր նրանցից և ետ վերցներ Իր շնորհքը, նրանք կկորցնեին իրենց սրբությունը՝ ընկնելով մեղքի և ապականության մեջ։

(4) Եսայի 40.25

3. Աստծո սրբությունը ոչ միայն նշանակում է, որ նա եզակի է Իր ամբողջ ստեղծագործության մեջ, այլև՝ որ Նա առանձնացված է այն ամենից, ինչը մեղսալի է: Աստված չի կարող մեղք գործել, չի կարող հաճություն ունենալ մեղքից և չի կարող հաղորդակցվել մեղքի հետ: Անհնար է, որ Աստված գայթակղվի կամ՝ որ Նրա էությունը պղծվի: Նա մշտապես նույնն է՝ ***սուրբ*** և ***անապական***: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Սաղմոս 5.4*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բնակվել» բառը թարգմանված է եբրայերեն «***գար***» բառից, որը բառացիորեն նշանակում է «ժամանակավոր բնակություն հաստատել»: Աստված ոչ մի կապ չունի չարիքի և անօրինության հետ: Նա չի հաղորդակցվում այն ամենի հետ, ինչը բարոյապես անմաքուր է:

բ. *Հոբ 34.10*

_____

_____

_____

_____

գ. *Եսայի 59.1,2*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը ցույց է տալիս Աստծո անհանդուրժողականությունը մեղքի հանդեպ: Քանի որ Աստված սուրբ և արդար է, մեղքը մշտապես բաժանություն կբերի Աստծո և մեղավորի միջև: Ահա թե ինչու Աստված ուղարկեց Իր միակ Որդուն՝ վճարելու համար մեղքի պարտքը, որպեսզի Նա անխաթար հարաբերություններ ունենա մեզ հետ հավատքի միջոցով (Հռոմեացիների 5.1):

դ. *Ամբակում 1.13ա*

_____

_____

_____

_____

_____

ե. *Հակոբոս 1.13*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն, որ Աստված չի կարող փորձվել (կամ՝ գայթակղվել), չի նշանակում, որ Աստված պարզապես ունի բարոյական ամրություն, որպեսզի հակառակվի չարիք գործելու բոլոր գայթակղություններին: Սա նշանակում է, որ երբ չարն Աստծո առջև է գալիս, չկա որևէ բան, ինչին Աստված պետք է հակառակվի: Քանի որ Աստված ներհատուկ կերպով և բացարձակապես սուրբ է, ամեն չարիք գարշելի է Նրա համար, և որևէ կերպով չի հրապուրում Նրան: Նա չի ձգտում դեպի չարը, և ո՛չ էլ դրան հակառակվելու կարիք ունի, քանի որ չարը լիովին գարշելի է Նրա համար:

զ. *Հակոբոս 1.17*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Որքան էլ ինչ-որ մեկն ուսումնասիրի Աստծո Անձը, Խոսքը և գործերը, նույնիսկ՝ սրբության և արդարության ամենախիստ չափանիշներով, Նրանում չի գտնվի նույնիսկ աննշան սխալմունք: Նա բնակվում է անմատույց լույսում, որում չկա չարի նույնիսկ չնչին երանգ կամ շուք:

է. *Ա Հովհաննես 1.5*

_____

_____

_____

_____

4. Աստծո սրբությունը ոչ միայն նշանակում է, որ Նա եզակի է Իր ամբողջ ստեղծագործության մեջ և առանձնացած է այն ամենից, ինչը հակասում է Իր էությանը (այսինքն՝ մեղքից), այլև՝ որ Նա չի կարող հաճություն ունենալ մեղքից: Աստված չեզոք կամ անտարբեր դիրք չունի մեղքի հանդեպ. այն գարշելի է Նրա համար (այսինքն՝ պիղծ երևույթ է, որն ատելություն և զզվանք է առաջացնում):

ա. *Երկրորդ Օրինաց 25.16*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Պիղծ» բառն այս հատվածում թարգմանված է եբրայերեն «***տոեբա***» բառից, որը նշանակում է ինչ-որ բան կամ ինչ-որ մեկը, որ նողկալի (այսինքն՝ անարգ), զզվելի, վանող և ան-պարկեշտ է: Սաղմոս 88.8-ում այն թարգմանված է «գարշելի» բառով:

բ. *Սաղմոս 5.4,5*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Աստված սիրում է մեղավորին, բայց ատում է մեղքը» հայտնի ասացվածքն անհրաժեշտ է մեկնաբանել Սաղմոս 5.5-ի լույսի ներքո: Աստված չի ատում միայն մեղքը. Նրա ատելությունը նույնպես տարածվում է նրանց վրա, ովքեր մեղք են գործում: Ինչպե՞ս կարելի է համատեղել այս ճշմարտությունը այլ աստվածաշնչյան հատվածների հետ, որտեղ գրված է, որ Աստված սիրում է մեղավորներին: Թեև Աստծո բարկությունը հայտնվում է մեղավորին (Հովհաննես 3.36), Նա նույնպես հայտնել է Իր սերը. Նա ուղարկել է Իր Որդուն՝ մահանալու այն մարդկանց համար, ովքեր միայն դատաստանի են արժանի (Հռոմեացիների 5.8,10): Աստված անկեղծորեն սիրում է բոլոր մարդկանց, և Նրա սերն արտահայտվում է անթիվ ձևերով: Այնուամենայնիվ, Աստված սուրբ է, և Նրա բարկությունը (այսինքն՝ սուրբ և արդար դժգոհությունը) ի վերջո կհայտնվի նրանց, ովքեր մերժում են փրկությունը՝ տրված Քրիստոսի քավության զոհի միջոցով:

գ. *Առակաց 15.8,9*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Զզվանք» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***տոեբա***» բառից, ինչպես վերոնշյալ Երկրորդ Օրինաց 25.16-ում:

Գլուխ 17. Մեր արձագանքն Աստծո սրբությանը

Աստված սուրբ, սուրբ, սուրբ է: Թեև մենք մեղանչել ենք Նրա դեմ և մեզ գարշելի ենք դարձրել Նրա առջև, նա հաշտեցրել է մեզ. նրանց, ովքեր հավատացել են Իր անվանը Իր Որդու մահվան միջոցով: Փրկելուց հետո Նա կանչել է մեզ՝ լինելու Իր հատուկ ժողովուրդն այս երկրի վրա: Ինչպե՞ս մենք պետք է ապրենք ի պատասխան այս մեծ ճշմարտության: Ինչպե՞ս մենք պետք է ապրենք Սուրբ Աստծո առջև:

ՍՐԲՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դժվար կլինի չափից ավելի շեշտադրել, թե որքան կարևոր է, որ մենք հասկանանք Աստծո սրբությունը և դրանից բխող հետևությունները մեր կյանքի համար: Աստված սուրբ է, և մենք կանչված ենք լինելու սուրբ՝ ինչպես որ Նա է սուրբ (Բ Պետրոս 1.15,16):

1. Համաձայն Առակաց 9.10-ի՝ որքանո՞վ է կարևոր, որ մենք գիտակցենք և հասկանանք Աստծո սրբությունը: Որքանո՞վ է կարևոր, որ մենք աճ ունենանք անձնական սրբության մեջ:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Առակաց 9.10-ում մենք տեսնում ենք մարդկանց հայտնված մեծագույն ճշմարտությունը. Աստված սուրբ է և արժանի ամբողջ երկյուղածությանը և երկրպագությանը: Մնացած ամբողջ գիտելիքը և իմաստությունը (գիտական փիլիսոփայական, պատմական, իրավաբանական և այլն) անարժեք են՝ առանց այս ճշմարտությունը պատշաճ կերպով հասկանալու:

2. Համաձայն Եբրայեցիների 12.14-ի՝ որքանո՞վ է կարևոր, որ մենք աճ ունենանք անձնական սրբության մեջ:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Սրբություն» (կամ՝ «սրբացում) բառը թարգմանված է հունարեն «***հագիասմո՛ս***» բառից, որը նույնպես կարող է թարգմանվել «ընծայում» բառով: Համաձայն Աստվածաշնչի՝ այն բացարձակ սրբությունը, որն անհրաժեշտ է Տիրոջը տեսնելու կամ Նրա ներկայության մեջ լինելու համար, անկարելի է ձեռք բերել մարդկային արժանիքներով, այլ միայն հավատքով՝ Հիսուս Քրիստոսի և Նրա խաչի մահվան հանդեպ: Եբրայեցիների նամակի հեղինակը գրում է. «Որովհետև մեկ պատարագով հավիտյան կատարեց (կամ՝ կատարյալ դարձրեց) սրբվողներին» (Եբրայեցիների 10.14): Այնուամենայնիվ, Եբրայեցիների 12.14-ում գրված է ճշմարտությունն այն մասին, որ նրանք, ովքեր իրապես «կատարյալ են դարձել» կամ «սրբվել են» Քրիստոսի արյամբ, նույնպես ձգտելու են սուրբ լինել իրենց անձնական կյանքում: Մենք չենք արդարանում Աստծո առջև սրբության ձգտելու ***պատճառով***. մենք ձգտում ենք սրբության ***այն պատճառով***, որ փրկություն ենք ստացել շնորհքով՝ հավատքի միջոցով:

3. Համաձայն Եբրայեցիների 12.5-11-ի՝ ի՞նչ է Աստված անում, որպեսզի Իր ***բոլոր*** զավակներն ընդունեն Իր սրբությունը (այսինքն՝ դառնան սուրբ՝ ինչպես որ Ինքը սուրբ է):

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք պետք է հասկանանք մի քանի կարևոր ճշմարտություն այն մասին, թե ինչպես է Աստված դաստիարակում կամ խրատում Իր զավակներին: (1) Աստծո խրատը՝ Նրա սիրո արտահայտությունն է և միշտ հավատացյալի օգտի համար է: (2) Աստծո խրատը՝ պատժի տեսակ չէ. դրա նպատակն է՝ պաշտպանել, հասունացնել և ձևավորել մեզ Քրիստոսի պատկերով: (3) Աստծո խրատը կարող է լինել հավատացյալի կյանքում մեղքի հետևանքով: Նման դեպքերում, նպատակն է՝ շտկել նրան, ցույց տալ մեղքի վտանգները և սովորեցնել երկյուղած լինել Աստծուց: (4) Աստծո խրատը կարող է լինել նույնիսկ հասուն և խորապես աստվածապաշտ հավատացյալի կյանքում: Նման դեպքերում, նպատակը պարզապես նրան է՛լ ավելի Քրիստոսի նման դարձնելն է: (5) Աստծո խրատը կարող է սարսափելիորեն ցավոտ լինել, բայց հետագայում այն արդարության և սրբության ավելի մեծ պտուղ է տալիս: (6) Աստծո խրատը մեր կյանքում վկայում է, որ մենք Նրա զավակներն ենք: Խրատի բացակայությունը վկայում է, որ մենք Նրա զավակները չենք: (7) Աստծո մեծագույն նպատակը մեր ներկա կյանքի համար ոչ թե նյութական բարգավաճումն է, հարմարավետությունը և նույնիսկ՝ առողջությունը, այլ Իր սրբությունն ընդունելը (Եբրայեցիների 12.10):

ՄԵՐ ԱՐՁԱԳԱՆՔՆ ԱՍՏԾՈ ՍՐԲՈՒԹՅԱՆԸ

Աստված սուրբ, սուրբ, սուրբ է: Ի պատասխան այս մեծ ճշմարտության՝ մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. «Ինչպե՞ս պետք է ապրենք»: Ստորև կդիտարկենք մի քանի ամենակարևոր աստվածաշնչյան արձագանքներ Աստծո սրբությանը: Մենք պետք է մշտապես հիշենք, որ Աստծո հատկանիշներն ուսումնասիրելը միայն մտավոր աշխատանք չէ. այն պետք է մեծ ազդեցություն թողնի մեր «դոքսոլոգիայի» (այսինքն՝ երկրպագության) և «պրաքսիսի» (այսինքն՝ գործերի կամ վարքի) վրա:

1. Սաղմոս 96.9-ում գրված է Աստվածաշնչի ամենագեղեցիկ պատվիրաններից մեկն այն պարտավորության մասին, որը հավատացյալն ունի Տիրոջ հանդեպ: Ամփոփե՛ք դրա իմաստը ձեր բառերով:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Զարդարանք» բառը թարգմանված է եբրայերեն «***հադարահ***» բառից, որը կարելի է նույնպես թարգմանել «գեղեցկություն» կամ «շքեղություն» բառերով: Նույն արտահայտությունն օգտագործված է Սաղմոս 96.9, 110.3, Ա Մնացորդաց 16.29 և Բ Մնացորդաց 20.21 (հայերենում՝ սուրբ փառքը օրհնաբանողներ) խոսքերում: Գոյություն ունեն տարաձայնություններ այն մասին, որ սաղմոսերգուն նկատի ունի Աստծո՞, թե՞ երկրպագողի սրբությունը: Եթե ճիշտ է առաջինը, այս խոսքը կոչ է անում մեզ՝ երկրպագել Աստծուն Նրա սրբության գեղեցկության շնորհիվ: Եթե ճիշտ է երկրորդը, այս խոսքը կոչ է անում մեզ՝ գալ Աստծո առջև մաքուր սրտով և սուրբ կյանքով: Սա ճշմարիտ գեղեցկություն է Աստծո համար: Այս խոսքը կոչ չի անում մեզ՝ վախենալ Աստծո երեսից այն պատճառով, որ Նա քմահաճ և անվստահելի է, այլ՝ Նրա սրբության և զորության անսահման մեծության շնորհիվ:

2. Եսայի 6.2,3-ում մենք կարող ենք մի ակնթարթ տեսնել Աստծո գահի սրահը: Ի՞նչ կարող ենք սովորել երկնային երկրպագության այս տեսարանից:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշունչը շատ բաներ չի պատմում «սերովբե» կոչվող հրեշտակների մասին: Այնուամենայնիվ, քանի որ նրանք մոտ են Աստծո գահին, տրամաբանական է ենթադրել, որ հնարավոր է՝ նրանք ամենասուրբ և ամենահզոր ստեղծվածներն են: Այնուամենայնիվ, Աստծո ներկայության մեջ նրանք միայն կարող են խոնարհեցնել իրենց գլուխները և երկրպագել: Բազմաթիվ կարծիքներ են առաջադրվել նրանց թևերի խորհրդապատկերային ձևի մասին: Հնարավոր է, որ նրանք ծածկում են իրենց երեսները երկյուղածությունից կամ՝ որովհետև Աստծո փառքը չափազանց ուժգին է նույնիսկ նրանց համար: Նրանք խոնարհաբար ծածկում են իրենց ոտքերը՝ ցույց տալով, որ իրենք ընդամենը ստեղծվածներ են, և միայն Տերն է Աստված:

3. Եսայի 8.13-ում հավատացյալին տրվում է երեք պարտավորություն՝ Տիրոջ հետ հարաբերությունների համար: Կարդացե՛ք այս խոսքը և նշե՛ք դրանք՝ լրացնելով բաց թողնված բառերը:

   ա. *Մենք պետք է Ս_____ համարենք Նրան:* «Սրբել» (կամ՝ «Սուրբ համարել») բառը թարգմանված է եբրայերեն «***կադաշ***» բառից, որը բառացիորեն նշանակում է «առանձնացնել կամ նվիրաբերել»: Մենք պետք է առանձնացնենք Աստծուն մեր սրտերում՝ համարելով Նրան անջատ կամ առանձին բոլոր մարդկանցից, երևույթներից կամ առարկաներից: Նա պետք է զբաղեցնի առաջին տեղը մեր կյանքում, և ոչ մի ցանկություն կամ ձգտում չպետք է մրցակցի Նրա հետ:

   բ. *Նա պետք է լինի մեր Ե_____:* «Երկյուղ» բառը թարգմանված է եբրայերեն «***մորահ***» բառից, որը նշանակում է «վախ, սարսափ, երկյուղածություն կամ ակնածանք»: Վախը և սարսափը հաճախ կապակցվում են անարդարության կամ անօրինության հետ: Չարը և չար մարդիկ սարսափ են ներշնչում մեզ: Այնուամենայնիվ, երբ այս բառն օգտագործվում է Աստծո վերաբերյալ, խոսքն այն վախի կամ երկյուղի մասին է, որն առաջանում է Նրա անսահման մեծությունից, գեղեցկությունից, սրբությունից, արդարությունից և զորությունից:

   գ. *Նա պետք է լինի մեր Հ_____:* «Հարհուրանք» բառը թարգմանված է եբրայերեն «***արաց***» բառից, որը նշանակում է «սարսափ, ցնցում, զարհուրանք կամ պատկառանք առաջացնել»: Այս խոսքի համատեքստից (խոսք12) տեսնում ենք, որ Աստված հորդորում է Իր ժողովրդին չվախենալ մարդկանցից և փոխզիջման չգնալ, այլ պահել իրենց հավատքը. փոխարենը՝ նրանք պետք է վախենան Նրանից և ամբողջ սրտով հետևեն Նրան: Այդ ժամանակ Նա սրբարան կլինի Իր ժողովրդի համար և կպաշտպանի իրենց թշնամիներից (խոսք 14):

4. Ամբակում 2.20-ը և Ժողովող 5.1,2-ը՝ երկու կարևոր հատվածներ են, որոնք հայտնում են, որ անհրաժեշտ է երկյուղածություն ունենալ, երբ մոտենում ենք Աստծուն՝ աղոթելու կամ երկրպագելու համար: Ամփոփե՛ք այս երկու հատվածների իմաստները և բացատրե՛ք, թե ինչպես կարելի է կիրառել դրանցում եղող ճշմարտությունները մեր կյանքում:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածների նպատակը չէ՝ վիատեցնել մարդկանց, որպեսզի նրանք չաղոթեն և չերկրպագեն: Աստված նույնպես չի ցանկանում, որ մենք այնքա՞ն վախենանք ինչ-որ սխալ բան խոսելուց, որ ընդհանրապես չկարողանանք աղոթել կամ երկրպագել: Երկու հատվածներն էլ պարզապես ցույց են տալիս, որ Աստծուն մոտենալիս պետք է ունենալ աստվածաշնչյան երկյուղածություն կամ վախ: Մենք պետք է վստահություն ունենանք՝ գիտակցելով, որ Աստված՝ մեր Հայրն է, բայց և հիշենք, որ մեր Հայրը՝ Աստված է: Երբ աղոթում կամ երկրպագում ենք, մենք մոտենում ենք «Հավիտենից Թագավորին, այն Անեղծին և Աներևույթին, այն մեկ Աստծուն», Ում «լինի պատիվ և փառք հավիտյանս հավիտենից» (Ա Տիմոթեոս 1.17):

ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ, ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՀՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ են հետևյալ աստվածաշնչյան հատվածները հորդորում մեզ անել՝ ի պատասխան Աստծո սրբության: Ինչպե՞ս մենք պետք է հնազանդվենք այս հորդորներին մեր ամենօրյա կյանքում:

ա. *Սաղմոս 30.4*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 97.12*

_____

_____

_____

_____

գ. *Սաղմոս 99.3,5,9*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Աստծո սուրբ սարը» արտահայտությունը (խոսք 9) հղում է Երուսաղեմ քաղաքի մասին (43.3, 48.1, 87.1)։ Հին ուխտում այն Աստծո տաճարի համար նախատեսված վայրն էր, ինչն այլևս չի վերաբերում հավատացյալներին։ Հիսուսն ասաց սամարացի կնոջը. «Ժամանակ կգա, որ ո՛չ այս սարում կերկրպագեք Հորը, և ո՛չ էլ Երուսաղեմում... Բայց ժամանակ կգա, և հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտությամբ կերկրպագեն Հորը, որովհետև Հայրն էլ այսպես է ուզում Իրեն երկրպագողներից (Հովհաննես 4.21-23)։ «Աստծո ոտքերի պատվանդանը» արտահայտությունը (խոսք 5) նույնպես կարող է նշանակել Երուսաղեմը (Ա Մնացորդաց 28.2), կամ՝ ամբողջ երկիրը։ Եսայի 66.1-ում Աստված հայտարարում է. «Երկինքը Իմ աթոռն է, և երկիրը՝ Իմ ոտքերի պատվանդանը։ Դա ի՞նչ տուն է, որ շինում եք Ինձ համար»։

դ. *Եսայի 12.6*

_____

_____

_____

_____

2. Հայտնություն 15.3,4-ում գրված է Մովսեսի երգը Գառան մասին։ Համաձայն այդ երգի՝ ինչո՞ւ բոլոր մարդիկ պետք է երկրպագեն Աստծուն։ Ինչպե՞ս կարելի է կիրառել սա մեր՝ հավատացյալներիս կյանքում։

_____

_____

_____

_____

_____

ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ

1. Ղևտացիների 20.26-ում գրված է մի հիմնարար ճշմարտություն հավատացյալի և Աստծո հարաբերությունների մասին։ Ի՞նչ է Աստված արել մեզ համար, և ինչպե՞ս մենք պետք է արձագանքենք դրան։

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված առանձնացրել է մեզ աշխարհի մնացած ժողովուրդներից՝ Իրենը լինելու համար: Մենք պետք է արձագանքենք՝ առանձնացնելով մեզ այն ամենից, ինչը հաճելի չէ Նրան, և երկրպագության ու ծառայության միջոցով նվիրվենք Նրան:

2. Ղևտացիների 22.31-33-ում մենք տեսնում ենք նույն ճշմարտությունները, որոնք բացահայտեցինք Ղևտացիների 20.26-ում, բայց՝ ավելի մեծ խորությամբ: Ի՞նչ է Աստված արել մեզ համար, և ինչպե՞ս մենք պետք է արձագանքենք դրան:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Սրբել» բառը թարգմանված է եբրայերեն «**կուդաշ**» բառից, որը նշանակում է «առանձնացնել կամ նվիրաբերել»: Աստված սրբել կամ սրբացրել է մեզ, որպեսզի մենք Նրա հատուկ ժողովուրդը լինենք: Մենք պետք է սրբենք կամ սրբացնենք Տիրոջը (առանձնացնենք Նրան՝ համարելով վեր ամեն ինչից)՝ Նրա պատվիրանները պահելու միջոցով: «Պղծել» բառը թարգմանված է եբրայերեն «**խալալ**» բառից, որը նշանակում է «ապականել կամ պղծել»: Աստծո պատվիրանը խախտելը նշանակում է՝ պղծել Նրա անունը: Աստված փրկել էր Իսրայելի ժողովրդին Եգիպտոսի երկրի ստրկությունից. Նա հավակնություն ուներ Իսրայելի հանդեպ այս փաստի հիման վրա, և Իսրայելը պետք է պատվեր Նրան հենց այս պատճառով: Որքա՜ն ավելի մենք պետք է պատվենք Աստծուն, Ով փրկել է մեզ մեղքի գերությունից Իր Որդու արյամբ:

3. Կարևոր է հասկանալ, որ սրբության հորդորը պարզապես հինկտակարանյան գաղափար կամ չափանիշ չէ: Այն կարելի է գտնել ամբողջ Նոր կտակարանում: Գրի՛ առեք ձեր մտքերը հետևյալ հատվածների մասին: Ինչպե՞ս մենք պետք է արձագանքենք Աստծո սրբությանը:

ա. *Բ Կորնթացիների 6.16-18*

_____

_____

_____

_____

_____

բ. *Բ Կորնթացիների 7.1*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մարմին» բառը թարգմանված է հունարեն «***սարքս***» բառից, որն այս համատեքստում, հավանաբար, վերաբերում է մեր նյութական մարմիններին: «Մարմնի և հոգու» արտահայտությունը վերաբերում է մեր ամբողջական էությանը: Մենք պետք է ձգտենք սրբել մեր անձերն ամեն տեսակի մեղքից մեր կյանքի ամեն բնագավառում՝ մտքերի, դիրքորոշումների, խոսքերի և գործերի: «Կատարել» բառը թարգմանված է հունարեն «***էպիտելե՛ո***» բայից, որը նշանակում է «ավարտել կամ իրագործել»: «Սրբությունը կատարել» արտահայտությունը վերաբերում է անձնական սրբության մեջ աճ ունենալուն: Մենք պետք է ջանք անենք, որ մաքրենք մեր անձերը մեզ պղծող մեղքից, քանի որ մեր նպատակն է՝ ավելի սրբվել և ավելի նմանվել Աստծուն: Մեր դրդապատճառը ոչ միայն Աստծո սերն է, որը Նա ցուցաբերել է՝ փրկելով մեզ, այլև՝ մեր վախը կամ երկյուղածությունը Նրա հանդեպ:

գ. *Ա Պետրոս 1.14-17*

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 18. Աստված արդար է

«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ԲԱՌԻ ԻՄԱՍՏԸ

Աստվածաշնչում «արդար» բառը թարգմանված է եբրայերեն «***ցադդիկ***» և հունարեն «***դիկաի՛ոս***» բառերից: Երկուսն էլ կրում են Աստծո արդարության, ճշգրտության և բարոյական գերազանցության իմաստը: Համաձայն Աստվածաշնչի՝ Աստված անվերապահորեն արդար Էակ է և մշտապես վարվում է՝ համաձայն Իր էության: Աստծո էության և գործերի մեջ չկա ոչ մի սխալ կամ անստույգ բան: Նա երբեք չի հայտնվի այնպիսի իրավիճակում և չի գործի այնպիսի բան, ինչը կարող է դատապարտելի լինել և ինչի համար պետք է արդարանալ: Նրա գործերը, հրամանները և դատաստանները անվերապահորեն կատարյալ են: Մեկ օր, երբ Աստված դատի բոլոր մարդկանց՝ համաձայն նրանց գործերի, նույնիսկ դատապարտվածները կխոնարհեցնեն իրենց գլուխները և կդավանեն, որ Աստված արդար է:

ԱՍՏԾՈ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարևոր է հասկանալ, որ Աստծո արդարությունը ***ներհատուկ*** կամ ***բնորոշ*** է (այսինքն՝ ներքին, էական կամ Իր էությանը պատկանող) Նրան: Արդարությունը՝ սոսկ Աստծո որոշումը կամ վարքը չէ. այն ներհատուկ է Նրա էությանը: Աստված արդար ***է:*** Աստված այլևս Աստված չէր լինի, եթե դադարեր արդար լինելուց: Նա պետք է ուրանար Իր էությունը՝ որևէ անարդար արարքի դիմելու դեպքում: Սա հրաշալի ճշմարտություն է, որը ներշնչում է մեծ վստահություն Աստծո մեջ:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուն է վերագրվում Աստծուն Սաղմոս 7.9-ում:

   ա. *Ա_____ Աստված (Սաղմոս 7.9):*

   բ. *Ի՞նչ է հայտնում մեզ այս անունը Աստծո Անձի և գործերի մասին:*

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Թեև կրկնում եմ, բայց այս խոսքը հայտնում է հետևյալ կարևոր ճշմարտությունը. Աստված արդար ***է***, և այդ պատճառով, Նրա բոլոր հրամանները, խոսքերը և գործերը կատարելապես արդար են և արժանի են բացարձակ վստահության:

2. Հետևյալ աստվածաշնչյան հատվածներում գրված են Աստվածաշնչի ամենակարևոր պնդումներից մի քանիսն այն մասին, որ Աստված արդար է, և Նրա գործերը նույնպես արդար են: Ամփոփե՛ք ամեն մի հատվածը ձեր բառերով: Հիշե՛ք. գոյություն ունի անմիջական կապ Աստծո արդար էության և Նրա գործերի ու դատաստանների արդարության միջև: Աստված արդարությամբ է ***վարվում*** և արդարությամբ է ***դատաստան անում***, որովհետև Նա արդար ***է***:

ա. *Երկրորդ Օրինաց 32.4*

_____

_____

_____

_____

բ. *Հոբ 36.22-24*

_____

_____

_____

_____

գ. *Սաղմոս 36.6*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքում օգտագործված փոխաբերությունները շատ պարզ են. Աստծո արդարությունն ավելի բարձր է, քան ամենաբարձր սարը, և ավելի խորը, քան ամենախորը ծովը:

դ. *Սաղմոս 89.14, 97.2*

_____

_____

_____

_____

ե. *Սաղմոս 119.142*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքում մենք տեսնում ենք երկու ճշմարտություն: Առաջինը՝ Աստծո արդարությունն անփոփոխ և հավիտենական է: Նա մշտապես արդար և բացարձակապես հուսալի է լինելու: Երկրորդը՝ Աստծո Խոսքի հավաստիությունը հիմնված է Նրա արդար բնավորության վրա: Մենք գիտենք, որ Աստծո Խոսքը ճշմարիտ ***է***, քանի որ գիտենք՝ դրա Հեղինակն արդար ***է***:

զ. *Երեմիա 9.24*

_____

_____

_____

_____

3. Կարևոր է հասկանալ, որ Աստծո արդարությունը (ինչպես և Նրա սրբությունը) վեր է կամ գերազանց է (լատիներենում՝ «***տրանսենդերե***». «***տրանս***» = «վրա» + «***սկանդերե***» = «մագլցել»): Աստծո արդարությունն անսահմանորեն գերազանցում է ցանկացած այլ ստեղծված էակի, երևույթի կամ առարկայի արդարությունը: Տիրոջ նման արդարը չկա: Ի՞նչ են սովորեցնում մեզ հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Եսայի 5.16*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Համաձայն այս խոսքի՝ Սուրբ Աստված ցույց կտա, որ Ինքն առանձին կամ անջատ է մնացած բոլորից՝ Իր արդարության շնորհիվ: Աստծո սրբությունը (այսինքն՝ առանձնացված լինելը և որոշվելը ստեղծագործությունից) ամենից ակնհայտորեն երևում է Նրա արդար գործերով: Տիրոջ նման սուրբ և արդար չկա:

բ. *Եսայի 45.21*

_____

_____

_____

_____

4. Կարևոր է հասկանալ, որ Աստծո արդարությունը, ինչպես և սրբությունը, արտացոլվում է Նրա վերաբերմունքով՝ մարդկանց և հրեշտակների գործերի հանդեպ: Աստված բարոյապես չեզոք կամ անտարբեր չէ. Նա սիրում է արդարությունը և ատում է ամեն անարդարություն: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Սաղմոս 7.11,12*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 11.7*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Վերևում բերված երկու հատվածներն էլ ցույց են տալիս, որ յուրաքանչյուրի մեծագույն կարիքը Քրիստոսն է և Նրա կատարած աշխատանքը Գողգոթայի վրա: Աստված կատարելապես արդար է, և Նա դատելու է այն ամենը, ինչ ցածր է Իր չափանիշից: Քրիստոսը միակն էր, Ով ապրեց կատարյալ կյանքով, ինչը մենք չէինք կարող անել, և դրանից հետո կրեց մեր մեղքը և Իր վրա վերցրեց Աստծո զայրույթը, որը նկարագրված է Սաղմոս 7.11,12-ում: Սաղմոս 11.7-ն ազդարարում է, որ միայն արդարները կտեսնեն Աստծո երեսը: Նման արդարությունը հնարավոր է միայն հավատքով՝ Քրիստոսի և Նրա կատարած աշխատանքի հանդեպ: Պողոս առաքյալը գրում է Բ Կորնթացիների 5.21-ում. «Որովհետև Աստված Նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արեց, որ մենք Աստծո արդարությունը լինենք Նրանում»:

5. Աստծո արդարությունը երաշխավորում է, որ Աստված ոչ մի չարիք չի գործելու: Նա իշխելու է Իր ստեղծագործության վրա՝ առանց քմահաճույքների, կողմնակալության կամ անարդարության: Սա մեծ մխիթարություն է ներշնչում այն հավատացյալին, ում հույսն Աստծո վրա է: Ինչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Բ Մնացորդաց 19.7*

_____

_____

_____

_____

բ. *Հոբ 8.3, 36.23*

_____

_____

_____

_____

գ. *Սաղմոս 9.7,8*

_____

_____

_____

_____

Գլուխ 19. Մեր արձագանքն Աստծո արդարությանը

Աստված արդար է, և Նրա բոլոր գործերը կատարյալ են: Ուրեմն, ինչպե՞ս մենք պետք է ապրենք՝ գիտակցելով այս մեծ ճշմարտությունը: Մենք պետք է երկյուղ ունենանք Տիրոջ հանդեպ և ապրենք արդարությամբ Նրա առջև. մենք պետք է ապրենք մեծ վստահությամբ Նրա նախախնամության հանդեպ. մենք պետք է նվիրվենք երկրպագությանը և աղոթքին. և վերջապես, մենք պետք է ազդարարենք մարդկանց Նրա արդարությունը:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԱՊՐԵՆՔ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՄԲ ԱՍՏԾՈ ԱՌՋԵՎ

1. Ա Հովհաննես 2.29 և 3.7 խոսքերում գրված է քրիստոնեական կյանքի հիմնարար ճշմարտություններից մեկը: Համաձայն այս երկու խոսքերի՝ ո՞րն է մեծագույն ապացույցներից մեկն այն մասին, որ մենք ճշմարտապես Աստծո զավակներ ենք:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Արդարություն անելը» նշանակում է ապրել՝ համաձայն Աստծո արդարության չափանիշի, համապատասխան Նրա էությանը և կամքին: Կարևոր է հասկանալ, որ մենք չենք արդարանում Աստծո առջև մեր արդար վարքի պատճառով, այլ մեր արդար վարքն ապացուցում է, որ մենք ճշմարտապես վերստին ծնված ենք: Իրական քրիստոնյան լիովին զերծ չէ մեղքից, բայց նա չի ապրում իր կյանքի օրերը մեղքի և ապստամբության մեջ: Եթե ինչ-որ մեկը դավանում է, որ քրիստոնյա է, բայց մշտապես անհնազանդ է Աստծո Խոսքին, և եթե այդ մարդը չի ապաշխարում և մնում է առանց Աստծո խրատի, անկասկած՝ նրա դավանանքը ճշմարիտ չէ:

2. Եփեսացիների 4.22-24-ում ցույց է տրված, թե ինչպես կարող ենք արդար կյանք ունենալ Աստծո առջև: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո կատարե՛ք հետևյալ վարժությունը:

   ա. *Մենք պետք է Դ_____ Հ_____ մեր առաջին գնացքի պես եղող մարդուն (կամ՝ մեր հին անձը) (խոսք 22):* Այս համատեքստում «հին մարդը» մեր հին անձն է՝ իր մեղսալի կյանքով, որը վա-

րում էինք նախքան դարձի գալը: Քանի որ մենք իսկապես նոր ստեղծված ենք դարձել Քրիստոսում (Բ Կորնթացիների 5.17), մենք կարող ենք հեռացնել մեզնից այն մեղքերը, որոնք նախկինում գործում էինք, և պետք է անենք դա:

բ. *Մենք պետք է Ն_____ մեր Մ_____ հոգով (խոսք 23):* Մեր մտքի նորոգումը տեղի է ունենում Սուրբ Հոգու զորությամբ, Ով գործում է Խոսքի միջոցով: Հռոմեացիների 12.2-ում գրված է ևս մեկ նման հորդոր. «Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ»: Որքան ավելի ենք նորոգում մեր միտքն Աստվածաշնչով, և որքան ավելի ենք զարգացնում Քրիստոսի միտքը մեզանում, այնքան ավելի հավանական է, որ մենք դուրս կհանենք մեր հին մարդուն՝ իր մեղավոր սովորություններով, և կհագնենք նոր մարդուն, ով արտացոլում է Աստծո արդարությունը և սրբությունը:

գ. *Մենք պետք է Հ_____ նոր մարդուն (խոսք 24):* Այն բանից հետո, երբ դուրս հանենք հին մարդուն՝ իր մեղքերով հանդերձ, մենք՝ որպես Աստծո զավակներ, պետք է զգեստավորվենք կամ զարդարվենք այնպիսի գործերով, որոնք համապատասխանում են մեր նոր կյանքին:

դ. *Համաձայն խոսք 24-ի՝ ո՞ւմ նմանությունն է արտացոլում նոր մարդը: Նկարագրե՛ք այս նմանությունը:*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո բնավորությունը՝ այն օրինակն է, որով մենք պետք է ապրենք: Մեր կյանքը պետք է բնութագրվի արդարությամբ և սրբությամբ, որոնք հիմնված են ճշմարտությունը ճանաչելու և ճշմարտությանը հնազանդվելու վրա, և բխում են դրանցից:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԱՊՐԵՆՔ ԱՍՏԾՈ ՀԱՆԴԵՊ ՄԵԾ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՄԲ

1. Աստծո բացարձակ արդարությունը՝ Նրան վստահելու ամենամեծ խթանիչներից մեկն է, նույնիսկ՝ նեղությունների ժամանակ: Քանի որ Նա արդար է, մենք կարող ենք վստահել մեր կյանքը Նրա ամեն մի խոսքին և գործին: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Սաղմոս 92.15*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշնչում «վեմ» կամ «ժայռ» բառը հաճախ է վերագրվում Աստծուն (Երկրորդ Օրինաց 32.4, NASB, Սաղմոս 18.2, 94.22)։ Նման դեպքերում այն նշանակում է հուսալիություն, կայունություն և զորություն։ Աստված այսպիսին է Իր ժողովրդի համար, որովհետև «Աստված հավատարիմ է և անիրավություն չունի. արդար և ուղիղ է Նա» (Երկրորդ Օրինաց 32.4)։

բ. *Եսայի 41.10*

_____

_____

_____

_____

2. Աստծո արդարությունը, որի շնորհիվ մենք վստահում ենք Նրան, նույնպես հիմք և խթանիչ է աղոթքի համար։ Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածները Հին և Նոր կտակարաններից այս ճշմարտության մասին։

ա. *Սաղմոս 145.17-19*

_____

_____

_____

_____

բ. *Ղուկաս 18.7,8*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մարդու Որդին գալիս՝ արդյոք հավատք կգտնի՞ երկրի վրա»։ Այս հարցը շատ կարևոր է։ Այն հաստատում է, որ Աստծո խոստումներն ստանալու համար անհրաժեշտ է հարատևել հավատքի և աղոթքի մեջ։

ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ՊԵՏՔ Է ԵՐԿՐՊԱԳԻ ԱՍՏԾՈՒՆ

1. Սաղմոս 96.11-13-ում գրված է ամենաազդեցիկ հորդորներից մեկն Աստվածաշնչում՝ Աստծուն երկրպագելու մասին: Համաձայն այս խոսքի՝ ինչպիսի՞ն պետք է լինի մեր արձագանքն Աստծո արդարությանը:

_____

_____

_____

_____

2. Հայտնություն 15.3,4-ում գրված հորդորը շատ նման է Սաղմոս 96.11-13-ին: Համաձայն այս հատվածի՝ ինչպիսի՞ն պետք է լինի մեր արձագանքն Աստծո արդարությանը:

_____

_____

_____

_____

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՀՌՉԱԿԵՆՔ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՍՏԾՈ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Համաձայն Աստվածաշնչի՝ մենք պետք է ոչ միայն ապրենք արդարությամբ Աստծո առջև, վստահենք Նրա արդարությանը և երկրպագենք Աստծուն Նրա արդար գործերի համար, այլև հռչակենք Նրա արդարությունը բոլոր ժողովուրդներին՝ և՛ մոտ, և՛ հեռու գտնվողներին: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածները այս ճշմարտության վերաբերյալ: Ինչպե՞ս մենք պետք է կիրառենք այս ճշմարտությունները մեր կյանքում:

ա. *Սաղմոս 40.10*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 71.15,16*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը երկու ճշմարտություն է սովորեցնում մեզ: Առաջինը՝ թեև մենք լիովին չգիտենք Աստծո բոլոր արդար գործերը, բայց սա չպետք է խանգարի մեզ պատմել մարդկանց այն, ինչ արդեն գիտենք: Երկրորդը՝ մենք պետք է խոսենք Աստծո՛ արդար գործերի մասին, ոչ թե մեր: Ինչպես սաղմոսերգուն է գրում. «Ոչ թե մեզ, Տե՛ր, ոչ թե մեզ, այլ Քո՛ անվանը փառք տուր» (Սաղմոս 115.1):

գ. *Սաղմոս 145.6,7*

_____

_____

_____

_____

դ. *Երեմիա 9.23,24*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ինչպես իմացանք Սաղմոս 71.15,16-ից, մենք չպետք է պարծենանք մեր արդարությամբ կամ գործերով, այլ՝ Աստծո արդարությամբ և այն արդար գործերով, որոնք Նա արել է այս երկրի վրա:

2. Համաձայն Ա Պետրոս 2.9,10-ի՝ ո՞րն է Նոր կտակարանի եկեղեցու և յուրաքանչյուր հավատացյալի մեծագույն նպատակը: Ինչպե՞ս մենք պետք է ապրենք այս ճշմարտության լույսի ներքո:

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք ուղարկված ենք այս երկիր՝ ազդարարելու Աստծո առաքինությունները բոլոր մարդկանց: Մենք անում ենք սա՝ պատմելով մեր անձնական վկայությունը, սովորեցնելով Աստծո Խոսքը և ապրելով այնպիսի կյանքով, որը հայտնում է Նրա զորությունը: Սա ոչ միայն պարտավորություն է, այլև մեծ արտոնություն:

Գլուխ 20. Աստված ճշմարիտ է

ԱՍՏԾՈ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆԸ

«Ազնիվ» բառը լատիներենում «***ինտեգեր***» բառն է, որը նշանակում է «ավարտուն և ամբողջական»: Երբ այս բառն օգտագործվում է Աստծո վերաբերյալ, այն նշանակում է, որ Աստծո բնավորությունն ամբողջական, անթերի և անաղարտ է: Գոյություն ունի երեք բառ, որոնք մենք կարող ենք օգտագործել՝ Աստծո ազնվությունը բացատրելու համար: (1) Աստված ***ճշմարիտ*** է. Նա իրական է՝ հնարված չէ, հորինված չէ և ընդօրինակված չէ: (2) Աստված ***ճշմարտացի*** է. Նա խոսում և գործում է միայն ճշմարտության շրջանակներում, և կեղծիքը հակառակ է Նրա էությանը: (3) Աստված ***հավատարիմ*** է. Նա մշտապես կատարում է Իր խոստումները:

ԱՍՏՎԱԾ ՃՇՄԱՐԻՏ ԿԱՄ ԻՐԱԿԱՆ Է

Աստվածաշնչում «ճշմարիտ» բառը թարգմանված է եբրայերեն «***էմետ***» և հունարեն «***ալեթինո՛ս***» բառերից: Երկուսն էլ նշանակում են ոչ միայն Աստծո ճշմարտացիությունը, այլև՝ Նրա իսկությունը: Աստված իրական է: Նա ճիշտ այնպիսին է, ինչպիսին հայտնում է Իրեն: Նա կեղծիք չէ, հնարված չէ, հորինված չէ և ո՛չ էլ ընդօրինակված է: Նա մեկ և միակ կենդանի Աստված է՝ անջատ մարդկանց ձեռագործ կուռքերից և այն կեղծ աստվածներից, որոնք գոյություն ունեն մարդկանց ապականված երևակայության մեջ:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ են վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում: Ի՞նչ են դրանք հայտնում Նրա իսկության (ճշմարիտ լինելու) մասին: Գրի՛ առեք ձեր մտքերը:

   ա. *«Սակայն Եհովան Ճ_____ Աստված է: Նա Կ_____ Աստված է և հավիտենական Թագավոր» (Երեմիա 10.10):*

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ճշմարիտ» բառը եբրայերենում «***էմետ***» բառն է: Այն ցույց է տալիս, որ Աստված ոչ միայն ճշմարիտ է, այլև՝ հավատարիմ: «Կենդանի» բառը թարգմանված է եբրայերեն «***խայ***» բառից, որը հաճախ է օգտագործվում՝ հակադրելու համար ճշմարիտ Աստծուն անկյանք կուռքերի հետ:

բ. *«Մ_____ Ճ_____ Աստված» (Հովհաննես 17.3):*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսն օգտագործեց երկու ազդեցիկ բառ՝ Աստծո իսկությունը ցույց տալու համար: Նա ճշմարտապես Աստված է, և Նա միակ ճշմարիտ Աստվածն է: Կարևոր է նշել, որ Հիսուսը չի ժխտում Իր աստվածությունը, այլ խոսում է որպես Միջնորդ Աստծո և մարդկանց միջև: Այն, որ Հիսուսը շաղկապում է Իրեն Հոր հետ և հայտարարում է, որ հավիտենական կյանքի իմաստը նաև Իրեն ճանաչելն է, ապացուցում է Նրա աստվածությունը: Եթե Նա Աստված չլիներ, նման արտահայտությունը լիովին անպատշաճ կլիներ և նույնիսկ կարող էր հայհոյություն համարվել:

գ. *«...Կ_____ և Ճ_____ Աստծուն» (Ա Թեսաղոնիկեցիների 1.9):*

_____

_____

_____

_____

դ. *«Ս_____ Տեր և Ճ_____» (Հայտնություն 6.10):*

_____

_____

_____

_____

2. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո իսկության և եզակի լինելու մասին: Գոյություն ունի՞ արդյոք որևէ ճշմարիտ և կենդանի Աստված՝ Սուրբ գրքի Աստծուց բացի:

ա. *Բ Թագավորաց 7.22*

_____

_____

_____

_____

բ. *Գ Թագավորաց 8.60*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սողոմոնը հայտարարեց սա անմիջապես նորավարտ տաճարի նավակատիքի աղոթքից հետո: Ահա և Սողոմոնի ճշմարիտ դրդապատճառը, որով նա խնդրում էր Աստծուն՝ օրհնել Իր ժողովրդին, որպեսզի երկրի բոլոր ազգերն իմանան, որ Տերն է Աստված, և ուրիշը չկա:

գ. *Եսայի 46.9*

_____

_____

_____

_____

3. Լիովին հասկանալու համար, թե որքան նշանակալի և կարևոր է այն ճշմարտությունը, որը մենք սովորում ենք այս գլխում, պետք է դիտարկենք այն աստվածաշնչյան հատվածները, որոնք հակադրում են կենդանի Աստծուն մարդկանց անկյանք կուռքերի և կեղծ աստվածների հետ: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո իսկության և եզակի լինելու մասին՝ ի տարբերություն կեղծ աստվածների և անկյանք կուռքերի:

ա. *Սաղմոս 115.3-9*

_____

_____

_____

_____

_____

բ. *Եսայի 46.5-10*

_____

_____

_____

_____

_____

4. Երեմիա 10.3-16-ում բերված է գերազանց համեմատություն միակ ճշմարիտ Աստծո և մարդկանց անկյանք կուռքերի ու կեղծ աստվածների միջև: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո կատարե՛ք հետևյալ վարժությունը:

ա. *Ինչպե՞ս են մարդկանց անկյանք կուռքերը և կեղծ աստվածները նկարագրվում այս հատվածում:*

(1) Կուռքերն Ու_____ են (խոսք 3,8): Այս խոսքը թարգմանված է եբրայերեն «***հեբել***» բառից, որը բառացիորեն նշանակում է «գոլորշի» կամ «շունչ»: Այսպիսով, դրա իմաստն ունայնությունը կամ խաբեությունն է: Մարդիկ ենթադրում են, որ կուռքերը զորավոր երկնային էակներ են, այնինչ, իրականում դրանցում նույնիսկ կյանք չկա:

(2) Կուռքերն ընդամենը անտառի Փ_____ են (խոսք 3,8): Կուռքերին երկրպագողը պաշտում է անկյանք փայտի: Աստծո ստեղծագործության պսակը նսեմացվում է՝ դառնալով անկյանք ու անմիտ բույսի երկրպագու:

(3) Կուռքերն ընդամենը մարդկանց ձեռքի Գ_____ են՝ արհեստավորի գործիքով շինված (խոսք 3,9): Մարդիկ հրաժարվում են երկրպագել այն Աստծուն, ով ստեղծել է իրենց, և փոխարենը՝ երկրպագում են այն աստվածներին, որոնց իրենք են ստեղծել (Հռոմեացիների 1.21-23):

(4) Կուռքերն ընդամենը զարդարված են Ա_____ և Ո_____ (խոսք 4,9): Կուռքը պարզապես փայտի կտոր է՝ բոլորովին զուրկ ներքին գեղեցկությունից: Այդ իսկ պատճառով, այն պետք է արտաքին հարդարանք և զարդարանք ունենա: Աստծո գեղեցկությունը և մեծությունը՝ երեսպատվածք չեն. դրանք ներհատուկ կամ բնորոշ են Նրան և բխում են Նրա ճշմարիտ ինքնությունից:

(5) Կուռքերն ամրացվում են բևեռներով (կամ՝ մեխերով), որպեսզի չշարժվեն (խոսք 4): «Շարժվել» (կամ՝ «երերալ») բառը թարգմանված է եբրայերեն «***պուք***» բառից, որը նշանակում է «պտտվել, տատանվել կամ ճոճվել՝ պատրաստ ընկնելու»: Կուռքերը երերում և ընկնում են թեթևակի հրելուց, բայց միակ ճշմարիտ Աստված պահում է ամբողջ տիեզերքն Իր զորության Խոսքով (Եբրայեցիների 1.3):

(6) Կուռքերը կոկված Ա_____ պես են (կամ՝ «նման խրտվիլակի՝ վարունգի դաշտում») (խոսք 5)։ Խրտվիլակը սովորաբար պատրաստվում էր հարդից, եղեգից և արմավենու տերևներից։ Խրտվիլակը չոր, դյուրաբեկ և անկյանք է. այն՝ մարդու խղճալի արտապատկերը կամ դատարկ ծաղրանկարն է, որն ի վիճակի է խաբել միայն ամենադյուրահավատ և ամենապարզ արարածներին։ Եթե խրտվիլակն անկարող է ներկայացնել մարդուն, ինչպե՞ս կուռքը կարող է ներկայացնել Աստծուն։

(7) Կուռքերը չեն Խ_____, և նրանք պետք է Տ_____, որովհետև չեն կարող քայլել (խոսք 5)։ Կուռքերը համր ու անզոր են։ Նույնիսկ մեղավոր մարդիկ կարող են պարծենալ այն զորության մասին, որն իրենք չունեն, բայց կուռքերը զրկված են նույնիսկ դատարկ պարծենալուց։ Այն, որ կուռքերին պետք է տանել, ցույց է տալիս նրանց անկարող և անօգուտ լինելը։ Ճշմարիտ Աստված Ինքն է տանում Իր ժողովրդին։ Երկրորդ Օրինաց 1.31-ում Մովսեսը հայտարարեց. «...քեզ քո Եհովա Աստվածը տարավ՝ ինչպես մի մարդ իր զավակին տանում է» (նույնպես կարդացե՛ք Երկրորդ Օրինաց 32.11)։

(8) Կուռքերը չեն կարող անել ո՛չ Չ_____, ո՛չ Բ_____ (խոսք 5)։ Այդ իսկ պատճառով, չպետք է վախենալ, որ կուռքերը կարող են պատժել՝ ինչպես հավաստիացնում են նրանց նվիրյալները, ո՛չ էլ պետք է պաշտել նրանց ու գոհանալ նրանցից այն բարիքների համար, որոնք սխալմամբ վերագրվում են նրանց։

(9) Կուռքերը Ս_____ են, և նրանցում Հ_____ (կամ՝ շունչ) չկա (խոսք 14)։ «Սուտ» բառը թարգմանված է եբրայերեն «***շեքեր***» բառից, որը նույնպես նշանակում է «խաբեություն, հիասթափություն, կեղծիք կամ ստություն»։ Այն կուռքը, որում շունչ չկա, չի կարող կյանք տալ մարդկանց։ Բայց ճշմարիտ և կենդանի Աստված կյանք և շունչ է տալիս բոլորին (Հոբ 33.4, 34.14,15)։ Ահա թե ինչու ամեն շունչ ունեցող պետք է օրհնի Տիրոջը (Սաղմոս 150.6)։

(10) Կուռքերը Ու_____ (կամ՝ անպետք) են (խոսք 15)։ Այս խոսքը եբրայերեն «***հեբել***» բառից է, որը բառացիորեն նշանակում է «գոլորշի» կամ «շունչ»։ Այն նկարագրում է դատարկ կամ անարժեք խաբեություն։

(11) Կուռքերը Մ_____ (կամ՝ ծաղրանքի) Գ_____ են, որոնք կկորչեն Աստծո դատաստանի ժամանակ (խոսք 15)։ «Մոլորություն» (կամ՝ «ծաղրանք») բառը թարգմանված է եբրայերեն «***տատուիմ***» բառից, որը կարող է երկու հնարավոր իմաստ ունենալ. (1) Կուռքերը պարզապես ծաղրանքի առարկաներ են (NET), կամ (2) դրանք մոլորեցնում են իրենց վստահողներին (ESV)։

բ. *Ինչպե՞ս են կռապաշտները (այսինքն՝ նրանք, ովքեր հավատում են կուռքերին և վախենում են դրանցից) նկարագրված այս հատվածում։*

(1) Խոսք 8

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Անբան» բառը թարգմանված է եբրայերեն «***բաար***» բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «գազանային» կամ «անզգա» բառերով: «Անմիտ» բառը թարգմանված է եբրայերեն «***կասալ***» բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «բթամիտ» բառով: Երկու բառերն էլ խիստ, բայց ստույգ նկարագրում են այն մարդկանց, ովքեր երկրպագում են իրենց ձեռքերով պատրաստված անկյանք կուռքերին, ծառայում են դրանց և հոգ են տանում դրանց համար:

(2) Խոսք 14

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Անասնացած» բառը թարգմանված է եբրայերեն «***բաար***» բառից (կարդացե՛ք բացատրությունը վերևում): Կուռքերին երկրպագողներն առանց գիտելիքի են, զուրկ կամ հեռու են գիտելիքից: Նրանք չգիտեն ճշմարտությունը և շատ սահմանափակ պատկերացում ունեն իրականության մասին:

գ. *Ինչպե՞ս են հետևյալ աստվածաշնչյան հատվածները նկարագրում ճշմարիտ և կենդանի Աստծուն: Ինչպե՞ս է Նա հակադրվում մարդկանց անկյանք կուռքերի և կեղծ աստվածների հետ:*

(1) Խոսքեր 6,7

_____

_____

_____

_____

(2) Խոսք 10

_____

_____

_____

_____

(3) Խոսքեր 12,13

5. Ինչպե՞ս մենք պետք է ապրենք՝ հաշվի առնելով այն ամենը, ինչ սովորեցինք միակ ճշմարիտ Աստծո փառքի, ինչպես նաև՝ անկյանք կուռքերի և կեղծ աստվածների ունայնության մասին: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները:

ա. *Ելից 20.3, 23.13*

բ. *Ելից 20.4,5, Ղևտացիների 19.4*

գ. *Ա Թեսաղոնիկեցիների 1.9*

դ. *Ա Հովհաննես 5.20,21*

_____

_____

_____

_____

6. Անչափ կարևոր է հասկանալ, որ կռապաշտությունը կարող է տարբեր ձևեր ընդունել: Եթե մենք նախապատվություն ենք տալիս որևէ մարդու, երևույթի կամ առարկայի ավելի, քան Աստծուն, մենք մեղավոր ենք կռապաշտության մեջ: Այս աշխարհի հաճույքներն ու վայելքները, կարիերան, ծառայությունը, նախասիրությունները և հատկապես՝ սեփական անձը, ամենատարածված կուռքերն են: Աղոթքով մտածեք այս ճշմարտության մասին, իսկ հետո պատասխանեք հետևյալ հարցերին: Ինչն է ամենից թանկ ձեզ համար: Ինչի՞ մասին եք ամենից շատ մտածում: Դուք ամենից շատ մտածում եք Աստծո առաքինությունների և փառքի՞ մասին, Աստծուն ձեր ընտանիքում պատվելո՞ւ, Աստծո կամքը ձեր կոչման մեջ կատարելո՞ւ, թե՞ ձեր անձի, հաջողության, ունեցվածքի, զվարճանքի, նախասիրությունների և այս աշխարհին վերաբերող այլ բաների մասին: Մի՞թե չի կարելի ասել, որ բոլորս մեղավոր ենք կռապաշտության ինչ-որ ձևի կամ չափի մեջ, և բոլորս պետք է ապաշխարենք և փնտրենք Աստծո ողորմությունը և շնորհքը:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 21. Աստված ճշմարտացի է

Աստծո իսկությունը կամ ճշմարիտ լինելը դիտարկելուց հետո մենք կանդրադառնանք Նրա ճշմարտացի լինելուն: Աստված ճիշտ այնպիսին է, ինչպես որ հայտնում է Իրեն (այսինքն՝ Նա ճշմարիտ է). դրա հետ մեկտեղ, ամեն ինչ ճիշտ այնպես է, ինչպես Նա ասում է (այսինքն՝ Նա ճշմարտացի է): Աստված խոսում և գործում է միայն ճշմարտության շրջանակներում: Նրա գիտելիքը կատարյալ է, և այդ պատճառով Նա երբեք չի սխալվում: Նրա բնավորությունը սուրբ և արդար է, և այդ պատճառով Նա չի կարող ստել կամ աղավաղել ճշմարտությունը: Անհնար է, որ Աստված սխալ կերպով ներկայացնի կամ կեղծի որևէ բան: Այս ճշմարտությունը պետք է դրդի մեզ լիարժեք կերպով վստահել Աստծուն և Նրա Խոսքին:

1. Աստվածաշնչում անունը նկարագրում է իրեն կրողի էությունը: Ի՞նչ անուններ և հատկանիշներ են վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում:

   ա. *Ճ _____ Աստված (Եսայի 65.16, Սաղմոս 31.5):* Եսայի 65.16-ում «ճշմարիտ» բառը թարգմանված է եբրայերեն «***ամեն***» բառից: Բառացիորեն՝ Նա «ամենի» Աստվածն է՝ այն Աստված, Ով ասում է «ամեն» (այսինքն՝ «թող այդպես լինի») բոլոր Իր խոստումներին: Սաղմոս 31.5-ում «ճշմարտություն» բառը թարգմանված է եբրայերեն «***էմեթ***» բառից, որը նույնպես նշանակում է «հավատարմություն»:

   բ. *Աստված Ճ _____ է (Հովհաննես 3.33):* Այս բառը թարգմանված է հունարեն «***ալեթես***» բառից և կարող է նշանակել, որ Աստված իրական կամ իսկական է, կամ որ Նա ճշմարտացի է: Համաձայն համատեքստի՝ ավելի ընդունելի է երկրորդ տարբերակը:

   գ. *Ամփոփե՛ք ձեր բառերով, թե ինչ են հայտնում այս անուններն Աստծո ճշմարտացի լինելու մասին: Ի՞նչ ազդեցություն դրանք պետք է ունենան մեր կյանքում:*

   _____

   _____

   _____

   _____

2. Ի՞նչ են սովորեցնում Թվոց 23.19-ը և Ա Թագավորաց 15.29-ը Աստծո ճշմարտացի լինելու մասին:

   _____

   _____

   _____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված երբեք չի ստում, զղջում կամ փոխում Իր նպատակը: Նա նման չէ մարդկանց, ովքեր մշտապես մտափոխվում են, հաճախ սխալվում են և շատ անգամ աղավաղում են ճշմարտությունը: Աստված ճշմարտացի է, և Նրա Խոսքը՝ անփոփոխ ճշմարտություն է:

3. Աստծո ճշմարտացի լինելուց կարելի է շատ կարևոր հետևություններ անել, բայց դրանցից ամենակարևորն այն է, որ մենք կարող ենք վստահել Նրան և Նրա ամեն մի խոստմանը: Ինչ են սովորեցնում հետևյալ արտահայտությունները այս ճշմարտության մասին:

   ա. *Ա_____ Աստված (Տիտոս 1.2):* Աստված չի կարող ստել, քանի որ Նա չի կարող անել որևէ բան, որը կհակասի Իր սուրբ և արդար էությանը:

   բ. *Ա_____ է, որ Աստված Ս_____ խոսի (Եբրայեցիների 6.18):* «Անկարելի» բառը թարգմանված է հունարեն «***ադո՛ւնատոս***» բառից («***ա***» = «ան» ժխտական մասնիկը + «***դո՛ւնատոս***» = «ուժեղ, զորավոր, ազդեցիկ»), և կարող է թարգմանվել նաև «անկարող» կամ «անզոր» բառերով:

   գ. *Ինչպիսի՞ ազդեցություն պետք է ունենան վերևում բերված աստվածաշնչյան հատվածները մեր կյանքում: Ինչպե՞ս մենք պետք է ապրենք դրանց լույսի ներքո:*

   _____

   _____

   _____

   _____

4. Մեր Աստված՝ ճշմարտության Աստված է: Այնպես որ, բնական է, որ Նրա խոսքերը և գործերը ճշմարիտ են: Ինչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս սկզբունքի մասին:

   ա. *Աստծո Գ_____ Ճ_____ են (Դանիել 4.37):* «Ճշմարիտ» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***քեշոտ***» բառից, որի բառացի թարգմանությունը «ճշմարտություն» է: Խոնարհված Նաբուգոդոնոսոր թագավորը հասկացավ, որ Աստծո գործերը ճշմարտություն են, նույնիսկ՝ Նրա դատաստանները:

   բ. *Ա_____ Ձ_____ գործերը Ճ_____ են (Սաղմոս 111.7):* «Ճշմարտություն» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***էմեթ***» բառից, որը նույնպես նշանակում է «կայունություն» և «հավատարմություն»:

   գ. *Աստծո Օ_____ Ճ_____ է (Սաղմոս 119.142):* «Ճշմարտություն» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***էմեթ***» բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում):

դ. *Աստծո բոլոր Պ_____ Ճ_____ են (Սաղմոս 119.151):* «Ճշմարտություն» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***էմեթ***» բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում):

ե. *Աստծո խ_____ Ս_____ (կամ՝ էությունը) Ճ_____ է (Սաղմոս 119.160):* «Ճշմարտություն» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***էմեթ***» բառից (կարդացե՛ք սահմանումը վերևում):

զ. *Աստծո խոսքը Ճ_____ է (Հովհաննես 17.17):* «Ճշմարտություն» բառն այս խոսքում թարգմանված է հունարեն «***ալեթիա***» բառից, որը նաև կարող է նշանակել «ճշմարտացիություն» և «հավատարմություն»:

5. Մեր Աստված՝ ճշմարտության Աստված է, և Նա հայտնել է Իր ճշմարտությունը մարդկանց բազմապիսի ձևերով: Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ որո՞նք են այն երեք հիմնական միջոցները, որոնցով Աստված հայտնում է ճշմարտությունը բոլոր մարդկանց, հատկապես՝ Իր ժողովրդին:

ա. *Աստված հայտնում է Իր ճշմարտությունն Աստծո խոսքի միջոցով:* Ի՞նչ է Բ Տիմոթեոս 3.16,17-ը հայտնում մեզ այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Աստվածաշունչ» («Աստծուց ոգեշնչված») բառը թարգմանված է հունարեն «***թեո՛պ-նեուստոս***» բառից: Քանի որ Աստվածաշունչը «դուրս է գալիս Աստծո բերանից» (Մատթեոս 4.4), այն լիովին վստահելի է: Կարևոր է նշել, որ Աստվածաշունչը ոչ միայն սովորեցնում է ճշմարտությունը, այլև հանդիմանում է մեզ, երբ շեղվում ենք ճշմարտությունից, շտկում է մեզ, որպեսզի մենք վերադառնանք ճշմարտությանը, և խրատում է՝ սովորեցնելով այն, ինչ անհրաժեշտ է արդար լինելու համար:

բ. *Աստված հայտնում է Իր ճշմարտությունը Իր Որդու միջոցով:* Ի՞նչ են ցույց տալիս հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

(1) Հովհաննես 1.14,17

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Եղավ» բառը 1.17-ում թարգմանված է հունարեն «***գինոմայ***» բառից. հավանաբար, ավելի լավ կլիներ թարգմանել այն «եկավ» բառով. «շնորհքը և ճշմարտությունը եկան Հիսուսի միջոցով»: Հովհաննեսը չի ասում, որ Հին կտակարանի օրենքը վատն էր կամ զուրկ էր շնորհքից և ճշմարտությունից: Նա պարզապես ցույց է տալիս, որ Հիսուսը՝ շնորհքի և ճշմարտության շատ ավելի գերազանց հայտնություն է, քան Մովսեսի կողմից տրված Օրենքը երբևէ կարող էր լինել:

(2) Հովհաննես 14.6

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հայտարարությունը շատ կարևոր է: Հիսուսը՝ Աստծո ճշմարտության մեծագույն հայտնությունն է մարդուն, որովհետև ***Նա է ճշմարտությունը:*** Նա պարզապես ճշմարտության Ուսուցիչը չէ. Նա ճշմարտության մարմնավորումն է, ամբողջ ճշմարտության էությունը և աղբյուրն է: Նա մարմնավորված ճշմարտությունն է: Նրան լսելը նշանակում է լսել ճշմարտությունը: Նրան տեսնելը նշանակում է տեսնել ճշմարտությունը՝ գործողության մեջ: Եփեսացիների 4.21-ում Պողոս առաքյալը վկայում է, որ ճշմարտությունը «Հիսուսի մեջ» է:

գ. *Աստված հայտնում է Իր ճշմարտությունը Սուրբ Հոգու միջոցով:* Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

(1) Սուրբ Հոգին Ճ_____ Հ_____ է (Հովհաննես 14.16,17, 15.16, 16.13): Ինչպես Հոր և Որդու դեպքում, ճշմարտությունը Սուրբ Հոգու հատկանիշն է և բնութագրում է այն ամենը, ինչ բխում է Նրանից: Այս պատճառով Հովհաննես առաքյալը Ա Հովհաննես 4.6-ում ճշմարտության հոգին հակադրում է խաբեության հոգու հետ:

(2) Սուրբ Հոգին առաջնորդում է Աստծո ժողովրդին ամեն Ճ_____ մեջ (Հովհաննես 16.13): Շատ կարևոր է, որ հասկանանք այս խոսքի անմիջական համատեքստը: Հիսուսը խոսում է Իր առաքյալների հետ, որոնց՝ Հոգին դրդելու էր գրել Սուրբ գրքերը (Բ Պետրոս 1.21): Հոգու աշխատանքն առաքյալների միջոցով հավաստիացնում էր, որ Սուրբ գրքերը լինելու էին «ոգեշնչված» կամ «Աստվածաշունչ» և ամբողջովին արժանահավատ (Բ Տիմոթեոս 3.16): Միևնույն ժամանակ, Հոգին նույնպես առաջնորդում է Աստծո ժողովրդին ճշմարտության մեջ՝ լուսավորելով նրանց մտքերը, որպեսզի նրանք հասկանան Սուրբ գրքերը (Ա Կորնթացիների 2.12,13): Կարևոր է հիշել, որ Հոգին երբեք չի առաջնորդի հավատացյալին որևէ «ճշմարտության» մեջ, որը հակասում է Իր կողմից գրված Աստվածաշնչի դրույթներին:

Գլուխ 22. Մեր արձագանքն Աստծո ճշմարտացի լինելուն

Մեր Աստված՝ ճշմարտության Աստված է, և Նրա բոլոր ճանապարհները, խոսքերը և գործերը ճշմարտության սահմաններում են: Հետևյալ աստվածաշնչյան հատվածներում մենք կտեսնենք, թե ինչպես պետք է ապրենք այս ճշմարտության լույսի ներքո՝ որպես քրիստոնյաներ:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՆՔ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

1. Երկրորդ Տիմոթեոս 2.15-ում Պողոս առաքյալը կարևոր հորդոր տվեց իր երիտասարդ աշակերտ Տիմոթեոսին Սուրբ գրքերի վերաբերյալ: Նկարագրե՛ք այդ հորդորը և բացատրե՛ք, թե ինչ ազդեցություն այն պետք է ունենա մեր կյանքում:

_____

_____

_____

_____

_____

_____

2. Համաձայն Սաղմոս 1.1-3-ի՝ ո՞րն է հավատացյալի պատշաճ արձագանքն Աստծո խոսքին: Ի՞նչ է Աստված խոստանում նրանց, ովքեր պատշաճ տեղ են հատկացնում Աստծո խոսքին իրենց կյանքում:

_____

_____

_____

_____

_____

_____

3. Մենք կարող ենք տեսնել Աստծո Խոսքին արձագանքելու տպավորիչ օրինակ դպիր Եզրասի կյանքում: Համաձայն Եզրաս 7.10-ի՝ որո՞նք էին այն երեք բաները, որոնց համար Եզրասը պատրաստել էր իր սիրտը: Ինչպե՞ս մենք պետք է հետևենք Եզրասի օրինակին:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԱՂՈԹԵՆՔ՝ ԱՍՏԾՈ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ինչի՞ մասին է աղոթում Դավիթը Սաղմոս 25.4,5-ում: Ինչպե՞ս մենք պետք է հետևենք Դավթի օրինակին:

2. Սաղմոս 43-ը՝ փրկության աղոթք է, բայց այս աղոթքի մեջ բարձրացվում է մի հրաշալի խնդրանք Աստծո ճշմարտության վերաբերյալ: Ի՞նչ խնդրանք է գրված Սաղմոս 43.3-ում, և ինչպե՞ս մենք պետք է կիրառենք այն մեր աղոթքի կյանքի և Աստծո Խոսքի ուսումնասիրության մեջ:

3. Մենք պետք է աղոթենք ոչ միայն Աստծո ճշմարտությունը հասկանալու, այլև դրան հնազանդվելու համար: Ի՞նչ է սովորեցնում Սաղմոս 86.11-ը այս մասին: Ինչպե՞ս պետք է կիրառենք այս ճշմարտությունը մեր կյանքում:

_____

_____

_____

_____

_____

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՀՆԱԶԱՆԴՎԵՆՔ ԱՍՏԾՈ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ

1. Մենք ոչ միայն պետք է ուսումնասիրենք Աստվածաշունչը և աղոթենք՝ Աստծո ճշմարտությունը ճանաչելու համար, այլև պետք է հնազանդվենք Աստծո ճշմարտությանը (կամ՝ վարվենք Աստծո ճշմարտությամբ), և ցնծանք, երբ այլ մարդիկ են այդպես վարվում: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածներն այս մասին:

ա. *Բ Հովհաննես 4*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Գնալ» բառը թարգմանված է հունարեն «***պերիպատեո՛***» բառից («***պերի***» = շուրջը + «***պատեո***» = քայլել»): Հովհաննես առաքյալն օգտագործում է այս բառը՝ նկարագրելու համար մարդկային կենսաոճը կամ վարվելակերպը: Ճշմարտության մեջ գնալը նշանակում է՝ կառուցել մեր ամենօրյա կյանքը՝ համաձայն Աստծո ճշմարտության, որը հայտնված է Աստվածաշնչում:

բ. *Գ Հովհաննես 3,4*

_____

_____

_____

_____

2. Հռոմեացիների 2.8-ը ցույց է տալիս, թե ինչ չեն անում անարդար մարդիկ, և թե ինչ են նրանք անում: Լրացրե՛ք ստորև բերված նկարագրության բաց թողնված բառերը՝ համաձայն այս խոսքի:

   ա. *Անարդար մարդիկ Ա_____ են Ճ_____:*

   բ. *Անարդար մարդիկ Գ_____ են Ա_____ ետևից:*

   գ. *Համաձայն Հռոմեացիների 2.8-ի՝ որքանո՞վ է կարևոր ոչ միայն Աստծո ճշմարտությունը ճանաչելը, այլև դրան հնազանդվելը: Եթե չենք հնազանդվում Աստծո ճշմարտությանը, ինչի՞ն ենք մենք հնազանդվում: Բացատրե՛ք ձեր պատասխանները:*

_____

_____

_____

_____

3. Մեր հնազանդությունն Աստծո ճշմարտությանը ավելին է, քան արտաքին գործողությունները. այն ընդգրկում է սրտի համապատասխան վերաբերմունքը: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

   ա. *Սաղմոս 51.6*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված ցանկանում է, որ մեր արտաքին հնազանդությունը ճշմարտությանը՝ բխի մեր ներսում բնակվող ճշմարտությունից և Տիրոջ հանդեպ անկեղծ, սրտանց հավատարմությունից: Նա չի ընդունի այլ տեսակի հնազանդություն:

բ. *Հովհաննես 4.23,24*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծուն «հոգով» երկրպագելն ունի երկու հնարավոր բացատրություն. (1) Մենք պետք է երկրպագենք Աստծուն մեր ամբողջ էությամբ, անկեղծորեն և խորապես, կամ (2) մենք պետք է երկրպագենք Աստծուն Սուրբ Հոգու զորությամբ և առաջնորդությամբ: Աստծուն «ճշմարտությամբ» երկրպագելը նույնպես երկու հնարավոր իմաստ ունի. (1) մենք պետք է երկրպագենք Աստծուն ճշմարտապես, ազնվությամբ և անկեղծությամբ, կամ (2) մենք պետք է երկրպագենք Աստծուն՝ համաձայն ճշմարտության, այսինքն՝ համաձայն Աստծո կամքի, որը հայտնված է Սուրբ գրքում:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՊԱՏՄԵՆՔ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՍՏԾՈ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Մենք պետք է հասկանանք, որ ճշմարտությունը նախատեսված չէ միայն մեզ համար, և ***մեր*** հնազանդությունը չպետք է լինի մեր միակ մտահոգությունը: Եթե մենք ճշմարտապես սիրում ենք այլ հավատացյալների և մեզ շրջապատող աշխարհը, պետք է պատմենք նրանց Աստծո ճշմարտությունը, որպեսզի նրանք նույնպես կարողանան ապրել համապատասխան Աստծո կամքին: Սաղմոս 40.9,10-ը տպավորիչ և գեղեցիկ կերպով ցույց է տալիս այս ճշմարտությունը Դավթի կյանքում: Ինչպե՞ս մենք պետք է նմանակենք Դավթի դիրքորոշմանը և գործերին:

_____

_____

_____

_____

2. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչպիսի՞ վերաբերմունք պետք է ունենանք, երբ պատմում ենք մարդկանց Աստծո ճշմարտությունը:

ա. *Եփեսացիների 4.15*

_____

_____

_____

_____

բ. *Բ Տիմոթեոս 2.25*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հանդարտություն» բառը թարգմանված է հունարեն «***պրաուտես***» բառից, որը նույնպես հեզության, մեղմության և համբերության իմաստ է կրում: Սա կոպիտ, խիստ և կտրուկ վարքի ճիշտ հակառակն է:

Գլուխ 23. Աստված հավատարիմ է

«Հավատարիմ» բառը թարգմանված է եբրայերեն «***աման***» և հունարեն «***պիստո՛ն***» բառերից: Երկուսն էլ նշանակում են վստահելիություն կամ կայունություն: Այս բառի իմաստը կարելի է բացատրել հետևյալ կերպով. պատկերացրեք մի ամուր սյուն, որը պահում է մի ամբողջ շենք, կամ հոր ուժեղ ձեռքերը, որոնք գրկում և պաշտպանում են իր անօգնական երեխային: Երբ «հավատարիմ» բառը վերագրվում է Աստծուն, դա նշանակում է, որ Նա արժանի է մեր բացարձակ վստահությանը, և որ Նրա ժողովուրդը կարող է կախված լինել Նրանից՝ առանց որևէ կասկածի կամ վերապահման: Կարևոր է հասկանալ՝ Աստծո հավատարմությունը չի նշանակում, որ Նա անելու է այն ամենը, ինչ ցանկանում է Իր ժողովուրդը, այլ՝ այն ամենը, ինչ Նա խոստացել է:

1. Աստվածաշնչում անունը նկարագրում է իրեն կրողի էությունը: Ի՞նչ անուններ են վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում:

   ա. Հ_____ *Աստված (Երկրորդ Օրինաց 7.9):* Մեր Աստված՝ հուսալի Աստված է: Նա այն Աստվածն է, Ով արժանի է ամենաբարձր վստահության մեր կյանքի ամենակարևոր հարցերում:

   բ. *Աստված* Հ_____*է և* Ա_____*չունի (Երկրորդ Օրինաց 32.4):* Հավատարմությունը նույնիսկ ավելին է, քան Աստծո հարատև նվիրվածությունը. այն Աստծո հատկանիշներից մեկն է: Նա հավատարիմ ***է***. այդ իսկ պատճառով, Նրա բոլոր խոսքերը և գործերը հավատարիմ են: Նույնպես, ուշադրություն դարձրեք, որ գոյություն ունի անմիջական կապ Աստծո արդարության և հավատարմության միջև: Նրա հավատարմությունը բխում է Նրա անսխալական արդարությունից:

   գ. *Սուրբը, Ով հավատարիմ է (Ովսե 12.1, NASB):* Այստեղ մենք տեսնում ենք անմիջական կապ Աստծո սրբության և Նրա հավատարմության միջև: Տիրոջ նման սուրբ չկա (Ա Թագավորաց 2.2). նույն կերպով, Նրա նման հավատարիմ չկա:

   դ. Հ_____ *Ստեղծող (Ա Պետրոս 4.19):* Աստծո արդարությունը և սրբությունը՝ Նրա հավատարմության բարոյական հիմքն են: Հղումն Աստծուն՝ որպես Արարչի, ցույց է տալիս, որ Նա ի զորու է կատարել ամեն մի խոստում, որը տվել է:

2. Մեր Աստված՝ հավատարիմ Աստված է: Շնորհիվ Իր արդարության և զորության՝ Նա արժանի է անսահմանորեն ավելի մեծ վստահության, քան մենք երբևէ կարող ենք ունենալ Նրա հանդեպ: Ինչպե՞ս է նկարագրվում Աստծո հավատարմությունը հետևյալ աստվածաշնչյան հատվածներում: Ինչպիսի՞ ճշմարտություններ են դրանք հայտնում մեզ:

   ա. *Սաղմոս 36.5*

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ճշմարտություն» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***էմունահ***» բառից, որն ունի վստահելիության, կայունության և հավատարմության իմաստ։

բ. *Սաղմոս 100.5*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո հավատարմությունը տարածվում է ոչ միայն ուղղահայաց՝ դեպի Երկինքը, այլև հորիզոնական՝ դեպի բոլոր սերունդները։ Այն տարածվում է Հին կտակարանի նահապետներից դեպի առաջին դարի եկեղեցու աշակերտները, և նույնիսկ՝ մինչև ամենավերջին սուրբը, ով կապրի այս երկրի վրա։ Աստծո հավատարմությունը երբեք չի վերջանա։

գ. *Սաղմոս 146.5,6*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո կողմից երկիրն ու ծովը պահելը՝ մշտական հիշեցում է այն մասին, որ Նրա հավատարմությունն Իր ժողովրդի հանդեպ՝ անսասան է։ Նա, Ով «ամեն բան պահում է Իր զորության խոսքով» (Եբրայեցիների 1.3), կարող է պահել Իր ժողովրդին տված խոստումները, և անում է դա։ Մենք կարող ենք լիարժեք կերպով վստահել և հուսալ Նրան։

3. Կարևոր է հասկանալ, որ Աստծո հավատարմությունը կախված չէ միայն Նրա բնավորությունից, այլև՝ Նրա զորությունից և անփոփոխ լինելուց: (Եթե գոյություն ունենար սահմանափակ զորություն ունեցող և փոփոխական աստված, նա չէր կարողանա կատարել իր խոստումները, կամ կարող էր մտափոխվել իր խոստումների վերաբերյալ): Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները կենդանի Աստծո զորության և Նրա անփոփոխ լինելու մասին: Նա կարո՞ղ է կատարել Իր բոլոր խոստումները: Հնարավո՞ր է, որ Նա փոխվի: Ինչպե՞ս Աստվածաշնչի պատասխաններն այս հարցերին պետք է ազդեն մեր կյանքի վրա:

ա. *Աստված ունի զորություն՝ կատարելու համար այն ամենը, ինչ խոստացել է:*

(1) Սաղմոս 135.5,6

_____

_____

_____

_____

(2) Եսայի 14.24,27

_____

_____

_____

_____

(3) Եփեսացիների 1.11

_____

_____

_____

_____

բ. *Աստված և Նրա խոստումներն անփոփոխ են:*

(1) Սաղմոս 102.25-27

_____

_____

_____

_____

(2) Մաղաքիա 3.6

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքը ազդու կերպով ցույց է տալիս, թե ինչ ազդեցություն ունի Աստծո անփոփոխ էությունը Իր և Իր ժողովրդի հարաբերությունների վրա: Նույնիսկ այն ժամանակ, երբ Իսրայելն անհավատարիմ էր Աստծուն, միևնույն է, Նա հավատարիմ էր, որովհետև Նա չի փոխվում, և Նրա խոստումներն անկատար չեն մնում: Նրա հավատարմությունն Իր խոստումներին՝ կախված է ոչ թե մեզնից, այլ Նրա անփոփոխ և արդար բնավորությունից:

Գլուխ 24. Մեր արձագանքն Աստծո հավատարմությանը

Ամբողջ Աստվածաշունչը խոսում է Աստծո հավատարմության մասին: Ամբողջ պատմության ընթացքում չի եղել նույնիսկ մեկ դեպք, որ Աստված լիարժեք կերպով հավատարիմ չի եղել Իր ասած ամեն մի խոսքին: Այս գլխում կդիտարկենք, թե ինչ հետևություններ կարելի է անել այս փաստից: Ինչպե՞ս մենք պետք է ապրենք Աստծո բացարձակ հավատարմության լույսի ներքո:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՎՍՏԱՀԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ

1. Սաղմոս 31.14-ում գրված է ամենակարճ և ամենաազդեցիկ հավատքի հռչակումներից մեկը ամբողջ Աստվածաշնչում: Ի՞նչ ճշմարտություններ են հայտնվում այս հռչակման մեջ: Ինչպե՞ս մենք պետք է ձգտենք նմանակել սաղմոսերգուի հավատքին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածում գրված է երկու մեծ ճշմարտություն: Առաջինը՝ գոյություն ունի անմիջական կապ հավատքի և դավանության միջև (այսինքն՝ դավանությունը բխում է հավատքից): Երկրորդը՝ հավատքը ենթադրում է անձնական շփում: Ճշմարիտ հավատքը պահանջում է ավելին, քան Աստծո գոյությունը գիտակցելը: Նա պետք է լինի ավելին, քան ***ինչ-որ*** Աստված կամ նույնիսկ՝ ***միակ*** Աստվածը: Նա պետք է լինի ***իմ*** Աստվածը:

2. Եսայի 26.3,4-ում և՛ հորդոր է՝ Աստծուն վստահելու համար, և՛ խոստում՝ Նրան հնազանդվողներին: Առանձին ամփոփե՛ք դրանք ձեր բառերով: Ի՞նչ ազդեցություն սա պետք է ունենա մեր կյանքում:

ա. *Հորդոր (խոսք 4)*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված հայտնել է Իրեն որպես հավիտենական Վեմ և Իր գործերով ապացուցել է, որ դա ճշմարիտ է: Մեր վստահությունն Աստծո հանդեպ պետք է հիմնված լինի այս փաստի վրա:

բ. *Խոստում (խոսք 3)*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Վստահելով Աստծուն՝ մենք ձեռք ենք բերում այն, ինչն հազվագյուտ և ցանկալի բաներից մեկն է ամբողջ մարդկության համար՝ խաղաղությունը: Խաղաղությունը պարգև է Աստծուց՝ շնորհված նրանց, ովքեր որոշում են կայացրել վստահել Նրան:

3. Սաղմոս 56.3,4-ում ևս մեկ անգամ գրված է Աստծո հանդեպ վստահություն ունենալու մասին: Համաձայն այս հատվածի՝ ինչպե՞ս է Աստծուն ճանաչելը օգնում մեզ կայուն մնալ նույնիսկ ամենախավար հանգամանքներում: Ինչպե՞ս է Աստծո հավատարմության մասին իմանալը օգնում մեզ հարատևել նեղությունների ժամանակ: Կա՞ արդյոք որևէ կապ Աստծուն վստահելու և Նրա Խոսքի միջև:

_____

_____

_____

_____

_____

4. Սաղմոս 62.5-8-ը տպավորիչ կերպով ամփոփում է մեր սովորածը: Այս հատվածում սաղմոսերգուն հավատքի հռչակում է անում, նաև հորդոր է հղում մեզ: Ամփոփե՛ք այս երկուսի կարևորությունը ձեր բառերով:

ա. *Հավատքի հռչակում (խոսք 5-7)*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սաղմոսերգուն հայտարարում է իր բացարձակ կախվածությունն Աստծուց: Աստված է նրա հույսը, վեմը, փրկությունը և ապավենը: Նրա փրկության և փառքի հույսը Աստծո հավատարմության և զորության վրա է:

բ. *Հորդոր (խոսք 8)*

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՎՍՏԱՀԵՆՔ ԱՍՏԾՈ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ

1. Աստծո հանդեպ վստահությունը միայն մեր մտքում և սրտում չէ. այն ազդում է մեր կյանքի ամեն մի բնագավառի վրա: Աստծուն վստահելը նշանակում է՝ ուղղել մեր կյանքի ընթացքը դեպի Նա և առաջնորդվել Նրա Խոսքով: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

ա. *Սաղմոս 37.5*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հանձնել» բառը թարգմանված է եբրայերեն «***գալալ***» բառից, որը բառացիորեն նշանակում է «գլորել»: Գաղափարն այն է, որ մենք պետք է ամբողջովին «գլորենք» մեր կյանքը Տիրոջ վրա: «Քո ճանապարհը» արտահայտությունը նշանակում է՝ մեր կյանքի ուղղությունը և գործունեությունը:

բ. *Առակաց 3.5,6*

2. Աստվածաշունչը հաճախ է հակադրում Աստծուն վստահելու իմաստությունը սեփական անձին ապավինելու հիմարության հետ: Ծանոթացե՛ք Երեմիա 17.5-8-ի բովանդակությանը, իսկ հետո նկարագրե՛ք տարբերությունը երկու տեսակի մարդկանց միջև, որոնցից մեկն ապավինում է իր ուժերին և իմաստությանը, իսկ երկրորդը՝ Աստծո հավատարմությանը:

ա. *Այն մարդը, ով ապավինում է իրեն (Երեմիա 17.5,6)*

բ. *Այն մարդը, ով ապավինում է Տիրոջը (Երեմիա 17.7,8)*

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՀՌՉԱԿԵՆՔ ԱՍՏԾՈ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐԻՆ

1. Բավական չէ վստահել Տիրոջն ամբողջ սրտով և կառուցել մեր կյանքը՝ համաձայն Նրա Խոսքի. մենք նույնպես պետք է պատմենք մարդկանց Աստծո հավատարմության մասին: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին:

   ա. *Սաղմոս 40.10*

   բ. *Սաղմոս 89.1*

2. Բավական չէ պարզապես համաձայնել այն ճշմարտության հետ, որ մենք պետք է պատմենք մարդկանց Աստծո հավատարմության մասին. մենք պետք է նաև անե՛նք սա: Մենք պետք է հարցնենք ինքներս մեզ՝ արդյո՞ք հռչակել ենք Աստծո հավատարմությունը մեզ շրջապատող մարդկանց, թե՞ պահել ենք այն ծածկված մեր սրտում: Հիմնվելով վերևում բերված հատվածների վրա՝ բացատրե՛ք, թե ինչպես կարող ենք Աստծո հավատարմության ավելի արդյունավետ վկաներ լինել:

Գլուխ 25. Աստծո հավատարմության դրսևորումները

Աստվածաշնչում գրված են բազմաթիվ վկայություններ այն մասին, որ Աստված հավատարիմ է Իր ժողովրդին: Եթե բոլոր վկայությունները Նրա հավատարմության մասին մանրամասնորեն գրի առնվեին, նույնիսկ ամբողջ աշխարհը բավական չէր լինի այդ գրքերի համար (Հովհաննես 21.25): Այնուամենայնիվ, այս գլխում մենք համառոտ կհիշատակենք Աստծո հավատարմության ընդամենը չորս դրսևորում կամ ապացույց. (1) Աստծո ուխտերը, (2) Աստծո Խոսքը, (3) Աստծո գործերը և (4) Աստծո Որդու գալուստը: Ստորև առանձին-առանձին կդիտարկենք դրանք:

ԱՍՏԾՈ ՈՒԽՏԵՐԸ

«Ուխտ» բառը լատիներենում «***կոնվենիրե***» բառն է («***կոմ***» = «միասին» + «***վենիրե***» = «գալ»): Աստվածաշնչում «ուխտ» բառը թարգմանված է եբրայերեն «***բերիտ***» բառից՝ Հին կտակարանում, և հունարեն «***դիաթեկե***» բառից՝ Նոր կտակարանում: Խոսելով Աստծո և Նրա ժողովրդի միջև կնքված ուխտերի մասին՝ Աստվածաշունչը նկատի ունի այն խոստումները, որոնք Աստված տվել է Իր ժողովրդին՝ այն պարտավորությունները, որոնք Նա հանձն է առել անպատճառ կատարել:

1. Երկրորդ Օրինաց 7.7-9-ում Մովսեսը նկարագրեց Աստծո հավատարմությունն Իր ուխտին: Ամփոփե՛ք այն ճշմարտությունները, որոնք հայտնված են այս հատվածում, և բացատրե՛ք, թե ինչ կերպով են դրանք վերաբերում բոլոր դարերում ապրող հավատացյալներին:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված փրկեց Իսրայելի ժողովրդին և բարությամբ վարվեց նրանց հետ այն խոստումների շնորհիվ, որոնք Նա տվել էր Աբրահամին (Ծննդոց 12.1-3) և մյուս նահապետներին: Այն փաստը, որ Աստված դեռ կատարում էր Իր խոստումները նույնիսկ հարյուրամյակներ անց՝ չնայած Իր ժողովրդի անհավատարմությանը, Նրա հավատարմության հիմնավոր ապացույցներից մեկն է:

2. Տաճարի նավակատիքի ժամանակ Սողոմոն թագավորը երկարատև աղոթք արեց՝ գովաբանելով Աստծո հավատարմությունը (Գ Թագավորաց 8.22-53): Ինչպե՞ս է Սողոմոնը 23,24 խոսքերում նկարագրում Աստծուն և Նրա հավատարմությունն Իր ուխտերին: Ի՞նչ ազդեցություն պետք է ունենա Սողոմոնի նկարագրությունը մեր կյանքում:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Թեև Սողոմոնը հատկապես խոսում էր այն ուխտի մասին, որն Աստված կնքել էր Դավթի հետ (Բ Թագավորաց 7.8-17), նույնը վերաբերում է մարդկանց հետ Աստծո բոլոր գործերին: Նա ամեն առումով ցույց է տվել Իրեն որպես Իր խոսքի Աստված: Նա նույնիսկ մեկ պատճառ չի տվել մեզ կասկածելու, որ Ինքը մինչև վերջ հավատարիմ կմնա:

3. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ որքա՞ն հավատարիմ է Աստված Իր ուխտերին: Արդյոք հնարավո՞ր է, որ Աստված ետ կանգնի այն խոստումներից, որոնք տվել է Իր ժողովրդին, չկատարի դրանք կամ դադարի պատվել դրանք: Բացատրե՛ք ձեր պատասխանը և նկարագրե՛ք, թե ինչ ազդեցություն դա պետք է ունենա մեր կյանքում:

ա. *Եսայի 54.10*

_____

_____

_____

_____

բ. *Երեմիա 31.35-37, 33.20,21*

_____

_____

_____

_____

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ

Աստծո խոսքը (այսինքն՝ Նրա խոստումները և այն ամենը, ինչ Նա վճռեց) Նրա հավատարմության ևս մեկ հիմնավոր ապացույց է: Աստծո խոսքերից ոչ մեկը անկատար չի մնացել: Աստված հավատարմորեն կատարում է Իր բոլոր խոստումները և վճիռները: Նրա Խոսքը հավատարիմ է և արժանի մեր բացարձակ վստահությանը, քանի որ Նա հավատարիմ, արդար, սուրբ և անփոփոխ է:

1. Համաձայն Հեսու 23.14-ի՝ ինչ վկայեց Հեսուն Աստծո հավատարմության մասին իր երկարատև կյանքի վերջում: Ինչպե՞ս են այս ճշմարտությունները վերաբերում մերօրյա հավատացյալներին:

_____

_____

_____

_____

2. Ինչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այն մասին, որ Աստծո խոսքը հավատարիմ է: Ինչպե՞ս այս ճշմարտությունները պետք է կիրառվեն հավատացյալների կյանքում այսօր:

ա. *Գ Թագավորաց 8.56*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 119.89,90*

_____

_____

_____

_____

3. Ամենակարևոր ճշմարտություններից մեկն Աստծո Խոսքի մասին, որը պետք է ընդգծել այն է, որ Խոսքն անփոփոխ է: Աստծո Խոսքը կմնա հավիտյան՝ առանց որևէ փոփոխության: Ինչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին: Ինչ ազդեցություն պետք է ունենա այս ճշմարտությունը մեր կյանքում:

ա. *Եսայի 40.7,8*

_____

_____

_____

_____

բ. *Մատթեոս 5.18*

_____

_____

_____

_____

ԱՍՏԾՈ ԳՈՐԾԵՐԸ

Ասում են, որ մարդու գործերը հաստատում են կամ անարժեք են դարձնում նրա խոսքերը: Կիրառելով այս ասացվածքն Աստծո հանդեպ՝ մենք տեսնում ենք, որ Նրա հավատարմությունը կատարյալ է: Ինչպես որ Մովսեսը հայտարարեց Երկրորդ Օրինաց 32.4-ում. «Ժա՛յռը: Նրա գործը կատարյա՛լ է» (NASB):

1. Սաղմոս 33.4-ը տպավորիչ հռչակում է այն մասին, որ Աստծո գործերը հավատարիմ են: Ի՞նչ ճշմարտություններ են հայտնվում այս խոսքում, և ինչպե՞ս պետք է կիրառենք դրանք մեր կյանքում:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարևոր է հասկանալ, որ Աստծո Խոսքի և Նրա գործերի միջև չկան հակասություններ և տարբերություններ: Նույնիսկ ազնիվ մարդը կարող է ասել կամ խոստանալ այնպիսի բաներ, որոնք իրականում չի կարողանա կատարել: Բայց Աստված կարող է կատարել այն ամենը, ինչ խոստացել է, և Նա կկատարի Իր խոստումները՝ Իր հավատարմության շնորհիվ:

2. Եսայի 25.1-ը տպավորիչ կերպով նկարագրում է Աստծո գործերը: Ամփոփե՛ք այս խոսքի ճշմարտությունները և բացատրե՛ք, թե ինչպես պետք է ապրի հավատացյալը դրանց լույսի ներքո:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Անգլերեն ստանդարտ Աստվածաշունչ». «...որովհետև Դու հրաշալի բաներ արեցիր՝ հին ժամանակներում կազմված ծրագրեր, որոնք հավատարիմ և ճշմարիտ են» (ESV): «Նոր Անգլերեն թարգմանություն». «Որովհետև Դու արեցիր արտասովոր բաներ և ի կատար ածեցիր վաղուց կազմված ծրագրերը ճիշտ այնպես, ինչպես վճռել էիր» (NET):

3. Ինչպես և վերևում բերված աստվածաշնչյան հատվածները, ստորև բերված հատվածները նույնպես խոսում են Աստծո գործերի հավատարիմ լինելու մասին, բայց՝ հատուկ շեշտադրելով Աստծո հավատարմությունն ամեն հավատացյալի կյանքում:

ա. *Սաղմոս 138.8*

_____

_____

_____

_____

բ. *Փիլիպեցիների 1.6*

_____

_____

_____

_____

գ. *Ա Թեսաղոնիկեցիների 5.23,24*

_____

_____

ԱՍՏԾՈ ՈՐԴՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ

Աստծո հավատարմության մեծագույն ապացույցը՝ Իր միակ Որդու գալուստն է: Սկսած Աստվածաշնչի առաջին գլուխներից՝ մենք տեսնում ենք խոստումներ Նրա գալստյան մասին և այն փրկության մասին, որը Նա բերելու էր մեզ: Հազարավոր տարիներ անց բոլոր այդ խոստումները կատարվեցին Հիսուս Քրիստոսի Անձի և գործերի միջոցով: Եթե մենք ցանկանում ենք իմանալ, թե արդյո՞ք Աստված հավատարիմ է, պետք է պարզապես նայենք Նրա Որդուն և այն աշխատանքին, որը Նա կատարեց Գողգոթայում:

1. Ղուկաս 1.46-55-ում գրված է Հիսուսի մայր Մարիամի աղոթքը (որը նաև անվանում են «***Մագնիֆիկատ***»): Համաձայն խոսքեր 46,47 և 54-55-ի՝ ինչպե՞ս Մեսիայի (այսինքն՝ Քրիստոսի) գալուստն ապացուցեց Աստծո հավատարմությունը:

2. Ղուկաս 1.68-79-ում գրված է Հովհաննես Մկրտչի հոր՝ Զաքարիայի աղոթքը: Համաձայն խոսքեր 68-75-ի՝ ինչպե՞ս Մեսիայի (այսինքն՝ Քրիստոսի) գալուստն ապացուցեց Աստծո հավատարմությունը:

3. Հռոմեացիների 15.8,9-ում գրված է ամենապարզ բացատրություններից մեկն այն մասին, որ Քրիստոսի գալուստն այս աշխարհ հաստատում է Աստծո հավատարմությունը բոլոր մարդկանց հանդեպ: Ամփոփե՛ք այս հատվածը և դրա բացատրությունը ձեր բառերով:

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաստատել» բառը թարգմանված է հունարեն «***բեբայո՛ն***» բառից, որը նշանակում է «հաստատել, ապահովել, սահմանել»: Աստծո Որդուն ուղարկելը հաստատեց բոլոր խոստումները, որոնք Աստված տվել էր Իր ժողովուրդ Իսրայելին: Խոսքեր 9-11-ում Պողոսը գրում է հեթանոսների մասին: Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը մեջբերում է մի քանի հատված Հին կտակարանից, որտեղ Աստված խոստանում էր փրկել նույնիսկ հեթանոս ազգերին: Ուղարկելով Իր Որդուն՝ Աստված նույնպես հաստատեց բոլոր խոստումները, որոնք տվել էր ազգերի վերաբերյալ:

4. Բ Կորնթացիների 1.19,20-ում գրված է Աստվածաշնչի ամենագեղեցիկ և ամենաազդեցիկ հատվածներից մեկը Քրիստոսի գալստյան մասին: Ի՞նչ է սովորեցնում մեզ այս հատվածը: Ինչպե՞ս է Քրիստոսի գալուստը հաստատում Աստծո հավատարմությունը:

ՆՇՈՒՄՆԵՐ. Պարզ ասած՝ Աստծո բոլոր խոստումներն Իր ժողովրդին՝ հաստատվում և կատարվում են Քրիստոսի Անձի և գործերի միջոցով:

Գլուխ 26. Աստված սեր է

ՍԵՐԸ՝ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇ

Ի՞նչ է Աստծո սերը: Սերը այն աստվածային հատկանիշն է, որը դրդում է Նրան ձրիաբար և անձնվիրաբար զոհել Իր Անձն ուրիշների համար՝ հանուն նրանց օգտի կամ բարօրության: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ աստվածային սերը (այսինքն՝ Աստծո սերը) շատ ավելին է վերաբերմունքից, զգացմունքից կամ աշխատանքից: Այն Աստծո ***հատկանիշներից*** մեկն է՝ Նրա էության կամ բնության մի մասը: Իհարկե, Աստված սիրում է, բայց Նա նույնպես սեր ***է***: Նա ճշմարիտ սիրո էությունն է, և ամբողջ ճշմարիտ սերը բխում է Նրանից՝ սիրո սկզբնաղբյուրից:

1. Ի՞նչ անուն է վերագրվում Աստծուն Բ Կորնթացիների 13.11-ում: Ի՞նչ է հայտնում մեզ այս անունը Աստծո էության մասին:

   ա. *Ս*_____ *Ա*_____:

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս արտահայտությունը ցույց է տալիս, որ սերը՝ Աստծո հատկանիշն է կամ Նրա էության կողմերից մեկը: Աստված չի կարող դադարել սեր լինելուց նույնքան, որքան Նա չի կարող դադարել արդար լինելուց: Նույնիսկ Իր արդար դատաստանի ժամանակ Նա շարունակում է սիրո Աստված լինել: Նրա բոլոր գործերը, և նույնիսկ դատաստանը՝ Նրա սիրո դրսևորումներն են: Վերջապես, քանի որ Աստված սեր ***է***, Նա է այն չափանիշը, որով ստուգվում է այն ամենը, ինչը «սեր» է անվանվում:

2. Առաջին Հովհաննես 4.8,16-ում գրված է Աստվածաշնչի ամենակարևոր պնդումներից մեկը Աստծո բնավորության և էության մասին: Բացատրե՛ք այս հայտարարության նշանակությունը և նկարագրե՛ք դրանից բխող հետևությունները ձեր բառերով:

   _____

   _____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հովհաննես առաքյալի միջոցով մեզ են հայտնվում Աստծո մասին ամենամեծ ճշմարտություններից մի քանիսը. Աստված Հոգի է (Հովհաննես 4.24), Աստված լույս է (Ա Հովհաննես 1.5) և Աստված սեր է (Ա Հովհաննես 4.8,16): Կարևոր է հասկանալ, որ Աստվածաշունչն ասում է. «Աստված սեր է», ոչ թե՝ «Սերը Աստված է»: Այս արտահայտությունները համարժեքներ ***չեն***: Տիեզերքը չի ստեղծվել և չի կառավարվում «սեր» կոչվող զգացմունքի, զգացողության կամ հակվածության կողմից, այլ՝ Աստվածաշնչի գերիշխան Տիրոջ, Ով Իր էությամբ սեր է:

ԱՍՏԾՈ ԱՐԴԱՐ ՍԵՐԸ

Մինչև շարունակենք ուսումնասիրել Աստծո սերը, մենք պետք է հավաստիանանք, որ մտածում ենք՝ համաձայն Աստվածաշնչի, և չենք աղավաղում աստվածաշնչյան պատկերացումն Աստծո սիրո մասին մեր ժամանակակից մշակույթի սխալ պատկերացումներով: Ժամանակակից մշակույթը վերասահմանել է սերը՝ դարձնելով այն ցանկացած կարիքի կամ վարքագծի հավանություն տալու (կամ՝ գոնե հանդուրժելու) պատրաստակամություն՝ առանց դատելու կամ կշտամբելու: Ցանկացած հիշատակում բարոյականության բացարձակ չափանիշի մասին՝ նեղ և մոլեռանդ մտածելակերպ է համարվում: Ցանկացած խոսակցություն դատելու կամ կշտամբելու մասին՝ համարվում է սիրուց զուրկ և նույնիսկ՝ ատելությամբ լի:

Տարբերությունն Աստծո սիրո և ժամանակակից մարդու սխալական կարծիքի միջև կարելի է ամփոփել մեկ բառով՝ «արդարություն»: Արդարությունը՝ Աստծո հատկանիշներից և Նրա էության կարևորագույն կողմերից մեկն է: Աստված չի կարող դադարել արդար լինել նույնքանով, որքանով Նա չի կարող դադարել սեր լինելուց: Ավելին՝ Նա չի կարող անտեսել կամ մի կողմ դնել Իր արդարությունը, նույնիսկ՝ հանուն սիրո: Աստված կատարյալ է Իր բոլոր ճանապարհներում, և Նրա բոլոր հատկանիշները գոյակցում են կատարյալ ներդաշնակությամբ՝ առանց հակասությունների կամ շփոթմունքի: Այդ իսկ պատճառով, Աստծո սերը պետք է մշտապես արդար լինի: Հենց սա էր Քրիստոսի մահվան պատճառը: Քրիստոսում Աստված չի հանդուրժում մարդու ապստամբությունը, այլ հակառակվում է դրան և հնարավորություն է տալիս մեղավոր մարդուն՝ հաշտվել Իր հետ: Նա ցույց է տալիս մեզ, որ սխալ ենք, և զգուշացնում է վերահաս դատաստանի մասին, բայց նույնպես ներում ստանալու և արդարանալու հնարավորություն է տալիս: Իր Որդու մահվան միջոցով Աստված գոհացրեց Իր արդարության պահանջներն ընդդեմ մեղավոր մարդու, և հիմա Նա կարող է ազատորեն և լիովին տալ Իր սերը նրանց, ովքեր վստահում են Իրեն:

Հետևյալ ամփոփումը կարող է օգտակար լինել.

– Աստված սեր է, և Նրա սերն արտահայտվում է Իր բարեհաճությամբ Իր ստեղծագործության հանդեպ, նույնիսկ՝ մեղավոր մարդու:

– Աստված արդար է, և Նրա արդարությունն արտահայտվում է արդարներին վարձատրելով և անարդարներին դատելով:

– Բոլոր մարդիկ մեղանչել են. չկա արդար մարդ՝ չկա նույնիսկ մեկը: Այսպիսով, բոլոր մարդիկ ենթակա են Աստծո դատաստանին, որի արդյունքում նրանք դատապարտվելու են:

– Աստծո սերը և արդարությունը միասնաբար արտահայտվում են Գողգոթայի խաչի վրա: Աստծո Որդին մարդ դարձավ, վերցրեց մարդկանց մեղքերը և կրեց Աստծո արդար զայրույթը, որին մարդիկ արժանի էին: Իր մահով Նա գոհացրեց Աստծո արդարության պահանջները, որպեսզի Աստված ազատորեն և լիովին հայտներ Իր սերը այն մարդկանց, ովքեր վստահում են Իրեն:

– Աստծո սերն արտահայտվում է հետևյալ կերպով. ովքեր ապաշխարում և վստահում են Քրիստոսին, արդարանում են Նրա առջև, և նրանց շնորհվում է անխաթար հաղորդություն Աստծո հետ: Աստծո արդարությունն իր հերթին արտահայտվում է հետևյալ կերպով. ովքեր մերժում են Ավետարանը, դատվելու են կատարյալ անաչառությամբ՝ իրենց ամեն մտքի, խոսքի և գործի համար:

Ելից 34.6,7-ում գրված է Աստծո ամենակարևոր ինքնանկարագրություններից մեկը ամբողջ Աստվածաշնչում: Այս հատվածում շատ տպավորիչ կերպով ցուցադրված է կապն Աստծո սիրո և արդարության միջև: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

1. Ելից 34.6-ում Աստված օգտագործում է մի քանի բառեր՝ նկարագրելու համար Իրեն և Իր վերաբերմունքը մեղավոր մարդկանց հանդեպ: Որոշե՛ք այդ բառերը: Ինչպե՞ս է Աստված նկարագրում Իրեն:

ա. *Ո*_____*:* Այս բառը թարգմանված է եբրայերեն «***ռախում***» բառից, որը նշանակում է՝ ողորմած և գթած մարդ, հատկապես՝ կարիքավորների, թույլերի և մեղավորների հանդեպ: Այն օգտագործվում է Սաղմոս 103.13-ում՝ նկարագրելու համար կապը հոր և իրենից կախում ունեցող զավակների միջև. «Ինչպես որ հայրը կգթա որդիներին, այնպես գթած է Տերը Իրենից վախեցողների համար»:

բ. *Գ*_____*:* Այս բառը թարգմանված է եբրայերեն «***խաննուն***» բառից, որը նշանակում է այնպիսի մարդ, ով ողորմություն կամ գութ է ցուցաբերում կարիքավորին: Հաճախ այս բառն օգտագործվում է այն իմաստով, որ վերադասն իջնում է իր դիրքից, որպեսզի հոգա ավելի ստորադասի կարիքները, ով որևէ պահանջ ներկայացնելու իրավունք չունի: Այս բառը նույնպես կարող է վերաբերել պարտատիրոջը, ով ողորմություն կամ գութ է ցուցաբերում անվճարունակ պարտապանի հանդեպ:

գ. *Ե*_____*:* Այս բառը նույնպես կարող է թարգմանվել որպես «համբերատար» կամ «ոչ արագ բարկացող»: «Բարկություն» բառը եբրայերենում «***աֆ***» բառն է, որը բառացիորեն նշանակում է «քիթ» կամ «ռունգ»: Այն փոխանցում է ռունգերից կրակ դուրս գալու պատկեր, որը խորհրդանշում է զայրույթ կամ ցասում: Գաղափարն այն չէ, որ Աստված կարող է երկար հանդուրժել մեղքը կամ՝ որ անհրաժեշտ է շատ մեղանչել, մինչև Աստված բարկանա, քանի որ Աստվածաշունչը գրում է, որ Աստված «ամեն օր բարկանում է» (Սաղմոս 7.11): Փոխարենը՝ խոսքն այն մասին է, որ Աստծո սերը և ողորմությունը զսպում են Նրա զայրույթը մեղավոր մարդու հանդեպ՝ տալով մեղավորներին բազմաթիվ հնարավորություններ ապաշխարության համար, նախքան դատաստանի վրա հասնելը:

դ. *Առատ Ո*_____ *և Ճ*_____*:* «Ողորմություն» բառն այս խոսքում եբրայերեն «***խեսեդ***» բառն է, որը սովորաբար թարգմանվում է «ողորմություն», «բարություն» և «սիրառատ բարություն»: Այն նաև կարելի է թարգմանել «անսասան սեր» (ESV) կամ «հավատարիմ սեր» (NET) արտահայտություններով: «Ճշմարտություն» բառը թարգմանված է եբրայերեն «***էմեթ***» բառից, որը նաև նշանակում է հաստատակամություն» կամ «հավատարմություն»:

2. Ելից 34.6-ում մենք հպանցիկ կերպով տեսանք Աստծո մեծագույն նկարագրություններից մեկն ամբողջ Աստվածաշնչում՝ այն, որ Նա սիրո Աստված է: Համաձայն խոսք 7-ի՝ ո՞րն է Աստծո սիրո հետևանքներից մեկը: Բացատրե՛ք ձեր պատասխանը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ներել» բառը թարգմանված է եբրայերեն «***նասա***» բառից, որը բառացիորեն նշանակում է «բարձրացնել, տանել կամ վերցնել»: Տերը՝ Աստված է, Ով վերցնում է մեր մեղքը: Մեղքը նկարագրելու համար օգտագործվում է երեք հստակ բառ՝ «անօրինություն», «հանցանք» և «մեղք»: Թեև այս բառերից ամեն մեկը հստակ նշանակություն ունի, գլխավոր գաղափարն այն է, որ Աստված ներում է ամեն տեսակի մեղքը: Այս ճշմարտությունը պետք է մեծ մխիթարություն բերի մեղավորին:

3. Ելից 34.6,7-ում Աստված հայտնում է, որ Նա սիրո Աստված է, Ով ներում է ամեն տեսակի մեղքը. այնուամենայնիվ, Նա նույնպես ցույց է տալիս, թե ինչպես է վարվելու այն մարդկանց հետ, ովքեր մեղավոր կհամարվեն: Նկարագրե՛ք Աստծո արձագանքը նման մարդկանց հանդեպ: Ինչպե՞ս այս ճշմարտությունները կարելի է համաձայնեցնել:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Թվում է՝ այս հատվածում մեծ հակասություն կա: Աստված սիրում և ներում է մեղավորներին, սակայն Նա զգուշացնում է, որ ոչ մի մեղավոր անպատիժ չի մնա: Ինչպե՞ս կարելի է համաձայնեցնել այս երկու հակասական թվացող արտահայտությունները: Պատասխանը Հիսուս Քրիստոսում է: Իր արդարությամբ Աստված անպատճառ պատժելու է ամեն մեղավորի՝ ամեն մեղքի համար: Այնուամենայնիվ, Իր սիրո շնորհիվ Աստված ուղարկեց Իր միակ Որդուն որպես Փոխարինող՝ վերցնելու Իր ժողովրդի մեղքերը և կրելու նրանց հասանելի պատիժը: Հիսուս Քրիստոսի մահով Աստված հայտնեց և՛ Իր արդարադատությունը, և՛ Իր սերը: Այն մարդիկ, ովքեր հավատում են Ավետարանին, ձրիաբար ներված են, քանի որ նրանց մեղքերի պատիժն արդեն ի կատար է ածված Քրիստոսի չարչարանքներով և մահվամբ Գողգոթայում: Նրանք, ովքեր հրաժարվում են հավատալ, լիովին պատասխանատու են մնում իրենց մեղքերի համար և դատաստանի են ենթարկվելու Աստծո գահի առջև:

4. Համաձայն այն ամենի, ինչ սովորեցինք այս գլխում՝ ձեր բառերով ամփոփե՛ք աստվածաշնչյան ճշմարտությունն այն մասին, որ Աստծո սերը՝ արդար է:

_____

_____

_____

_____

_____

_____

5. Համաձայն այն ամենի, ինչ սովորեցինք այս գլխում՝ ձեր բառերով ամփոփե՛ք, թե ինչպես են համաձայնեցվում հետևյալ երկու արտահայտությունները. (1) Աստված ներում է ամեն տեսակի մեղքը, և (2) Աստված ոչ մի դեպքում թույլ չի տա, որ մեղավորն անպատիժ մնա:

_____

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 27. Աստծո սիրո դրսևորումները

Ավելի հեշտ կլինի հաշվել բոլոր աստղերը երկնքում, կամ՝ երկիր մոլորակի ավազահատիկներն ամբողջությամբ, քան չափել կամ, նույնիսկ, փորձել նկարագրել Աստծո սերը: Դրա բարձրությունը, խորությունը, երկարությունը և լայնությունը գերազանցում են ամենամեծ և ամենաիմաստուն ստեղծվածների միտքը: Թեև մենք երբեք չենք կարողանա լիովին հասկանալ Աստծո սերը և այդ սիրո չափը, բայց կարող ենք ջանք անել, որ ավելի լավ ըմբռնենք այն՝ ուսումնասիրելով Աստծո սիրո բազմաթիվ դրսևորումներն Աստվածաշնչում:

ԱՍՏԾՈ ԲԱՐԵՀԱՃՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ՍՏԵՂԾՎԱԾՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

«Բարեհաճություն» բառը կարելի է սահմանել որպես ինչ-որ մեկի հակվածությունը՝ փնտրելու մյուսների բարին, օրհնելու և ապահովելու նրանց բարեկեցությունը: Աստվածաշունչը բազմիցս վկայում է, որ Աստված՝ սիրող Արարիչ է, Ով ցանկանում է, որ Իր բոլոր ստեղծվածները՝ թե՛ բարիները, և թե՛ չարերը, օրհնված և բարեկեցիկ լինեն: Սա լիովին հակառակ է Նրա մասին ցանկացած կարծիքի, որը պատկերում է Նրան որպես քմահաճ կամ ոխակալ աստվածություն, ով թշվառության և տառապանքի մեջ է պահում իր ստեղծագործությունը:

1. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո բարեհաճության մասին Իր ամբողջ ստեղծագործության հանդեպ:

ա. *Սաղմոս 145.9,15,16*

_____

_____

_____

_____

բ. *Մատթեոս 5.44,45*

_____

_____

_____

_____

գ. *Գործք 14.16,17*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս երեք օրինակներն այն մասին, որ Աստված բարեհաճությամբ է վերաբերվում Իր ստեղծագործությանը, նույնիսկ ավելի ապշեցուցիչ են դառնում, երբ մենք հաշվի ենք առնում, որ ստեղծվածներն ընկել են մեղքի և ապականության մեջ: Եթե տիեզերքի Աստված խոնարհեցներ Իրեն, որպեսզի հոգ տաներ արդար ստեղծվածների համար, որոնք կպատվեին Նրան իրենց բոլոր մտքերով, խոսքերով և գործերով, դա արդեն իսկ բարեհաճության աննկարագրելի դրսևորում կհամարվեր: Այնուամենայնիվ, Աստված ցուցաբերում է Իր բարեհաճությունը անկում ապրած մարդու հանդեպ, ով ապստամբել է Իր դեմ:

2. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչպե՞ս ամբողջ ստեղծագործությունը պետք է արձագանքի Աստծո բարեհաճությանը:

ա. *Սաղմոս 147.7-9*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 150.6*

_____

_____

_____

_____

3. Մարդկությունը պետք է որ փառաբանությամբ և գոհությամբ արձագանքեր Աստծո բարեհաճությանը Իր ամբողջ ստեղծագործության և հատկապես՝ մարդու հանդեպ: Այնուամենայնիվ, համաձայն Հռոմեացիների 1.21-23-ի՝ ինչպե՞ս է մարդկությունը, ընդհանուր առմամբ, արձագանքել Աստծո բարեհաճությանը:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա մարդու անկում ապրած վիճակի մեծագույն ապացույցն է: Ինչո՞ւ է մարդը մերժում սիրող և բարեհաճ Աստծուն, թեև գիտակցում է, որ Նա գոյություն ունի: Ինչո՞ւ է մարդը գերադասում երկրպագել սեփական անձին և նույնիսկ կենդանիների՝ միակ ճշմարիտ Աստծո փոխարեն: Պատճառն այն է, որ Աստված բարի է, իսկ մարդը դարձել է անբարո արարած, ով սիրում է անարդարությունը: Ահա թե ինչու է նա դիմում ամենից անհեթեթ ծայրահեղությունների, որպեսզի մերժի այն Աստծուն, Ում գոյության մասին գիտի, և հեռացնի Նրան իր մտքից և խղճից: Բայց նույնիսկ մարդու խավարած վիճակում հայտնվում է Աստծո բարեհաճությունը. Աստված հայտնում է Իր սերը և՛ չարերի, և՛ բարիների հանդեպ (Մատթեոս 5.44-46):

ԱՍՏՎԱԾ ՏՎԵՑ ԻՐ ՈՐԴՈՒՆ՝ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մենք իմացանք, որ Աստծո սերը վեր է մարդկային մտքից, և որ այն դրսևորվում է Նրա բոլոր ստեղծվածների հանդեպ անթիվ ձևերով: Այնուամենայնիվ, Աստծո Խոսքը սովորեցնում է մեզ, որ գոյություն ունի Աստծո սիրո մեկ դրսևորում, որը վեր է մնացած բոլորից՝ այն, որ Աստված տվեց Իր միակ Որդուն՝ Իր ժողովրդի փրկության համար:

1. Առաջին Հովհաննես 4.8-10-ը ամենակարևոր հատվածներից մեկն է ամբողջ Աստվածաշնչում, որը նկարագրում է Աստծո սերը և դրա մեծագույն դրսևորումը մարդկանց հանդեպ: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ա. *Ի՞նչ է սովորեցնում խոսք 8-ը Աստծո բնավորության և էության մասին:*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս արտահայտությունը ցույց է տալիս, որ սերը՝ Աստծո հատկանիշը կամ Նրա էության կողմերից մեկն է: Աստված չի կարող դադարել սեր լինելուց նույնքան, որքան չի կարող դադարել արդար լինելուց: Նույնիսկ Իր արդար դատաստանի ժամանակ Նա շարունակում է սիրո Աստված լինել: Նրա բոլոր գործերը, և նույնիսկ՝ դատաստանը, Նրա սիրո դրսևորումներն են:

բ. *Համաձայն խոսք 9-ի՝ ո՞րն է Աստծո սիրո մեծագույն դրսևորումն Իր ժողովրդի հանդեպ:*

գ. *Համաձայն խոսք 10-ի՝ արդյո՞ք Աստծո սերը պատասխան էր մեր սիրուն: Այո՞, թե՞ ոչ: Բացատրե՛ք ձեր պատասխանը:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը շատ պարզ է: Մեր սերն Աստծո հանդեպ բխում է Նրա սիրուց և այն փրկության աշխատանքից, որը Նա կատարեց մեր կյանքում: Կարևոր է նշել, որ Աստծո սիրո մեծագույն դրսևորումը պարզապես այն չէ, որ Նա ուղարկեց Իր Որդուն (խոսք 9), այլ՝ որ Նա ուղարկեց Նրան չարչարվելու և մահանալու՝ որպես քավություն մեզ համար: «Քավություն» բառը թարգմանված է հունարեն «***հիլասմո՛ս***» բառից. այն նկարագրում է զոհաբերություն, որի նպատակն է՝ գոհացնել Աստծո արդարության պահանջները և հնարավոր դարձնել, որ արդար Աստված լիովին ների մեղավորներին: Քրիստոսի մահն իրագործեց այս ամենը: Սա Աստծո սիրո մեծագույն դրսևորումն է, նաև մեծագույն պատճառը, որի համար Աստծո ժողովուրդը պետք է սիրի Նրան:

2. Մենք իմացանք Ա Հովհաննես 4.8-10-ից, որ անարժանաբար տրված և անպայմանական սիրո մեծագույն դրսևորումն այն է, որ Աստված ուղարկեց Իր Որդուն՝ մահանալու Իր ժողովրդի մեղքերի համար: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին: Ինչո՞ւ Աստված ուղարկեց Իր Որդուն, որ մահանար մեր մեղքերի համար և փրկեր մեզ դատաստանից:

ա. *Հովհաննես 3.16,17*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո սերը դրսևորվում է ոչ միայն Իր Որդուն ուղարկելով, այլև այն օրինությամբ, որն ստանում են բոլոր Նրան հավատացողները՝ հավիտենական կյանքով: Քրիստոսի գալստյան նպատակը՝ մեղավորներին դատելը չէր, այլ՝ նրանց փոխարեն փրկության աշխատանքը կատարելը: Այնուամենայնիվ, Քրիստոսի երկրորդ գալստյան նպատակը լինելու է ոչ միայն Իր փրկությունը լրման հասցնելը, այլև անհավատ աշխարհին դատելը:

բ. *Հռոմեացիների 5.6-8*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածում կա մի քանի մեծագույն ճշմարտություն քրիստոնեության մասին: Առաջինը՝ մենք հասկանում ենք, որ անկարող էինք փրկել ինքներս մեզ (խոսք 6): Երկրորդը՝ մենք հասկանում ենք, որ արժանի չէինք՝ Քրիստոսը մահանար մեր փոխարեն (խոսք 7): Երրորդը՝ մենք հասկանում ենք, որ Քրիստոսի մահվան դրդապատճառը միմիայն Աստծո անարժանաբար տրվող սերն է մեղավորների հանդեպ:

3. Եթե Աստված այնքան սիրեց մեզ, որ տվեց Իր Որդուն՝ մահանալու մեզ համար, նույնիսկ երբ մենք Նրա «թշնամիներն» էինք, ապա ինչ կդրդի այս սերը, որ Նա անի մեզ համար հիմա՝ երբ մենք Նրա զավակներն ենք: Ինչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները:

ա. *Հռոմեացիների 5.8-10*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մեր հատվածի փաստարկն անթերի է: (1) Աստծո սերն Իր ժողովրդի հանդեպ այնքան մեծ է, որ նույնիսկ երբ մենք մեղավոր էինք, Նա ուղարկեց Իր Որդուն՝ մահանալու մեզ համար: (2) Այդ իսկ պատճառով, այժմ՝ երբ մենք արդարացվել ենք Նրա մահով, կարող ենք լիովին վստահ լինել, որ կփրկվենք Աստծո բարկությունից, որը գալու է ամբողջ աշխարհի վրա վերջին Դատաստանին: Որպես ամփոփում՝ երբ մենք դեռ թշնամիներ էինք, Աստված հաշտեցրեց մեզ Իր հետ՝ Իր Որդու մահվան միջոցով: Ահա թե ինչու մենք կարող ենք վստահ լինել, որ մեր փրկությունը կպահպանվի Նրա հարություն առած Որդու շարունակական աշխատանքի միջոցով (Եբրայեցիների 7.25):

բ. *Հռոմեացիների 8.32-39*

_____

_____

_____

_____

_____

_____

գ. *Ա Հովհաննես 3.1,2*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Վերջին երկու հատվածներում գրված է երկու մեծագույն պարգևների մասին, որոնք հավատացյալը կարող է ստանալ. (1) մենք երբեք չենք բաժանվի Աստծո սիրուց, և (2) մենք կվերափոխվենք Քրիստոսի պատկերով:

Գլուխ 28. Աստծո ողորմությունը

Երեք ամենասքանչելի և սիրելի հասկացություններն Աստվածաշնչում Աստծո ողորմությունը, շնորհքը և համբերությունն են: Աստծո սերը ճշմարտապես հայտնվում է այս երեք թանկարժեք *քարերի* միջոցով: Այս գլխում մենք կխոսենք Աստծո ողորմության մասին:

«Ողորմություն» բառը նշանակում է Աստծո բարեգթությունը, փափկասրտությունը կամ կարեկցանքը Իր ստեղծածներից նույնիսկ ամենաողորմելիի և խղճալիի հանդեպ: Աստծո սիրո դրսևորման մեծագույն միջոցներից մեկը՝ Նրա ողորմությունն է: Ստորև բերված բազմաթիվ աստվածաշնչյան հատվածներում այս գաղափարը հիմնականում փոխանցվում է «գթություն» կամ «ողորմություն» բառերով:

1. Ինչպե՞ս են հետևյալ աստվածաշնչյան հատվածները նկարագրում Աստծուն:

   ա. *Տերը Ո_____ է (Սաղմոս 145.8):* Այս բառը թարգմանված է եբրայերեն «***ռախում***» բառից, որը նույնպես նշանակում է բարություն, գթություն և կարեկցանք:

   բ. *Գ_____ Հայրը (Բ Կորնթացիների 1.3):* Այս բառը թարգմանված է հունարեն «***օյկտիրմո՛ն***» բառից, որը նույնպես նշանակում է ողորմություն և կարեկցանք: Այս բառը հոգնակի թվով է, ինչը, հավանաբար, նշանակում է ողորմության բազմապիսի դրսևորումներ կամ տեսակներ:

   գ. *Աստված, որ Մ_____ է Ո_____ (Եփեսացիների 2.4):* «Մեծ» բառը թարգմանված է հունարեն «***պլո՛ւսիոս***» բառից, որը կարելի է թարգմանել նաև «պերճ» կամ «հարուստ»: «Ողորմություն» բառը թարգմանված է հունարեն «***է՛լեոս***» բառից, որը նույնպես նշանակում է կարեկցանք, գթասրտություն և բարություն:

   դ. *Տերը Բ_____ է և Ո_____ (Հակոբոս 5.11):* «Բազմագութ» բառը թարգմանված է հունարեն «***պոլյո՛ւսպլագչնոս***» բառից («***պոլո՛ւս***» =շատ + «***պլագչնոն***» = մարմնի ներքին մասերը՝ սիրտը, լյարդը, աղիները և այլն): Փոխաբերական իմաստով, այն նշանակում է խորն զգացմունքներ կամ հույզեր: Այն նույնպես կարելի է թարգմանել «շատ կարեկից» արտահայտությամբ: «Ողորմություն» բառն այս խոսքում թարգմանված է հունարեն «***օյկտիրմո՛ն***» բառից: Գաղափարն այն է, որ ողորմությունը պարզապես Աստծո որոշումը չէ. Աստված Ինքն է ողորմած, և ողորմությունը հատուկ է Նրա էությանը:

2. Ինչպե՞ս է Աստծո ողորմությունը նկարագրվում Սաղմոս 57.10-ում: Ի՞նչ է նշանակում այս նկարագրությունը: Գրի՛ առեք ձեր բացատրությունը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ողորմություն» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***խեսեդ***» բառից, որը նույնպես կարող է նշանակել գթածություն, բարություն, բարեհաճություն, կայուն սեր (ESV) կամ հավատարիմ սեր (NET)։ Գաղափարն այն է, որ Աստծո ողորմությունը գերազանց է ամեն առումով։ Այն շռայլ է, առատ է և բարձր է։ Այն ընդարձակվում է ավելին, քան ամենասուր աչքը կարող է տեսնել, ամենաճարտար միտքը կարող է մտածել և ամենապերճախոս լեզուն կարող է պատմել։

3. Համաձայն Ղուկաս 6.35,36-ի՝ ինչպե՞ս է Աստծո ողորմությունը հայտնվում բոլոր մարդկանց։

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածում պարզորեն ցուցադրվում է կապը սիրո և ողորմության միջև։ Աստծո սիրո մեծագույն դրսևորումներից մեկը՝ Նրա ողորմությունն է անարժան և երախտամոռ մարդկանց հանդեպ։

4. Սաղմոս 103.10-14-ում նկարագրվում է Աստծո սիրո և ողորմության մեծագույն դրսևորումն Իր ժողովրդի հանդեպ։ Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո ստորև գրի՛ առեք ձեր մտքերն ամեն խոսքի մասին։

ա. *խոսք 10*

_____

_____

_____

բ. *խոսք 11*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Գութ» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***խեսեդ***» բառից, որը նույնպես կարող է նշանակել գթածություն, բարություն, բարեհաճություն, կայուն սեր (ESV) կամ հավատարիմ սեր (NET)։

գ. *Խոսք 12*

_____

_____

_____

դ. *Խոսք 13*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Գութ» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***ռախում***» բառից, որը նույնպես նշանակում է բարություն և կարեկցանք:

ե. *Խոսք 14*

_____

_____

_____

5. Թեև Աստվածաշնչում կան բազմաթիվ խոսքեր, պատմություններ և օրինակներ Աստծո ողորմության մասին, մենք կարող ենք ավելացնել ընդամենը դրանցից մի քանիսը: Համաձայն Աստվածաշնչի՝ ինչպե՞ս է Աստծո ողորմությունը (բարեգթությունը և կարեկցանքը) հայտնվում Իր ժողովրդին:

ա. *Սաղմոս 86.5*

_____

_____

_____

_____

բ. *Երեմիայի Ողբերը 3.22,23*

_____

_____

_____

_____

6. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչպե՞ս մենք պետք է արձագանքենք Աստծո ողորմությանը: Ինչպե՞ս մենք պետք է ապրենք՝ իմանալով աստվածաշնչյան ճշմարտությունն Աստծո ողորմության մասին:

ա. *Եբրայեցիների 4.16*

_____

_____

_____

_____

բ. *Հուդա 21,22*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խոսքեր 1-ում և 24-ում Հուդան սովորեցնում է, որ հավատացյալը պահվում է Աստծո զորությամբ, բայց այս հատվածում նա պատվիրում է հավատացյալին՝ պահպանել կամ հսկել իր անձն Աստծո սիրով: Նա նկատի չունի, որ մենք պետք է աշխատենք՝ Աստծո սերը վաստակելու համար: Աստծո սերը և փրկությունը պատկանում են մեզ միայն Քրիստոսի Անձի և Նրա կատարած աշխատանքի շնորհիվ: Մենք պահվում ենք Աստծո սիրո մեջ, երբ հավատքով հարում ենք Քրիստոսին: Քրիստոսից բաժանվելը նշանակում է՝ դուրս գալ Աստծո սիրո և փրկության սահմաններից: Հուդայի միտքն այն մասին, որ մենք պետք է սպասենք մեր Տիրոջ ողորմությանը, պետք է հասկացվի իր համատեքստով: Հավատացյալն արդեն ունի Աստծո ողորմությունը, սակայն Աստծո ողորմությունը դեռևս ամբողջովին հայտնված չէ: Դա տեղի կունենա Քրիստոսի երկրորդ գալստյան և հավատացյալի վերջնական փառավորման ժամանակ, և մենք պետք է սպասենք դրան փափագով և մեծ ակնկալիքով:

գ. *Ղուկաս 6.35,36*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մեր վերջին հատվածը վերաբերում է մեր հորիզոնական փոխհարաբերություններին (այսինքն՝ մեր հարաբերություններին մարդկանց հետ) թե՛ հավատացյալների, և թե՛ անհավատների հետ: Գլխավոր ճշմարտությունը հետևյալն է. քանի որ Աստված ողորմություն է ցուցաբերում անարժան մեղավորների հանդեպ (որոնց թվում նաև մենք ենք), մենք նույնպես պետք է ողորմություն ցուցաբերենք մարդկանց հանդեպ: Ահա ևս մի քանի հատված այն մասին, որ կարևոր է ողորմած լինել մարդկանց հանդեպ (Մատթեոս 5.7, 12.7, 18.23-35):

Գլուխ 29. Աստծո շնորհքը

«Շնորհք» բառը նշանակում է անարժանաբար տրվող բարեհաճություն. այն Աստծո պատրաստակամությունն է՝ վարվելու Իր ստեղծածների հետ ոչ թե՝ ըստ նրանց արժանիքի կամ արժեքի, այլ՝ ըստ Իր մեծ բարության և առատաձեռնության: Աստծո շնորհքը՝ Նրա սիրո մեծագույն դրսևորումներից մեկն է:

1. Ինչպե՞ս են հետևյալ աստվածաշնչյան հատվածները նկարագրում Աստծուն:

   ա. *Տերը Ո_____ (կամ՝ Շնորհալի) է (Սաղմոս 145.8):* Այս բառը թարգմանված է եբրայերեն «***խաննուն***» բառից, որն օգտագործվում է Աստվածաշնչում՝ միայն այս աստվածային հատկանիշը նկարագրելու համար: Այս բառի այլ իմաստներն են՝ ողորմած, կարեկցող, բարի, ներող, գթասիրտ, հանդուրժող, փափկասիրտ և բարյացակամ:

   բ. *Ա_____ Շ_____ Աստվածը (Ա Պետրոս 5.10):* «Շնորհք» բառն այս խոսքում թարգմանված է հունարեն «***խա՛րիս***» բառից, որը նշանակում է բարություն, բարեհաճություն և բարի կամք, հատկապես՝ անարժան մարդկանց հանդեպ: Աստվածաշնչում շնորհքը՝ Աստծո անարժանաբար տրվող բարեհաճությունն է մեղավոր մարդուն: Աստված՝ ամեն շնորհքի աղբյուրն է: Շնորհքի բոլոր դրսևորումները՝ Աստծո բազմապիսի և անսահման շնորհքը, Նրանում են և բխում են Նրանից:

2. Համաձայն Եսայի 30.18-ի՝ ինչպե՞ս է Աստված վերաբերվում մարդկանց, և հատկապես՝ Իր ժողովրդին: Այս խոսքում գրված ճշմարտություններն ի՞նչ կերպով են վերաբերվում մեզ: Ինչպե՞ս մենք պետք է արձագանքենք դրանց:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածի համատեքստում գրված է Աստծո ժողովրդի ապստամբության մասին: Նրանք թողել էին իրենց վստահությունն Աստծո հանդեպ և մեղսալի դաշինք էին կնքել Եգիպտոսի հետ: Չնայած դրան՝ Աստված հետաձգեց Իր պատիժը՝ տալով նրանց բազմաթիվ հնարավորություններ ապաշխարելու և Իրեն դառնալու համար: Նա արեց սա, որովհետև Նա նման չէ Իր անհավատարիմ ժողովրդին. Նա արդար Աստված է, Ով հավատարիմ է Իր խոստումներին: «Ողորմել» (կամ՝ «շնորհալի լինել») բառը թարգմանված է եբրայերեն «***խաննան***» բառից, որը նշանակում է «շնորհալի լինել և բարեհաճություն ցուցաբերել»: Աստծո և մարդու հարաբերությունների համատեքստում այս բառը մշտապես անարժանաբար տրվող շնորհքի իմաստն ունի: «Գթալ» բառը թարգմանված է եբրայերեն «***ռախեմ***» բառից, որն ունի նաև բարության և գթասրտության իմաստ:

3. Համաձայն Հովհաննես 1.14,16,17-ի՝ ի՞նչը կամ ո՞վ է Աստծո շնորհքի (այսինքն՝ անարժանաբար տրվող բարեհաճության) մեծագույն հայտնությունը: Բացատրե՛ք ձեր պատասխանը:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված բազմիցս հայտնել է Իր շնորհքը՝ սկսած Ադամի անկումից: Նույնիսկ Հին ուխտի Օրենքը տրվեց Նրա անարժանաբար տրվող բարեհաճության արդյունքում (Հռոմեացիների 3.1,2): Այնուամենայնիվ, Աստծո շնորհքը հայտնվեց Քրիստոսի Անձի և Նրա կատարած աշխատանքի մեջ այնքան զորավոր կերպով, որ մթագնեցրեց շնորհքի մնացած բոլոր հայտնությունները: Քրիստոսում հայտնված շնորհքն այն աստիճան գերազանց էր, որ դրանից առաջ շնորհքն ասես երբեք հայտնված չլիներ: Աստծո շնորհքի մնացած բոլոր օրինակները՝ Քրիստոսում գտնվող շնորհքի լիության նախատիպերը կամ շուքն էին: Դրանք նման էին մոմի լույսին՝ կեսօրին շողացող պայծառ արևի համեմատ:

4. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ի՞նչ կապ կա Աստծո շնորհքի և մեղավոր մարդկանց փրկության միջև: Արդյո՞ք մենք փրկվում ենք մեր արժանիքներով, թե՞ Աստծո շնորհքով:

ա. *Եփեսացիների 2.8,9*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հունարենում «շնորհք» և «հավատք» բառերը իգական սեռի գոյականներ են, բայց «սա» դերանունը չեզոք սեռի է: Այդ իսկ պատճառով, ավելի լավ է օգտագործել «սա» դերանունը՝ ցույց տալու համար, որ փրկությունն ամբողջովին պարգև է Աստծուց: Այն, ինչ կատարվել է մեզ հետ, չի բխում մեր մարդկային արժանիքներից: Այս ճշմարտությունն ի չիք է դարձնում ցանկացած պարծանք՝ կապված մարդկային անձի հետ:

բ. *Բ Տիմոթեոս 1.9*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված կանչեց և փրկեց մեզ ոչ թե մեր անձի կամ գործերի պատճառով, այլ որովհետև Նա որոշել էր փրկել մեզ նույնիսկ՝ մինչև այս աշխարհն ստեղծելը: Մեզ փրկելու չափանիշը լինելու էին ոչ թե մեր արժանիքները, այլ՝ Նրա շնորհքը, որը մենք ստանալու էինք՝ հավատալով Հիսուս Քրիստոսի կատարած քավությանը: Երկրորդ Օրինաց 7.7,8-ում մի հետաքրքիր զուգահեռ ենք գտնում: Մովսեսը հայտարարեց. «Ոչ թե ձեր բոլոր ազգերից շատ լինելու համար Եհովան ձեզ սիրեց և ձեզ ընտրեց, որովհետև դուք բոլոր ազգերից քիչ էիք: Այլ Եհովան ձեզ սիրելու համար...»: Ինչո՞ւ Տերը սիրով վարվեց Իսրայելի հետ: Քանի որ Նա սիրո՜ւմ էր նրանց: Այլ կերպ ասած՝ Տերը սիրում է Իր ժողովրդին, քանի որ Իր սրտում Նա որոշել է սիրել մեզ: Նրա սերը մեր հանդեպ լիովին հիմնված է Նրա շնորհքի վրա:

5. Եփեսացիների թղթում գրված հետևյալ խոսքերում Պողոս առաքյալը ձևակերպեց այն մեծ և հավիտենական նպատակը, որի համար Աստված փրկեց մեղավոր մարդկանց: Համաձայն այս աստվածաշնչյան հատվածների՝ բացատրե՛ք այդ նպատակը ձեր բառերով:

ա. *Եփեսացիների 1.6*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո մեծ նպատակը մեղավոր մարդկանց փրկելու համար՝ Իր անարժանաբար տրվող բարեհաճությունը ցուցաբերելն է, ինչի արդյունքում փառավորվում է Նրա անունը: «Շնորհք» բառը թարգմանված է հունարեն «***խա՛րիս***» բառից, որը նշանակում է բարեհաճություն կամ բարի կամք, հատկապես՝ անարժան մարդկանց հանդեպ: «Ցույց տվեց» (կամ՝ «ձրիաբար ցույց տվեց») արտահայտությունը թարգմանված է հունարեն «***խարիտո՛ո***» բառից, որը կարող է նշանակել նաև «բարեհաճություն ցուցաբերել կամ բարեհաճությամբ այցելել»: Ուշադրություն դարձրեք այս բառերի նմանությանը. Աստված բառացիորեն շնորհեց մեզ շնորհքը:

Մենք տեսնում ենք նմանատիպ արտահայտություններ նաև հաջորդ խոսքերում. «Որ մենք գովասանք լինենք Նրա փառքին, որ առաջուց մեր հույսը Քրիստոսի վրա ենք դրել» (խոսք 12), և «Որ մեր ժառանգության գրավն է, մինչև ստացվածքի փրկությունը՝ Նրա փառաց գովասանքի համար» (խոսք 14):

բ. *Եփեսացիների 2.7*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո շնորհքն է՛լ ավելի է դրսևորվելու հավատացյալի կյանքում հավիտենության երկար դարերի ընթացքում: Աստծո բարությունը, որը Նա ցուցաբերեց Իր ժողովրդին Քրիստոս Հիսուսում, տեսանելի կլինի ամբողջ ստեղծագործությանը և կհայտնի Նրա շնորհքի գերազանց մեծությունը: Ամբողջ ստեղծագործությունը կիմանա, թե իրականում որքա՞ն բարի է Տերը՝ տեսնելով Նրա անվերջ բարությունն Իր ժողովրդի հանդեպ ամբողջ հավիտենության ընթացքում: Աստծո շնորհքն այնքա՞ն անսահման և զարմանալի է, որ նույնիսկ հավիտենությունը բավականաչափ երկար չի լինի՝ այն լիովին ընկալելու և արժանի կերպով գովաբանելու համար:

6. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչպե՞ս մենք պետք է արձագանքենք Աստծո շնորհքին, որը հայտնվել է Հիսուս Քրիստոսի և Ավետարանի միջոցով:

ա. *Հռոմեացիների 6.1,2*

ՆՇՈՒՄՆԵՐ. Ոմանց կարծիքով՝ քանի որ մենք փրկվել ենք Աստծո շնորհքով և ոչ թե գործերով, կարող ենք ապրել մեղքի մեջ, կամ ավելի վատ՝ ավելացնել մեղքը մեր կյանքում, որպեսզի Աստծո շնորհքն ավելի ակնհայտ դառնա: Սա լիովին հակառակ է Աստծո կամքին և այն նպատակին, որի համար մենք ստացել ենք շնորհքը:

բ. *Տիտոս 2.11-13*

ՆՇՈՒՄՆԵՐ. Հռոմեացիների 6.1,2-ում Պողոս առաքյալը բացահայտում է սխալ և ոչ աստվածաշնչյան արձագանքն Աստծո շնորհքին: Տիտոս 2.11-13-ում նա ցույց է տալիս, թե որն է շնորհքի ճշմարիտ նպատակը, և թե ինչպիսին պետք է լինի մեր պատշաճ արձագանքը դրան:

գ. *Բ Պետրոս 3.18*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված ձրիաբար պարգևել է մեզ Իր շնորհքը (Եփեսացիների 1.6): Այդ դեպքում, ինչպե՞ս մենք կարող ենք աճ ունենալ շնորհքով՝ համաձայն Պետրոս առաքյալի պատվերի: Առաքյալը նկատի չունի, որ մենք շնորհքի պակաս ունենք և պետք է ավելին ձեռք բերենք, այլ՝ որ մենք պետք է աճենք այն շնորհքի մեջ, որը տրված է մեզ Քրիստոսում: Աստծո շնորհքն այն ոլորտն է, որում հավատացյալը ներկայում ապրում է: Աստծո շնորհքը հայտնվում է (1) այն աշխատանքի մեջ, որը Նա արդեն կատարել է մեզ համար, (2) այն աշխատանքի մեջ, որը Նա շարունակում է կատարել մեզ համար, (3) այն մեծ խոստումներով, որոնք Նա տվել է մեզ, և (4) այն կյանքի ու զորության միջոցով, որոնք Նա տալիս է մեզ: Հենց այս շնորհքի պատճառով է, որ մենք կարող ենք աճ ունենալ և պետք է աճ ունենանք՝ ավելի նմանվելով Նրա Որդուն և ավելի հաճելի լինելով Նրան:

դ. *Եբրայեցիների 4.16*

ՆՇՈՒՄՆԵՐ. Շնորհիվ այն աշխատանքի, որը Քրիստոսը կատարեց Գողգոթայում՝ Աստծո դատաստանի գահը (որն այդպիսին էր՝ ի պատասխան մեր մեղքերի) վերածվել է շնորհքի գահի: Ահա թե ինչու մենք կարող ենք համարձակ մոտենալ Աստծո գահին: «Համարձակ» բառը թարգմանվել է հունարեն «***պարրեսի՛ա***» բառից («***պաս***» = «ամեն» + «***ռեսիս***» = «խոսք»), որը բառացիորեն նշանակում է «ազատ խոսել», այսինքն՝ վստահություն կամ համարձակություն ունենալ: Ամենամեծ մեղավորը վախից կհալվի Աստծո գահի առջև, բայց ամենափոքր սուրբը համարձակ և վստահ կկանգնի՝ Քրիստոսի շնորհիվ: Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը պատվիրում է մեզ մոտենալ Աստծո գահին հենց այսպիսի համարձակությամբ և աղոթել, որպեսզի «շնորհք գտնենք պատշաճ ժամանակին (կամ՝ «դժվար պահին») օգնելու»: Կրկին՝ սա չի նշանակում, որ մենք շնորհքի պակաս ունենք (Եփեսացիների 1.6): Սա նշանակում է հետևյալը. քանի որ մենք ունենք Աստծո շնորհքը Քրիստոս Հիսուսում, դժվար պահին մենք կարող ենք համարձակ գալ Աստծո առջև և խնդրել Նրա օգնությունը: Թեև այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք, արդեն պատկանում է մեզ, սակայն դա պետք է ձեռք բերվի Աստծուն հավատալով և աղոթքի մեջ հարատևելով: Հաճախ մենք չենք ստանում այն օգնությունը, որի կարիքն ունենք, որովհետև չենք խնդրում (Հակոբոս 4.2):

ե. *Գործք 20.24*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա Պողոս առաքյալի ազնվագույն նպատակն էր: Թեև մենք չունենք միևնույն կոչումը, պարգևները և ծառայությունը, որ ուներ Պողոս առաքյալը, բայց մենք պետք է նույն կերպով ձգտենք վկայել Աստծո շնորհքի Ավետարանի մասին:

Գլուխ 30. Աստծո համբերությունը

«Համբերություն» կամ «երկայնամտություն» բառը նշանակում է Աստծո պատրաստակամությունը՝ համբերելու կամ դիմանալու Իր ստեղծածների տկարություններին կամ անօրեն արարքներին: Աստծո համբերությունը՝ Նրա սիրո մեծագույն դրսևորումներից մեկն է, հատկապես հաշվի առնելով մարդկության մեղսալի լինելը: Աստված արժանի է ամբողջ փառքին, պատվին և գոհությանը: Այն փաստը, որ Նա դիմանում է նրանց, ովքեր հատուցում են Նրան ճիշտ հակառակը, Նրա համբերատար սիրո մեծագույն դրսևորումներից մեկն է:

1. Ելից 34.6,7-ում գրված է Հին կտակարանում գտնվող մեծագույն հայտնություններից մեկն Աստծո մասին: Այս հատվածում Աստված իջնում է և Իր փառքն անցկացնում է Մովսեսի կողքով: Այս անպատմելի իրադարձության ժամանակ Աստված ազդարարում է բազմաթիվ հիմնարար ճշմարտություններ Իր և մարդու հետ Իր հարաբերությունների մասին: Ինչ է Աստված ազդարարում Մովսեսին Իր համբերության և երկայնամտության մասին խոսք 6-ում:

   ա. *Տերը Ե_____ է (կամ՝ արագ չի բարկանում):* Նույն նկարագրությունը կարելի է գտնել Թվոց 14.18, Նեեմիա 9.17, Սաղմոս 86.15, 103.8, 145.8, Հովել 2.13, Հովնան 4.2 և Նաում 1.3 խոսքերում: Այն, որ այս նկարագրությունն Աստծո մասին հաճախ է կրկնվում Աստվածաշնչում, խոսում է դրա և՛ կարևոր, և՛ ճշմարիտ լինելու մասին. Աստված իսկապես որ համբերատար է: «Բարկանալ» բառը թարգմանված է եբրայերեն «***աֆ***» բառից, որը բառացիորեն նշանակում է «քիթ» կամ «ռունգ»: Այն փոխանցում է ռունգերից կրակ դուրս գալու պատկեր, որը խորհրդանշում է զայրույթ կամ ցասում: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված՝ մաշող կրակ է (Երկրորդ Օրինաց 4.24, «փչացնող կրակ»՝ Եբրայեցիների 12.29), և որ Նրա զայրույթը կարող է հեշտորեն բորբոքվել (Սաղմոս 2.12, NET): Այնուամենայնիվ, Նրա բարկության արագ բորբոքվելը տեղի է ունենում միայն համբերատար սպասումից հետո: Այս խոստումները հիշեցնում են այն մասին, որ թեև Աստված երկայնամիտ է, (այսինքն՝ արագ չի բարկանում), սակայն մենք չպետք է թեթևամտորեն վերաբերվենք Նրա համբերությանը կամ փորձենք մեր Տեր Աստծուն:

2. Համաձայն Ա Պետրոս 3.20-ի՝ ինչո՞ւ էր Աստված երկար ժամանակ հապաղում՝ մինչև աշխարհը դատելը Նոյի օրերում: Աստծո ո՞ր հատկանիշը դրդեց Նրան ետ պահել Իր դատաստանը: Ինչ է սա սովորեցնում մեզ Աստծո էության մասին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Երկայնամտություն» բառը հունարեն «***մակրոտումի՛ա***» բառից է («***մակրո՛ս***» = երկար + «***տումո՛ս***» = «զայրույթ, բարկություն, ցասման պոռթկումներ») և նշանակում է «համբերել» կամ «դիմանալ»: «Համբերում էր» (կամ՝ «սպասում էր») բառը հունարեն անկատար բայի ճշգրիտ թարգմանությունն է. Աստված սպասում ու սպասում էր, որ մարդիկ ապաշխարեին: Փաստորեն, ամբողջ 120 տարվա ընթացքում, երբ Նոյը կառուցում էր տապանը, Աստված մեծ համբերությամբ դիմանում էր մարդկանց անօրինություններին և ապաշխարելու բազմաթիվ հնարավորություններ էր տալիս:

3. Աստծո համբերությունը կամ երկայնամտությունը հատկապես երևում է Իսրայելի ժողովրդի հանդեպ Նրա բարությունից: Սաղմոս 78.36-42-ում գրված է տպավորիչ օրինակ այս ճշմարտության մասին: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

ա. *Համաձայն խոսքեր 36,37-ի՝ ինչպե՞ս Իսրայելի ժողովուրդն արձագանքեց իր հանդեպ Աստծո ողորմածությանը:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը մատնանշում է երեք մեղք, որ Իսրայելը գործում էր: Առաջինը՝ նրանց սրտերը «ուղիղ» չէին Աստծո հանդեպ: Այս բառը թարգմանված է եբրայերեն «**կուն**» բառից, որը նշանակում է «լինել ամուր կամ հաստատ»: Նրանք անհաստատ էին Աստծուն սիրելու և հավատարիմ լինելու մեջ: Երկրորդը՝ նրանք խաբում կամ ստում էին Աստծուն իրենց բառերով. հավանաբար, խոսքն այստեղ նրանց չկատարած երդումների, մակերեսային ապաշխարության և կեղծավոր երկրպագության մասին է: Երրորդը՝ նրանք հավատարիմ չէին Աստծո ուխտի մեջ: Աստծո ուխտն Իսրայելի հետ երկկողմանի էր: Աստված հավատարիմ էր մնում Իր բոլոր խոստումներին, բայց Իսրայելն անփութորեն էր վերաբերվում Աստծո օրենքին և չէր հնազանդվում դրան:

բ. *Համաձայն խոսքեր 40-42-ի՝ ուրիշ ի՞նչ կերպով իսրայելցիներն արձագանքեցին իրենց հանդեպ Աստծո ողորմածությանը:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Իսրայելին վերագրվում է ևս հինգ մեղք: Առաջինը՝ նրանք դառնացրին Աստծուն (կամ՝ ապստամբեցին Նրա դեմ): Այս բառը թարգմանված է եբրայերեն «***մառահ***» բառից, որը նշանակում է նաև «կռվարար լինել»: Երկրորդը՝ նրանք բարկացրին (կամ՝ տրտմեցրին) Աստծուն: Այս բառը թարգմանված է եբրայերեն «***ացաբ***» բառից, որը նշանակում է «ցավ պատճառել կամ վնաս հասցնել»: Երրորդը՝ նրանք փորձեցին Աստծուն: Այս բառը թարգմանված է եբրայերեն «***նասահ***» բառից: Նույն բառն օգտագործվում է Երկրորդ Օրինաց 6.16-ում. «Ձեր Եհովա Աստծուն չփորձեք»: Չորրորդը՝ նրանք նեղացրին (կամ՝ ցավեցրին) Աստծուն: Այս բառը թարգմանված է եբրայերեն «***տավահ***» բառից, որը նշանակում է նաև «վերք հասցնել»: Հինգերորդը՝ նրանք չհիշեցին կամ մոռացան Աստծուն, հետևեցին իրենց կուռքերին և վարվեցին այնպես, ինչպես ճիշտ էին համարում: Այս մեղքերը՝ խոսքեր 36,37-ում նշվածների հետ, ամփոփում են Իսրայելի նահանջն Աստծուց:

գ. *Համաձայն խոսքեր 38,39-ի՝ ինչպե՞ս Աստված արձագանքեց Իսրայելի գրեթե մշտական ապստամբությանը:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո արձագանքն Իսրայելի ապստամբությանը ամփոփված է հետևյալ կետերում: Առաջինը՝ Նա ողորմած էր նրանց հանդեպ (խոսք 38): Երկրորդը՝ Նա քավում կամ ներում էր նրանց անօրինությունը (խոսք 38): Երրորդը՝ Նա ետ էր դարձնում Իր բարկությունը (խոսք 38): Չորրորդը՝ Նա խղճում էր նրանց՝ հիշելով, որ նրանք ընդամենը անկում ապրած մարդիկ էին:

դ. *Ձեր բառերով նկարագրե՛ք, թե ինչ է սովորեցնում Աստծո արձագանքը Նրա համբերության կամ երկայնամտության մասին: Ինչպե՞ս մենք պետք է կիրառենք այս ճշմարտությունները մեր կյանքում:*

_____

_____

_____

_____

_____

_____

4. Ո՞րն է Աստծո համբերության դրդապատճառը նույնիսկ ամենամեծ մեղավորների հանդեպ: Ինչո՞ւ է Նա այդքան համբերատար և պատրաստակամ՝ դիմանալու անհնազանդ և անշնորհակալ մարդկությանը: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները:

ա. *Եզեկիել 18.23,32*

_____

_____

_____

_____

_____

բ. *Բ Պետրոս 3.9*

_____

_____

_____

_____

_____

5. Համաձայն Հռոմեացիների 2.4-ի՝ ինչպե՞ս մարդիկ պետք է արձագանքեն Աստծո համբերությանը և երկայնամտությանը իրենց մեղքի հանդեպ: Ի՞նչ պետք է անի մեղավորը՝ գիտակցելով Աստծո բարությունը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքում գրված է, որ Աստված երեք բանի առատություն ունի. (1) քաղցրության (հունարեն «***կրեստոտնես***», որը նշանակում է նաև բարեհաճություն, բարություն և հեզություն), (2) համբերության (հունարեն «***անոխեն***», որը նշանակում է ինքնազսպում, համբերատարություն և հետաձգելու պատրաստակամություն) և (3) երկայնամտության (հունարեն «***մակրոտումի՛ա***», որը նշանակում է երկայնամտություն և համբերատարություն: Այս հատկանիշները պետք է հալեցնեն մեղավորի խստացած սիրտը և դրդեն ապաշխարության:

Գլուխ 31. Աստված Արարիչ է

ԱՐԱՐԻՉ ԱՍՏՎԱԾ

Աստվածաշնչի և քրիստոնեական հավատքի հիմնարար ճշմարտություններից մեկն այն է, որ Աստված երկնքի և երկրի Արարիչն է: Նա ամեն ինչից առաջ է, և ամեն ինչ գոյություն ունի Նրա շնորհիվ: Նա առաջացած կամ ստեղծված չէ Իրենից ավելի մեծ ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի կողմից. Նա է ամեն բաներն Առաջացնողը և Ստեղծողը, և այն, ինչը գոյություն ունի, չի կարող լինել Նրանից անջատ: Միայն Նա է Արարիչը. այլևս ոչ ոք չի կիսում այս տիտղոսը Նրա հետ:

Համոզմունքն այն մասին, որ Աստված է ստեղծել բոլոր էակներին երկնքում և երկրի վրա, պետք է արմատական ազդեցություն թողնի մեր կյանքի ամեն բնագավառի վրա: ***Առաջինը***՝ այս փաստը պետք է պատկառանք և երկյուղածություն առաջացնի մեզանում: Գիտելիքն այն մասին, որ կա Աստված, Ով այնքա՞ն մեծ է, որ ստեղծել է անթիվ աշխարհներ և էակների, և պահում է դրանք առանց որևէ ջանքի, վեր է մարդկային մտքից: Այդպիսի Աստված արժանի է բացարձակ երկյուղածության: Եթե մենք ժամանակ առ ժամանակ երկյուղածություն ենք զգում՝ տեսնելով Նրա ստեղծածները, որքա՞ն ավելի պետք է երկյուղ տածենք Նրա հանդեպ: ***Երկրորդը***՝ այս փաստը պետք է գոհության և երկրպագելու ցանկություն առաջացնի մեզանում: Եթե Աստված չստեղծեր մեզ, մենք չէինք լինի: Աստծուց չգոհանալը և Նրան չփառաբանելը ամենամեծ ամբարտավանությունը և ապերախտությունն է: ***Երրորդը***՝ այս փաստը պետք է խոնարհություն առաջացնի մեզանում: Ի՞նչ է մարդը, որ Աստված հոգ է տանում նրա համար: Մենք գոյություն ունենք, որովհետև Նա ստեղծել է մեզ, և Նրանից անջատ մենք ոչինչ ենք: Այնպես որ, խոնարհության պակասն Աստծո առջև պարզապես անընդունելի է: ***Չորրորդը***՝ այս փաստը պետք է նպատակ հաղորդի մեր կյանքին: Մենք պատահականության կամ բնական էվոլյուցիայի անմտածված գործընթացի հետևանք չենք. մենք ստեղծվել ենք Աստծո մտադրությամբ և Նրա հաճության համար:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի և նրա էության մասին: Ի՞նչ անուն է վերագրվում Աստծուն Եսայի 40.28-ում: Ի՞նչ է դա սովորեցնում մեզ Նրա մեծության մասին: Ի՞նչ դա պետք է նշանակի Իր ժողովրդի համար:

   _____

   _____

   _____

   _____

2. Ստորև բերված հատվածներում Աստվածաշնչի ամենակարևոր հայտարարություններից մի քանիսն են Արարիչ Աստծո մասին: Ուշադրությա՛մբ կարդացեք ամեն մեկը և գտե՛ք այն ճշմարտությունները, որոնք հայտնվում են դրանցում: Ի՞նչ են սովորեցնում այս հատվածները Աստծո մասին: Ի՞նչ են այս հատվածները սովորեցնում այն մասին, որ մարդը կախում ունի Աստծուց և պարտական է Նրան:

ՃԱՆԱՉԵԼ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈՒՆ

ա. *Ծննդոց 1.1,2*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս համատեքստում «սկիզբ» բառը վերաբերում է տիեզերքի ստեղծման սկզբին: Այն ծնվել է Աստծուց, ինչն արդեն ենթադրում է Նրա հավիտենական լինելը: «Ստեղծեց» բառը եբրայերեն «***բառա***» բառից է, որն օգտագործվում է Աստվածաշնչում միայն Աստծո վերաբերյալ: Նույնիսկ բարձրագույն կարգեր ունեցող հրեշտակները մասնակցություն չեն ունեցել արարչագործության մեջ. այն բացառապես Աստծո մտադրությունը և գործն է: Այսպիսով, ամբողջ փառքը պատկանում է Աստծուն:

բ. *Նեեմիա 9.6*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը հաստատում է Ծննդոց 1.1,2-ը: Ստեղծագործությունը՝ միայն Աստծո գործն է. այնպես որ, միայն Նա է արժանի երկրպագություն ստանալուն: Եթե երկնային զորքերը խոնարհվում են Աստծո առջև Նրա արարչագործության շնորհիվ, որքա՞ն ավելի պետք է խոնարհվի մահկանացուն՝ երկյուղածությամբ, երկրպագությամբ և գոհությամբ:

գ. *Երեմիա 10.12*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարևոր է նշել, որ արարչագործությունը ցույց է տալիս ոչ միայն Աստծո զորությունը, այլև՝ Նրա իմաստությունը: Անհրաժեշտ են անհաշվելի ուժեր՝ ամբողջ տիեզերքն ստեղծելու և պահպանելու համար, բայց Աստված անում է դա առանց՝ նույնիսկ մի փոքր նվազեցնելու Իր զորությունը կամ ուժը: Նմանապես, փոքրագույն բջջի բարդությունը ցնցում է նույնիսկ հանճարեղ գիտնականներին, և չնայած դրան՝ ամբողջ տիեզերքի արարումը Աստծո իմաստության ընդամենը աննշան օրինակ է:

դ. *Եբրայեցիների 11.3*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաբանները հաճախ օգտագործում են մի լատիներեն արտահայտություն՝ նկարագրելու համար Աստծո արարչագործության աշխատանքը. «***կրեատիո էքս նիհիլո***»՝ արարում ոչնչից: Աստված չօգտագործեց արդեն գոյություն ունեցող նյութեր՝ տիեզերքն ստեղծելու համար. Նա ստեղծեց այն ոչնչից՝ Իր զորությամբ և Իր փառքի համար:

3. Կարևոր է հասկանալ, որ տիեզերքի արարումը Եռամեկ Աստծո գործն է՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածներն այս ճշմարտության մասին: Ի՞նչ են դրանք ավելացնում մեր պատկերացմանը Աստծո մասին՝ որպես տիեզերքն Արարչի և Պահապանի:

ա. *Ծննդոց 1.1,2*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հոգի» բառը թարգմանված է եբրայերեն «***ռուախ***» բառից, որը նաև կարելի է թարգմանել որպես «շունչ» կամ «քամի»: «Շրջել» բառը թարգմանված է եբրայերեն «***ռախաֆ***» բառից, որը նշանակում է «սավառնել»: Որոշ ժամանակակից աստվածաբաններ պնդում են, որ խոսքն այստեղ քամու մասին է, ոչ թե հոգու Անձի. այնուամենայնիվ, նման մեկնաբանությունը չի համապատասխանում համատեքստին: Քամին չի շրջում (կամ՝ սավառնում): Այս հատվածը պարզորեն վերաբերում է Սուրբ Հոգու Անձի աշխատանքին:

բ. *Հովհաննես 1.1-3*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խոսք 1-ը պարզորեն ցույց է տալիս, որ այս հատվածը Խոսքի՝ Աստծո Որդու մասին է: Հովհաննեսը չէր կարող ավելի արտահայտիչ փոխանցել իր ասելիքը: Այն ամենը, ինչը գոյություն ունի՝ առանց բացառության, կյանքի է կոչվել Որդու ստեղծարար աշխատանքի միջոցով:

գ. *Կողոսացիների 1.16*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Նրանով» և «Նրանում» բառերը և «Նրա համար» բառակապակցությունը (բառացիորեն՝ «***էյս առտոն***» կամ՝ «դեպի Նա») խիստ կարևոր են: Որդին ոչ միայն արարչագործության Միջնորդն է, այլև՝ նպատակը: Այս երկու ճշմարտությունները պարզորեն հաստատում են Նրա աստվածությունը: Ամեն բան ստեղծվեց Որդու միջոցով՝ Նրա պատվի և հաճության համար:

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՏԾՈ ՄԱՍԻՆ

Բնական էվոլյուցիան փորձում է բացատրել արարչագործությունը՝ առանց Աստծո գոյության: Այս տեսությունը, որը շատ տարածված է մեր օրերում, հակառակ է այն ամենին, ինչ հայտնում են բանականությունն ու Աստվածաշունչը մեր գոյության մասին: Մենք երբեք չպետք է փորձենք կեղծ հրադադար ստեղծել էվոլյուցիայի և Արարիչ Աստծո աստվածաշնչյան տեսակետների միջև: Եթե էվոլյուցիան ճիշտ է, ուրեմն Աստվածաշունչը սխալ է: Եթե Աստվածաշունչն է ճիշտ, ուրեմն էվոլյուցիան ընդամենը մարդու ողորմելի փորձն է՝ ժխտելու այն Աստծուն, Ով, ինչպես նա է պատկերացնում, գոյություն ունի: Այս կարճ բաժնի նպատակը՝ էվոլյուցիայի շուրջ բանավեճ ծավալելը չէ, այլ, պարզապես, ի ցույց հանելը աստվածաշնչյան ճշմարտություններն այն մասին, որ տիեզերքը՝ Աստծո ստեղծագործությունն է:

1. Համաձայն Սաղմոս 19.1-4-ի՝ ինչպե՞ս է արարչագործությունը վկայում Աստծո գոյության, զորության և փառքի մասին: Ամփոփե՛ք այս խոսքում եղող ճշմարտությունները:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Թեև արարչագործությունը ձայն չունի, այն ազդարարում է Աստծո գոյությունը և փառքը՝ իր գեղեցկությամբ և բազմազանությամբ:

2. Եբրայեցիների 3.4-ում օգտագործվում է շատ կարևոր համեմատություն, որը կարելի է վերագրել տիեզերքի ստեղծմանը: Ինչպե՞ս է կանոնավոր և բարդ կառուցվածք ունեցող տիեզերքն ապացուցում Աստծո գոյությունը:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Անհեթեթություն կլիներ մտածել, որ այն տունը, որում մարդն ապրում է, պարզապես առաջացավ պատահական իրադարձությունների արդյունքում: Նախագծված տան գոյությունը խոսում է խելացի շինարարի մասին: Որքա՞ն ավելի է տիեզերքի բազմաբարդ կառուցվածքը մատնացույց անում անձնավոր և նպատակաուղղված Արարչի, Ում իմաստությունն անսահման է:

3. Հռոմեացիների 1.18-23-ը՝ ամենակարևոր հատվածներից մեկն է Աստվածաշնչում Աստծո գոյության, տիեզերքի ստեղծման և Աստծո մասին մարդու ունեցած գիտելիքի վերաբերյալ: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

ա. *Ի՞նչ է վկայում Հռոմեացիների 1.19,20-ը Աստծո գիտելիքի մասին: Արդյո՞ք բոլոր մարդկանց գիտելիքն Աստծո մասին բավական է՝ նրանց արդարացիորեն պատասխանատվության կանչվելու համար: Բացատրե՛ք ձեր պատասխանը:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշունչը չի ճանաչում և չի ընդունում աթեիստների գոյությունը: Այն համարձակ հռչակում է, որ բոլոր մարդիկ գիտեն հավիտենական զորություն ունեցող Աստծո մասին, Ով տիեզերքի գոյության միակ հավանական բացատրությունն է: Այս ճշմարտությունը հաստատվում է Հռոմեացիների 1.21-ում. «Որովհետև Աստծուն ճանաչելով...»: Որոշ աստվածաբաններ համոզված են, որ Պողոսը նկարագրում է Աստծո մասին գիտելիք ձեռք բերելու երկու աղբյուր: Առաջինը՝ ամեն մարդ ունի ներքին կամ ներհատուկ գիտելիք Աստծո մասին. «...որովհետև Աստծո գիտելիքը հայտնի է նրանցում» (խոսք 19): Երկրորդը՝ արարչագործությունն ուսումնասիրելիս մարդը նույնպես գիտելիք է ստանում Աստծո մասին (խոսք 20): Երկրորդը վավերացնում է առաջինը:

բ. *Համաձայն Հռոմեացիների 1.21-ի՝ ինչպե՞ս է մարդկությունն ընդհանուր առմամբ արձագանքել Աստծո մասին ունեցած գիտելիքին:*

(1) Նրանք Պ_____ չտվեցին Նրան՝ Աստծո պես: Այս բառը թարգմանված է հունարեն «***դոքսա՛զո***» բառից, որը բառացիորեն նշանակում է «փառավորել» կամ «փառավոր համարել»: Այս բառը նույնպես կարող է կրել Աստծուն բարձրացնելու, մեծարելու կամ երկրպագելու իմաստ: Հրաժարվելով ընդունել Աստծո գոյությունը՝ մարդիկ այլևս չեն փառավորում կամ պատվում Նրան: Նրանք է՛լ ավելի են վիրավորում Աստծուն՝ վերագրելով Նրա արարչագործության հրաշալիքները պատահական և անմիտ գործընթացի: Պողոսի այս խոսքերը, հավանաբար, օգնում են հասկանալ Հռոմեացիների 3.23-ը. «Որովհետև ամենը մեղանչեցին և Աստծո փառքից պակասված են»: Այսինքն՝ բոլորն էլ չտվեցին Աստծուն այն փառքը կամ պատիվը, որին Նա արժանի էր:

(2) Նրանք Շ_____ չեղան: Գործք 17-րդ գլխում Պողոսը հայտարարեց Աթենացիներին. «Նա է ամենին կյանք և շունչ և ամեն բան տվողը» (խոսք 25) և «Մենք Նրանով ենք ապրում և շարժվում և կանք» (խոսք 28): Ահա թե ինչու մարդու անշնորհակալ լինելն Աստծուն՝ ամենատգեղ վիրավորանքն է:

գ. *Համաձայն Հռոմեացիների 1.21-23-ի՝ ի՞նչ կատարվեց մարդու հետ Աստծուն մերժելու արդյունքում:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը հիշեցնում է մարդկության պատմությունը՝ դատարկ շահարկման, հիմարության, բարոյական և մտավոր խավարի, հպարտության, ամբարտավանության և կռապաշտության պատմությունը: Բարոյական, զգացմունքային, հոգեբանական, հոգևոր և հասարակական ախտերը, որոնք պաշարել են մարդուն, ի հայտ են եկել Աստծուն մերժելու արդյունքում:

դ. *Համաձայն Հռոմեացիների 1.18-ի՝ ո՞րն է՝ Աստծուն որպես տիեզերքի Արարիչ մերժելու գլխավոր պատճառը: Այս խնդիրը մտավո՞ր է, թե՞ բարոյական:*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ամբարշտություն» (կամ՝ անաստվածություն) բառը թարգմանված է հունարեն «***ասեբիա***» բառից, որն ունի Աստծո երկյուղի բացակայության իմաստ: «Անիրավություն» բառը թարգմանված է հունարեն «***ադիկի՛ա***» բառից, որն ունի Աստծո կամքին անհամապատասխան լինելու իմաստ: «Բռնել» (կամ՝ «ճնշել») բառը թարգմանված է հունարեն «***կատեխո***» բառից, որը նշանակում է «բռնել կամ ետ պահել, զսպել, սահմանափակել կամ արգելել»: Այսպիսով, մարդը մերժում է Աստծուն նախ և առաջ բարոյական պատճառներով: Անկում ապրած մարդն անարդար է և չի ցանկանում արդար Աստծո: Այդ իսկ պատճառով, նա ճնշում է այն ճշմարտությունն Աստծո մասին, որը հայտնի է իրեն, և ձգտում է համոզել ինքն իրեն, որ Աստված գոյություն չունի:

Գլուխ 32. Աստված արարչագործության Պահապանը և Տիրակալն է

ՊԱՀԱՊԱՆ ԱՍՏՎԱԾ

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Աստված ոչ միայն երկնքի և երկրի Արարիչն է, այլև՝ պահապանը: Այն ամենը, ինչ գոյություն ունի, գոյություն չէր ունենա Նրանից անջատ: Եթե Նա, թեկուզ մեկ ակնթարթ շրջվեր Իր ստեղծագործությունից, ամեն ինչ կոչնչանար: Մենք պարտական ենք Նրան մեր ամեն շնչի և շարժման համար: Ամեն մի արարած՝ բարձրագույն հրեշտակից մինչև պարզագույն որդը, ապրում են բացարձակ կախվածության մեջ Աստծուց: Ե՛վ նա, ով խոնարհաբար երկրպագում է Տիրոջը, և՛ նա, ով անարգանքով բռունցք է թափահարում Աստծո առջև, ունեն մեկ ընդհանրություն. երկուսն էլ ապրում, շնչում և շարժվում են Նրա ողորմած, պահպանող զորությամբ: Նրանք գոյություն ունեն, որովհետև Նա ստեղծեց նրանց, և նրանք շնչում են, քանի որ Նա շունչ է տալիս նրանց: Եթե Աստված շրջվեր նրանցից, նրանք կփոշիանային:

1. Առաջին Տիմոթեոս 6.13-ում գրված է շատ հակիրճ, բայց ազդեցիկ պնդում այն մասին, որ արարչագործությունը կախման մեջ է Աստծուց: Գտե՛ք այդ պնդումը, իսկ հետո բացատրե՛ք դրա իմաստը:

   ա. *Աստված Ա_____ Բ_____ Կ_____ է անում (կամ՝ Աստված կյանք է տալիս ամեն ինչին):*

   բ. *Ի՞նչ է ցույց տալիս այս պնդումը այն մասին, որ Աստված ամենակարող է, և ամբողջ արարչագործությունը բացարձակ կախման մեջ է Նրանից:*

   _____

   _____

   _____

   _____

2. Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված ոչ միայն ստեղծել է տիեզերքը, այլև հավատարմորեն պահպանում է այն Իր զորությամբ: Առանց Աստծո, տիեզերքը երբեք գոյություն չէր ունենա, և առանց Նրա մշտական հոգատարության, տիեզերքը և ամեն կենդանի բան դրանում կոչնչանային: Այն ամենը, ինչ գոյություն ունի, բացարձակ կախման մեջ է Նրանից: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս մեծ ճշմարտության մասին:

   ա. *Հոբ 12.10*

   _____

   _____

_____

_____

բ. *Հոբ 34.14,15*

_____

_____

_____

_____

գ. *Սաղմոս 104.27-30*

_____

_____

_____

_____

3. Կարևոր է հասկանալ, որ Եռամեկ Աստված՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, ոչ միայն ստեղծել է տիեզերքը, այլև պահպանում է այն: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այս ճշմարտության մասին: Ինչպե՞ս են դրանք օգնում մեզ ավելին իմանալ Աստծո մասին՝ որպես տիեզերքի Արարչի և Պահապանի:

ա. *Կողոսացիների 1.17*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաստատ» բառը թարգմանված է հունարեն «***սունի՛ստեմի***» բառից («***սուն***» = «հետ, միասին» + «***հի՛ստեմի***» = «կանգնել»), ինչը նաև կարող է նշանակել «միավորել, միացնել կամ մնալ»: Աստծո Որդին ոչ միայն ամեն ինչը Ստեղծողն է, այլև՝ Իր ամբողջ ստեղծագործության Պահապանը: Որպես «**լոգոս**» կամ Խոսք (Հովհաննես 1.1-5)՝ Նա ամբողջ ստեղծագործությունը

միավորող սկզբունքն է: Ամեն ինչ՝ ամենամեծ գալակտիկաներից մինչև նվազագույն մասնիկները, հաստատ է Նրանում:

բ. *Եբրայեցիների 1.3*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կրել» բառը թարգմանված է հունարեն «***ֆերո***» բառից, որը նշանակում է «կրել կամ տանել»: Մենք հիանում ենք այն գաղափարից, որ հունական դիցաբանության զորավոր Ատլանտը հառաչում է ամբողջ աշխարհի ծանրության ներքո: Այնուամենայնիվ, Քրիստոսը կրում է ամբողջ տիեզերքը միայն Իր խոսքով՝ հասարակ և որևէ ջանք չպահանջող հրամանով: Տիեզերքն ստեղծվեց Աստծո մեկ խոսքով (Ծննդոց 1.3, Եբրայեցիների 11.3), և մեկ խոսքով էլ պահվում է: Ահա թե ինչպիսին է Աստծո զորությունը:

գ. *Սաղմոս 104.27-30*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խոսք 30-ում արարչագործությունը դիտարկվում է որպես Աստծո շարունակական աշխատանք՝ Սուրբ Հոգու զորությամբ: Թեև երեխայի ծնունդը տեղի է ունենում բնական գործընթացի արդյունքում, այն անջատ չէ Աստծո գործից: Սաղմոս 139.13-ում Դավիթը վկայում է. «Որովհետև Դու ստեղծեցիր իմ երիկամունքները, և ծածկեցիր ինձ իմ մոր որովայնում»: Հոր և Որդու պահպանող աշխատանքն ամբողջանում է Հոգու զորավոր, ուժեր հաղորդող և կենսատու աշխատանքով:

4. Գործք 17.22-31-ում գրված է Պողոս առաքյալի քարոզը՝ ուղղված էպիկուրյան և ստոիկյան փիլիսոփաներին, Մարսի բլրի վրա: Այս հատվածը պարունակում է մեծագույն զրույցներից մեկն այն մասին, որ Աստված տիեզերքի և՛ Արարիչն է, և՛ Պահապանը: Համաձայն հետևյալ խոսքերի՝ լրացրե՛ք չորս կարևո-

րագույն պնդումներն Աստծո մասին և այն մասին, որ մարդը բացարձակ կախման մեջ է Նրանից, իսկ հետո բացատրե՛ք դրանք:

ա. *Նա Աստված է, Ով ստեղծեց Ա_____ և ամեն Բ_____ նրանում (խոսք 24):*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Պողոս առաքյալը նախ և առաջ ցույց է տալիս, որ Աստված՝ ամեն ինչի Արարիչն է: Աստված հավակնություններ ունի ամբողջ արարչագործության հանդեպ հենց այս փաստի հիման վրա:

բ. *Նա Ե_____ և Ե_____ Տերն է (խոսք 24):*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Որպես ամեն ինչի Արարիչ՝ Աստված գերագույն իշխանության իրավունք ունի:

գ. *Նա տալիս է բոլոր մարդկանց Կ_____ և Շ_____ և Ա_____ բան (խոսք 25):*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված հավակնություն ունի ամեն ինչի հանդեպ, քանի որ Նա և՛ ստեղծել է ամեն ինչ, և՛ պահպանում է Իր ստեղծագործությունը: Ամեն մի շունչ, ամեն մի սրտի բաբախյուն և «ամեն բարի տուրք» (Հակոբոս 1.17) Աստծուց են: Հաշվի առնելով Աստծո առատաձեռնությունը և մարդու բացարձակ կախումը Նրանից՝ մարդու անշնորհակալ վերաբերմունքն արդարացում չունի:

դ. *Նրանով (կամ՝ Նրանում) ենք մենք Ա_____, Շ_____ և Կ_____ (խոսք 28):*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ամենայն հավանականությամբ, այս հատվածը Կրետացի Էպիմենիդեսին (մ.թ.ա. 600թ.) վերագրվող մի բանաստեղծությունից է, որը Մինոսի (հունական դիցաբանության հերոս) երգն է՝ իր հայր Զևսին: Հետաքրքրական է նշել, որ երկու տող վերևում այդ բանաստեղծության մեջ կա մի հատված, որը Պողոսը մեջբերեց Տիտոս 1.12-ում. «Կրետացիք միշտ ստախոս են, չար գազաններ, դատարկափոր (կամ՝ ծույլ շատակերներ)»: Թեև Պողոսն օգտագործում էր մեջբերումներ հույն բանաստեղծներից, նա չէր սատարում նրանց բազմաստվածային գաղափարները: Նա պարզապես օգտվում էր նրանց լեզվից, որպեսզի հեռացներ նրանց այն բաներից, ինչը նրանք «առանց ճանաչելու պաշտում» էին (խոսք 23), և առաջնորդեր դեպի Աստվածաշնչի կենդանի և ճշմարիտ Աստված:

ԱՍՏՎԱԾ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՏԻՐԱԿԱԼՆ Է

Աստված երկնքում և երկրի վրա եղող ամեն ինչի Արարիչը և Պահապանն է: Այդ իսկ պատճառով, Նա արդարացիորեն հայտարարում է, որ ամեն բանի Տիրակալն է: Եթե մենք ցանկանում ենք ճիշտ պատկերացում ունենալ Աստծո մասին և այն դիրքի մասին, որն ունենք Նրա ստեղծագործության մեջ, մենք պետք է գիտակցենք, որ չենք պատկանում ինքներս մեզ: Մենք չենք ստեղծվել ինքներս մեզ համար: Մենք պատկանում ենք Նրան, Ով ստեղծել է մեզ, և պատասխանատու ենք Նրա առջև, որ ապրենք համաձայն Նրա կամքի՝ Նրա փառքի և հաճության համար:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի և նրա էության մասին: Ի՞նչ անուն է Ծննդոց 14.19,22-ը վերագրում Աստծուն: Ի՞նչ է դա սովորեցնում մեզ Նրա մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Տեր» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***քանահ***» բառից, որը նշանակում է «վերցնել կամ ձեռք բերել», և օգտագործվում է Աստծո վերաբերյալ՝ ցույց տալու համար, որ Նա տիեզերքի և՛ Արարիչն է, և՛ Տիրակալը:

2. Հետևյալ հատվածներում Աստվածաշնչի ամենակարևոր պնդումներից երկուսն են այն մասին, որ արարչագործությունը պատկանում է Տիրոջը: Ուշադրությամբ կարդացե՛ք ամեն մի խոսքը, իսկ հետո գրի՛ առեք դրանցում եղող ճշմարտությունները: Ինչպե՞ս են դրանք ցույց տալիս Աստծո հավակնությունն արարչագործության, հատկապես՝ մարդկության հանդեպ: Ինչպե՞ս մենք պետք է արձագանքենք դրանց:

ա. *Սաղմոս 24.1,2*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 89.11*

_____

_____

_____

_____

3. Հետևյալ հատվածները Հոբի և Սաղմոսների գրքերից ցույց են տալիս մի շատ կարևոր հետևություն այն փաստից, որ արարչագործությունը պատկանում է Տիրոջը: Ուշադրությամբ կարդացե՛ք դրանցից ամեն մեկը և գրի՛ առեք ձեր գաղափարները: Ինչպե՞ս մենք պետք է ապրենք՝ ի պատասխան այս հատվածներում ուսուցանվող ճշմարտությունների:

ա. *Հոբ 41.11*

_____

_____

_____

_____

բ. *Սաղմոս 50.10-12*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածները հայտնում են մեզ հետևյալ կարևոր ճշմարտությունը. քանի որ Աստված ամեն բանի Արարիչը և Պահապանն է, Նա ոչնչի կարիք չունի և պարտական չէ ոչ մի մարդու: Այն ամենը, ինչ մենք կարող ենք առաջարկել Նրան, եկել է Նրանից և պատկանում է Նրան: Աստված չի կանչում մեզ Իրեն ծառայելու, քանի որ Նա ինչ-որ բանի կարիք ունի, այլ որպեսզի մենք կարողանանք ճանաչել Նրա հետ հաղորդություն ունենալու արտոնությունը և անձամբ տեսնենք Նրա զորությունը:

4. Երկրորդ Օրինաց 10.14,15-ում տեսնում ենք Աստծո մեծությունն Իր արարչագործության հանդեպ և Նրա շնորհքը՝ Իր ժողովրդի հանդեպ: Ուշադրությա՛մբ կարդացեք այս հատվածը, իսկ հետո գրի՛ առեք ձեր մտքերը:

ՆՇՈՒՄՆԵՐ. Ամենազարմանալի ճշմարտություններից մեկը, որը փոխանցվում է մեզ այս երկու խոսքերում, Աստծո՝ ամբողջ արարչագործության Տիրակալի վեհությունն է, և Նրա զարմանալի շնորհքն Իր ժողովրդի հանդեպ: Այն, որ մեծ Աստված մեզ է ուղղում Իր սերը և հոգատարությունը, ճշմարտապես զարմանալի է:

Գլուխ 33. Արարչագործության նպատակը

Մենք իմացանք Աստվածաշնչից, որ Աստված՝ Իր արարչագործության Արարիչը, Պահապանը և լիիրավ Տիրակալն է: Այժմ պետք է պարզենք, թե ինչ նպատակով Նա ստեղծեց ամեն ինչ: Եթե Աստված պարտավորված չէր ստեղծելու տիեզերքը, և եթե Նա չուներ տիեզերքի կարիքը՝ լրացնելու համար ինչ-որ բաց Իր գոյության մեջ, ուրեմն ի՞նչ աստվածային նպատակ ունի արարչագործությունը և մարդու գոյությունը: Աստվածաշունչը համարձակ և միանշանակ կերպով հայտարարում է, որ արարչագործությունը ***Աստծո փառքի և հաճության համար է:***

ԱՄԵՆ ԼԻՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾ

Ամենից երկյուղածություն ներշնչող և խոնարհեցնող ճշմարտություններից մեկն Աստծո մասին այն է, որ Նա բացարձակապես ազատ է որևէ կարիքից և չունի կախում ոչ մի բանից: Նրա գոյությունը, Նրա կամքի իրականացումը և Նրա ուրախությունը կամ հաճությունը կախված չեն որևէ մեկից կամ որևէ բանից՝ Իրենից դուրս: Ինչպես մենք սովորեցինք Գլուխ 11-ում, Նա՝ միակ Էակն է, Ով ճշմարտապես ինքնագո, ինքնաբավ, ինքնապահպանվող, անկախ և ազատ է: Մնացած բոլոր էակները վերցնում են իրենց կյանքը և օրհնություններն Աստծուց, բայց այն ամենը, ինչ անհրաժեշտ է Աստծո գոյության և կատարյալ երջանկության համար, նա գտնում է Իրենում: Աստված չունի ոչ մի պակասություն կամ կարիք, և կախված չէ ոչ ոքից: Այն, որ ինչ-որ մեկը սովորեցնում կամ նույնիսկ ակնարկում է, որ Աստված ստեղծեց մարդուն, քանի որ Նա միայնակ կամ անլիարժեք էր, կոպտորեն հակասում է Աստվածաշնչին: Աստված չէր ստեղծել տիեզերքը կամ մարդուն, որովհետև Նա կարիք ուներ, այլ որովհետև Նա ցանկանում էր հայտնի դարձնել Իր կատարելությունների, փառքի և բարության առատությունը:

1. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները Աստծո ինքնագո և ինքնաբավ լինելու մասին: Որտեղի՞ց է բխում Աստծո կյանքը կամ գոյությունը: Արդյո՞ք Նա կախում ունի ինչ-որ մեկից:

ա. *Սաղմոս 36.9*

_____

_____

_____

_____

բ. *Հովհաննես 5.26*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված կյանք ունի Իրենում: Նա կյանքի և լույսի (այսինքն՝ իմաստության) աղբյուր է բոլոր ստեղծվածների համար: Նա չունի կախում ոչ ոքից, և ամեն ինչ կախված է Իրենից:

2. Աստծո ինքնաբավ լինելը արտահայտում է Նրա անսահման մեծությունը և Նրա դիրքը, որ բարձր է Իր ստեղծագործությունից: Ամեն ինչի գոյությունն իսկ կախված է Նրանից, իսկ Նա կախված չէ ոչ ոքից: Գործք 17.22-31-ում գրված է Պողոս առաքյալի քարոզը՝ ուղղված էպիկուրյան և ստոիկյան փիլիսոփաներին, Մարսի բլրի վրա: Խոսքեր 24,25-ում նա հերքում է նրանց կռապաշտական պատկերացումները՝ անելով երկու շատ կարևոր հայտարարություն ճշմարիտ և կենդանի Աստծո մասին: Ի՞նչ են սովորեցնում այս հայտարարությունները Աստծո ինքնաբավ լինելու և այն կապի մասին, որը Նա ունի Իր ստեղծագործության հետ:

ա. *Աստված չի բնակվում ձեռագործ տաճարներում (խոսք 24):*

բ. *Աստված մարդկանց ձեռքով չի պաշտվում (կամ՝ ծառայություն ընդունում) (խոսք 25):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Առաջին պնդումն ապացուցում է, որ Աստված կարիք չունի, որ ինչ-որ մեկը տաճար կառուցի Իր համար, քանի որ Նա է ստեղծել տիեզերքը, և նույնիսկ այն չի կարող պարունակել Նրան: Երկրորդ պնդումն ապացուցում է, որ Աստծո պատվիրանը Իրեն ծառայելու մասին պայմանավորված չէ այն բանով, որ Նա ինչ-որ կարիք ունի, այլ՝ Իր շնորհքի դրսևորումն է: Նա արտոնություն է տալիս մեզ՝ Իրեն ճանաչելու, Իրեն ծառայելու և Իր բարեհաճությունն ստանալու համար:

ԱՍՏԾՈ ՓԱՌՔԸ

Եթե Աստված չի ստեղծել տիեզերքն ինչ-որ կարիքից ելնելով, ուրեմն, ո՞րն է դրա նպատակը: Ինչո՞ւ Աստված ստեղծեց ամեն ինչ: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված ստեղծեց ամեն ինչ Իր հաճության և փառքի համար (այսինքն՝ որպեսզի հայտնի Իր մեծությունը և ստանա արժանի պատիվը և երկրպագությունն Իր ստեղծագործությունից): Միգուցե սա տարօրինակ թվա. կարող է տպավորություն ստեղծվել, որ Աստված մի փոքր եսակենտրոն և եսասեր է, բայց այդ կարծիքը լիովին սխալ է:

Մտածե՛ք այս երկու փաստերի մասին. ***առաջինը***՝ Աստված արժանի է ընդունելու բարձրագույն դիրքը, որը վեր է Իր ստեղծագործությունից, և Նա արժանի է լինելու մեր բոլոր մտքերի, ամբողջ գործունեության նաև երկրպագության առարկան: Եթե Նա ուրանա Իր «առաջին տեղը», որը վեր է մեզնից, Նա պետք է ուրանա, որ Ինքն Աստված է: ***Երկրորդը***՝ մեծագույն բարիքը, որն Աստված կարող է անել մեզ, և ամենամեծ բարությունը, որը կարող է ցուցաբերել՝ ամեն ինչ ուղղորդելն է այն կերպով, որ Նրա մեծությունը լիովին հայտնվի մեզ: Եթե Աստծո արժեքը, գեղեցկությունը և մեծությունն անսահման են, նշանակում է՝ ամենաթանկ, ամենագեղեցիկ և ամենավեհ պարգևը, որը Նա կարող է տալ մեզ՝ Իր փառքը հայտնելն է:

1. Աստված երկնքի, երկրի և դրանում եղած ամեն ինչի Արարիչը, Պահապանը և լիիրավ Տիրակալն է: Ամեն ինչ ***ստեղծվել է*** Նրա ***կողմից***, ***պատկանում է*** Նրան և ***գոյություն ունի*** Նրա փառքի ***համար***: Ինչ է սովորեցնում Հռոմեացիների 11.36-ը այս ճշմարտության մասին: Ավարտե՛ք այս արտահայտություններից ամեն մեկը:

   ա. *Ն_____ է ամեն բան:* Աստված արարչագործության և ամբողջ կյանքի ***աղբյուրն*** է (Սաղմոս 36.9): Արարչագործությունը պարտական է Աստծուն իր գոյությամբ. Նրանից անջատ ոչինչ գոյություն չէր ունենա: Մարդն ինչ-որ անմիտ էվոլյուցիոն գործընթացի հետևանք չէ և չպետք է ապրի առանց նպատակի. ո՛չ էլ սեփական գոյության աղբյուրն է, որ ապրի իր համար: Նա Աստծո ձեռքի գործն է և պետք է ապրի Աստծո փառքի համար:

   բ. *Ն_____ է ամեն բան:* Աստված այն ***Միջնորդն*** է, որով ամեն բան ստեղծվեց և պահվում է: Եթե Աստված թեկուզ մի պահ շրջվեր Իր արարչագործությունից, ամեն ինչ ***քաոսի*** կվերածվեր: Իր անխափան գերիշխանության, անքննելի իմաստության և անսահման զորության միջոցով Նա պահպանում է ամեն ինչ (մոլեկուլները, մարդկանց և գալակտիկաները)՝ ուղղորդելով դեպի այն աներևակայելի նպատակը, որի համար դրանք ստեղծվել են՝ Աստծո փառքը:

   գ. *Դ_____ Նա է ամեն բան:* Այս պարզ արտահայտության մեջ է գոյության նպատակը: Աստված ստեղծեց ամեն ինչ և գործում է ամեն ինչում Իր հաճության և փառքի համար, որպեսզի հայտնի Իր մեծությունը և ընդունի մեզնից Իր արժանի պատիվը և երկրպագությունը:

   դ. *Ն_____ Փ_____ հավիտյան: Ա_____:* Միակ պատշաճ պատասխանն Աստծո մեծությանը՝ Նրան ամեն բանից վեր գնահատելը և բարձրագույն պատիվը, պաշտամունքն ու փառքը տալն է: Գոյություն ունի մի շատ կարևոր լատիներեն արտահայտություն, որն օգտագործվում է աստվածաբանության մեջ՝ այս ճշմարտությունը նկարագրելու համար. «***սոլի Դեո գլորիա»,*** որը նշանակում է «միայն Աստծուն լինի փառքը»:

2. Կողոսացիների 1.16-ում գրված է մի հատված, որը նման է Հռոմեացիների 11.36-ին, բայց այն մասնավորապես Աստծո Որդու մասին է: Ինչ է այն սովորեցնում մեզ արարչագործության նպատակի մասին:

ա. *Ամեն բան ստեղծվեց Ն_____:* Հայրը՝ ամեն ինչի աղբյուրն է (Հռոմեացիների 11.36), բայց Նա ստեղծել է ամեն ինչ Որդու ***միջոցով*** (Հովհաննես 1.3, Եբրայեցիների 1.2), Ով Միջնորդ է Հոր և ստեղծագործության միջև: Որդու միջոցով Հայրն ***ստեղծել է*** ամեն ինչ և ***հայտնում է*** Իրեն Իր ստեղծագործությանը (Հովհաննես 1.18), ***հաշտեցրել է*** ստեղծագործությանն Իր հետ (Բ Կորնթացիների 5.19), ***ղեկավարում է*** ստեղծագործությանը (Փիլիպեցիների 2.9-11) և մեկ օր ***դատելու է*** ստեղծագործությանը (Հովհաննես 5.22):

բ. *Ամեն բան ստեղծվեց Նրա Հ_____:* Մենք չենք հակասի Աստվածաշնչին, եթե ասենք, որ ամեն ինչ ստեղծվեց և՛ Հոր, և՛ Որդու փառքի և հաճության համար: Համաձայն Աստվածաշնչի՝ Հայրը սիրում է Որդուն և տվել է ամեն բան Նրան (Հովհաննես 3.35), և Հոր կամքն է, որ բոլորը պատվեն Որդուն, ինչպես որ պատվում են Իրեն (Հովհաննես 5.23): Այդ իսկ պատճառով, այն ամենը, ինչ գրված է Հռոմեացիների 11.36-ում արարչագործության նպատակի մասին, կարելի է վերագրել նաև Որդուն: Ամբողջ արարչագործությունը՝ բոլոր տիրույթներում, ունի մեկ մեծագույն և վերջնական նպատակ, որը Աստծո փառքն է:

Գլուխ 34. Մեր արձագանքն Արարիչ Աստծուն

ԵՐԿՅՈՒՂԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒԹՅՈՒՆ

Մեր առաջին արձագանքն Արարիչ Աստծուն՝ պետք է լինի երկյուղածությունը և խոնարհությունը: Մենք երկյուղ ենք տածում Աստծո հանդեպ այն աստիճան, որ ընդունում ենք Նրա բարձրագույն դիրքը՝ որպես ամեն ինչի Արարիչ և Տեր, և վերաբերվում ենք Նրան մեծագույն հարգանքով և երկյուղածությամբ: Մենք խոնարհվում ենք այն աստիճան, որ գիտակցում ենք մեր դիրքը Նրա առջև. մենք Նրա ձեռքի գործը և Նրա սեփականությունն ենք՝ ստեղծված Նրա փառքի և հաճության համար: Երբ մարդիկ իրականում հասկանան ստեղծագործության և Արարչի հարաբերությունները, նրանք երեսնիվայր կընկնեն Աստծո առջև՝ երկյուղածությամբ, դողալով և իրականում զգալով իրենց բացարձակ կախումն իրենց Ստեղծողից:

1. Մարդկության առաջին արձագանքն Աստծո զարմանալի զորությանը և մեծությանը՝ պետք է լինի երկյուղածությունը և վախը: Կարդացե՛ք Սաղմոս 33.6-9-ը: Համաձայն խոսք 8-ի՝ ինչպե՞ս երկրի բնակիչները պետք է արձագանքեն Աստծո անսահման զորությանը և իմաստությանը, որը հայտնվել է արարչագործության միջոցով:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Վախ» բառը թարգմանված է եբրայերեն *«յարե»* բառից: Աստծո հանդեպ հարգանքի հետ մեկտեղ, այն նշանակում է՝ ունենալ մեծագույն երկյուղածությունը Նրա Անձից, Նրա գործերից և Նրա կարողությունից: «Սարսափ» բառը թարգմանված է եբրայերեն «*գուր*» բառից, որը նույնպես նշանակում է «վախ» կամ «ահ»: Աստծուց չպետք է վախենալ այն պատճառով, որ Նրա Անձի կամ գործերի մեջ անհամապատասխանություն կամ անբարոյություն կա: Փոխարենը՝ մեր երկյուղածության պատճառը Աստծո անփոփոխ ուղղությունն է, այսինքն՝ Նրա արդարությունը, սրբությունը, մեծությունը և զորությունը:

2. Վախը և երկյուղածությունն անբաժան են խոնարհությունից: Եթե մենք իսկապես ինչ-որ բան հասկացել ենք Աստծո անսահման կատարելությունների և զորության մասին, կխոնարհվենք Նրա առջև: Կարդացե՛ք Սաղմոս 8.1-4-ը: Համաձայն խոսք 4-ի՝ ինչպե՞ս են սաղմոսերգուի մտորումներն Աստծո

ստեղծագործության մասին խոնարհություն առաջացնում նրանում: Ինչպե՞ս այս վերաբերմունքը պետք է արտացոլվի ամեն մարդու կյանքում:

_____

_____

_____

_____

ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Ինչպե՞ս ստեղծվածը կարող է չերկրպագել իր Ստեղծողին և Պահապանին: Ստեղծվածի պարտքը Նրա հանդեպ անկարելի է չափել: Մի՞թե ինչ-որ բան գոյություն կունենար, եթե Նա չխոսեր: Մի՞թե ամեն ինչ քաոսի չէր վերածվի և չէր կործանվի, եթե Նա չպահպաներ դրանք: Կարո՞ղ էին արդյոք համաստեղությունները և մոլորակները շարժվել իրենց ուղեծրով՝ առանց Նրա: Չէ՞ որ ծովերը դուրս կգային իրենց սահմաններից և կկլանեին ցամաքը, եթե Նրա ձեռքը ետ չպահեր դրանք: Կարո՞ղ էր մարդը թեկուզ մեկ անգամ ավելի շնչել, եթե Աստված շունչ չտար նրան: Այդ դեպքում, ինչպե՞ս մենք կարող ենք չերկրպագել: Սխալ չէր լինի ասել, որ ստեղծագործության և հատկապես մարդու գլխավոր նպատակը՝ երկրպագելն է այն Աստծուն, Ով ստեղծեց մեզ և Ում զորությամբ և հավատարմությամբ մենք պահպանվում ենք: Աստծուն երկրպագելը՝ մեր մեծագույն արտոնությունը և պատասխանատվությունն է: Երբ իսկապես սկսում ենք երկրպագել Նրան, մենք ի վերջո կատարում ենք այն նպատակը, որի համար ստեղծվել ենք:

1. Համաձայն Հայտնություն 4.11-ի՝ ինչո՞ւ է Աստված արժանի փառքի:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Արժանի» ածականը թարգմանված է հունարեն «***ա՛քսիոս***» բառից, որը նշանակում է՝ կշիռ և մեծ արժեք ունեցող որևէ անձ կամ որևէ բան: Աստված արժանի է ստանալու ամբողջ փառաբանությունը, գոհությունը և ծառայությունը:

2. Սաղմոս 148.1-13-ը կոչ է անում բոլոր արարածներին՝ երկրպագություն, պատիվ ու փառք տալու այն Աստծուն, Ով ստեղծել է իրենց: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո կատարե՛ք հետևյալ վարժությունները:

ա. *Մատնանշե՛ք այն տեսակի ստեղծվածներին և արարչագործության այն տիրույթները, որոնք կանչված են երկրպագություն տալու Աստծուն:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս վարժության նպատակն է՝ ցույց տալ, որ պարզապես չկա բավականաչափ ժամանակ և տարածք՝ թվարկելու բոլոր ստեղծվածներին, որոնք պետք է փառաբանեն Աստծուն: Եթե նույնիսկ գազանները և սողունները պետք է փառաբանեն Նրան, որքա՞ն ավելի մարդը, ով ստացել է շնորհք, դիրք և արտոնություն՝ բոլոր ստեղծվածներից ավելի:

բ. *Համաձայն խոսքեր 5,6-ի՝ ինչո՞ւ է ստեղծագործությունը կանչված փառք տալու Աստծուն:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Համաձայն խոսք 6-ի՝ Աստված հաստատեց Իր արարչագործության բնական կարգը, և այն որոշված է Իր գերիշխան հրամանով: Ոչինչ տեղի չի ունենա՝ բացի այն ամենից, ինչը Նա սահմանել է Իր իշխանությամբ: Ոչ մի աղետ չի գա այս աշխարհի վրա՝ բացի այն բաներից, որոնք Աստված հրամայել է:

գ. *Համաձայն խոսք 13-ի՝ ինչո՞ւ է արարչագործությունը կանչված Աստծուն փառք տալու:*

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո արարչագործության փառքն աննկարագրելի է. այնուամենայնիվ, չարժե նույնիսկ փորձել այն համեմատել Աստծո Անձի անսահման փառքի հետ: Նա պետք է փառք ստանա ոչ միայն Իր գործերի, այլև՝ Իր Անձի համար:

3. Մենք կամփոփենք մեր ուսուցումն Արարիչ և Պահապան Աստծո մասին երկու պատվերներով, որոնք վերաբերում են բոլոր տիրույթներում բնակվող բոլոր ստեղծվածներին: Որո՞նք են այս պատվերները: Ինչպե՞ս մենք պետք է ապրենք այս պատվերների լույսի ներքո:

ա. *Սաղմոս 103.22*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Օրհնել» բառը այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***բարակ***» բառից, որը հաճախ է օգտագործվում Աստվածաշնչում և նշանակում է ուրախ, բուռն փառաբանության և գոհության բացականչություն՝ ուղղված Աստծուն:

բ. *Սաղմոս 150.6*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Օրհնել» բառը այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***հալալ***» բառից, որը նշանակում է «փառաբանություն»: «Տեր» տիտղոսը թարգմանված է եբրայերեն «***յհվհ***» կամ «***յահ***» բառից, որը տառադարձվում է որպես «Յահվեհ»: «Ալելուիա» բառը կազմվում է հենց այս երկու բառերից: Եբրայերենում կրկնությունը (ինչպես, օրինակ, այս Սաղմոսում) անչափ կարևոր է. դրա նպատակն է՝ շեշտադրել կամ արտահայտչական դարձնել կրկնվող բառը կամ հատվածը:

Գլուխ 35. Աստված Տեր է և գերագույն իշխանություն ունի ամեն ինչի վրա

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված ոչ միայն տիեզերքի Արարիչը և Պահապանն է, այլև դրա գերիշխան Տերը և Թագավորը: Նա իշխում է բոլոր արարածների, գործողությունների, երևույթների և առարկաների վրա՝ ամենամեծից մինչև ամենափոքրը, Իր կատարյալ իմաստությամբ, անսահման զորությամբ և բացարձակ արդարությամբ: Համաձայն Իր կամքի՝ Նա ազատ է անելու ամեն ինչ Իր փառքի և հաճության համար: Ոչ մի ուժ երկնքում կամ երկրի վրա չի կարող չեղյալ դարձնել այն, ինչ Նա որոշել է:

ԱՍՏԾՈ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև Նրա գերիշխանության մասին մանրամասնորեն խոսելը, մենք նախ՝ պետք է անդրադառնանք մի վարդապետության, առանց որի անկարելի է ճիշտ պատկերացում կազմել Աստծո մասին. Նրա գերազանցությունը: «Գերազանց» բառը նշանակում է բարձրագույնը՝ կարողություններով, դիրքով կամ իշխանությամբ: ***Աստծո գերազանցությունը*** նշանակում է, որ Նրա դիրքը վեր է ամբողջ արարչագործությունից:

Աստված գերազանց է. այս ճշմարտությունից կարելի է բազմաթիվ կարևոր հետևություններ անել: Ինչ վերաբերում է ***Աստծո Անձին***, Նա անսահմանորեն ավելի գերազանց է, քան Իր ստեղծածներից որևէ մեկը, և անսահմանորեն ավելի մեծ արժեք ունի, քան ամբողջ Իր արարչագործությունը միասին: Ինչ վերաբերում է ***Աստծո դիրքին***, Նա վեր է ամբողջ ստեղծագործությունից և չունի Իրեն հավասարը: Ինչ վերաբերում է ***Աստծո նպատակին***, Նա ամեն բանի կենտրոնում է և ամեն ինչ տանում է դեպի վերջնական մեծ նպատակը՝ Իր փառքը:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ է վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում, և ի՞նչ են դրանք հայտնում մեզ Նրա գերազանցության մասին, նաև՝ Իր ստեղծագործության, հատկապես՝ մարդու հետ ունեցած հարաբերությունների մասին:

   ա. *Սաղմոս 97.9*

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բարձրյալ» բառը թարգմանված է եբրայերեն «***Յահվեհ-Էլիոն***» արտահայտությունից, որը փոխանցում է Յահվեհի գերիշխան, բարձր և մեծարված լինելը (նույնպես կարդացե՛ք Սաղմոս 7.17 և 47.2): Այս հատվածը չի սովորեցնում, որ կա մեկից ավելի ճշմարիտ Աստված: Սաղմոսերգուի ժամանակ (ինչպես և այսօր) ազգերը պաշտում էին բազմաթիվ կեղծ աստվածների՝ կուռքերի: Պողոս առաքյալը պնդում է, որ այս «աստվածները» ընդամենը դևեր են,

և դրանց զոհեր մատուցողներն իրականում զոհում են դևերի համար (Ա Կորնթացիների 10.20, կարդացե՛ք նաև Ղևտացիների 17.7, Երկրորդ Օրինաց 32.17 և Սաղմոս 106.37)։ Սաղմոս 97.9-ը պարզապես ցույց է տալիս, որ Աստված վեր է ամեն ինչից և իշխանություն ունի ամեն ինչի վրա՝ ներառյալ մարդկանց սուտ կուռքերի և այն դիվային ուժերի, որոնք կանգնած են դրանց ետևում։

բ. *Եսայի 57.15*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բարձրը և Բարձրյալը» և «Որի անունը Սուրբ է» արտահայտությունները հայտնում են միևնույն ճշմարտությունն Աստծո մասին։ «Սուրբ» բառը եբրայերենում «***կադոշ***» բառն է, որը նշանակում է «առանձնացված, սահմանագծված, առանձին դրված կամ հեռացված սովորական գործածությունից»։ Աստծո վերաբերյալ այս բառը երկու կարևոր իմաստ ունի. (1) Աստված վեր է Իր ստեղծագործությունից, և (2) Աստված վեր է Իր ստեղծագործության ապականությունից։

2. Մենք ուսումնասիրեցինք այն անունները, որոնք նկարագրում են Աստծո գերազանցությունը։ Այժմ կանդրադառնանք Աստվածաշնչում եղող ամենագեղեցիկ հռչակումներին Աստծո գերազանցության մասին։ Ծանոթացե՛ք Ա Մնացորդաց 29.11-ի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին։

ա. *Որո՞նք են Աստծուն վերագրվող վեց հատկանիշներն այս խոսքում։*

(1) Մ_____։ Եբրայերեն «***գեդոլահ***» բառից։ Աստծո մեծությունը՝ հավիտենական և անփոփոխ հատկանիշ է, ոչ թե տիտղոս, որը Նա վաստակել է։ Նա միշտ եղել է և միշտ կլինի անսահմանորեն ավելի մեծ, քան այն ամենը, ինչի հետ Նրան կարելի է համեմատել։

(2) Զ_____։ Եբրայերեն «***գեվուրահ***» բառից, որը նույնպես նշանակում է ուժ և կարողություն։ Ոչ ոք չի կարող մրցել Աստծո հետ իր զորությամբ։ Եթե արարչագործության բոլոր ուժերն ի մի գային և մեկ բանակ կազմեին՝ Աստծո գահի դեմ դուրս գալու համար, նրանք նույնքան չնչին և անվնաս կլինեին, որքան ամենաբարձր լեռան դեմ դուրս եկած մոծակը։

(3) Փ_____։ Եբրայերեն «***տիֆարահ***» բառից, որը նույնպես նշանակում է գեղեցկություն։ Այն հաճախ օգտագործվում է՝ նկարագրելու համար հագուստի շքեղությունը կամ զարդերի փայլը։ Ամենաապշեցուցիչ գեղեցկությունը ամբողջ արարչագործության մեջ՝ խավար ստվեր է Նրա համեմատ, Ով ստեղծել է այն։

(4) Հ_____: Եբրայերեն «***նեցախ***» բառից, որը կարող է տարբեր իմաստներ ունենալ՝ կախված համատեքստից: Երբեմն այն կարող է նշանակել «հաղթանակ կամ ուժ», բայց այլ դեպքերում՝ «մշտնջենավոր կամ տևական»:

(5) Պ_____: Եբրայերեն «***հոդ***» բառից, որը նույնպես կարող է նշանակել շքեղություն, պատիվ, գեղեցկություն կամ ավյուն:

(6) Թ_____: Եբրայերեն «***մամլախահ***» բառից, որը ենթադրում է թագավորության, գերիշխանության, թագավորելու և իշխելու գաղափար: Հեթանոս թագավոր Նաբուգոդոնոսորը հայտարարեց Աստծո մասին, որ Նրա «իշխանությունը հավիտենական իշխանություն է, և Նրա թագավորությունը՝ դարեցդար: Եվ երկրի բոլոր բնակիչները ոչնչի պես են համարվում, և Նա Իր ուզածի պես է անում երկնքի զորքով և երկրի բնակիչներով, և մեկը չկա, որ զարկի Նրա ձեռքին և Նրան ասի. «Ինչ ես անում»» (Դանիել 4.34,35):

բ. *Բացատրե՛ք ձեր բառերով, թե ինչպես են այս վեց հատկանիշները ցույց տալիս Աստծո գերիշխանությունն ամեն ինչի վերաբերյալ:*

_____

_____

_____

_____

_____

_____

գ. *Հռչակելով Աստծո մեծությունը և գերազանցությունն ամեն ինչից՝ Ա Մնացորդաց 29.11-ն ամփոփում է իր ասելիքը Աստծո մասին մի շատ կարևոր արտահայտությամբ. «...և Դու բարձրացնում ես Քեզ՝ որպես գլուխ ամեն ինչի վրա» (NASB): Ինչ է Աստված անում Իր համար: Ինչ է այս խոսքը հայտնում մեզ Աստծո բացարձակ գերազանցության մասին:*

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ինչո՞ւ է ճիշտ, որ Աստված բարձրանա ամենից վեր՝ որպես գերիշխան: Այս հարցն ունի երկու պատասխան: Առաջինը՝ Աստված ամենից արժանի Էակն է, Ով կարող է զբաղեցնել բարձրագույն դիրքը և լինել վեր Իր արարչագործությունից: Եթե Նա ուրանա Իր «առաջին տեղը», որը վեր է մեզնից, Նա պետք է ուրանա, որ Ինքն Աստված է: Երկրորդը՝ մեծագույն բարիքը, որն Աստված կարող է անել մեզ, և մեծագույն բարությունը, որը Նա կարող է ցուցաբերել մեր հանդեպ, Իրեն ամենից վեր բարձրացնելն է՝ որպես գերիշխան: Ինչ-որ մեկը պետք է իշխի արարչագործության վրա: Մեր օգտին է, որ ամենասուրբ, արդար, սիրող և զորավոր Էակն զբաղեցնի Իր իշխանական դիրքը, ոչ թե հանձնի այն ավելի ցածր էակի:

3. Մենք կամփոփենք մեր ուսուցումն Աստծո գերազանցության մասին՝ դիտարկելով մի շատ կարևոր հատված Սաղմոսների գրքից: Ի՞նչ է Սաղմոս 113.4-6-ը սովորեցնում մեզ այն մասին, որ Աստված բացարձակ գերազանց է ամբողջ արարչագործությունից:

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խոսք 6-ում գրված է. «[Ո՞վ է...] որ խոնարհվում է՝ տեսնելու երկնքում ու երկրում եղածները»: Սա ամենափառահեղ խոսքերից մեկն է ամբողջ Աստվածաշնչում: Այս խոսքը նշանակում է, որ Աստված այնքա՜ն փառավոր է, այնքա՜ն գերազանց և այնքա՜ն գեղեցիկ, որ պետք է ցած իջնի (այսինքն՝ խոնարհվի), որ հեռացնի Իր հայացքն Իր գեղեցկությունից, և նայի ցանկացած այլ ստեղծվածի, երևույթի կամ առարկայի: Երկնքի և երկրի ամբողջ գեղեցկությունը միասին ոչինչ է՝ Աստծո փառքի համեմատ:

Գլուխ 36. Աստծո գերիշխանության տիտղոսները

Աստվածաշնչում անունը կարող է մեծ նշանակություն ունենալ և շատ կարևոր ճշմարտություններ փոխանցել իրեն կրողի մասին: Աստվածաշնչում կան բազմաթիվ անուններ և տիտղոսներ, որոնք կարևոր ճշմարտություններ են հայտնում մեզ Աստծո հատկանիշների և գործերի մասին: Ուսումնասիրելով այս անունները՝ կարող ենք ավելի լավ և ավելի խորապես ճանաչել Նրան: Մենք կդիտարկենք ամենակարևոր անունները և տիտղոսները, որոնք ցույց են տալիս Աստծո բացարձակ գերիշխանությունը ամբողջ ստեղծագործության վրա:

ՏԵՐ

Աստվածաշնչյան տիտղոսը, որն ամենից հաճախ է օգտագործվում Աստվածաշնչում՝ Տիրոջ գերիշխանությունը ցույց տալու համար, «***Տեր***» բառն է: Այն նշանակում է «ինչ-որ մեկի վրա տիրապետող կամ իշխանություն ունեցող»: Աստծուն վերագրվելու դեպքում, այս տիտղոսը նշանակում է Նրա բացարձակ գերիշխանությունը ամբողջ ստեղծագործության վրա: Կարևոր է հասկանալ, որ «Տեր» տիտղոսը ոչ միայն հայտնում է ճշմարտությունն Աստծո մասին, այլև սահմանում է մարդու հարաբերությունները Նրա հետ: Եթե Աստված Տեր է, ուրեմն մարդը Նրա հպատակն է:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ կամ տիտղոսներ են վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում:

   ա. *Ամեն Ե_____ Տ_____ (Սաղմոս 97.5):* «Տեր» տիտղոսն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***ադոնայ***» բառից, որն «***ադոն***» բառի հոգնակին է: Այս բառն ունի և՛ իշխանության, և՛ սեփականատիրության իմաստ: Աստվածաշնչում հոգնակի ձևը մշտապես օգտագործվում է՝ երբ խոսքն Աստծո մասին է՝ իմաստային շեշտադրման համար: Աստված ամեն ինչի բացարձակ Տերն է՝ առանց բացառության:

   բ. *Ե_____ Տ_____ (Դանիել 5.23):* Աստծո տիրապետությունը կամ գերիշխանությունը չի սահմանափակվում այս երկրով: Այն տարածվում է մինչև տիեզերքի հեռավոր սահմանները և ընդգրկում է ամբողջ արարչագործությունը՝ թե՛ նյութական, թե՛ հոգևոր:

   գ. *Ե_____ և Ե_____ Տ_____ (Գործք 17.24):* «Տեր» տիտղոսն այս խոսքում թարգմանված է հունարեն «***կյո՛ւրիոս***» բառից, որը կարող է նշանակել բարձր դիրք և իշխանություն ունեցող մարդ կամ գերբնական էակ (այսինքն՝ աստված): Այս բառն օգտագործվում է Յոթանասունից թարգմանության մեջ (եբրայերեն Հին կտակարանի հունարեն թարգմանությունը) եբրայերեն «***Յահվեհ***» անվան փոխարեն, ինչպես նաև՝ Նոր կտակարանում՝ փոխանցելու համար հրեական գաղափարը Տեր Աստծո մասին: Ուշագրավ է, որ «***կյո՛ւրիոս***» բառն օգտագործվում է առանց որևէ վերապահման, երբ խոսքը Հիսուսի մասին է:

   դ. *Տերերի Տ_____ (Երկրորդ Օրինաց 10.17, Սաղմոս 136.3, Ա Տիմոթեոս 6.15, Հայտնություն 17.14, 19.16):* Վերևում բերված հինկտակարանյան խոսքերում «Տեր» տիտղոսը թարգմանված է եբրայերեն «***ադոնայ***» բառից, իսկ նորկտակարանյան հատվածներում՝ հունարեն «***կյո՛ւրիոս***» բառից:

Ինչպիսի տերեր էլ լինեն երկնքում կամ երկրի վրա՝ տեսանելի, թե անտեսանելի, թե՛ իշխանություններ, թե՛ պետություններ, թե՛ զորություններ, թե՛ տերություններ, Աստված Տերն է բոլորի:

ե. *Թ_____ Տերը (Դանիել 2.47):* Մենք կարող ենք պարզապես կրկնել նախորդ մեկնությունը. ինչպիսի թագավորներ կամ տերեր էլ լինեն արարչագործության ցանկացած տիրույթում, մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված տիրում է նրանց վրա բացարձակ և անսասան իշխանությամբ և զորությամբ:

2. Վերևում (Հարց 1-ում) բերված ճշմարտությունների հիման վրա գրե՛ք հակիրճ բացատրություն այն մասին, թե ինչ է նշանակում Աստծո իշխանությունը բոլոր մարդկանց համար, հատկապես՝ հավատացյալների: Արժե դիտարկել ևս երկու խոսք՝ Մաղաքիա 1.6-ը և Ղուկաս 6.46-ը:

_____

_____

_____

_____

_____

_____

ԹԱԳԱՎՈՐ

«***Տեր***» տիտղոսին մոտ է «***Թագավոր***» տիտղոսը: Հավանաբար, մեր լեզվում չկա ավելի ազդեցիկ բառ, որը կփոխանցի գերագույն, լիիրավ կամ արքայական իշխանության, ազնվականության և մեծության գաղափարը: Աստվածաշնչում Աստված մեծ Թագավոր է ամբողջ ստեղծագործության վրա, Ով իշխում է անգերազանցելի փառքով: Նրա գահը Երկնքում է, երկիրը՝ Նրա ոտքերի պատվանդանն է, և Նրա թագավորությունը մնում է հավիտյան:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ են վերագրվում Աստծուն հետևյալ հինկտակարանյան հատվածներում:

ա. *Մ_____ Թագավոր ամբողջ Ե_____ վրա (Սաղմոս 47.2,7, Մաղաքիա 1.14):* Նա այն մեծ թագավորներից չէ, որոնք իշխում են աշխարհի ***որևէ մասում***: Նա մեծ Թագավորն է, Ով իշխում է ***ամբողջ*** երկրի վրա՝ առանց իշխանության և լիազորությունների սահմանափակման:

բ. *Ե_____ Թագավոր (Դանիել 4.37):* Նույնիսկ հեթանոս Նաբուգոդոնոսոր թագավորը ճանաչեց, որ Աստծո թագավորությունը չի սահմանափակվում այս երկրով, այլ տարածվում է մինչև տիեզերքի հեռավոր սահմանները և ընդգրկում է ամբողջ արարչագործությունը՝ թե՛ նյութական, թե՛ հոգևոր:

գ. *Մ_____ Թագավոր ամեն Ա_____ վրա (Սաղմոս 95.1-3):* Այս հատվածը չի սովորեցնում, որ կա մեկից ավելի ճշմարիտ Աստված: Պողոս առաքյալը պնդում է, որ այս «աստվածները» ընդամենը դևեր են, և դրանց զոհեր մատուցողներն իրականում զոհում են դևերի համար (Ա Կորնթացիների 10.20, կարդացե՛ք նաև Ղևտացիների 17.7, Երկրորդ Օրինաց 32.17 և Սաղմոս 106.37): Սաղմոս 97.9-ը

պարզապես ցույց է տալիս, որ Աստված վեր է ամեն ինչից և իշխանություն ունի ամեն ինչի վրա, ներառյալ՝ մարդկանց սուտ կուռքերի և այն դիվային ուժերի, որոնք կանգնած են դրանց ետևում:

2. Ի՞նչ անուններ կամ տիտղոսներ են վերագրվում Աստծուն հետևյալ նորկտակարանյան հատվածներում:

ա. *Ա_____ Թագավոր (Հայտնություն 15.3,4):* Մարդկության պատմության ամբողջ ընթացքում բարձրացել են ազգեր, որոնք իշխել են այլ ազգերի վրա բացարձակ և անվիճարկելի գերիշխանությամբ (Բաբելոնը, Հռոմը և այլն): Այնուամենայնիվ, Աստված թագավոր է բոլոր ազգերի վրա, և Նա տիրում է նրանց բացարձակ իշխանությամբ: Եսայի մարգարեն հայտարարեց, որ Աստծո համեմատ «ազգերը դույլին կպած կաթիլի պես են և կշեռքի փոշուն հավասար են համարվում» (Եսայի 40.15):

բ. *Թ_____ Թ_____(Ա Տիմոթեոս 6.15,16, Հայտնություն 17.14, 19.16):* Որպես քրիստոնյաներ՝ մենք պետք է պատվենք այս երկրի թագավորներին և բոլոր իշխանավորներին և աղոթենք նրանց համար (Հռոմեացիների 13.1, Ա Տիմոթեոս 2.1,2): Այնուամենայնիվ, ինչ-որ իմաստով, այս աշխարհն ունի միայն մեկ ճշմարիտ Թագավոր, և մենք պետք է հավատարիմ լինենք Նրան: Այս խոսքերում գրված ճշմարտությունը պետք է դրդի իշխանավորներին խոնարհվել Աստծո առջև և հնազանդվել Նրա կամքին:

գ. *Հ_____ Թագավոր, Ա_____ (կամ՝ Անմահ) և Ա_____, մեկ (կամ՝ միակ) Աստված (Ա Տիմոթեոս 1.17):* Այս խոսքում մեր Աստված և Թագավորը նկարագրվում է երեք ածականներով, որոնք ցույց են տալիս Նրա գերիշխանությունը կամ գերազանցությունը բոլոր «թագավորների» վրա: (1) Հավիտենական. այս բառը թարգմանված է հունարեն «***տոն այոնոն***» («դարերի») արտահայտությունից: Գաղափարն այն է, որ Աստված՝ բոլոր ժամանակաշրջանների Թագավորն է: Որքան էլ ետ կամ առաջ գնանք պատմության մեջ, մենք կտեսնենք, որ Աստված՝ Թագավոր է: (2) Անեղծ կամ անմահ. այս բառը թարգմանված է հունարեն «***ակիթարտոս***» բառից, որը նույնպես նշանակում է «անկործան, անփուտ և անապական»: Նույնիսկ ամենամեծերը երկրի թագավորներից մահանում են՝ հող դառնալով: Մահանալու պահին նրանց իշխանությունն ավարտվում է, նրանց մարմինները փտում են, և նրանք դառնում են ավելի տկար, քան աղքատության մեջ ծնված նորածինը: Այնուամենայնիվ, Աստված անմահ է: Նրա պահպանությունը երբեք չի ավարտվի, Նրան չեն հեռացնի պաշտոնից՝ քվեարկության միջոցով, և Նա երբեք չի մահանա՝ զիջելով Իր դիրքը որևէ փոխարինողի: Նա մշտապես լինելու է այն Թագավորը, Ում մենք հաշվետու ենք: (3) Աներևույթ (կամ՝ անտեսանելի). այս բառը թարգմանված է հունարեն «***առորատոս***» բառից, որը ցույց է տալիս, որ Աստված Հոգի է, և այդ պատճառով ենթակա չէ որևէ նյութական սահմանափակման, կամ՝ ցանկացած խոչընդոտի, որը կարող են ստեղծել նույնիսկ այս երկրի ամենաազդեցիկ կառավարիչները:

3. Վերևում (Հարց 1 և 2) բերված ճշմարտությունների հիման վրա, գրե՛ք հակիրճ բացատրություն այն մասին, որ Աստված Թագավոր է, և թե ինչ է դա նշանակում մարդկանց համար, հատկապես՝ հավատացյալների:

_____

_____

_____

_____

_____

ՀԶՈՐ, ՏԻՐԱԿԱԼ ԵՎ ԻՇԽԱՆ

Այս երեք աստվածային տիտղոսները՝ ***Հզոր, Տիրակալ*** և ***Իշխան***, պարզորեն հայտնում են Աստծո բացարձակ իշխանությունն Իր ստեղծագործության վրա: «Հզոր» տիտղոսը լատիներենում ***«սուպեր»*** նախածանցն է, որը նշանակում է «վեր» կամ «վերևում», և ցույց է տալիս այնպիսի մարդու, ով իշխանությամբ ղեկավարում է մարդկանց: «Տիրակալ» տիտղոսը լատիներենում ***«ռեգերե»*** բառն է, որը նշանակում է «ուղիղ առաջնորդել կամ ճանապարհ ցույց տալ», և նկարագրում է այնպիսի մարդու, ով իշխանությամբ չափանիշներ է սահմանում և ուղիներ է որոշում մարդկանց համար: «Իշխան» տիտղոսը լատիներենում ***«մագնուս»*** բառն է, որը նշանակում է «մեծ» և ցույց է տալիս այնպիսի մարդու, ով ունի վերահսկողություն ինչ-որ բանի հանդեպ և տիրապետում է ինչ-որ բնագավառի, օրինակ՝ ուսուցչի, ով տիրապետում է որոշակի ուսումնական բնագավառի, սեփականատիրոջ, ով վերահսկում է իր ունեցվածքը, կամ իշխանի, ով իշխում է իր ենթակաների վրա: Հետևյալ աստվածաշնչյան հատվածներում կտեսնենք, որ Աստված՝ արարչագործության միակ ճշմարիտ Հզորն է, Տիրակալը և Իշխանը:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ են վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում: Ի՞նչ են դրանք սովորեցնում մեզ Նրա գերիշխանության մասին:

   ա. *Ե_____ և միակ Հ_____ (Ա Տիմոթեոս 6.15,16):* «Հզոր» բառը թարգմանված է հունարեն «***դունա՛ստես***» բառից, որը նշանակում է «իշխան» կամ «միապետ»: Այն նույն հիմնական բայից է, որից կազմված է «***դո՛ւնամիս***» բառը, որը նշանակում է «զորություն» կամ «կարողություն»: Այս բառը հաճախ էր օգտագործվում «լիազորված իշխանություն ունեցող մարդ» իմաստով, բայց սա չի վերաբերում Աստծուն: Նա իշխում է Իր իսկ իրավունքով և իշխանությամբ: «Երանելի» բառը թարգմանված է հունարեն «***մակա՛ռիոս***» բառից, որը նշանակում է, որ Աստված գոյություն ունի կատարյալ և անդադար երանության, ուրախության և բավականության մեջ:

   բ. *Բարձրյալն է Տ_____ մարդկանց Թ_____ վրա (Դանիել 4.17):* «Տիրել» բառը թարգմանված է արամեերեն «***շալլիթ***» բառից, որը նշանակում է «տիրապետություն, իշխանություն կամ գերիշխանություն ունեցող»: «Թագավորություն» բառը թարգմանված է արամեերեն «***մալկու***» բառից, որը նշանակում է «թագավորություն» կամ «տիրույթ»: Աստված պարզապես չի տիրում առանձին մարդկանց կամ թագավորությունների վրա. Նրա տիրապետությունը տարածվում է ամբողջ մարդկության վրա, և Նա ամեն ինչ ուղղորդում է դեպի Իր ցանկալի նպատակը:

   գ. *Մեր միակ Ի_____ և Տեր (Հուդա 4, նաև՝ Բ Տիմոթեոս 2.21, NASB և Բ Պետրոս 2.1, NASB):* «Իշխան» բառը թարգմանված է հունարեն «***դեսպոտե՛ս***» բառից, որն ունի սեփականության և բացարձակ իշխանության իմաստ: Անցյալում «***դեսպոտե՛ս***» էին անվանում տան տիրոջը, ով ղեկավարում էր իր տնտեսությունը բացարձակ իշխանությամբ: Ժամանակի ընթացքում այս բառը ձեռք բերեց նոր իմաստ՝ «անսահմանափակ և նույնիսկ բռնատիրական քաղաքական իշխանություն ունեցող մարդ», այսինքն՝ բռնակալ: Մեր օրերում այս բառը հաճախ օգտագործվում է բացասական իմաստով՝ այն պարզ պատճառով, որ բացարձակ իշխանությունը բացարձակապես ապականում է մարդկանց[1]: Այնուամենայնիվ, երբ Յոթանասունից թարգմանության մեջ և Նոր կտակարանում այս բառը վերագրվում է Աստծուն, այն չունի որևէ բացասական իմաստ, քանի որ Նա անապական է: Աստված

1 Անգլիացի պատմաբան Ջոն Դալբերգ-Էկտոնի «Իշխանությունն ապականում է, իսկ բացարձակ իշխանությունը բացարձակապես է ապականում» մեջբերումից:

Իր ստեղծած ամեն ինչի լիիրավ Իշխանն ու Տերն է: Նրա սրբությունը և արդարությունը երաշխավորում են, որ Նա մշտապես կգործադրի Իր բացարձակ իշխանությունը կատարյալ արդարությամբ: Նոր կտակարանում «***դեսպոտե՛ս***» բառը վերագրվում է Աստծուն վեց անգամ (Ղուկաս 2.29, Գործք 4.24, Բ Տիմոթեոս 2.21, Բ Պետրոս 2.1, Հուդա 4 և Հայտնություն 6.10): Երկրորդ Պետրոս 2.1-ում և Հուդա 4-ում այն հատկապես վերագրվում է Հիսուս Քրիստոսին:

2. Վերևում (Հարց 1) բերված ճշմարտությունների հիման վրա գրե՛ք հակիրճ բացատրություն այն մասին, որ Աստված՝ հզոր Տիրակալ և Իշխան է, և թե ինչ է դա նշանակում մարդկանց համար, հատկապես՝ հավատացյալների:

_____

_____

_____

_____

_____

Գլուխ 37. Աստծո անսահման գերիշխանությունը

Հաճախ մարդիկ հարցնում են. «Աստծո իշխանությունն ունի՞ սահմաններ: Կա՞ արդյոք որևէ ստեղծված բան կամ որևէ գործընթաց, որը չի գտնվում Նրա տիրապետության ներքո: Աստվածաշունչը պարզորեն պատասխանում է. ամեն կենդանի էակ, ամեն ստեղծված բան և պատմության ընթացքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները Աստծո գերիշխան կառավարման ներքո են: Քանի որ Աստված՝ Արարիչ և Պահապան է, Նա ունի բոլոր տիրույթները և բոլոր ստեղծվածներին կառավարելու բացառիկ և անվիճարկելի իրավունք՝ ըստ Իր կամքի և հաճության: Նա անում է այն ամենը, ինչ ցանկանում է, և չկա ոչ մի ուժ երկնքում, երկրի վրա կամ դժոխքում, որը կարող է փոփոխել կամ արգելել այն, ինչ Նա որոշել է:

1. Հետևյալ հատվածներում գրված են Աստվածաշնչում եղող ամենակարևոր հայտարարություններից մի քանիսը Աստծո բացարձակ գերիշխանության մասին: Ուշադրությա՛մբ կարդացեք այս հատվածներից ամեն մեկը և գտե՛ք այն ճշմարտությունները, որոնք գրված են դրանցում: Ի՞նչ են դրանք սովորեցնում մեզ Աստծո անսահման գերիշխանության մասին:

ա. *Սաղմոս 33.11*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հղումն Աստծո «սրտին» համարվում է ***անտրոպոմորֆիկ*** («***անտրո՛պոս***» = մարդ + «***մորֆե՛***» = ձև) արտահայտություն: Այլ կերպ ասած՝ Աստված պարզապես Իրեն է վերագրում մարդկային հատկանիշներ, որպեսզի փոխանցի որոշակի ճշմարտություններ Իր մասին այն կերպով, որ մարդիկ կարողանան հասկանալ: Աստծո սրտի ծրագրերը՝ Նրա հաստատ և անփոփոխ հրամաններն են:

բ. *Սաղմոս 103.19*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաստատել» բառը թարգմանված է եբրայերեն «***կուն***» բառից, որը նշանակում է «ամուր, ապահով կամ հաստատուն դարձնել»: Աստծո գահը և Նրա գերագույն հրամաններն անշարժ և անպարտելի են:

գ. *Սաղմոս 115.3*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կամենալ» բառը թարգմանված է եբրայերեն «***շաֆեց***» բառից, որը նշանակում է «բերկրանք կամ հաճություն ստանալ ինչ-որ բանից»: Աստվածաբանները հետևյալ կերպով են նկարագրում Աստծո հաճությունը. այն նշանակում է, որ Աստծո որոշումները և գործողությունները պարզապես դրդված չեն տրամաբանությամբ, հաշվարկներով կամ դատողությամբ, և երբեք՝ քմահաճույքով կամ կամակորությամբ: Աստված գործում է՝ համապատասխան Իր սրբությանը, արդարությանը և սիրուն, և անում է այն, ինչը բերկրանք է պատճառում Իրեն:

դ. *Սաղմոս 135.6*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հղումը երկնքին, երկրին և ծովերին՝ պոետիկ կերպով նկարագրում է ամբողջ արարչագործությունը՝ առանց բացառության: Այս խոսքում սաղմոսերգուն նույնիսկ ավելի առաջ է գնում՝ նշելով «ամեն խորը տեղերը»: Ամեն ինչ արարչագործության մեջ Աստծո գերիշխանության ներքո է:

ե. *Եփեսացիների 1.11*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաջողել» (կամ՝ գործել) բառը թարգմանված է հունարեն «***էներգեո՛***» բառից, որն ունի ոչ միայն աշխատանքի, այլև՝ ուժերի և արդյունավետության իմաստ: Աստված ամեն բան կատարում է՝ համաձայն Իր կամքի՝ անսահմանափակ ուժերով և կատարյալ արդյունավետությամբ:

2. Ճշմարտությունն այն մասին, որ Աստված անում է այն, ինչ հաճելի է Իրեն արարչագործության բոլոր տիրույթներում, վկայում է ոչ միայն Նրա գերիշխանության, այլև՝ ամենակարող լինելու մասին: Նա ամենազոր է, և այդ պատճառով էլ չկա որևէ ստեղծված կամ ուժ, որը կարող է հակառակվել Նրան: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածներն այս մասին:

ա. *Բ Մնացորդաց 20.6*

բ. *Հոբ 23.13*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Մեկ» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***էխադ***» բառից: «Մեկ մտքի վրա լինելը», հավանաբար, դարձվածք է, այսինքն՝ արտահայտություն, որի իմաստը որոշվում է իր գործածությամբ, ոչ թե առանձին բառերի նշանակությամբ (օրինակ՝ «ինչպես ձուկը՝ ջրում»): Այս դարձվածքը նշանակում է, որ Աստված չփոփոխվող կամ անփոփոխ է (ESV/NET): Հղումը «սրտի» (կամ՝ «անձի») մասին՝ անտրոպոմորֆիկ արտահայտություն է (այնպիսին, որը սովորաբար օգտագործվում է՝ մարդկանց նկարագրելու համար): Աստծո ցանկության և կամքի համար չկա ոչ մի անհնարին, անիրագործելի կամ անհասանելի բան:

գ. *Առակաց 21.30,31*

3. Կարևոր է հասկանալ, որ գոյություն ունի անմիջական կապ Աստծո գերիշխանության և ապագան կանխասելու միջև: Ի՞նչ է սովորեցնում Եսայի 46.9,10-ը այս ճշմարտության մասին:

ՆՇՈՒՄՆԵՐ. Շատ հավատացյալներ, սխալմամբ, ապագան կանխասելու Աստծո կարողությունը վերագրում են միայն Նրա ամենագետ լինելուն՝ նույնիսկ չմտածելով Նրա գերիշխանության մասին: Այնուամենայնիվ, ինչպես մենք տեսնում ենք այս հատվածում (խոսք 10), Աստված կատարելապես գիտի ապագան՝ ոչ միայն շնորհիվ ամենագետ լինելու, այլև Իր բացարձակ գերիշխանության: Նա ազդարարել է ամեն մի իրադարձություն սկզբից մինչև վերջ և ուղղորդում է ամեն ինչ՝ համաձայն Իր որոշման: Նա գիտի ապագան, ոչ թե՝ որովհետև Նա թափանցում է ժամանակի մեջ և տեսնում է, թե ինչպես ամեն ինչ կավարտվի, այլ՝ որովհետև Նա է ապագայի Հեղինակը և ամեն ինչ ուղղորդում է՝ համաձայն Իր ծրագրի:

4. Դանիել 4.34,35-ում գրված է Աստվածաշնչում եղող ամենակարևոր հայտարարություններից մեկն այն մասին, որ Աստված գերիշխան է Իր ստեղծագործության վրա: Ամփոփե՛ք ստորև բերված բաժիններից ամեն մեկը և բացատրե՛ք, թե ինչ է սովորեցնում այս հատվածը Աստծո գերիշխանության մասին:

ա. *Նրա իշխանությունը՝ հավիտենական իշխանություն է, և Նրա թագավորությունը՝ դարեցդար (խոսք 34):*

ՆՇՈՒՄՆԵՐ. Եթե Աստծո իշխանությունը դարեցդար չլիներ, կամ եթե լիներ նույնիսկ մի փոքր հավանականություն, որ Նրա զորությունը կարող էր թուլանալ, իսկ գահը՝ զավթվեր, հազիվ թե Նրա ժողովուրդը կարողանար վստահել Նրան: Այն, որ Աստծո էությունը և գերիշխանությունն անփոփոխ են, պետք է դրդի մեզ ավելի մեծ վստահություն ունենալ Նրա խոստումների և նախախնամության հանդեպ: Այս փաստը պետք է դրդի Աստծո թշնամիներին սպիտակ դրոշ բարձրացնել և խաղաղություն խնդրել, քանի դեռ շատ ուշ չէ:

բ. *Երկրի բոլոր բնակիչները ոչնչի պես են համարվում (խոսք 35):*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք պետք է համոզված լինենք, որ հասկանում ենք, թե ինչ է գրված այստեղ: Սա չի նշանակում, որ Աստված անարժեք է համարում Իր ստեղծագործությունը կամ անտարբեր է դրա հանդեպ: Աստվածաշնչի ամենաապշեցուցիչ ճշմարտություններից մեկն այն է, որ անասելի մեծություն ունեցող Աստված կամենում է ցած իջնել մեզ մոտ, որպեսզի հոգ տանի մեզ համար: Ինչպես որ սաղմոսերգուն զարմանքով հարցնում է. «Ի՞նչ է մարդը, որ Դու հիշում ես նրան, և մարդու որդին, որ խնամք ես տանում նրա համար»: Այս խոսքը նկատի ունի, որ Աստծո մեծության համեմատ ամբողջ ստեղծագործությունը միասին՝ ոչինչ է:

գ. *Նա Իր ուզածի պես է անում երկնքի զորքով և երկրի բնակիչներով (խոսք 35):*

_____

_____

_____

_____

դ. *Մեկը չկա, որ զարկի Նրա ձեռքին և Նրան ասի. «Ի՞նչ ես անում» (խոսք 35):*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս ճշմարտությունը շատ ազդեցիկ է. չկա ոչ մի ուժ երկնքում կամ երկրի վրա, որը կարող է արգելել Աստծո ձեռքը, և չկա ոչ մի իմաստություն, որը կարող է վիճարկել կամ հերքել Նրան:

Գլուխ 38. Մեր արձագանքն Աստծո գերիշխանությանը

Աստված՝ արարչագործության գերիշխան Տերն ու Թագավորն է: Նա տիրում է բոլոր ստեղծվածների, երևույթների, առարկաների և իրադարձությունների վրա՝ ամենամեծից մինչև ամենափոքրը: Նա ազատորեն անում է ամեն բան՝ համաձայն Իր կամքի՝ Իր փառքի և հաճության համար: Ոչ մի զորություն երկնքում կամ երկրի վրա չի կարող արգելել այն, ինչ Նա որոշել է: Ինչպիսի՞ն պետք է լինի մարդու արձագանքն այսպիսի Աստծուն: Աստվածաշունչը պարզ խոսում է այս մասին. մենք պետք է տանք Նրան ***երկյուղածություն*** և ***երկրպագություն***: Երբ Աստծո գերիշխանությունը ճիշտ կերպով է հասկացվում, այն դրդում է մարդկանց երեսնիվայր ընկնել Նրա առջև և ընդունել, որ միայն Նա է արժանի ստեղծագործության երկյուղածությանը, հնազանդությանը, երկրպագությանը, պաշտամունքին և փառքին:

ԵՐԿՅՈՒՂԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Մարդու առաջին արձագանքն Աստծո գերիշխանությանը պետք է լինի երկյուղածությունը և հնազանդությունը: Աստծուց երկյուղած լինելը նշանակում է՝ ընդունել Նրա բարձրագույն դիրքը և վերաբերվել Նրան մեծագույն հարգանքով և ակնածանքով: Երկյուղած վերաբերմունքը մշտապես կհանգեցնի հնազանդության: Գերիշխանությունը ենթադրում է այնպիսի հարաբերություններ, որոնցում՝ մի կողմն իշխանություն է գործադրում մյուսի վրա: Եթե ճշմարտապես ընդունենք Աստծո գերիշխանությունը, մենք կհանձնենք մեր անձերը Նրան՝ երկյուղածությամբ հնազանդվելով Նրա կամքին:

1. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այն մեծ և անկեղծ երկյուղածության մասին, որը պատկանում է Աստծուն՝ արարչագործության Տիրոջը և միակ Գերիշխանին:

ա. *Սաղմոս 47.2*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքում Աստծուն տրվում են հետևյալ տիտղոսները. Տեր, Բարձրյալ և մեծ Թագավոր: Այս տիտղոսներից ամեն մեկն առանձին պետք է բավական լինի՝ մեզ խորին երկյուղածությամբ համակելու համար: Որքա՞ն ավելի մեծ երկյուղածություն պետք է զգանք, երբ այս երեքը միասին են գործածվում: «Ահավոր» բառը թարգմանված է եբրայերեն «***յարե***» բառից, որն այս համատեքստում նշանակում է վախ, ակնածանք և մեծ երկյուղածություն:

բ. *Երեմիա 10.6,7*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը կոչ է անում վախենալ (եբր. «***յարե***») Աստծուց, քանի որ դա վայելում է Նրան, և ներկայացնում է երեք պատճառ դրա համար՝ Նրա զորության մեծությունը (խոսք 6), Նրա իշխանության մեծությունը (խոսք 7) և Նրա իմաստության մեծությունը (խոսք 7)։ Նույնպես, ուշադրություն դարձրեք, որ այս հատվածն սկսում է պնդումով այն մասին, որ Տիրոջ նմանը չկա, և ավարտվում է միևնույն մտքի կրկնությամբ։ Նրա նմանը չկա. նշանակում է՝ Նրանից պետք է վախենալ ավելի, քան ցանկացած այլ բանից։ «Ո՞վ չի վախենա Քեզնից» հարցն ակնհայտորեն հռետորական է։ Աստծո ինքնության լույսի ներքո միակ տրամաբանական արձագանքը՝ Նրան վայելող երկյուղածություն տալն է։

գ. *Դանիել 6.25-27*

ՆՇՈՒՄՆԵՐ. Դարեհը Մարա-Պարսկական կայսրության հեթանոս թագավորն էր։ Այնուամենայնիվ, երբ Աստված փրկեց Դանիել մարգարեին, նա հասկացավ, որ Իսրայելի Աստված՝ միակ ճշմարիտ Աստվածն է։ Նա այն աստիճան տպավորվեց, երբ Աստված փրկեց Դանիելին առյուծների գուբից, որ պաշտոնական հրովարտակ գրեց իր անծայրածիր կայսրության բոլոր ենթականերին՝ պահանջելով, որ բոլորը երկյուղածություն ցուցաբերեն Դանիելի Աստծուն։ Համաձայն նրա հրովարտակի՝ մարդիկ պետք է վախենային Դանիելի Աստծուց, քանի որ (1) Նա կենդանի Աստված է՝ ի տարբերություն անկյանք քարե կուռքերի, որոնց, որպես կանոն, երկրպագում էին Իսրայելին չպատկանող ժողովուրդները, (2) Նրա իշխանությունը մինչև վերջ է (կամ՝ հավիտյան է), և (3) Նա փրկում է, ազատում է և հրաշքներ ու նշաններ է անում՝ ի հակադրություն բոլոր ազգերի սուտ աստվածների, որոնք ո՛չ բարի են գործում, ո՛չ չար։

2. Հիմնվելով վերևում բերված հատվածների վրա՝ գրի՛ առեք, թե ինչ կերպով մենք պետք է երկյուղածություն և ակնածանք տածենք գերիշխան Աստծո հանդեպ։

3. Մենք խոսեցինք այն մասին, որ թագավորների Թագավորի և տերերի Տիրոջ հանդեպ պետք է երկյուղածություն տածել։ Այժմ ցույց կտանք, որ ճշմարիտ երկյուղածությունից մշտապես հնազանդություն է բխում։ Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածներն այն մասին, որ անհրաժեշտ է հնազանդվել Աստծուն՝ որպես Տիրոջ և գերիշխան Տիրակալի։

ա. *Սաղմոս 66.7*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ապստամբված» բառը թարգմանված է եբրայերեն «***սարար***» բառից, որը նշանակում է «լինել ապստամբ, համառ, կամակոր կամ հակառակ»։

բ. *Երկրորդ Օրինաց 27.10*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Լսել» բառը թարգմանված է եբրայերեն «***շամա***» բառից, որը նշանակում է ավելին, քան պարզապես լսելը: Այն ընդգրկում է լսելը և լսածին հնազանդվելը: Մենք լսում ենք Տիրոջ ձայնը Նրա Խոսքի միջոցով, նաև՝ այն հատուկ պատվիրանների միջոցով, որոնք Խոսքը տալիս են մեզ:

գ. *Գործք 5.29*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հրեական Սինեդրիոնը պատվիրեց Պետրոսին և մյուս առաքյալներին այլևս չսովորեցնել մարդկանց Քրիստոսի անունով: Նրանք պատասխանեցին, որ պետք է հնազանդվեն Աստծուն: Հավատացյալները պետք է պատիվ տան երկրային իշխանություններին և հնազանդվեն նրանց պատվերներին՝ երբ դա հնարավոր է (Հռոմեացիների 13.1-7): Այնուամենայնիվ, երբ մարդկանց պատվերները հակասում են Աստծո պատվերներին, հավատացյալը պետք է հնազանդվի Աստծուն:

դ. *Հակոբոս 1.22*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Խաբել» բառը թարգմանված է հունարեն «***պարլոգի՛զոմայ***» բառից («***պարա***» = բացի, հակառակ + «***լոգի՛զոմայ***» = «համարել»), որը նշանակում է՝ «սխալ համարել, հաշվարկել կամ դատողություններ անել կամ մոլորեցնել»:

4. Ե՛վ Աստվածաշնչում, և՛ մեր օրերում տեսնում ենք հետևյալ վտանգը. մարդիկ դավանում են, որ Աստված իրենց Տերն է, բայց նրանց կյանքը հակասում է իրենց դավանանքին: Ինչպե՞ս է Աստված արձագանքում՝ երբ մարդիկ ճշմարտապես չեն դավանում Իր իշխանությունը:

ա. *Մաղաքիա 1.6*

_____

_____

_____

_____

բ. *Ղուկաս 6.46*

_____

_____

_____

_____

գ. *Մատթեոս 7.21*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա չի նշանակում, որ փրկությունը գործերով է: Այս խոսքը ցույց է տալիս, որ հավատքով փրկված մարդիկ կինազանդվեն Հոր կամքին: Հավատալով՝ մարդը չի ունենա կատարյալ կյանք այս երկրի վրա, բայց հավատքի արդյունքում նրա կյանքը շարունակ կփոխվի՝ Աստծո զորությամբ: Այլ կերպ ասած՝ հավատքը կդրդի գործերի, ինչը նշանակում է, որ գործերը՝ հավատքի ապացույցն են (Հակոբոս 2.14-26):

ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ, ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԵՎ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Եթե մարդիկ պատշաճ են համարում մեծարանք և պատիվ տալ երկրի թագավորներին և իշխաններին, ովքեր մահկանացու են, և որոնց թագավորություններն անկայուն և ժամանակավոր են, որքան ավելի նրանք պետք է պատվեն հավերժական Թագավորին, Ում թագավորությունը մնում է հավիտյան: Թեև գոյություն ունեն բազմաթիվ թագավորներ և տերեր, միայն Աստված է կրում ***թագավորների Թագավորի և տերերի Տիրոջ*** տիտղոսը: Միայն Նա է գերազանց ամբողջ արարչագործությունից և իշխում է բացարձակ և անսասան իշխանությամբ: Երկրի բնակիչներն Աստծո առջև նման են մորեխների: Ազգերը նման են դույլից

կախված կաթիլի և կշեռքի վրա գտնվող ավազահատիկի: Նա ոչինչ է անում երկրի իշխաններին և դատարկ է դարձնում ամենազորավոր հրեշտակների և մարդկանց որոշումները: Չկա ոչ մի իմաստություն, գիտություն և խորհուրդ Նրա դեմ: Նա անում է ամեն բան՝ համաձայն Իր կատարյալ կամքի խորհրդի, և ոչ մի արարած երկնքում կամ երկրի վրա չի կարող զարկել Նրա ձեռքին և ասել. «Ի՞նչ ես անում»: Այնպես որ, երկրպագությունը, պաշտամունքը և փառաբանությունն ամբողջությամբ պետք է ուղղված լինեն Նրան:

Սաղմոս 99.1-5-ում գրված է Հին կտակարանի ամենավեհ հայտարարություններից մեկն այն մասին, որ Աստծուն պետք է երկրպագել՝ որպես Տիրոջ և Թագավորի: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

1. Ինչպե՞ս են հետևյալ խոսքերը նկարագրում Աստծուն: Ի՞նչ է այս նկարագրությունը սովորեցնում մեզ այն մասին, որ Աստված գերագույն իշխանություն ունի արարչագործության վրա: Լրացրե՛ք հետևյալ հայտարարությունները.

   ա. *Նա Թ_____ է (խոսք 1):* Եբրայերեն «***մալակ***» բառից, որը նշանակում է «լինել թագավոր կամ իշխել թագավորի պես»: Նա մեծ Թագավորն է, Ով իշխում է ամբողջ երկրի վրա (Սաղմոս 47.2,7, Մաղաքիա 1.14), երկնքի Թագավորը (Դանիել 4.37), մեծ Թագավոր՝ բոլոր աստվածների վրա (Սաղմոս 95.1-3) և թագավորների Թագավորը (Ա Տիմոթեոս 6.15,16, Հայտնություն 17.14, 19.16):

   բ. *Նա Ն_____ է (կամ՝ գահակալ է) Ք_____ վրա (խոսք 1):* Մենք շատ քիչ բաներ գիտենք այս հրեշտակների մասին: Հնարավոր է, որ սերովբեների պես նրանք մեծագույն ստեղծվածների թվում են: Այնուամենայնիվ, Աստված նրանց գահակալն է՝ որպես նրանց Արարիչ, Պահապան և Տեր:

   գ. *Նա Մ_____ է (խոսք 2):* Եբրայերեն «***գադոլ***» բառից, որը հարաբերական հասկացություն է: Որոշ մարդիկ կարող են իրենց մեծ համարել մյուսների համեմատ, բայց Աստված անսահմանորեն ավելի մեծ է, քան ամբողջ արարչագործությունը՝ միասին:

   դ. *Նա Բ_____ է բոլոր ժողովուրդներից (խոսք 2):* Եբրայերեն «***ռամ***» բառից, որը կարող է թարգմանվել որպես «բարձր, բարձրյալ կամ առանձնացած»: Որպեսզի պատկերացում կազմենք, թե որքա՞ն մեծարված է Նա, Եսայի մարգարեն հայտնում է մեզ, որ երկիրը՝ Նրա ոտքերի պատվանդանն է (Եսայի 66.1):

   ե. *Նրա անունը Մ_____ և Ա_____ է (խոսք 3):* «Ահավոր» բառն այս խոսքում եբրայերեն «***յարե***» բառից է, որը նշանակում է «վախենալ կամ երկյուղած լինել»: Աստծուց չպետք է վախենալ՝ Նրանից որևէ անհետևողականություն կամ անարդարություն սպասելու իմաստով, այլ՝ Նրա մեծության և սրբության պատճառով:

   զ. *Նա Ս_____ է (խոսք 3):* Եբրայերեն «***կադոշ***» բառից, որը նշանակում է «առանձնացված, սահմանագծված, առանձին դրված կամ հեռացված սովորական գործածությունից»: Աստծո վերաբերյալ այս բառն առնվազն երկու կարևոր իմաստ ունի. (1) Աստված վեր է Իր ստեղծագործությունից, և (2) Նա վեր է Իր ստեղծագործության ապականությունից:

2. Ինչպե՞ս է Աստծո իշխանությունը նկարագրվում խոսք 4-ում: Ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի Նրա գերագույն իշխանությունը ստեղծագործության վրա: Ինչպե՞ս այս ճշմարտությունները պետք է ազդեն մեր կյանքի վրա:

   _____

   _____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո իշխանության առանձնահատկություններն են՝ Նրա զորությունը, Նրա սերն ուղիղ կարգի հանդեպ և Նրա դատաստանը՝ իրավունքով և արդարությամբ: Այս ճշմարտությունները պետք է լիարժեք վստահություն և ապահովություն ներշնչեն հավատացյալներին և պետք է դրդեն ապստամբներին՝ ապաշխարել իրենց ճանապարհներից և հաշտվել Աստծո հետ:

3. Համաձայն Սաղմոս 99.1-5-ի հետևյալ խոսքերի՝ ինչպե՞ս մարդիկ պետք է արձագանքեն այն ամենին, ինչ Աստված հայտնել է Իր մասին, և Նրա գերագույն իշխանությանը՝ Իր ստեղծագործության վրա:

ա. *Խոսք 1*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Կարևոր է շեշտադրել, որ ժողովուրդների շփոթվելու (կամ՝ դողալու) պատճառն այն չէ, որ Աստծո մեջ ինչ-որ անհետևողականություն կա, և Նա կարող է քմահաճ կամ անվստահելի լինել: Փոխարենը՝ մենք պետք է դողանք՝ զմայլվելով Նրա անսահման վեհությամբ և մեծությամբ: Ուշադրություն դարձրեք, որ ոչ միայն մարդիկ պետք է դողան, այլև ամբողջ երկիրը պետք է շարժվի (կամ՝ ցնցվի) այդ պատճառով:

բ. *Խոսք 3*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Փառաբանություն» բառը թարգմանված է եբրայերեն «***յադահ***» բառից, որը բառացիորեն նշանակում է «գցել կամ նետել»: Փոխաբերական իմաստով, այն նշանակում է՝ «դավանել կամ փառաբանել»: Ինչ-որ իմաստով, փառաբանությունը պարզապես նշանակում է դավանել, որ այն, ինչ Աստված հայտնել է մեզ Իր մասին, ճշմարիտ է:

գ. *Խոսք 5*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բարձր անել» բառակապակցությունը թարգմանված է եբրայերեն «***ռամ***» բառից, որը նույնպես թարգմանվում է «լինել բարձր» կամ «լինել առանձնացված»: Խոսք 2-ում մենք տեսանք, որ Աստված բարձր է բոլոր ժողովուրդներից. այդ դեպքում, ինչպե՞ս մենք կարող ենք է՛լ ավելի բարձրացնել Նրան: Աստծուն բարձրացնելը կամ մեծարելը նշանակում է՝ ընդունել և դավանել Նրա բարձր դիրքը ամբողջ արարչագործության վրա:

Գլուխ 39. Աստված Օրենսդիր է

Մենք արդեն խոսեցինք այն մասին, որ Աստված Տեր է: Այժմ կդիտարկենք Նրան՝ որպես արարչագործության Օրենսդրի և Դատավորի: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Աստված սուրբ, արդար և սիրող գերիշխան Տեր է, Ով հոգում է Իր ստեղծագործության բարեկեցության մասին: Այնպես որ, գերիշխան Տերը պետք է իրավամբ իշխի Իր ստեղծագործության վրա և արդարադատություն գործադրի՝ վարձատրելով բարեգործությունը և պատժելով չարիքը: Համաձայն Աստվածաշնչի՝ Աստված հայտնել է Իր կամքը բոլոր մարդկանց, և կդատի բոլորին ըստ այն չափանիշի, որը հայտնված է նրանց: Բոլոր ստեղծվածները կարող են համոզված լինել, որ Աստված կդատի նրանց արդարության և ազնվության ամենախիստ չափանիշներով: Անհրաժեշտ է մշտապես հիշել հետևյալը. աստվածային դատաստանը մարդու կյանքում՝ ոչ լիազորված միջամտություն կամ բռնարարք չէ: Ընդհակառակն՝ այն Աստծո սուրբ և արդար էության անխուսափելի հետևանքն է և Նրա իշխանության անհրաժեշտ մասը: Եթե Աստված հրաժարվեր դատել անօրինությունը, Նա բարի ու արդար չէր լինի: Եթե անօրինությունը չզսպվեր ստեղծագործության մեջ, կարճ ժամանակ անց ստեղծագործությունը կկործաներ ինքն իրեն:

ՕՐԵՆՍԴԻՐ ԱՍՏՎԱԾ

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ տիեզերքի Արարիչը և գերիշխան Տերը նույնպես գերագույն Օրենսդիրը և Դատավորն է: Աստված հաստատել է այն բարոյական օրենքները, որոնցով բոլոր մարդիկ պետք է ապրեն, և Նա հաշվետու է համարում նրանց՝ այդ օրենքներին հնազանդվելու կամ չհնազանդվելու համար: Համաձայն Աստվածաշնչի՝ մարդը չի ստեղծվել ինքնավար լինելու համար (հունարեն՝ «***աու-տոնոմոս***». «***աուտո***» = ինքը + «***նոմոս***» = «օրենք»), այլ՝ Աստծո օրենքի ներքո ապրելու համար (հունարեն՝ «***թեոնոմոս***». «***թեոս***» = «Աստված» + «***նոմոս***» = «օրենք»):

Օրենսդիր և Դատավոր Աստված և՛ սուրբ է, և՛ արդար: Աստծո ***սրբությունը*** նշանակում է, որ Նա անջատ է այն ամենից, ինչը հասարակ, պիղծ կամ մեղսալի է: Աստծո ***արդարությունը*** նշանակում է, որ Նա ուղիղ և ազնիվ է Իր բոլոր գործերի և դատաստանների մեջ: Այս հատկանիշները երաշխավորում են, որ Աստծո օրենքը մշտապես պատշաճ և արդար է լինելու, իսկ Նրա դատաստանները մշտապես կատարյալ են լինելու: Նա կանի այն, ինչ ճիշտ է: Նրա Դատաստանի օրը մարդիկ վստահ կլինեն, որ Աստված դատելու է իրենց կատարյալ արդարությամբ: Նույնիսկ դատապարտվածները կխոնարհեցնեն իրենց գլուխները և կխոստովանեն, որ ամբողջ երկրի Դատավորը արդարությամբ է դատել իրենց:

1. Եսայի 33.22-ում Աստծուն վերագրվում են շատ կարևոր պաշտոններ: Դրանցից ամեն մեկն ինչ-որ բան է ցույց տալիս Նրա Անձի և աշխատանքի մասին, նաև՝ մեր և Նրա հարաբերությունների մասին: Նշե՛ք այս երեք պաշտոնները և կարճ բացատրե՛ք դրանցում ներկայացված ճշմարտությունները.

   ա. Դ_____

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Եբրայերեն «***շաֆաթ***» բառից, որն ունի դատավորի կամ կառավարչի իմաստ՝ այնպիսի մարդու, ով որոշում կամ ազդարարում է դատը: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված կորոշի մարդկության ամեն ներկայացուցչի հավիտենական ճակատագիրը:

բ. *Օ*_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Եբրայերեն ***«շակակ»*** բառից, որը բառացիորեն նշանակում է «փորագրել, քանդակել, դրոշմել»: Փոխաբերական իմաստով, դա նշանակում է «հրաման արձակել, հրամանը ուժի մեջ դնել, հրամայել»: Աստված գրեց Իր օրենքը քարե տախտակների վրա (Ելից 31.18), նաև՝ մարդկանց սրտերի վրա (Հռոմեացիների 2.14,15): Ավելի շուտ կանցնեն երկինքը և երկիրը, քան նույնիսկ մի փոքր տառ Աստծո օրենքից (Մատթեոս 5.18): Բոլոր մարդիկ դատաստանի են ենթարկվելու հենց Նրա օրենքով:

գ. *Թ*_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Եբրայերեն «***մելեկ***» բառից, որը նշանակում է «թագավոր կամ իշխան»: Աստված իշխում է Իր թագավորության մեջ՝ համաձայն Իր օրենքի, և Նա դատելու է Իր թագավորության բնակիչներին (այսինքն՝ ամեն մարդու)՝ համաձայն Իր օրենքի: Աստված Թագավոր է, Օրենսդիր է և Դատավոր է: Բոլոր մարդիկ ապստամբել են Թագավորի դեմ, խախտել են Նրա օրենքը և դատապարտված են Նրա դատաստանի գահի առջև: Փրկություն ստանալու համար մեզ անհրաժեշտ է Քահանա՝ մեր փոխարեն զոհաբերություն մատուցելու համար, Մարգարե՝ մեզ սխալմունքից դեպի ճշմարտությունն առաջնորդելու համար, և Թագավոր՝ մեր հանցանքները ներելու համար: Միասին այս պաշտոնները միմիայն Քրիստոսի մեջ են. Նա մեր Քահանան, Մարգարեն և Թագավորն է:

2. Հակոբոս 4.12-ում գրված է Աստծո մասին մի շատ կարևոր ճշմարտություն: Ի՞նչ է այս խոսքը սովորեցնում մեզ Աստծո մասին և այն մասին, թե ինչպիսին պետք է լինեն մեր հարաբերությունները Նրա հետ:

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքը ոչ միայն հաստատում է, որ Աստված և՛ Օրենսդիր է, և՛ Դատավոր է, այլև ցույց է տալիս, թե որքան լուրջ է դա: Վերջին դատաստանը որոշելու է բոլոր մարդկանց հավիտենական ճակատագիրը: Այս հարցին չպետք է թեթևամտորեն վերաբերվել: Այդ վերջին օրը լինելու է միայն երկու հնարավոր դատավճիռ. (1) հավիտենական փրկություն Երկնքում կամ (2) հավիտենական մահ և կործանում դժոխքում: Եթե մենք մեծ լրջությամբ ենք վերաբերվում մարդկանց օրենքներին և դատաստաններին, որքա՞ն ավելի պետք է մտահոգվենք Աստծո օրենքների և դատաստանների պատճառով: Հիսուսն զգուշացրեց այս մասին. «Մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն սպանում են և հոգին (կամ՝ անձը) չեն կարող սպանել, բայց ավելի վախեցեք Նրանից, որ կարող է հոգին (կամ՝ անձն) էլ, մարմինն էլ կորցնել գեհենի մեջ» (Մատթեոս 10.28):

ԱՍՏԾՈ ՕՐԵՆՔԻ ՀԻՄՔԸ

Ինչո՞ւ Աստված որոշ բաներ ճիշտ անվանեց, իսկ որոշ բաներ՝ սխալ: Հնարավո՞ր է, որ Աստծո օրենքը՝ ընդամենը կանոնների կամայական հավաքածու է: Արդյո՞ք Նրա բոլոր պատվիրանները և արգելքները հիմք ունեն: Ո՞րն է օրենքի էությունը կամ սիրտը: Այս հարցերն անչափ կարևոր են: Եթե մենք ցանկանում ենք ճիշտ պատկերացում ունենալ Աստծո օրենքի մասին, պետք է մեծ ուշադրություն դարձնենք դրան: Հետևյալ պնդումները կօգնեն մեզ:

1. **Աստված ամեն ինչի ինքնագո Արարիչը, Պահապանը և Տերն է**: Աստված իրավամբ է իշխում և դատում այն ամենը, ինչ ստեղծել է և պահպանում է: Նա իրավամբ է հաստատում Իր օրենքները և Իր ստեղծածներից պահանջում է հետևել դրանց:

2. **Աստված՝ բարոյականության միակ հիմքն է**: Ինչո՞ւ են որոշ բաներ բարի, իսկ մյուսները՝ չար: Ինչի՞ հիման վրա է որոշվում ինչ-որ բանի ճիշտ կամ սխալ լինելը: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված բարի է: Այն, ինչը նման է Աստծուն (այսինքն՝ համապատասխան է Նրա էությանը)՝ բարի է, իսկ այն, ինչը նման չէ Աստծուն (այսինքն՝ հակասում է Նրա էությանը)՝ չար է: Աստծուց անջատ չի կարող լինել ոչ մի օրենք, ո՛չ ճիշտ, ո՛չ սխալ, և ոչ մի չափանիշ՝ բարու և չարի վերաբերյալ:

3. **Աստծո օրենքները՝ Նրա էության արտահայտությունն են**: Աստծո օրենքները՝ ինքնահնար կանոններ չեն, որոնք Նա քմահաճ կերպով որոշել է. դրանք արտացոլում են Նրա էությունը՝ Նրա սրբությունը, արդարությունը, բարեհաճությունը և այլն: Երբեմն նույնիսկ քրիստոնյաներն այնպես են խոսում «օրենքի» մասին, ասես այն Աստծուց անկախ հավիտենական և տիեզերական սկզբունքների հավաքածու է, որին նույնիսկ Ինքը՝ Աստված է ենթակա: Սա բոլորովին չի համապատասխանում ճշմարտությանը: Աստված է հաստատել բոլոր օրենքները, և Նրա կողմից հաստատված օրենքները՝ Նրա էության արտացոլքն են:

4. **Աստծո օրենքի իմաստն է՝ սիրել Նրան ամեն ինչից առավել և սիրել մարդկանց՝ ինչպես ինքներս մեզ**: Հիսուսը պարզ ասաց, որ սա աստվածային օրենքի սիրտը և վերջնական նպատակն է (Մարկոս 12.29-31): Գիտելիքն այն մասին, որ մենք պետք է սիրենք Աստծուն ամեն ինչից առավել և սիրենք մյուսներին՝ ինչպես ինքներս մեզ, գրված է ամեն մարդու սրտի վրա, և դրա լիարժեք արտահայտման ձևը (այսինքն՝ թե ինչ է նման սերը ենթադրում) պարզ և հասկանալի կերպով նկարագրված է Աստվածաշնչում (օրինակ՝ չերկրպագել կուռքերին, չգողանալ, չսպանել և այլն):

ՕՐԵՆՔԸ՝ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ

Աստծո օրենքը հայտնվում է մարդկանց Աստվածաշնչի միջոցով: Աստվածաշնչի էջերից մենք իմանում ենք, որ մարդը պետք է սիրի Աստծուն ամեն ինչից առավել, և սիրի մարդկանց՝ ինչպես ինքն իրեն: Նույնպես, Աստվածաշնչում պարզ և հասկանալի կերպով նկարագրված է նման սիրո լիարժեք արտահայտման ձևը. մենք պետք է սիրենք Աստծուն՝ չերկրպագելով կուռքերին, չգողանալով, չսպանելով և այլն (Ելից 20.1-17): Աստծո օրենքի գրված հայտնությունն ավելի ու ավելի պարզ է բացահայտվում ամբողջ Աստվածաշնչում՝ սկսելով Ծննդոց գրքից և հասնելով իր կիզակետին Նոր կտակարանում: Աստծո կամքը հայտնվում և պատկերվում է Ծննդոցից մինչև Հայտնություն: Այս պատճառով, Պողոս առաքյալը գրում է Բ Տիմոթեոս 3.16-ում.

«Ամեն Գիրք աստվածաշունչ է և օգտակար վարդապետության և հանդիմանության և ուղղելու և արդարության խրատելու համար:

Թեև Աստծո հայտնությունն Իր օրենքի մասին տրված է ամբողջ Սուրբ գրքում, Աստծո կամքը մարդկային վարքի վերաբերյալ հայտնի դարձավ հատուկ զորությամբ և պարզությամբ Աստվածաշնչի պատմության երկու դրվագներում. (1) երբ Մովսեսի միջոցով Հին ուխտը տրվեց Իսրայելին Սինա սարի վրա, և (2) երբ եկավ Տեր Հիսուս Քրիստոսը՝ Աստծո վերջնական և վճռական խոսքը մարդկությանը (Եբրայեցիների 1.1,2):

ՕՐԵՆՔԸ՝ ՀԱՅՏՆՎԱԾ ՄԱՐԴՈՒ ՍՐՏՈՒՄ

Մենք իմացանք, որ Աստված մեծ Օրենսդիր է, Ով դատելու է ամեն մարդու՝ համաձայն Իր օրենքի: Այս ճշմարտությունն առաջացնում է շատ կարևոր և մտահոգիչ հարց. «Ինչպե՞ս Աստված կարող է դատել ամեն մարդու՝ համաձայն Իր օրենքի, եթե մարդկության զգալի մասն այդպես էլ արտոնություն չի ունեցել ծանոթանալու Աստվածաշնչին, որտեղ այդ օրենքը գրված է»:

Համաձայն Աստվածաշնչի՝ Աստված հայտնել է Իր անփոփոխ բարոյական չափանիշը մարդկությանը երկու հստակ կերպով. (1) Նա հայտնել է Իր կամքը ***որոշ մարդկանց*** ամենայն մանրամասնությամբ՝ Աստվածաշնչի գրված պատվերների միջոցով, և (2) Նա հայտնել է Իր կամքը ***բոլոր մարդկանց*** ընդհանուր կերպով՝ այն օրենքի միջոցով, որն Ինքը գրել է նրանց սրտերում: Երկու դեպքում էլ, Աստծո օրենքի հայտնությունը բավական է, որպեսզի մարդիկ՝ առանց բացառության, արդարացում չունենան Դատաստանի օրը: Նրանք, ովքեր Աստվածաշունչ կարդալու արտոնություն են ունեցել, դատաստանի կենթարկվեն՝ համաձայն Աստվածաշնչի, իսկ ովքեր ընդամենը կրել են իրենց սրտում գրված օրենքի ազդեցությունը, դատաստանի կենթարկվեն՝ համաձայն այդ օրենքի հայտնության: Ամեն մարդ դատաստանի է ենթարկվելու ըստ այն լույսի, որն ստացել է: Ինչպես Աստվածաշունչն է հայտնում Ղուկաս 12.47,48-ում.

«Եվ այն ծառան, որ իր տիրոջ կամքը գիտենալով չի պատրաստել և ոչ էլ արել է նրա կամքի պես, շատ ծեծ կուտի: Եվ նա, որ չգիտենալով ծեծի արժանի բան գործեց, քիչ կծեծվի: Այն ամենին, որ շատ տրվեց, նրանից շատ կուզվի: Եվ ում որ շատ պահ տրվեց, նրանից էլ ավելի կպահանջեն»:

1. Ինչպես նշված է վերևում, քանի որ Աստված գերագույն Օրենսդիրն է, Ով դատելու է բոլոր մարդկանց՝ համաձայն Իր օրենքի, մենք բախվում ենք մի շատ կարևոր և մտահոգիչ հարցի. «Ինչպե՞ս Աստված կարող է դատել ամեն մարդու՝ համաձայն Իր օրենքի, եթե մարդկության զգալի մասն այդպես էլ արտոնություն չի ունեցել ծանոթանալու Աստվածաշնչին, որտեղ այդ օրենքը գրված է»: Հռոմեացիների 2.12-ը շատ պարզ պատասխանում է այս հարցին:

   ա. *Համաձայն Հռոմեացիների 2.12-ի՝ ամբողջ մարդկությունը կարելի է բաժանել երկու հստակ խմբի: Որո՞նք են այդ խմբերը:*

(1) Նրանք, ովքեր մեղք են գործել Ա_____ Օրենքի: Սա հատկապես վերաբերում է Իսրայելից դուրս գտնվող հեթանոսներին, ովքեր չգիտեին Աստծո Հին ուխտի օրենքը՝ հայտնված Հնգամատյանում (այսինքն՝ Աստվածաշնչի առաջին հինգ գրքերում), որը տրվել էր Մովսեսի միջոցով: Ավելի լայն իմաստով, սա վերաբերում է բոլորին ամբողջ մարդկության պատմության ընթացքում, ովքեր ապրել և մահացել են՝ չունենալով արտոնություն մանրամասնորեն ճանաչելու Աստծո օրենքը՝ Աստվածաշնչի գրված պատվերների միջոցով:

(2) Նրանք, ովքեր մեղք են գործել Օրենքի Տ_____: Սա վերաբերում է հատկապես Իսրայելի ժողովրդին, որոնց վստահվեց Աստծո Հին ուխտի օրենքը, որը տրվել էր Մովսեսի միջոցով: Ավելի լայն իմաստով, սա վերաբերում է բոլորին ամբողջ մարդկության պատմության ընթացքում, ովքեր ունեցել են արտոնություն՝ մանրամասնորեն ճանաչելու Աստծո օրենքը՝ Աստվածաշնչի գրված պատվերների միջոցով:

բ. *Համաձայն Հռոմեացիների 2.12-ի՝ ինչպիսի՞ն են այս երկու խմբերին (նրանց, ովքեր ճանաչել են օրենքը Աստվածաշնչից, և նրանց, ովքեր նման արտոնություն չեն ունեցել) պատկանող մարդկանց մեղքի հետևանքները:*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս երկու խմբերն էլ դատաստանի են ենթարկվելու ըստ այն օրենքի, որն ստացել են՝ լինի դա միայն նրանց սրտերին գրված Աստծո օրենքը, թե՝ Աստվածաշնչում հայտնված Աստծո օրենքը՝ առաջինի հետ մեկտեղ:

2. Այն, որ Աստված կարող է արդարացիորեն դատապարտել նրանց, ովքեր իմացել են Իր գրված օրենքը, բայց միևնույն է՝ ապստամբել են դրա դեմ, կարելի է հասկանալ: Բայց ինչպե՞ս Նա կարող է արդարացիորեն դատապարտել նրանց, ովքեր ապրել և մահացել են՝ չունենալով Աստվածաշնչին ծանոթանալու հնարավորություն: Հետևյալ հատվածներում բերված են երկու փաստարկներ, որոնք ապացուցում են, որ Աստված արդարացիորեն է դատաստանի ենթարկում բոլոր մարդկանց, նույնիսկ նրանց, ովքեր չեն կարդացել Աստվածաշունչը:

ա. *Աստված Իրեն հայտնի է դարձրել բոլոր մարդկանց՝ ստեղծագործության միջոցով: Ի՞նչ է սովորեցնում Հռոմեացիների 1.19,20-ը այս ճշմարտության մասին:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը չի նշանակում, որ բոլոր մարդիկ գիտեն այն ամենը, ինչ կարելի է իմանալ Աստծո մասին, կամ՝ որ բոլոր մարդիկ ստացել են հայտնության միևնույն չափը: Այն նշանակում է, որ բոլոր մարդիկ՝ ամեն տեղ և բոլոր ժամանակներում, ունեն բավականաչափ գիտելիք ճշմարիտ և կենդանի Աստծո մասին, որպեսզի Դատաստանի օրը արդարացում չունենան իրենց մեղքերի համար: Թեև Աստծո հայտնությունը բոլոր մարդկանց համար սահմանափակ է, բայց այն անորոշ կամ անհասկանալի չէ: Աստված բոլորի համար «հայտնի» (կամ՝ «ակնհայտ») է դարձրել, որ գոյություն ունի մեկ ճշմարիտ Աստված, և որ պետք է երկրպագել միայն Նրան: «Նրանցում» բառը ենթադրում է, որ գիտելիքը կենդանի Աստծո մասին՝ չի հայտնվում միայն ստեղծագործության միջոցով, այլ՝ որ Աստված Ինքն է կնքել այս գիտելիքն ամեն մարդու սրտի վրա: Այն տիեզերքը, որն Աստված ստեղծել է, ապացուցում է Նրա գոյությունը, և պարզապես հաստատում է այն, ինչ արդեն հայտնի է բոլոր մարդկանց. գոյություն ունի մեկ ճշմարիտ Աստված, և Նա արժանի է երկրպագության ու հնազանդության:

բ. *Աստված դրել է Իր օրենքը բոլոր մարդկանց սրտերում: Ի՞նչ է սովորեցնում Հռոմեացիների 2.14,15-ը այս ճշմարտության մասին:*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը չի նշանակում, որ հեթանոսների մեջ եղել են մարդիկ, ովքեր կատարելապես հնազանդվել են Աստծո օրենքին այն աստիճան, որ արդար համարվեն Նրա առջև (կարդացե՛ք Հռոմեացիների 3.9-12): Սա նշանակում է, որ նույնիսկ հեթանոսական մշակույթներում գոյություն են ունեցել բարոյական չափանիշներ, որոնք համապատասխանում էին Աստծո օրենքին (օրինակ՝ հարգանքը ճշմարտությունը խոսելու հանդեպ, ծնողներին պատվելու պարտքը, մարդասպանությունն արգելելը և այլն): Այս փաստն անհերքելի կերպով ապացուցում է, որ Աստված գրել է (այսինքն՝ դրոշմել կամ փորագրել է) Իր օրենքի էությունը (սերն Աստծո և մերձավորի հանդեպ) ամեն մարդու սրտի վրա: Թեև բազմաթիվ մարդիկ չունեն Աստծո գրված օրենքը, որը հայտնված է Աստվածաշնչում, սակայն Աստված գրել է Իր օրենքը նրանց սրտերի և մտքերի վրա: Այս օրենքը բավական է՝ նրանց ճիշտ ճանապարհով առաջնորդելու համար, չնայած որ այն Աստվածաշնչի (Աստծո գրված օրենքի) պես հստակ չէ: Այդ իսկ պատճառով, բոլոր մարդիկ հաշվետու են լինելու Դատաստանի օրը: Խոսք 15-ում Պողոսը խոսում է խղճի մասին (արդարության և սխալմունքի բարոյական զգացումի, որը կա ամեն մարդու ներսում), որն արդարացնում է մարդուն, երբ նա հնազանդվում է Աստծո օրենքին, և մեղադրում է նրան ամեն անգամ, երբ նա անհնազանդ է Աստծուն: Հնարավոր է մերժել խիղճը (Ա Տիմոթեոս 1.19) այն աստիճան, որ այն այլևս չգործի՝ որպես բարոյականության ցուցիչ: Պողոսն այս սարսափելի վիճակն անվանում է սեփական պիղծ սրտի «անարգ կրքերին» մատնվել (Հռոմեացիների 1.24,26) կամ անզգայացած (ասես տաք երկաթով այրված) խիղճ ունենալ (Ա Տիմոթեոս 4.2):

Գլուխ 40. Աստված Դատավոր է

Համաձայն Աստվածաշնչի՝ Աստված հայտնել է Իր կամքը բոլոր մարդկանց և կդատի բոլորին ըստ այն չափանիշի, որը հայտնված է նրանց: Բոլոր ստեղծվածները կարող են համոզված լինել, որ Աստված կդատի նրանց արդարության և ազնվության ամենախիստ չափանիշներով: Անհրաժեշտ է մշտապես հիշել հետևյալը. աստվածային դատաստանը մարդու կյանքում՝ ոչ լիազորված միջամտություն կամ բռնարարք չէ: Ընդհակառակն՝ այն Աստծո սուրբ և արդար էության անխուսափելի հետևանքն է, և Նրա իշխանության անհրաժեշտ մասը: Եթե Աստված հրաժարվեր դատել անօրինությունը, Նա բարի ու արդար չէր լինի: Եթե անօրինությունը չզսպվեր ստեղծագործության մեջ, կարճ ժամանակ անց ստեղծագործությունը կկործաներ ինքն իրեն:

ԱՄԵՆԱԳԵՏ ԴԻՏՈՐԴԸ

Նախորդ գլխում մենք տեսանք, որ Աստված և՛ սուրբ է, և՛ արդար, և որ այս հատկանիշները հավիտենական և անփոփոխ երաշխիք են հանդիսանում, որ Նրա դատաստանները մշտապես լինելու են համաձայն անաչառության և արդարության ամենախիստ չափանիշների: Մինչև խոսելն այն մասին, թե ինչ է Աստվածաշունչը սովորեցնում Աստծո դատաստանի մասին, պետք է կրկնենք մեկ այլ աստվածային հատկանիշ, որը հավասարապես կարևոր է անսխալաբար դատաստան անելու համար. խոսքն Աստծո ամենագետ լինելու մասին է: «Ամենագիտություն» բառը լատիներենում «***օմնիսիենս***» բառն է («***օմնիս***» = «ամեն ինչ» + «***սիենս***»-ը՝ «***սիրե***» բառից = «իմանալ»), և նշանակում է ամբողջ գիտելիքն ունենալու հատկանիշը: Աստծո ամենագետ լինելը նշանակում է, որ Նա կատարելապես գիտի ամեն ինչ՝ առանց բոլոր փաստերը որոնելու կամ բացահայտելու: Աստծո ամենագետ լինելը նշանակում է, որ Նա գիտի ամեն ինչ անցյալում, ներկայում և ապագայում՝ անմիջապես, առանց ջանք թափելու, միաժամանակ և սպառիչ կերպով: Չկա ոչինչ՝ թաքնված Աստծուց. ամեն ստեղծված, ամեն գործ և ամեն միտք Նրա առջև է՝ բաց գրքի պես: Նա գիտի բոլոր փաստերը և մեկնաբանում է դրանք կատարյալ իմաստությամբ: Երբևէ չի եղել նույնիսկ աննշան տարբերություն Աստծո ունեցած գիտելիքի և իրականության միջև: Աստծո ամենագետ լինելը ոչ միայն ապացուցում է, որ Նա արժանի է դատաստանի ենթարկելու ամբողջ մարդկությանը, այլև երաշխավորում է, որ Նրա դատաստանները մշտապես կատարյալ կլինեն: Աստված մշտապես դատելու է՝ համաձայն ամեն ինչի մասին Իր կատարյալ գիտելիքի:

1. Հետևյալ աստվածաշնչյան հատվածներում օգտագործված են մի քանի բառեր՝ Աստծո ամենագետ լինելը նկարագրելու համար: Այս բառերը կօգնեն մեզ պատկերացում կազմել Աստծո գիտելիքի մեծության մասին: Լրացրե՛ք բաց թողնված բառերը՝ համաձայն նշված խոսքերի:

   ա. *Աստծո գիտելիքը Կ_____ է (Հոբ 37.16):* Այս բառը թարգմանված է եբրայերեն «***թամիմ***» բառից, որը նշանակում է «ամբողջ, լիարժեք, ամբողջական, անարատ և ոչնչի պակաս չունեցող»:

   բ. *Աստծո իմաստությանը Չ_____ Չ_____ (Սաղմոս 147.4,5):* Այս արտահայտությունը թարգմանված է եբրայերեն «***ային***» բառից, որը նշանակում է «անթիվ, անհաշվելի»: Այս բառի հոմանիշներից են. «անվերջ, անթափանցելի, անըմբռնելի, անքննելի»:

գ. *Աստծո հանճարը Ա_____ է (Եսայի 40.28):* Այս բառը թարգմանված է եբրայերեն «***ային***» բառից (սահմանումը՝ վերևում):

2. Աստվածաշունչը հաստատում է, որ չկա ոչինչ՝ թաքնված Աստծո գիտելիքից. Նա գիտի ամեն ինչ անցյալում, ներկայում և ապագայում՝ անմիջապես, առանց ջանք թափելու, միաժամանակ և սպառիչ կերպով: Սա ոչ միայն ապացուցում է, որ Նա արժանի է դատաստանի ենթարկելու ամբողջ մարդկությանը, այլև երաշխավորում է, որ Նրա դատաստանները մշտապես կատարյալ կլինեն: Աստված մշտապես դատելու է՝ համաձայն ամեն ինչի մասին Իր կատարյալ գիտելիքի: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածներն այս ճշմարտության մասին:

ա. *Հոբ 34.21-23*

_____

_____

_____

բ. *Առակաց 5.21, 15.3*

_____

_____

_____

գ. *Առակաց 15.11, Երեմիա 17.10*

_____

_____

_____

դ. *Եբրայեցիների 4.13*

_____

_____

_____

3. Համաձայն Աստվածաշնչի՝ մարդու սրտում չկա ոչ մի խորություն կամ գաղտնիք, որն Աստված չգիտի: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ խոսքերն այս ճշմարտության մասին:

ա. *Միայն Աստված գիտի բոլոր մարդկանց Ս_____ (Գ Թագավորաց 8.39):*

բ. *Աստված Ս_____ և Ե_____ (կամ՝ միտք) Ք_____ է (Սաղմոս 7.9):*

գ. *Աստված գիտի մարդու խ_____ (Սաղմոս 94.11):*

դ. *Աստված Կ_____ բոլոր մարդկանց Ծ_____ բաները (կամ՝ գաղտնիքները) (Հռոմեացիներ 2.16):*

4. Մեր ուսումնասիրած աստվածաշնչյան հատվածների հիման վրա ցույց տվեք, որ Աստծո ամենագետ լինելը ոչ միայն ապացուցում է, որ Նա արժանի է դատելու Իր ստեղծագործությունը, այլև երաշխավորում է, որ Նրա դատաստանը մշտապես կատարյալ է լինելու:

_____

_____

_____

_____

_____

_____

ԴԱՏԱՎՈՐ ԱՍՏՎԱԾ

Մենք արդեն դիտարկեցինք Աստծո ամենագետ լինելը: Այժմ կդիտարկենք Նրա դիրքը՝ որպես բոլորի Դատավոր: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Աստված սուրբ, արդար և սիրող գերիշխան Տեր է, Ով հոգում է Իր ստեղծագործության բարեկեցության մասին: Այնպես որ, գերիշխան Տերը պետք է իրավամբ իշխի Իր ստեղծագործության վրա և արդարադատություն գործադրի՝ վարձատրելով բարեգործությունը և պատժելով չարիքը: Քանի որ Աստված սուրբ, արդար և ամենագետ է, բոլոր ստեղծվածները կարող են համոզված լինել, որ Աստված կդատի նրանց արդարության և ազնվության ամենախիստ չափանիշներով: Կրկին՝ անհրաժեշտ է մշտապես հիշել, որ աստվածային դատաստանը մարդու կյանքում՝ ոչ լիազորված միջամտություն կամ բռնարարք չէ: Ընդհակառակն՝ այն Աստծո սուրբ և արդար էության անխուսափելի հետևանքն է, և Նրա իշխանության անհրաժեշտ մասը: Եթե Աստված հրաժարվեր դատել անօրինությունը, Նա բարի ու արդար չէր լինի: Եթե անօրինությունը չզսպվեր ստեղծագործության մեջ, կարճ ժամանակ անց ստեղծագործությունը կկործաներ ինքն իրեն:

1. Աստվածաշնչում անունը մեծ նշանակություն ունի, քանի որ հաճախ այն ինչ-որ բան է հայտնում իրեն կրողի մասին: Ի՞նչ անուններ են վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում:

ա. *Բոլոր Ե_____ Դ_____ (Ծննդոց 18.25):* «Դատավոր» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***շաֆաթ***» բառից, որը նշանակում է «դատել, կառավարել կամ որոշում կայացնել»: Կարևոր է նշել, որ Աստված չունի սահմանափակ իրավասություն: Նա ներկայացնելու է վերջնական դատավճիռը երկրի վրա ապրող ամեն մարդու համար:

բ. *Ա_____ Դ_____ (Եբրայեցիների 12.23):* «Դատավոր» բառն այս խոսքում թարգմանված է հունարեն «կրիտե՛ս» բառից, որը կազմվել է «***կրինո***» («դատել կամ որոշել») բայից: Կրկին, իմաստն այն է, որ Աստծո իրավասությունը չունի տարածքային կամ ժամանակային սահմանափակումներ: Նա կդատի երկնքի և երկրի բոլոր ստեղծվածներին: Գոյություն չունի որևէ վայր կամ որևէ ստեղծված էակ՝ Աստծո իրավասությունից դուրս, և չկա մի բան, ինչը կարող է սահմանափակել Նրան:

2. Վերևում բերված տիտղոսները ցույց են տալիս, որ Աստված՝ բոլորի Դատավորն է: Այժմ մենք կդիտարկենք երկու տիտղոս, որոնք հայտնում են Նրա ազնվությունը: Ի՞նչ անուններ են վերագրվում Աստծուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում:

   ա. *Ա_____ Դատավոր (Սաղմոս 7.11, Բ Տիմոթեոս 4.8):* Սաղմոս 7.11-ում գրված «դատավոր» բառը թարգմանված է եբրայերեն «***ցադիկ***» բառից, որն ունի արդարության և անարատության իմաստ: Բ Տիմոթեոս 4.8-ում այս բառը թարգմանված է հունարեն «***դինկայոս***» բառից, որն ունի արդարության, ճշգրտության և անմեղության իմաստ: Դատաստանի օրը Աստված անարատ կլինի Իր բոլոր դատավճիռների մեջ: Ինչպես հռչակեց Մովսեսը, «Աստծո գործը կատարյալ է, որովհետև Նրա բոլոր ճանապարհները իրավունք են: Աստված հավատարիմ է և անիրավություն չունի: Արդար և ուղիղ է Նա» (Երկրորդ Օրինաց 32.4):

   բ. *Ի_____ Աստված (Եսայի 30.18):* Այս բառը թարգմանված է եբրայերեն «***միշպատ***» բառից, որը նշանակում է՝ դատավորից, օրենսդիրից կամ թագավորից եկող արդարություն: Աստծո իշխանությունն արդար է: Նրա օրենքները և Նրա դատավճիռներն արդար են: Արդարադատությունը՝ Աստծո իշխանության բոլոր կողմերի առանձնահատկությունն է:

   գ. *Ի՞նչ են ցույց տալիս նախորդ կետերում ներկայացված բառերը Աստծո արդար բնավորության և դատավճիռների մասին: Գրի՛ առեք ձեր մտքերը:*

   _____

   _____

   _____

   _____

3. Վերևում ներկայացված Աստծո անուններից մենք իմացանք, որ Նա արդար Դատավոր է: Այժմ կդիտարկենք մի քանի աստվածաշնչյան բանալի հատվածներ, որոնք հաստատում են, որ Աստծո դատավճիռները ճշմարիտ և արդար են: Ամփոփե՛ք այս հատվածներում գտնվող ճշմարտությունները ձեր բառերով:

   ա. *Ծննդոց 18.25*

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աբրահամի հարցը հռետորական է և հաստատական պատասխան է ենթադրում: Դարեր շարունակ Աստված ապացուցել է, որ Նա արդար Աստված է, Ում գործերը և դատավճիռներն անարատ են: Աստծո նպատակներին կամ դատավճիռներին հակառակվելը նշանակում է սխալ լինել:

բ. *Սաղմոս 96.10-13*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածում օգտագործվում է երեք բառ՝ ցույց տալու համար, որ Աստծո դատն արդար է: (1) «Ուղղություն». թարգմանված է եբրայերեն «***մեշար***» բառից, որն ունի հավասարության, արդարության և ազնվության իմաստ: (2) «Արդարություն». թարգմանված է եբրայերեն «***ցեդեկ***» բառից, որն ունի արդարության, ճշգրտության և ազնվության իմաստ: (3) Ճշմարտություն. թարգմանված է եբրայերեն «***էմունահ***» բառից, որն ունի կայունության, ազնվության և հավատարմության իմաստ:

գ. *Եսայի 5.16*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Գլխավոր ճշմարտությունը, որը գրված է այս խոսքում այն է, որ Տիրոջ դատաստանի ժամանակ բոլորը կտեսնեն Նրա արդարությունը, ճշմարտացիությունը և սրբությունը: Վերջին դատաստանին չի լինի ոչ մի կասկած, որ Աստված արդար և սուրբ է, և որ Նրա դատավճիռներն անաչառ են: Նոր անգլերեն թարգմանությունն այսպես է վերծանում այս խոսքը. «ՏԵՐԸ, Ով հրամայում է բանակներին, կմեծարվի, երբ Նա պատժի ենթարկի. գերիշխան Աստծո իշխանությունը կճանաչվի, երբ Նա դատաստան անի» (NET):

Գլուխ 41. Դատաստանի հավաստիությունը

Ժամանակակից մշակույթը գրեթե չի մտահոգվում աստվածային դատաստանով: մենք ապրում ենք բարոյական հարաբերականության ժամանակաշրջանում, որում ցանկացած հիշատակում արդար Աստծո մասին ծաղրի է ենթարկվում՝ միամիտ համարվելով: Նույնիսկ ամենափոքր ակնարկն այն մասին, որ պատմության ընթացքում ապրող բոլոր մարդիկ կանգնելու են վերջին Դատաստանի առջև, բախվում է կա՛մ բարկության, կա՛մ ծաղրի: Մեր ժամանակաշրջանը նման է Պետրոս առաքյալի նկարագրությանը.

«Բայց սկզբում այս իմացեք, որ հետին օրերում ծաղր անողներ կգան, որ իրենց ցանկությունների պես կվարվեն: Եվ կասեն. «Ո՞ր է Նրա գալստյան խոստումը, որովհետև, այնուհետև որ հայրերը վախճանվեցին, ամեն բան նույնպես կենում, մնում է աշխարհի ստեղծագործությունից հետո» (Բ Պետրոս 3.3,4):

Չնայելով ժամանակակից մարդու կամայականություններին և հեգնանքին՝ Աստվածաշնչի վկայությունը հաստատ է. վերջին Դատաստանի օրը գալու է այս աշխարհի վրա: Այդ օրը Աստված և Նրա արդարությունը արդարացվելու են, և ամեն մարդ վարձատրվելու է՝ համաձայն իր գործերի:

ԴԱՏԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Երկու հատված Սաղմոսների գրքում գեղեցիկ և տպավորիչ կերպով ներկայացնում է Դատաստանի օրվա հավաստիությունը: Ամփոփե՛ք դրանցում ներկայացված ճշմարտությունները:

ա. *Սաղմոս 9.7,8*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կա» բառը թարգմանված է եբրայերեն «***յաշավ***» բառից, որը նշանակում է «նստել»: Ըստ այս խոսքի համատեքստի (խոսք 4)՝ Աստված բազմած է Իր գահին: «Պատրաստել» բառը թարգմանված է եբրայերեն ***«կուն»*** բառից, որը նշանակում է «պատրաստել, կարգավորել կամ հաստատ դարձնել»: Հավիտենական Աստված, Ով չի փոխվում և իշխում է հավիտյան, պատրաստել է Իր գահը դատաստանի համար: Այն ***անպայման*** տեղի է ունենալու:

բ. *Սաղմոս 96.10-13*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստվածաշնչում աշխարհի ապագա և վերջնական դատաստանը՝ որոշված փաստ է: Արդարների համար այդ օրը ցնծության օր կլինի, քանի որ ստեղծագործությունը վերջապես կազատվի մեղքի անեծքից և իշխանությունից (Հռոմեացիների 8.19-22): Բայց անօրենների համար այդ օրը դատապարտության օր կլինի:

2. Ժողովող գրքում կրկին վկայություններ ենք գտնում դատաստանի հավաստիության մասին: Ամփոփե՛ք այն ճշմարտությունները, որոնք գրված են հետևյալ հատվածներում:

ա. *Ժողովող 3.16,17*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մարդկության պատմության ամբողջ ընթացքը կարելի է բնութագրել ամեն տեսակի անարդարություններով. հաճախ անօրենները բարգավաճում են, իսկ արդարները՝ դատապարտվում: Այս աշխարհի անարդարության պատճառով շատերը կասկածում են, որ Աստված արդար է, և որ լինելու է հատուցման վերջին օր, երբ արդարությունը վերականգնվելու է: Այնուամենայնիվ, Աստվածաշունչը հաստատում է, որ Աստված դատելու է և՛ արդարներին, և՛ անօրեններին:

բ. *Ժողովող 11.9*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիմնական գաղափարն այն է, որ ցանկացած գործողություն այս երկրի վրա հավիտենական հետևանքներ է ունենալու: Բոլոր մարդիկ, հատկապես՝ երիտասարդները, որոնց թվում է, թե մահն ու դատաստանն այնքա՞ն հեռու են, պետք է ապրեն այս ճշմարտության լույսի ներքո:

գ. *Ժողովող 12.14*

_____

_____

3. Վերջին դատաստանի հավաստի լինելը միայն հինկտակարանյան վարդապետություն չէ. այն ակնհայտորեն նշված է Նոր կտակարանում: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածները Նոր կտակարանից այս ճշմարտության մասին:

ա. *Գործք 17.31,32*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաստատել» բառը թարգմանված է հունարեն «***հի՛ստեմի***» բառից, որը նշանակում է «կանգնել, դնել իր տեղում, նշանակել, սահմանել կամ վավերացնել»: Այս խոսքում պարզորեն գրված է ճշմարտությունն այն մասին, որ Դատաստանի օրը հաստատվել է Աստծո անփոփոխ հրամանով:

բ. *Եբրայեցիների 9.27*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Սահմանված» բառը թարգմանվել է հունարեն «***ապո՛կեյմայ***» բառից, որը նշանակում է «մի կողմ դրված», «պահված» կամ «նախօրոք որոշված»: Դատաստանը մահվան պես հաստատ է:

գ. *Հայտնություն 22.12*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Շուտով» բառը թարգմանված է հունարեն «***տաչու՛***» բառից, որը նույնպես կարելի է թարգմանել «արագորեն» կամ «շտապ»: Կարևոր է հասկանալ, որ գաղափարն այն չէ, որ Հիսուսը վերադառնալու է մի քանի տարուց կամ տասնամյակից, այլ՝ որ Նրա վերադարձն անխուսափելի է, և ամեն սերունդ պետք է պատրաստվի դրան: Ոմանք մերժում են այս մարգարեությունն այն պատճառով, որ անցել է գրեթե երկու հազար տարի, բայց մինչև օրս ոչինչ չի խոսվում Նրա գալստյան մասին: Այնուամենայնիվ, Աստծո Խոսքն այս կերպով ծաղրելը լիովին համապատասխանում է Պետրոսի կանխատեսմանը. «Բայց առաջ այս իմացեք, որ հետին օրերում ծաղր անողներ կգան, որ իրենց ցանկությունների պես կվարվեն: Եվ կասեն. «Ո՞ւր է Նրա գալստյան խոստումը, որովհետև, այնուհետև որ հայրերը վախճանվեցին, ամեն բան նույնպես կենում, մնում է աշխարհի ստեղծագործությունից հետո» (Բ Պետրոս 3.3,4):

ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Մենք կդիտարկենք ամենազարմանալի հատվածը ամբողջ Աստվածաշնչից վերջին Դատաստանի վերաբերյալ՝ ամփոփելով մեր ուսումնասիրությունն Աստծո դատաստանի մասին: Կարդացե՛ք Հայտնություն 20.11-13-ը մի քանի անգամ, մինչև որ ծանոթանաք դրա բովանդակությանը, իսկ հետո պատասխանե՛ք հետևյալ հարցերին:

1. Ինչպե՞ս է Աստծո դատաստանի գահը նկարագրվում խոսք 11-ում: Ի՞նչ ճշմարտություններ է հայտնում այս նկարագրությունը:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո գահը սպիտակ և մեծ է: «Մեծ» ածականը թարգմանված է հունարեն «***մե՛գաս***» բառից: Մարդկանց բոլոր գահերի մեծությունը և փառքը՝ սկսած պատմության սկզբից, չնչին են՝ Աստծո գահի համեմատ: «Սպիտակ» ածականը ցույց է տալիս սրբություն և մաքրություն, որոնք վերաբերում են ոչ միայն գահին, այլև դրա վրա Նստողին:

2. Համաձայն խոսք 11-ի՝ որտե՞ղ է նստած Աստված: Ինչպիսի՞ ճշմարտություններ է այս փաստը հայտնում մեզ Աստծո մասին և Իր ստեղծածների հետ ունեցած հարաբերությունների մասին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն, որ Աստված նստած է գահի վրա, ցույց է տալիս, որ Նրա գերիշխանությունը բացարձակ և անվիճարկելի է: Նա տիրում է ամբողջ աշխարհին՝ առանց որևէ ջանք գործադրելու և որևէ մտահոգության, որ ինչ-որ մեկը կարող է գահընկեց անել Իրեն: Նա ղեկավարում է տիեզերքի պատմության ամենանշանակալի և որոշիչ իրադարձությունները՝ առանց որևէ դժվարության կամ լարվածության:

3. Խոսք 11-ում գրված է, որ երկինքը և երկիրը կփախչեն Աստծուց, և որ դրանցում ոչ մի տեղ չի գտնվի: Ինչպիսի՞ կարևոր ճշմարտություններ է ցույց տալիս այս պնդումը:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Երկու հիմնական ճշմարտությունները հետևյալն են. (1) Դատաստանի ժամանակ հայտնվում է Աստծո ահավոր ներկայությունը, և (2) նախկին երկինքն ու երկիրն անցնում են, որպեսզի իրենց տեղը զիջեն նոր երկնքին և երկրին:

4. Համաձայն խոսք 12-ի՝ ո՞վ կկանգնի Աստծո դատաստանի գահի առջև մեծ Դատաստանի օրը: Համաձայն խոսք 13-ի՝ ինչ-որ մեկը կկարողանա՞ փախչել կամ թաքնվել այդ օրը:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Դժոխք» («հադես») բառը խոսք 13-ում, հավանաբար, վերաբերում է գերեզմանին կամ մահացածների գտնվելու վայրին: Մարդիկ չեն կարողանա թաքնվել ամենախորը ծովում, ամենախավար գերեզմանում և ո՛չ էլ՝ դժոխքի ամենաստորին հատվածներում: Բոլորը կկանչվեն՝ կանգնելու Աստծո առջև Նրա դատաստանի ահավոր օրը:

5. Համաձայն խոսքեր 12,13-ի՝ ի՞նչ են խորհրդանշում «գրքերը»: Ինչի՞ հիման վրա է Աստված դատելու ամեն մարդու:

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Բոլոր մարդիկ դատվելու են համաձայն իրենց գործերի, ինչպես որ դրանք գրանցված են Աստծո գահի առջև: Այդ օրը փրկվելու են միայն նրանք, ում անունները գրված են Կյանքի գրքում՝ նրանք, ովքեր հավատացել են Քրիստոսին և փրկության կատարյալ աշխատանքին, որը Նա կատարել է իրենց փոխարեն (խոսք 15):

6. Ինչպե՞ս պետք է ապրեն մարդիկ՝ իմանալով, որ ապագա և վեջին դատաստանն անխուսափելի է: Ամփոփե՛ք ձեր մտքերը:

Գլուխ 42. Աստված Փրկիչ է

Մենք կավարտենք Աստծո մասին վարդապետության ուսումնասիրությունը՝ դիտարկելով բարի լուրն այն մասին, որ տիեզերքի Թագավորը, Օրենսդիրը և Դատավորը նաև Փրկիչ է: Այս գլխում կխոսենք փրկող Աստծո և Նրա փրկության ծրագրի մասին: Հաջորդ գլուխներում մենք հատկապես կդիտարկենք Հոր, Որդու և Սուրբ Հոգու դերերը մեր փրկության մեջ: Կտեսնենք, որ մեր փրկությունը Երրորդության՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու աշխատանքն է:

ՓՐԿԻՉ ԱՍՏՎԱԾ

Այս բաժնում կդիտարկենք Աստվածաշնչի այն հատվածները, որոնք հաստատում են Աստծո փրկարար աշխատանքը մեղավոր մարդկանց փոխարեն: Մենք կիմանանք, որ Աստված ոչ միայն ցանկանում է փրկել, այլև Նա միակն է, Ով կարող է փրկել:

1. Ինչպիսի՞ անուններ են վերագրվում Աստծուն հետևյալ հատվածներում՝ թե՛ Հին, թե՛ Նոր կտակարաններից: Ի՞նչ են դրանք հաստատում Աստծո մասին:

   ա. *Փ_____ (Սաղմոս 17.7):* Եբրայերեն «***յաշա***» բառից, որը նույնպես կարող է թարգմանվել «Ազատող»: Ուշադրություն դարձրեք, որ Աստված փրկում է նրանց, ովքեր հուսացած են Իրեն (կամ՝ ապաստան են փնտրում Իրենում):

   բ. *Փ_____ և Ա_____ (Եսայի 60.16):* «Փրկիչ» բառը թարգմանված է եբրայերեն «***յաշա***» բառից (տեսե՛ք սահմանումը վերևում): «Ազատող» բառը թարգմանված է եբրայերեն ***«գաալ»*** բառից, որը նշանակում է «ետ գնել կամ վարվել ազգականի պես»՝ համաձայն Ղևտացիների 25.25-ի նկարագրության, ինչի օրինակը տեսնում ենք Բոոսի կյանքում (Հռութ 4.1-15):

   գ. *Մեր Փ_____ Աստված (Տիտոս 3.4, Ա Տիմոթեոս 2.3):* Հունարեն «***սոտե՛ր***» բառից, որը նույնպես կարող է թարգմանվել «ազատող», «փրկագործ» կամ «պահապան»:

2. Ինչպե՞ս են հետևյալ աստվածաշնչյան հատվածները նկարագրում Աստծուն: Ի՞նչ են սովորեցնում այս նկարագրությունները Նրա փրկարար աշխատանքի մասին:

   ա. *Սաղմոս 3.8, 37.39*

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Գաղափարն այն է, որ փրկությունն Աստծուց է: Այն Նրա առանձնաշնորհն է: Միայն Նա կարող է փրկել և ազատել: Սաղմոս 37.39-ում արդարներն այն մարդիկ չեն, որոնց կյանքը բարոյապես կատարյալ է, այլ՝ ովքեր վստահում են և հուսացած են Աստծուն և Նրա փրկությանը: Արդարները հավատքով պիտի ապրեն (Ամբակում 2.4):

բ. *Սաղմոս 68.19,20*

_____

_____

_____

գ. *Սաղմոս 74.12*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Փրկություններ» բառը թարգմանված է եբրայերեն «***յեշուաh***» բառից, որը հենց նշանակում է «փրկություն»:

դ. *Հովնան 2.9*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո կանչի դեմ ապստամբելու պատճառով Հովնանը տանջվում էր մեծ ձկան փորում՝ ծովի խորքերում: Ոչ ոք չէր կարող փրկել Հովնանին՝ բացի Աստծուց: Նույնը կարելի է ասել ցանկացած մարդու վերաբերյալ:

3. Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Աստված ոչ միայն Փրկիչ է, այլև՝ ***միակ*** Փրկիչը: Ի՞նչ են սովորեցնում Եսայի 43.11-ը և Եսայի 45.21-ը այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածներն անչափ կարևոր են երկու պատճառով. (1) դրանք ցույց են տալիս, որ փրկությունը բացառապես Աստծո գործն է, և որպես հետևություն՝ (2) դրանք ապացուցում են Հիսուս Քրիստոսի աստվածությունը: Նոր կտակարանում Քրիստոսը կոչվում է «Փրկիչ» և նույնիսկ՝ «աշխարհի Փրկիչը» (Հովհաննես 4.42): Եթե Քրիստոսը՝ Աստված չէ այդ բառի լիարժեք իմաստով, Նա չի կարող Փրկիչ լինել: Նշանակում է՝ եթե Քրիստոսը Փրկիչ է, ուրեմն Նա պետք է ճշմարտապես Աստված լինի:

4. Համաձայն Եսայի 45.22-ի՝ ի՞նչ կոչ է Աստված անում բոլոր մարդկանց: Ինչպե՞ս մարդիկ պետք է արձագանքեն դրան: Ո՞րն է մեր՝ քրիստոնյաներիս դերը՝ մինչև երկրի ծայրերը տարածվող այս կանչի մեջ:

_____

_____

_____

_____

5. Համաձայն Ա Մնացորդաց 16.23,24-ի և Սաղմոս 96.1-3-ի՝ ինչպե՞ս մենք՝ որպես քրիստոնյաներ, պետք է արձագանքենք Աստծո փրկությանը:

_____

_____

_____

_____

_____

ԱՍՏԾՈ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Նախորդ բաժնում սովորեցինք, որ Աստված Փրկիչ է: Այժմ կտեսնենք, որ Աստծո փրկությունը որոշված և ծրագրված էր նախքան մարդու անկումը, նույնիսկ՝ նախքան աշխարհի արարումը:

1. Առաջին Պետրոս 1.20-ը շատ կարևոր փաստ է հայտնում մեզ Քրիստոսի մասին: Ի՞նչ է սովորեցնում այս հատվածը Աստծո փրկության ծրագրի մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Առաջուց ճանաչված» բառակապակցությունը թարգմանված է հունարեն «***պրոգի-նո՛սկո***» բառից («***պրո***» = նախկինում + «***գինո՛սկո***» = «իմանալ, ճանաչել»): Աստվածաշնչում այս բառն ունի ոչ միայն գիտելիքի, այլև՝ ընտրության իմաստ: Այս հատվածն ապացուցում է, որ մինչև աշխարհն արարելը, Հայրն արդեն որոշել կամ վճռել էր ուղարկել Իր Որդուն՝ մահանալու Իր ժողովրդի մեղքերի համար: Ավելին՝ այս հատվածն ապացուցում է, որ Հայրը նույնպես որոշել էր Քրիստոսին ուղարկելու հստակ ժամանակը: Գաղատացիների 4.4-ում Պողոսը հաստատում է այս ճշմարտությունը. «Բայց երբ որ ժամանակի լրումը եկավ, Աստված ուղարկեց Իր Որդուն»:

2. Եփեսացիների 1-ին գլխում գտնում ենք ևս մեկ ապացույց այն մասին, որ Աստծո փրկության ծրագիրը որոշվել է աշխարհի արարումից առաջ: Ծանոթացե՛ք Եփեսացիների 1.3-6-ի բովանդակությանը, իսկ հետո կատարե՛ք հետևյալ վարժությունները:

ա. *Ի՞նչ է սովորեցնում Եփեսացիների 1.4-ը Աստծո փրկության ծրագրի մասին:*

(1) Ե՞րբ Աստված ընտրեց Իր ժողովրդին:

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ընտրել» բառը թարգմանված է հունարեն «***էկլե՛գո***» բառից, որը նշանակում է «ջոկել, ընտրել կամ առանձնացնել»: Այս բառը հաճախ է օգտագործվում Յոթանասունից թարգմանության մեջ (Հին կտակարանի հունարեն թարգմանությունը), երբ խոսքն այն մասին է, որ Աստված չընտրեց Իսրայելի ժողովրդին նրանց անարժանիքների պատճառով (Երկրորդ Օրինաց 7.7,8): «Աշխարհն ստեղծելուց առաջ» արտահայտությունը վերաբերում է Աստծո հավիտենական խորհուրդներին, որոնք Նա կազմել էր նախքան աշխարհն արարելը:

(2) Ո՞ւմ Աստված ընտրեց՝ որպես Իր ժողովուրդ:

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ինչպե՞ս Աստված կարող էր ընտրել մեր նման մարդկանց՝ բարոյապես ապականված, և հանցավոր՝ անթիվ մեղքերի մեջ: Նա ընտրեց մեզ Իր Որդու մեջ՝ Գողգոթայում Նրա կատարած աշխատանքի շնորհիվ: Մինչև աշխարհի արարումը, Աստված և՛ ընտրեց Իր ժողովրդին, և՛ որոշեց, թե ինչպես է հաշտեցնելու նրանց Իր հետ:

(3) Ի՞նչ նպատակով Աստված ընտրեց Իր ժողովրդին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստծո կատարած ընտրությունը Քրիստոսում և աշխարհի արարումից առաջ ունի բարոյական նպատակ. մենք պետք է լինենք սուրբ և անարատ Նրա առջև: Մենք արդեն այդպիսին ենք «Քրիստոսում», այսինքն՝ ***համաձայն մեր դիրքի***: Այնուամենայնիվ, Աստված նույնպես ցանկանում է, որ մենք սուրբ և անարատ դառնանք մեր առօրյայում, այսինքն՝ ***համաձայն մեր վարքի***:

բ. *Ի՞նչ է սովորեցնում Եփեսացիների 1.5-ը Աստծո փրկության ծրագրի մասին:*

(1) Ինչի՞ համար Աստված նախասահմանեց («առաջուց սահմանեց») ամեն հավատացյալի:

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Առաջուց սահմանել» բառակապակցությունը թարգմանված է հունարեն «***պրոորի՛զո***» բառից («***պրո***» = «նախկինում» + «***հորի՛զո***» = «ընդգծել սահմանները, որոշել»), ինչը նշանակում է «կանխորոշել կամ նախասահմանել»: Աշխարհի արարումից առաջ Աստված որոշել էր որդեգրել Իր ընտրյալներին՝ որպես Իր որդիներ և դուստրեր, և դարձնել նրանց Իր ժառանգները (Հռոմեացիների 8.17, Գաղատացիների 4.7, Եփեսացիների 3.6):

(2) Ո՞ւմ միջոցով ենք մենք որդեգրություն ստացել: Ի՞նչ է սա նշանակում:

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մենք որդեգրություն չենք ստացել մեր արժանիքներով կամ առավելություններով, այլ՝ Քրիստոսի Անձի և մեր փոխարեն կատարած աշխատանքի միջոցով: Սա և՛ խոնարհեցնում է մեզ, և՛ վստահություն է ներշնչում: Մեր դիրքն Աստծո առջև հիմնված չէ մեր անզոր ջանքերի վրա, այլ՝ Քրիստոսի կատարյալ և անփոփոխ աշխատանքի, որը Նա կատարեց մեր փոխարեն:

(3) Ո՞րն էր Աստծո դրդապատճառը մեզ որդեգրելու համար:

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաճություն» բառը թարգմանված է հունարեն «***եվդոկի՛ա***» բառից, որը բառացիորեն նշանակում է «բարի հաճություն»: «Իր կամքի հաճության պես» արտահայտությունը նույնպես կարելի է թարգմանել «Իր կամքի նպատակով» (ESV) կամ՝ «Իր կամքի հաճությամբ» (NET): Աստված սիրեց մեզ, որովհետև Նա սեր է (Ա Հովհաննես 4.8), և որովհետև Նա որոշել է սիրել մեզ (Երկրորդ Օրինաց 7.7,8): Աստված որդեգրեց մեզ, որովհետև Նրան հաճելի էր այդպես անելը:

գ. *Համաձայն Եփեսացիների 1.6-ի՝ ինչո՞ւ Աստված ծրագրեց և սահմանեց մեր փրկությունը: Ո՞րն էր դրա մեծագույն և վերջնական նպատակը:*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Վերջնական նպատակը, որի համար Աստված փրկեց մեզ, Իր փառքն է: Նրա փրկության աշխատանքն Իր փառավոր շնորհքի դրսևորումն է, որի պտուղը լինելու է մարդկանց և հրեշտակների անդադար փառաբանությունը ամբողջ հավիտենության ընթացքում:

3. Հռոմեացիների 8.29,30-ը հաճախ անվանում են «Փրկության ոսկե շղթա», որովհետև այս երկու խոսքերում մենք տեսնում ենք Աստծո փրկության ծրագիրը՝ սկզբից մինչև վերջ: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո ցույց տվեք այդ շղթայի ամեն մի օղակը:

ա. *Աստված Ա_____ Ճ_____ մեզ (խոսք 29):* Թարգմանված է հունարեն «***պրոգինո՛սկո***» բառից («***պրո***» = նախկինում + «***գինո՛սկո***» = «իմանալ, ճանաչել»): Աստվածաշնչում այս բառն ունի ոչ միայն գիտելիքի, այլև՝ ընտրության իմաստ: Նույն բառն օգտագործվում է Ա Պետրոս 1.20-ում՝ Քրիստոսի վերաբերյալ. «...որ առաջուց ճանաչված էր աշխարհի սկզբից առաջ»: Սա չի նշանակում, որ Աստված Իր ամենագիտությամբ ընդամենը կանխատեսեց, որ Քրիստոսը փրկելու էր Իր ժողովրդին, այլ՝ որ Աստված հատուկ ընտրեց Քրիստոսին այս առաջադրանքի համար:

բ. *Աստված Ա_____ Ս_____ մեզ (խոսք 29,30):* Թարգմանված է հունարեն «***պրոորի՛զո***» բառից («***պրո***» = «նախկինում» + «***հորի՛զո***» = «ընդգծել սահմանները, որոշել»), ինչը նշանակում է «կանխորոշել կամ նախասահմանել»: Մինչև աշխարհն ստեղծելը, Աստված նախասահմանեց, որ Իր ընտրյալները կերպարանակից են լինելու Իր Որդու պատկերին:

գ. *Աստված Կ_____ մեզ (խոսք 30):* Թարգմանված է հունարեն «***կալե՛ո***» բառից, որը նշանակում է. «կանչել, ժողով գումարել կամ հրավիրել»: Աստված ընտրեց և նախասահմանեց մեզ աշխարհն ստեղծելուց առաջ, բայց Նա կանչեց մեզ մեր կյանքի որոշակի ժամանակահատվածում՝ Ավետարանի քարոզման միջոցով: Այս ճշմարտությունն ակնհայտորեն երևում է Գաղատացիների 1.15,16-ում, որում Պողոսը հայտարարեց, որ Աստված առանձնացրել էր իրեն նույնիսկ իր մոր որովայնից (ընտրություն և նախասահմանություն), բայց կանչել էր Ավետարանի միջոցով իր կյանքի որոշակի ժամանակահատվածում, երբ առավել նպատակահարմար էր համարել:

դ. *Աստված Ա_____ մեզ (խոսք 30):* Նրանք, ովքեր կանչվում են Ավետարանի քարոզման և Հոգու վերակենդանացնող աշխատանքի միջոցով, անպայման ընդունում են Քրիստոսին և *արդարանում* են: Այս բառը հունարեն «***դիկայո՛ո***» բառից է, որը նշանակում է «ցույց տալ կամ հայտարարել որպես արդար»: Մեր փրկության համատեքստում արդարությունը՝ դատական կամ իրավաբանական տերմին է: Շնորհիվ այն կատարյալ աշխատանքի, որը Քրիստոսը կատարեց հավատացյալի փոխարեն՝ Աստված կարող է իրավաբանորեն հայտարարել, որ այդ անձնավորությունը կատարելապես արդար է Իր առջև:

ե. *Աստված Փ_____ Ա_____ մեզ (խոսք 30):* Թարգմանված է հունարեն «***դոքսա՛զո***» բառից, որը նշանակում է «մտածել, ներկայացնել կամ գնահատել՝ որպես փառավոր»: Հավատացյալի փառավորումը վերաբերում է նրա վերջնական դիրքին Աստծո առջև՝ իր փառավորված և կատարյալ դարձած մարմնում, որը կերպարանված է Քրիստոսի պատկերով և ընդմիշտ ազատված է մեղքի իշխանությունից: Այս խոսքում Պողոսը խոսում է հավատացյալի վերջնական փառավորման մասին՝ որպես արդեն ավարտված աշխատանքի: Պատճառը, հավանաբար, Պողոսի մեծ վստահությունն է Աստծո և Նրա գերիշխան վճիռների հանդեպ. նա համոզված է, որ Աստված կավարտի այն բարի գործը, որն սկսեց հավատացյալի կյանքում (Փիլիպեցիների 1.6): Կարևոր է նշել, որ մեր փրկության միակ փուլը, որը Պողոսը կարծես չի նշել այս ցուցակում՝ մեր սրբացումն է (այսինքն՝ մեր աստիճանաբար աճը Քրիստոսին նմանվելու մեջ), որը տեղի է ունենում՝ սկսած մեր արդարացումից՝ մինչև մեր վերջնական փառավորումը: Սրբացման գործընթացի նպատակը՝ փառավորումն է. այնպես որ, Պողոսը կարող էր պարզապես չնշել սրբացումը, որպեսզի շեշտադրում աներ վերջնական նպատակի վրա, որն, անկասկած, իրականանալու է ամեն հավատացյալի կյանքում՝ Աստծո գերազանց զորությամբ:

Գլուխ 43. Հոր աշխատանքը փրկության մեջ

Աստված, Ով կազմել է Իր ժողովրդի փրկության ծրագիրը, նույնպես գործել է մարդկության պամության մեջ (և մինչև օրս գործում է)՝ այդ ծրագիրն իրագործելու համար: Ստորև կդիտարկենք մի քանի կարևոր ճշմարտություն այն մասին, թե որն է Հայր Աստծո դերն Իր ժողովրդի փրկության մեջ. Հայր Աստված ուղարկեց Իր Որդուն, վերագրեց մեր մեղքն Իր Որդուն, պատժեց Իր Որդուն, հարություն տվեց Իր Որդուն մեռելներից, բարձրացրեց Իր Որդուն Իր աջ կողմը և այժմ կոչ է անում մարդկանց՝ ապաշխարել և հավատալ:

ՀԱՅՐՆ ՈՒՂԱՐԿԵՑ ԻՐ ՈՐԴՈՒՆ

Ամենամեծ սխալներից մեկը, որը թույլ են տալիս նույնիսկ ամենաանկեղծ հավատացյալները, փրկության աստվածային աշխատանքը միայն Քրիստոսին վերագրելն է: Ոմանք նույնիսկ սովորեցնում են, որ Քրիստոսը կատարեց Իր աշխատանքը՝ փրկելով մեզ Հայր Աստծուց: Նման գաղափարն ակնհայտորեն հակասում է Աստվածաշնչին: Մենք պետք է մշտապես հիշենք, որ մեր փրկությունն սկիզբ է առնում Հայր Աստծուց, Ով սիրեց մեզ, և այդ պատճառով էլ ուղարկեց Իր միակ Որդուն:

1. Պատահական չէ, որ Հովհաննես 3.16-ը ամենասիրված խոսքերից է ամբողջ Աստվածաշնչում: Ի՞նչ է այն սովորեցնում մեզ Հոր մասին և այն մասին, թե ինչ դեր է Նա կատարում մեր փրկության մեջ:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Փոքրիկ «այնպես» մակբայը թարգմանված է հունարեն «***հուտոս***» բառից, որը կարող է նշանակել այն չափը, որով Աստված սիրեց այս աշխարհը (օրինակ՝ Աստված այնքա՜ն շատ սիրեց այս աշխարհը, որ տվեց Իր Որդուն), կամ՝ այն կերպը, որով Աստված սիրեց այս աշխարհը (օրինակ՝ ահա թե ինչպես Աստված սիրեց այս աշխարհը. Նա տվեց Իր Որդուն):

2. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչո՞ւ Աստված ուղարկեց Իր Որդուն այս աշխարհ: Ի՞նչ են սովորեցնում այս հատվածները Հոր մասին և այն մասին, թե ինչ դեր է Նա կատարում մեր փրկության մեջ:

ա. *Հովհաննես 3.17*

_____

_____

_____

_____

_____

բ. *Ա Հովհաննես 4.14*

_____

_____

_____

_____

_____

ՀԱՅՐԸ ՎԵՐԱԳՐԵՑ ՄԵՐ ՄԵՂՔԵՐՆ ԻՐ ՈՐԴՈՒՆ

Հայր Աստված չուղարկեց Իր Որդուն այս աշխարհ, որ ընդամենը սովորեցներ մեզ ճշմարտություններ Իր մասին կամ փոխանցեր սկզբունքներ, որոնցով կարող էինք Իրեն հաճելի կյանք վարել: Աստված ուղարկեց Իր Որդուն այս աշխարհ, որպեսզի Նա մահանար՝ դառնալով քավության զոհ մեր փոխարեն: Եվ որպեսզի սա տեղի ունենար, անհրաժեշտ էր, որ Աստված վերագրեր մեր մեղքն Իր անմեղ Որդուն: «Վերագրել» բառը լատիներենում «***իմպուտարե***» բայն է («***իմ***» = «մեջ, դեպի» + «***պուտարե***» = «համարել»), ինչը նշանակում է «համարել ինչ-որ մեկի հաշվին»: Խաչի վրա Հայրը համարեց մեր մեղքն Իր Որդու հաշվին: Սա քրիստոնեական հավատքի մեծագույն վարդապետություններից մեկն է:

1. Համաձայն Հռոմեացիների 8.3-ի՝ ի՞նչ տեսակի մարմնի մեջ Աստված ուղարկեց Իր Որդուն:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Մարմնավորվելով՝ Աստծո Որդին չհագավ այնպիսի մարմին, որը մարդն ուներ մինչև անկումը: Թեև Նրա մարմինն ապականված չէր մեղքով, այն ենթակա էր անկում ապրած մարդկային ցեղի բոլոր սարսափելի հետևանքներին: Որպես մարդ՝ Նա ենթակա էր անկում ապրած մարդկության սահմանափակումներին, տկարություններին, նեղություններին և տառապանքներին: Եթե Որդին հագներ փառքով և զորությամբ լցված մարմին, որը մարդիկ ունեին նախքան մեղանչելը, դա իսկապես մեծ նվաստացում կլիներ Նրա համար: Այնուամենայնիվ, Նա շատ ավելի մեծ նվաստացում կրեց՝ ուղարկվելով «մեղքի մարմնի նմանությամբ»:

2. Համաձայն Բ Կորնթացիների 5.21-ի՝ ինչպե՞ս Հայր Աստված վարվեց Իր Որդու հետ, երբ Նա խաչի վրա էր: Ի՞նչ է սովորեցնում այս ճշմարտությունը մեղքը վերագրելու վարդապետության մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Աստված մեղք դարձրեց Քրիստոսին նույն կերպով, ինչպես որ հավատացյալը դարձավ «Աստծո արդարությունը»: Այն պահին, երբ մարդը հավատում է Հիսուսին, նրա մեղքը ներվում է, և Քրիստոսի արդարությունը վերագրվում է նրան կամ փոխանցվում է նրա հաշվին: Աստված իրավաբանորեն արդար է համարում նրան և վարվում է նրա հետ արդարի պես: Խաչի վրա Քրիստոսը չդարձավ ապականված կամ անօրեն: Կատարվեց հետևյալը. Աստված վերագրեց մեր մեղքերը Նրան, իրավաբանորեն մեղավոր համարեց Նրան և վարվեց Նրա հետ մեղավորի պես:

ՀԱՅՐԸ ՊԱՏԺԵՑ ԻՐ ՈՐԴՈՒՆ

Բավական չէր, որ Որդին կրեր մեր մեղքերը. նույնպես անհրաժեշտ էր, որ Նա կրեր Աստծո զայրույթը և մահանար մեր փոխարեն: Որդու չարչարանքի և մահվան միջոցով Աստծո արդարության պահանջները մեր հանդեպ գոհացվեցին, և Աստծո զայրույթը մեր դեմ խաղաղվեց: Միայն այս կերպով Աստված կարող էր պահպանել Իր արդարությունը և միաժամանակ արդարացնել մեղավորներին:

1. Աստվածաշնչում՝ Եսայի 53.4,5-ում գրված է ամենակարևոր հատվածներից մեկը Քրիստոսի չարչարանքների և մահվան մասին: Ինչպե՞ս Հայր Աստված վարվեց Իր միակ Որդու հետ, երբ Նա Գողգոթայի խաչի վրա էր:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածում օգտագործվում է յոթ բառ՝ նկարագրելու համար Քրիստոսի չարչարանքներն Աստծո զայրույթի ներքո. Նա պատվահարվեց, զարկվեց, նկուն եղավ (կամ՝ չարչարվեց), վիրավորվեց, հարվածվեց, պատժվեց, խոցվեց (կամ՝ մտրակվեց): «Նոր Անգլերեն» թարգմանությունը պարզաբանում է այս հատվածի իմաստը. «...մենք մտածում էինք, որ Նա պատժվում էր, հարձակման էր ենթարկվում Աստծո կողմից և չարչարվում էր մի բանի համար, ինչը Ինքն էր գործել: [Բայց] Նա խոցվեց մեր ապստամբ գործերի համար, հարվածվեց մեր մեղքերի համար. Նա պատիժ կրեց, որն առողջացրեց մեզ, որովհետև Նրա վերքերով մենք բժշկվեցինք» (NET):

2. Եսայի 53.10-ը ևս մեկ շատ կարևոր հատված է Գողգոթայում Քրիստոսի չարչարանքների բնույթի վերաբերյալ: Ինչպե՞ս է այս հատվածը հաստատում այն, ինչ մենք սովորեցինք Եսայի 53.4,5-ից:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հաճեց» բառը թարգմանված է եբրայերեն «***չաֆեց***» բառից, որը նշանակում է. «բերկրանք ապրել, հաճելի համարել կամ ցանկանալ»: Աստված վայրագաբար հաճույք չստացավ, երբ զարկեց Իր Որդուն Իր զայրույթի ամբողջ ծանրությամբ. Աստծուն հաճելի էր, որ Քրիստոսի չարչարանքների և մահվան միջոցով Աստծո կամքը կատարվեց, և Իր ժողովրդի համար փրկության ճանապարհ բացվեց: «Զարկել» բառն այս խոսքում թարգմանված է եբրայերեն «***դակա***» բառից, որը նշանակում է «զարկել, խփել կամ կտոր-կտոր անել»: Հայրը զարկեց և տրտմեցրեց Քրիստոսին, որպեսզի Նրա ժողովուրդը կարողանար փրկություն ստանալ Նրա չարչարանքով և մահով:

ՀԱՅՐԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑ ԵՎ ԲԱՐՁՐԱՑՐԵՑ ԻՐ ՈՐԴՈՒՆ

Հայր Աստված ուղարկեց Իր Որդուն այս աշխարհ՝ մեղավոր մարմնի նմանությամբ. Նա վերագրեց մեր մեղքերը Նրան և զարկեց Իր զայրույթի ամբողջ ծանրությամբ: Իր Որդու մահվան միջոցով Հայրը քավություն արեց կամ ամբողջովին վճարեց մեր մեղքի համար: Երրորդ օրը Նա մեռելներից հարություն տվեց Իր Որդուն, իսկ հետո բարձրացրեց Իր աջ կողմը և պսակեց պատվով՝ որպես ամենի Տեր և հավատացողների Փրկիչ: Հայրն ապացուցեց Իր իշխանությունը՝ Քրիստոսին մեռելներից հարություն տալով, և ապացուցեց Քրիստոսի իշխանությունը՝ Նրան բարձրացնելով: Այժմ Նա հայտարարում է, որ բոլորը պետք է ապաշխարեն, և պատվիրում է, որ նրանք հավատան Իր Որդի Հիսուս Քրիստոսի անվանը:

1. ՀԱՅՐԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑ ԻՐ ՈՐԴՈՒՆ ՄԵՌԵԼՆԵՐԻՑ: Հետևյալ աստվածաշնչյան հատվածները վկայում են, որ Քրիստոսի հարությունը՝ Հայր Աստծո աշխատանքն էր: Ամփոփե՛ք ամեն մեկը ձեր բառերով:

   ա. *Գործք 2.32, 3.15*

   _____

   _____

   _____

   _____

բ. *Հռոմեացիների 6.4*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հոր փառքը» արտահայտությունը, ամենայն հավանականությամբ, հղում է Աստծո փառավոր զորությանը (նույնպես կարդացե՛ք Եփեսացիների 1.19,20)։

2. ՀԱՅՐԸ ԲԱՐՁՐԱՑՐԵՑ ԻՐ ՈՐԴՈՒՆ ԻՐ ԱՋ ԿՈՂՄԸ։ Աստվածաշունչը սովորեցնում է, որ Իր Որդուն մեռելներից հարություն տալուց հետո Հայրը շատ բարձրացրեց Նրան՝ որպես ամենի Տեր և հավատացողների Փրկիչ։ Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածներն այս ճշմարտության մասին։

ա. *Փիլիպեցիների 2.9-11*

_____

_____

_____

_____

բ. *Գործք 5.30,31*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս համատեքստում Պետրոսը հատկապես դիմում է Իսրայելի ժողովրդին, բայց այս ճշմարտությունը կարելի է վերագրել բոլոր ազգերին։ Աստված հարություն է տվել և բարձրացրել է Իր Որդուն՝ որպես բոլոր հավատացողների Փրկիչ։

3. ԱՅԺՄ ՀԱՅՐԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ՝ ԱՊԱՇԽԱՐԵԼ ԵՎ ՀԱՎԱՏԱԼ։ Աստված հարություն տվեց Իր Որդուն մեռելներից և բարձրացրեց Նրան՝ որպես Տեր և Փրկիչ։ Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ինչպե՞ս ամեն մարդ պետք է արձագանքի այս մեծ գործին, որն Աստված արեց։ Ի՞նչ է Հայրը հայտարարել և պատվիրել։

ա. *Գործք 17.30,31*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Տգիտության ժամանակներն անտես անելը» վերաբերում է հեթանոսների երկարատև անիրազեկությանը Աստծո մասին և կռապաշտությանը: Սա չի նշանակում, որ նրանք հաշիվ չէին տալու իրենց մեղքերի համար. սա ընդամենը նշանակում է, որ Աստված համբերություն էր ցուցաբերում նրանց հանդեպ: «[Աստված] ...թույլ տվեց հեթանոսներին, որ իրենց ճանապարհներով գնան» (Գործք 14.15) և զսպեց Իր զայրույթը նրանց հանդեպ՝ սպասելով Քրիստոսի գալստյանը և Ավետարանը բոլորին ազդարարելուն:

բ. *Ա Հովհաննես 3.23*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հավատալը ավելին է, քան մտավոր համաձայնությունը: Այն ընդգրկում է վստահություն, համոզվածություն և կախվածություն: Հիսուսին հավատալը նշանակում է վստահել սեփական կյանքը և հավիտենական բարեկեցությունը Աստծո Անձին, խոստումներին և կամքին՝ Քրիստոսում:

Գլուխ 44. Որդու աշխատանքը փրկության մեջ

Մաս մեկ. Որդու կատարած աշխատանքի բնույթը

Մենք դիտարկեցինք Աստծո փրկարար աշխատանքը՝ հատուկ շեշտադրում անելով Հոր կատարած աշխատանքի վրա: Այժմ կդիտարկենք Որդի Աստծո փրկարար աշխատանքը: Ուսումնասիրելով այս թեման հաջորդ մի քանի գլուխներում՝ մենք կտեսնենք (1) Որդու աշխատանքի էությունը, (2) այն, որ Որդին հոժարությամբ կատարեց Հոր ծրագիրը, որը Նա կազմել էր աշխարհն ստեղծելուց առաջ, և (3) Որդու Անձի ու աշխատանքի եզակի բնույթը. Նրա անունը միակն է, որով մենք կարող ենք փրկվել (Գործք 4.12):

ՈՐԴԻ ԱՍՏՎԱԾ՝ ՄԵՐ ՓՐԿԻՉԸ

1. Նշե՛ք այն անունները, որոնք վերագրվում են Որդուն հետևյալ աստվածաշնչյան հատվածներում և հստակ ցույց են տալիս, որ Որդին՝ Փրկիչն է:

ա. *Փրկության Ե_____ (Ղուկաս 1.69):* Հունարեն «***կե՛րաս***» բառից, որը բառացիորեն նշանակում է «եղջյուր»: Կենդանական աշխարհում եղջյուրն օգտագործվում է և՛ պաշտպանության, և՛ հարձակման համար: Այնպես որ, այս բառը հաճախ է փոխաբերական իմաստով օգտագործվել Հին կտակարանում՝ իշխանության և ուժի առումով (օրինակ՝ Ա Թագավորաց 2.1,10, Բ Թագավորաց 22.3, Սաղմոս 18.2, 89.17,24, 132.17): Ոչ ոք չի կարող փրկել անկում ապրած մարդուն՝ բացի Աստծուց: Որպես Աստված՝ Քրիստոսի զորությունը շատ ավելին է, քան անհրաժեշտ է՝ մեր փրկությունն ապահովելու և պահպանելու համար:

բ. *Աշխարհի Փ_____ (Հովհաննես 4.42, Ա Հովհաննես 4.14):* Հունարեն «***սոտե՛ր***» բառից, որը նույնպես կարող է թարգմանվել «ազատող» բառով: Այս տիտղոսը որպես ունիվերսալիզմի (հավատք, որ վերջում ամբողջ մարդկությունը փրկվելու է) փաստարկ օգտագործելը շատ կոպիտ սխալ է: Իրականում, այն սովորեցնում է մեզ, որ Քրիստոսի փրկարար աշխատանքը չի սահմանափակվում որևէ ազգային խմբով կամ աշխարհագրական տարածքով. այն զորություն ունի աշխարհով մեկ:

գ. *Մ_____ Փրկիչ (Տիտոս 3.6):* Բառացիորեն՝ «մեզ փրկողը»: Անկարելի է չափից ավելի շեշտադրել այս փոքրիկ ստացական դերանվան կարևորությունը: Այստեղ տեսնում ենք առնվազն երկու ճշմարտություն: Առաջինը՝ փրկողը Որդին է, իսկ մենք փրկվողներն ենք: Փրկությունը Նրա աշխատանքն է, իսկ մենք դրա հասցեատերերն ենք: Երկրորդը՝ Նա ոչ թե բոլորի Փրկիչն է, այլ՝ հավատացողների: Մենք պետք է ընդունենք Նրան և անձամբ ստանանք Նրա փրկությունը: Նա պետք է լինի ***մեր*** Փրկիչը:

դ. *Փ_____ (Հռոմեացիների 11.26):* Հունարեն «***ռհո՛ոմայ***» բայից, որը կազմված է «***էրո՛ւ***» բայից (բառացիորեն՝ «քարշ տալ»): Այս բառը գաղափար է փոխանցում այն մասին, որ ինչ-որ մեկին քարշ տալով հեռացնում են վտանգից և դրանով իսկ փրկում են: Նոր կտակարանը հայտնում է, որ Աստծո Որդին փրկում է մեզ գալիք բարկությունից (Ա Թեսաղոնիկեցիների 1.10), մահվան մարմնից (Հռոմեացիների 7.24,25) և ամեն չար բանից (Բ Տիմոթեոս 4.18): Լինելով և՛ Աստված, և՛ Մարդ՝ Որդին միակն է, Ով կարող է փրկել Իր ժողովրդին:

2. Ղուկաս 4.14-21-ում Ղուկասը գրում է Հիսուսի հասարակական ծառայության սկզբի մասին: Խոսքեր 18, 19-ում Հիսուսը կարդում է մի հատված Եսայի մարգարեի գրքից, որը եկող Մեսիայի կամ Քրիստոսի մասին էր (Եսայի 61.1,2): Ի՞նչ է սովորեցնում այս հատվածը Որդու մարմնավորման և երկրային ծառայության փրկարար նպատակի մասին:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Օծված» բառը թարգմանված է հունարեն «***խրի՛ո***» և եբրայերեն «***մաշախ***» բայերից, որից էլ առաջացել է «մեսիա» (այսինքն՝ «օծյալ») տերմինը: Հին կտակարանում քահանաները և թագավորներն օծվում էին յուղով՝ որպես աստվածային նշանակման կամ լիազորման նշան: Սուրբ Հոգին օծեց Որդուն՝ որպես Մեսիայի, Ով և՛ ազդարարեց, և՛ կատարեց Աստծո ժողովրդի փրկությունը:

3. Համաձայն Ղուկասի Ավետարանի հետևյալ հատվածների՝ ի՞նչ սովորեցրեց Հիսուսն Իր առաքելության մասին: Ինչո՞ւ Աստծո Որդին մարմին հագավ և բնակվեց մարդկանց մեջ:

ա. *Ղուկաս 5.31,32*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսը չի սովորեցնում, որ աշխարհում կան երկու տեսակի մարդիկ՝ մեղավորներ, որոնց փրկություն է պետք, և արդարներ, որոնց ոչինչ պետք չէ: Նա պարզապես ցույց է տալիս Իր առաքելության նպատակը, որը մեղավորների փրկությունն է: Փարիսեցիների և դպիրների ամենամեծ խնդիրն այն էր, որ նրանք չէին համարում, որ իրենք նույնպես մեղավորներ էին և բժշկի կարիք ունեին:

բ. *Ղուկաս 19.10*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս արտահայտությունը լիովին հասկանալու համար անհրաժեշտ է հաշվի առնել ամբողջ համատեքստը: Հիսուսին քննադատում էին, քանի որ Նա մտել էր Զաքեոս անունով վատահամբավ մեղավորի տունը:

4. Նախորդ երկու հարցերում դիտարկեցինք մի քանի հատված, որոնք վերաբերում էին մեղավորներին փրկելու Քրիստոսի առաքելությանը: Ինչպե՞ս է այս առաքելությունը նկարագրված Ղուկաս 15-րդ գլխի առակներում: Կարճ ամփոփե՛ք ամեն առակի գլխավոր ճշմարտությունն այն մասին, որ փրկությունը՝ Քրիստոսի նպատակը և ցանկությունն էր:

ա. *Կորած ոչխարը (Ղուկաս 15.3-7)*

բ. *Կորած դրամը (Ղուկաս 15.8-10)*

գ. *Անառակ որդին (Ղուկաս 15.11-24)*

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս օրինակներից ամեն մեկում շեշտադրումը ոչ թե փրկվողի արժեքի վրա է, այլ՝ փրկողի սիրո: Մեկ ոչխարի արժեքը չնչին է՝ հարյուրի համեմատ: Կորած մետաղադրամը հաճախ չարժե այն որոնելու ժամանակին և ջանքերին, իսկ երիտասարդ անառակ որդին արժանի չէր հոր սիրուն և այն պատվին, որը հայրը շնորհեց նրան: Նմանապես, Որդին ցանկանում է կատարել մեծագույն զոհը և վճարել առավելագույն գինը, ոչ թե մեր արժեքի կամ արժանիքների շնորհիվ, այլ այն մեծ սիրո, որով Նա որոշել է սիրել մեզ:

5. Հովհաննես 10.10,11-ում գրված է ևս մեկ ազդեցիկ հայտարարություն Աստծո Որդու մասին, և այն մասին, թե ինչու Նա մարմին հագավ և բնակվեց մարդկանց մեջ: Ամփոփե՛ք այս կարևոր ճշմարտությունները ձեր բառերով:

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Գողը» բառը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է բոլոր այն սուտ մարգարեներին, մեսիաներին և կեղծավոր կրոնական առաջնորդներին, ովքեր հայտնվել էին Իսրայելում ճշմարիտ Քրիստոսից առաջ: Ի տարբերություն նրանց՝ Քրիստոսն ապացուցեց Իր առաքելության իսկությունը և մարդկանց փրկելու ցանկությունը՝ կատարելով Իր մեծ զոհն Իր ժողովրդի համար:

ՈՐԴՈՒ ՓՐԿԱՐԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵԶԱԿԻ ԲՆՈՒՅԹԸ

Քրիստոնեական հավատքի ամենակարևոր և ամենավիճահարույց պնդումներից մեկն այն է, որ Հիսուսը պարզապես փրկիչ չէ. Նա ***միակ*** Փրկիչն է: Աստվածաշունչը ոչ երկիմաստ կերպով պնդում է, որ Քրիստոսից և Գողգոթայում կատարած Նրա փրկարար աշխատանքից բացի փրկություն չկա: Հին կտակարանի սրբերը հավատացին Աստծուն, և դա արդարություն համարվեց նրանց (Հռոմեացիների 4.3, Գաղատացիների 3.6): Այնուամենայնիվ, նրանք ներում և արդարություն ստացան միայն մեկ պատճառով. մեկ օր Քրիստոսը գալու էր և քավելու էր նրանց մեղքերը: Նոր կտակարանի սրբերը (և բոլորը նրանցից հետո, ովքեր հավատում են) փրկվում են նույն կերպով՝ Քրիստոսի քավող մահվան միջոցով, և հավատալով այն խոստմանը, որ Նրան հավատացողը չի կորչի, այլ հավիտենական կյանք կունենա (Հովհաննես 3.16):

1. Համաձայն հետևյալ աստվածաշնչյան հատվածների՝ ի՞նչ միջոցներ սահմանեց Աստված, որոնցով մարդիկ կարող են փրկություն ստանալ:

ա. *Գործք 5.31*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Ապաշխարությունը և հավատքը չեն կարող հեռացնել մեղքի զգացումը, քանի դեռ Աստծո արդարադատության պահանջները մեղավորի հանդեպ բավարարված չեն: Աստված կարող է մեղքերի ներում շնորհել նրանց, ովքեր ապաշխարում և հավատում են միայն՝ որովհետև Քրիստոսը քավեց նրանց մեղքերը Գողգոթայում: Այսպիսով, մենք կարող ենք փրկվել միմիայն Քրիստոսի Անձի և Նրա կատարած աշխատանքի միջոցով:

բ. *Ա Թեսաղոնիկեցիների 5.9*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Դնել» (կամ՝ «նախասահմանել») բառը թարգմանված է հունարեն «***տիթեմի՛***» բառից, որը բառացիորեն նշանակում է «դնել, տեղադրել կամ տեղավորել»: Փոխաբերական իմաստով այն նշանակում է «հաստատել, կարգավորել, նշանակել կամ որոշել»: Աստված որոշել է, որ փրկությունը տրվելու է Քրիստոսում և խաչի վրա Նրա կատարած քավող աշխատանքի միջոցով: Մարդիկ կարող են փորձել վաստակել փրկությունը բազմաթիվ միջոցներով, բայց Աստված սահմանել է միայն մեկ ճանապարհ՝ Քրիստոսի կյանքը, մահը և հարությունը:

2. Աստված Իր Որդուն Փրկիչ է որոշել կամ նշանակել, և կարևոր է հասկանալ, որ այս դիրքը կամ նշանակումը պատկանում է ***բացառապես*** Որդուն: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ աստվածաշնչյան հատվածները այն մասին, որ փրկությունը միայն Աստծո Որդու մեջ է:

ա. *Հովհաննես 14.6*

_____

_____

_____

_____

բ. *Գործք 4.12*

_____

_____

գ. *Ա Տիմոթեոս 2.5*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Միջնորդ» բառը թարգմանված է հունարեն «***մեսի՛տես***» բառից, որն ունի միջնորդի կամ հաշտարարի իմաստ՝ այնպիսի անձնավորության, ով խաղաղություն և համաձայնություն է բերում երկու ընդդիմադիր կողմերի միջև:

դ. *Ա Հովհաննես 5.11,12*

3. Աստվածաշունչը միանշանակ պնդում է, որ Քրիստոսից և Գողգոթայի վրա կատարած Նրա փրկարար աշխատանքից բացի փրկություն չկա: Այս ճշմարտությունը շատ մեծ նշանակություն ունի բոլոր մարդկանց համար, քանի որ յուրաքանչյուրի հավիտենական ճակատագիրը կախված է այն բանից, թե ինչպես նա կարձագանքի Քրիստոսին: Ի՞նչ զգուշացումներ են տրվում հետևյալ աստվածաշնչյան հատվածներում նրանց, ովքեր զանց են առնում այն փրկությունը, որն Աստված առաջարկում է Իր Որդու միջոցով:

ա. *Հովհաննես 3.18*

ՆՇՈՒՄՆԵՐ. Սա չի նշանակում, որ նրանք, ովքեր լսում են Ավետարանը և անմիջապես չեն հավատում, դատապարտված են անդառնալի դատաստանի. դատապարտվելու են նրանք, ովքեր խստացնում են իրենց սիրտը՝ մնալով անհավատության մեջ:

բ. *Եբրայեցիների 2.1-3*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն մարդկանց, ովքեր մերժում են հրեշտակների միջնորդությամբ տրված օրենքը (խոսք 2), Եբրայեցիների նամակի հեղինակը համեմատում է նրանց հետ, ովքեր մերժում են Աստծո Որդու միջնորդությամբ տրված փրկությունը (խոսք 3): Եթե Աստծո օրենքը մերժելը պատժի էր արժանանում, որքա՞ն առավել՝ Աստծո Որդուն մերժելը:

գ. *Եբրայեցիների 10.26-31*

_____

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խոսք 26-ը չի սովորեցնում, որ դատաստանի են ենթարկվելու նրանք, ովքեր չեն հասել անմեղ և կատարյալ վիճակին: Եթե այդպես լիներ, ոչ ոք չէր փրկվի, քանի որ նույնիսկ ամենահասուն հավատացյալը շարունակում է պայքարել գայթակղության և մեղքի հետ: «Հոժար կամքով մեղք գործել» արտահայտությունը վերաբերում է Ավետարանի հանդեպ խստասիրտ անհավատության մշտական վիճակին, երբ մարդը մշտապես մերժում է Հիսուսին՝ որպես Աստծո Որդի, Մեսիա և աշխարհի Փրկիչ:

Գլուխ 45. Որդու աշխատանքը փրկության մեջ

Մաս երկու. Որդու ավարտված աշխատանքը

Հայր Աստված ծրագիր կազմեց Իր ժողովրդի փրկության համար, իսկ Որդի Աստված եկավ այս աշխարհ՝ մարդկային մարմին հագած, որպեսզի իրագործեր այն: Այս գլխում կխոսենք Որդու աշխատանքի չորս կարևոր կողմերի մասին, որոնք Նա կատարեց մեր փոխարեն Իր երկրային կյանքի ընթացքում: Նա ունայնացրեց Իր Անձը, ապրեց կատարյալ կյանքով, հոժարությամբ զոհեց Իրեն և հարություն առավ մեռելներից:

ՈՐԴԻՆ ՀՈԺԱՐԱԲԱՐ ՈՒՆԱՅՆԱՑՐԵՑ ԻՐ ԱՆՁԸ

1. Փիլիպեցիների 2.6-8-ում գտնվում է Աստծո Որդու մարմնավորման թերևս ամենաազդեցիկ նկարագրությունը Աստվածաշնչում: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո բացատրե՛ք դրա հետևյալ բաժինների նշանակությունը:

ա. *Թեև Նա գոյություն ուներ Աստծո կերպարանքով, Նա չհամարեց հավասարությունն Աստծուն այնպիսի բան, ինչից ոչ մի դեպքում պետք չէր հրաժարվել (խոսք 6):*

_____

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կերպարանք» բառը թարգմանված է հունարեն «***մորֆե՛***» բառից, որը նշանակում է ոչ միայն մարդու արտաքին տեսքը, այլև նրա բնավորությունը և էությունը: Այնպես չէր, որ Որդին սոսկ Աստծո ***նմանություն*** ուներ. Նա Աստված ***էր*** և հավասար էր Աստծուն: «Հափշտակություն համարել» բառակապակցությունը թարգմանված է հունարեն «***հարպագամո՛ն***» բառից, որը կարող է նշանակել բարձր գնահատվող ինչ-որ բանի ոչ լիազորված հափշտակում: Գաղափարն այն է, որ Իր մարմնավորման միջոցով Որդին ցույց տվեց, որ պատրաստ է հրաժարվել աստվածության արտոնություններից՝ Իր Հոր կամքը կատարելու համար:

բ. *Այլ Իր Անձն ունայնացրեց (խոսք 7):*

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ունայնացնել» բառը թարգմանված է հունարեն «***կենո՛ո***» բառից, որը նշանակում է «դատարկել կամ խլել»: Մարմին հագնելով՝ Որդին մի կողմ դրեց Իր աստվածության փառքը և արտոնությունները և Մարդ դարձավ: Շատ կարևոր է հասկանալ, որ Որդու կողմից «Իր Անձն ունայնացնելը» չի նշանակում, որ Նա թողեց Իր աստվածությունը կամ դարձավ Աստծուց ցածր. Նա թողեց այն ***փառքը*** և ***արտոնությունները***, որոնք իրավամբ պատկանում էին Իրեն՝ որպես Աստծո (Հովհաննես 17.5):

գ. *Ծառայի կերպարանք առավ՝ մարդկանց նման լինելով և կերպարանքով մարդու պես գտնվելով (խոսք 7):*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կերպարանք» բառը թարգմանված է հունարեն «***մորֆե՛***» բառից, որը նշանակում է ոչ միայն մարդու արտաքին տեսքը, այլև նրա բնավորությունը և էությունը: Այնպես չէր, որ Քրիստոսը սոսկ ծառայի ***նմանություն*** ուներ. Նա իրականում այդպիսին դարձավ՝ ամեն առումով: «Կերպարանք» բառը թարգմանված է հունարեն «***հոմոի՛ոմիա***» բառից, որը կարելի է թարգմանել նաև «նմանակերպություն» կամ «նմանություն» բառերով: Քրիստոսն ստացավ իրական մարդու բոլոր առանձնահատկությունները: Դա պատրանք չէր. Նա իսկական Մարդ էր:

2. Այս բաժինն ամփոփելու համար կդիտարկենք ևս մեկ հատված, որը գեղեցիկ նկարագրում է Որդու մարմնավորումն Իր ժողովրդի համար՝ Բ Կորնթացիների 8.9: Ինչպիսի՞ ճշմարտություններ են հայտնված այս հատվածում:

ՆՇՈՒՄՆԵՐ. Որդու ինքնահարույց աղքատությունն ուներ հստակ նպատակ՝ մեր փրկությունը: Նա թողեց Երկնքի անսահման փառքը, որպեսզի մենք կարողանայինք մուտք գործել այնտեղ՝ որպես Աստծո որդիներ և դուստրեր:

ՈՐԴԻՆ ԱՊՐԵՑ ԿԱՏԱՐՅԱԼ ԿՅԱՆՔՈՎ

1. Բ Կորնթացիների 5.21-ում գրված է մի անժխտելի հայտարարություն Հիսուսի անմեղ կյանքի մասին: Կարդացե՛ք այս խոսքը և լրացրե՛ք բաց թողնված բառը:

   ա. *Նա մեղք Չ_____:* Այս բառը թարգմանված է հունարեն «***գինո՛սկո***» բառից, որը հաճախ փոխանցում է անձնական կամ նույնիսկ՝ մտերիմ գիտելիքի գաղափարը, որը կա եբրայերենում: Հիսուսը նույնիսկ աննշան կերպով չէր առնչվել մեղքի հետ. այն լիովին և բացառապես խորթ էր Նրա համար:

2. Հետևյալ հատվածները նույնպես պարզ ապացուցում են, որ Որդին ապրեց կատարյալ կյանքով: Կարճ ամփոփե՛ք ամեն մեկի իմաստը ձեր բառերով:

   ա. *Եբրայեցիների 4.15*

   _____

   _____

   _____

   բ. *Ա Պետրոս 1.19*

   _____

   _____

   _____

   գ. *Ա Հովհաննես 3.5*

   _____

   _____

   _____

ՈՐԴԻՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԶՈՀԵՑ ԻՐԵՆ

1. Ավելի վաղ ուսումնասիրելով Փիլիպեցիների 2.6,7-ն այս գլխում՝ մենք իմացանք, որ Որդին հոժարությամբ մի կողմ դրեց աստվածության փառքը և արտոնությունները և Մարդ դարձավ: Համաձայն խոսք 8-ի՝ Որդին հոժարությամբ ենթարկեց Իրեն այնպիսի բանի, ինչը շատ ավելի նվաստացուցիչ էր, քան աստվածության փառքը թողնելը: Ինչի՞ մասին է խոսքը:

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Խաչը համարվում է մարդու կողմից երբևէ հնարված չարչարանքի ամենադաժան գործիքը: Այն, որ Որդին հոժարությամբ մահացավ հենց խաչի վրա, ցույց է տալիս, թե որքանով է Նա սիրում Իր Հորը և մեզ:

2. Ի՞նչ է հայտնում Հովհաննես 10.17,18-ը այն հոժարության մասին, որով Քրիստոսը զոհեց Իրեն Իր ժողովրդի մեղքերի համար:

3. Քրիստոսը զոհաբերեց Իրեն Իր ժողովրդի համար: Համաձայն Հռոմեացիների 5.7,8-ի՝ ո՞րն է այդ զոհաբերության ամենազարմանալի կողմերից մեկը:

4. Համաձայն հետևյալ հատվածների Հին և Նոր կտակարաններից՝ ի՞նչ կատարվեց Աստծո ժողովրդի համար Որդու ինքնազոհաբերման միջոցով:

ա. *Եսայի 53.11*

ՆՇՈՒՄՆԵՐ. Մեսիան մեծ բավականություն կունենա՝ մտածելով Իր կատարած փրկարար աշխատանքի և այն անթիվ բազմության մասին, որոնք արդարացան դրա պատճառով:

բ. *Բ Կորնթացիների 5.21*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քանի որ նա մեղք դարձավ մեր փոխարեն, մենք դարձանք Աստծո արդարությունը Նրանում: Մեր մեղքը վերագրվեց Նրան, և Նա կրեց Աստծո զայրույթը մեր փոխարեն: Նրա արդարությունը վերագրվեց մեզ, և մենք կանգնած ենք Աստծո առջև՝ անարատ և լիարժեք կերպով ընդունված:

գ. *Եբրայեցիների 10.10*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Սրբվել» բառը թարգմանված է հունարեն «***հագիա՛զո***» բառից, որը նշանակում է «սրբացնել կամ սրբագործել»: Այս համատեքստում այս խոսքը չի վերաբերում սրբացման շարունակական ***գործընթացին*** (այսինքն՝ հարաճուն քրիստոսանմանությանը հավատացյալի կյանքում), այլ հավատացյալի առանձնացված (կամ սրբացված) ***դիրքին*** Քրիստոսում, որն արդեն ավարտված իրողություն է: Հավատացյալը սուրբ է դարձել Աստծո առջև՝ Քրիստոսի մեկընդմիշտ կատարած զոհի միջոցով:

դ. *Ա Պետրոս 3.18*

_____

_____

_____

_____

ՈՐԴԻՆ ԻՆՔՆ ԻՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑ ՄԵՌԵԼՆԵՐԻՑ

Գլուխ 43-ում մենք սովորեցինք, որ Հայրը հարություն տվեց Իր Որդուն մեռելներից: Այնուամենայնիվ, Աստվածաշունչը ցույց է տալիս, որ հարությունը նույնպես Որդու աշխատանքն է: Որդին հաղթեց մահը Իր զորությամբ և իշխանությամբ: Այս ճշմարտությունը շատ նշանակալի է: Այն, որ Նա ի զորու է հարություն տալ Ինքն Իրեն մեռելներից, ապացուցում է, որ Նա կարող է հարություն տալ Իր ժողովրդին:

1. Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածները նախորդ պարբերության մեջ նշված ճշմարտության մասին՝ այն, որ Որդու հարությունը ոչ միայն Հոր գործն էր, այլև՝ Որդու:

   ա. *Հովհաննես 2.18-21*

   _____

   _____

   _____

   բ. *Հովհաննես 10.17,18*

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Իշխանություն» բառն այս խոսքում թարգմանված է հունարեն «***էքուսի՛ա***» բառից, որը ենթադրում է գործելու զորություն և իրավունք: Քանի որ Հիսուս Մարդը՝ Որդի Աստված է, Նա ուներ և՛ զորություն, և՛ իշխանություն՝ Հոր պատվերը կատարելու համար, այսինքն՝ Իր կյանքը տալու և այն կրկին ետ վերցնելու:

2. Հովհաննես 5.26-ում Հիսուսը շատ կարևոր մի հռչակում է անում Իր մասին, որն օգնում է մեզ հասկանալ, թե ինչպես էր Նա կարող և՛ դնել Իր կյանքը, և՛ կրկին ետ վերցնել այն: Ի՞նչ ճշմարտություն է հաստատվում այս խոսքում:

   _____

   _____

   _____

   _____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը շատ բարդ է մեկնաբանելու համար, բայց այս խոսքում պարզ նշվում է այն ճշմարտությունը, որ Որդին, ինչպես և Հայրը, կյանք ունի Իրենում: Նույնիսկ ամենամեծ ու զարմանալի ստեղծվածներն ստանում են իրենց կյանքը մեկ այլ Էակից (այսինքն՝ Աստծուց): Ի հակադրություն սրան՝ Որդու կյանքը ներհատուկ է. Նա կյանք ունի Իրենում: Կյանքը՝ Որդու մշտական կամ էական հատկանիշներից է:

3. Որդին կյանք ունի Իրենում: Այդ իսկ պատճառով, Նա կարող է ոչ միայն հոժարաբար տալ Իր կյանքը, այլ նույնպես՝ կրկին վերցնել այն: Ի՞նչ է նշանակում այս ճշմարտությունը Նրան հավատացողների համար՝ համաձայն հետևյալ հատվածների:

ա. *Հովհաննես 5.27-29*

_____

_____

_____

բ. *Հովհաննես 11.25,26*

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Քրիստոսի իշխանությունը մահվան վրա անմիջական նշանակություն ունի Իր ժողովրդի համար: Թեև նրանք մահանան, նրանք հարություն կառնեն հավիտենական կյանքի համար և այլևս ենթակա չեն լինի մահվան իշխանությանը կամ տառապանքին:

Գլուխ 46. Որդու աշխատանքը փրկության մեջ

Մաս երեք. Որդու ներկա աշխատանքը

Նախորդ գլխում դիտարկեցինք Որդու փրկարար աշխատանքի չորս կողմերը, որոնք Նա իրականացրեց, երբ այս երկրի վրա էր: Կարևոր է հասկանալ, որ Նրա աշխատանքը մեզ համար չավարտվեց, երբ Նա համբարձվեց Երկինք: Այս գլխում մենք կդիտարկենք երկու միջոց, որոնցով Որդին դեռ գործուն կերպով ներգրավված է Իր ժողովրդի փրկության մեջ. Որդին կյանք է տալիս Իր ժողովրդին և բարեխոսում է Իր ժողովրդի համար:

ՈՐԴԻՆ ԿՅԱՆՔ Է ՏԱԼԻՍ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Այն կյանքը, որը Որդին տալիս է Իր ժողովրդին, ամփոփված կամ սահմանափակված չէ հարությամբ: Նա է աղբյուրը և՛ մեր մարմնական հարության, որը մենք կստանանք ժամանակվա վերջում, և՛ մեր հոգևոր կյանքի և ուժերի, որոնք մենք ստանում ենք հիմա՝ մեր առօրյայում:

1. Հովհաննես 14.6-ում Հիսուսը մի ուշագրավ պնդում է անում Իր մասին: Ի՞նչ է ցույց տալիս այս խոսքը Նրա Անձի մասին և այն մասին, թե որքանով է հավատացյալը կախված Նրանից:

   ա. *«Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և Կ_____:* Եթե Քրիստոսն Աստված չէ, այս արտահայտությունը՝ հայհոյություն է: Քրիստոսը ոչ միայն Աստծո ճշմարտության և հաշտության ճանապարհի մարմնավորումն է, այլև ամբողջ կյանքի աղբյուրը՝ թե՛ նյութական, թե՛ հոգևոր:

2. Հովհաննես 15.1-8-ում Հիսուսը նույնքան ուշագրավ պնդում է անում Իր մասին և այն մասին, թե ինչ հարաբերություններ ունեն հավատացյալներն Իր հետ: Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո կատարե՛ք հետևյալ վարժությունը:

   ա. *Ինչպե՞ս է Հիսուսն անվանում Իրեն խոսք 1-ում: Ի՞նչ է դա հայտնում մեզ այն մասին, որ Նա հավատացյալի կյանքի աղբյուրն է:*

   _____

   _____

   _____

   _____

   _____

բ. *Համաձայն խոսքեր 4,5-ի՝ որքանո՞վ է հավատացյալը կախված Քրիստոսից՝ որպես ամբողջ հոգևոր կյանքի միակ աղբյուրի: Բացատրե՛ք ձեր պատասխանը:*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս նմանությունը հավասարապես գեղեցիկ և տպավորիչ է: Ճյուղը կարող է պտուղ բերել միայն՝ եթե այն կապ ունի կենսատու որթի հետ: Կտրվելուց հետո այն չորանում և անպտուղ է դառնում: Հավատացյալը, այս օրինակի ապշեցուցիչ նմանությամբ, կարող է հոգևոր կյանք ունենալ և պտուղ բերել՝ միայն ունենալով շարունակական շփում Քրիստոսի հետ, ուսումնասիրելով Նրա խոսքը և հավատալով դրան, նաև՝ ապավինելով Նրա զորությանը:

3. Որպես այդ բաժնի ամփոփում՝ մենք կդիտարկենք Պողոսի վստահաբար արված պնդումը Փիլիպեցիների 4.13-ում:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Զորացնում է» բառը թարգմանված է հունարեն «***էնդունամոո՛***» բառից, որը կարելի է թարգմանել նաև «ուժ է տալիս» բառակապակցությամբ: Սա դերբայ է՝ ներկա ժամանակով, որը ենթադրում է շարունակական գործողություն: Քրիստոսը շարունակաբար կյանք է տալիս և զորացնում է Իր ժողովրդին:

ՈՐԴԻՆ ԲԱՐԵԽՈՍՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

Բարձրանալով Աստծո աջ կողմը՝ Քրիստոսը հանդես է գալիս որպես Իր ժողովրդի Բարեխոս և հավիտյան ապրում է, որպեսզի բարեխոսի նրանց համար Աստծո գահի առջև: Քրիստոսի շարունակական բարեխոսությունն Իր ժողովրդի համար չի նշանակում, որ Նա ծնկել է Աստծո գահի առջև և ողորմություն է աղերսում մեզ համար: Նա բարեխոսում է՝ որպես Աստծո աջ կողմը Նստող, որպես Մեկը, Ով ամենագետ է և գիտի Իր ժողովրդի ամեն կարիքը, որպես Մեկը, Ով իշխանություն ունի՝ նրանց փոխարեն խոսելու համար, և որպես Մեկը, Ով չեղյալ է դարձնում ամեն մեղադրանք՝ ուղղված նրանց դեմ:

1. Ա Հովհաննես 2.1,2-ում գրված է ամբողջ Աստվածաշնչի ամենակարևոր հատվածներից մեկը Որդու դերի մասին՝ որպես մեր Բարեխոսի (կամ՝ Դատապաշտպանի): Ծանոթացե՛ք այս հատվածի բովանդակությանը, իսկ հետո գրի՛ առեք ձեր կարծիքը դրանում հայտնված ճշմարտությունների մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այն փաստը, որ մենք Բարեխոս ունենք Հոր առջև, չպետք է անտարբեր և անփույթ դարձնի մեզ սրբության և մեղքի վերաբերյալ: Ընդհակառակն՝ այն, որ Աստծո Որդին մեծ աշխատանք է կատարել մեզ համար, պետք է հնազանդության դրդի մեզ: Նույնիսկ ամենահասուն քրիստոնյան դեռ ենթակա է բարոյական տկարությանը և մեղքին, և այն փաստը, որ մենք Բարեխոս ունենք Հոր մոտ, մեծ սփոփանք է մեզ համար: «Բարեխոս» բառը թարգմանված է հունարեն «***պարակլետոս***» բառից, որը նշանակում է «օգնական» կամ նա, ով կանչված է՝ խոսելու մեկ ուրիշի փոխարեն: «Քավություն» բառը թարգմանված է հունարեն «***հիլասմոս***» բառից, որը նշանակում է «խաղաղեցում» կամ «բավականություն»: Այս բառը նկատի ունի այնպիսի զոհ, որը տրվել է՝ տուժած կողմին խաղաղեցնելու համար: Որդին քավություն է մեր մեղքերի համար այն իմաստով, որ Նա զոհեց Իր կյանքը մեր մեղքերի համար: Նրա զոհը գոհացրեց Աստծո արդարադատության պահանջները մեր հանդեպ և խաղաղեցրեց Նրա բարկությունը: Նա կարող է լինել մեր Բարեխոսը և Դատապաշտպանը, քանի որ Ինքն է վճարել մեր մեղքերի համար:

2. Հռոմեացիների 8.33,34-ը մեկ այլ կարևոր հատված է Որդու բարեխոսական ծառայության մասին: Ի՞նչ են ցույց տալիս այս խոսքերը Նրա փրկարար գործի և բարեխոսության արդյունքի մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Ո՞վ է, որ Աստծո ընտրվածների դեմ մեղադիր լինի», և «Ո՞վ է, որ դատապարտի» հարցերը նույնն են: Աստված ասես մարտահրավեր է նետում տիեզերքում ամեն մի ստեղծվածի՝ ներառյալ անձամբ սատանային: Պատճառը, թե ինչու Աստծո ընտրյալների դեմ անկարելի է որևէ մեղադրանք կամ դատապարտություն ներկայացնել, երկակի է: (1) Աստված արդարացրել է Իր ժողովրդին, այսինքն՝ կատարյալ իրավաբանական դիրք է շնորհել Իր առջև: Սա տեղի ունեցավ՝ շնորհիվ այն կատարյալ կյանքի, որով Որդին ապրեց, և այն մահվան, որով Նա մահացավ Իր ժողովրդի փոխարեն: (2) Այժմ Որդին նստած է Աստծո աջ կողմում՝ որպես Իր ժողովրդի Բարեխոս և Պաշտպան:

3. Եբրայեցիների 7.23-25-ում նկարագրվում է ոչ միայն Որդու բարեխոսության զորությունը և արդյունավետությունը, այլև՝ դրա մշտատև բնույթը: Ամփոփե՛ք այս հատվածը ձեր բառերով:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը բացատրության կարիք չունի: Իր անվերջ կյանքի զորությամբ Քրիստոսը կարող է հավիտյան փրկել նրանց, ովքեր մոտենում են Աստծուն Իր միջոցով:

4. Թեև Աստվածաշունչը ճշգրտորեն չի հայտնում Որդու երկնային բարեխոսության բնույթն Աստծո գահի առջև, կարել է գտնել որոշ «բանալիներ» Նրա «Քահանայական աղոթքի» մեջ, որը Նա աղոթեց Իր աշակերտների համար Իր երկրային ծառայության ընթացքում (Հովհաննես 17.1-26): Ստորև այն խնդրանքների ցուցակն է, որոնք Քրիստոսը ներկայացրեց՝ Իր ժողովրդի համար այդ աղոթքը բարձրացնելիս: Նշե՛ք ամեն խնդրանքին համապատասխանող աստվածաշնչյան հատվածը:

_____ Հովհաննես 17.11,12 — ա. *Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի ապագա փառավորման համար*

_____ Հովհաննես 17.13 — բ. *Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի միաբանության համար*

_____ Հովհաննես 17.15 — գ. *Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի սրբացման համար*

_____ Հովհաննես 17.17-19 — դ. *Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի ուրախության համար*

_____ Հովհաննես 17.21-23 — ե. *Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի հարատևելու համար*

_____ Հովհաննես 17.24 — զ. *Քրիստոսը բարեխոսում է Իր ժողովրդի պաշտպանության համար բոլոր սատանայական ուժերից (կարդացե՛ք նաև Ղուկաս 22.32)*

Գլուխ 47. Հոգու աշխատանքը փրկության մեջ

Փրկիչ Աստծո մեր սեղմ դիտարկման շրջանակներում մենք պետք է անպայման ընդգրկենք Սուրբ Հոգու Անձի դերը: Մենք երբեք չպետք է մոռանանք, որ մեր փրկությունը՝ Եռամեկ Աստծո աշխատանքն է, որն ընդգրկում է ոչ միայն Հորը և Որդուն, այլև Սուրբ Հոգուն: Այս գլխում կիմանանք, որ Նա նույնքան էական է մեր փրկության համար, որքան Հայրը և Որդին:

ՀՈԳՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԾՆՈՒՆԴ ՏՎԵՑ ՈՐԴՈՒՆ: Քավության ամբողջ աշխատանքը կախված էր Հիսուսի աստվածությունից և կատարելապես անմեղ լինելուց: Այդ երկու փաստի շնորհիվ, Հիսուսի կուսական ծնունդը բացարձակապես անհրաժեշտ էր: Համաձայն Ղուկաս 1.34,35-ի՝ ի՞նչ դեր ուներ Սուրբ Հոգին Հիսուսի հրաշալի ծննդյան մեջ: Ո՞րն էր Նրա աշխատանքի արդյունքը:

_____

_____

_____

_____

2. ՀՈԳԻՆ ԶՈՐԱՑՐԵՑ ՈՐԴՈՒՆ: Թեև Հիսուսն Աստված է, Նա քայլում էր այս երկրի վրա որպես իրական Մարդ, Ով հնազանդվում էր Հոր կամքին և լիովին կախված էր Հոգու զորությունից: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածներն այս ճշմարտության մասին:

ա. *Ղուկաս 4.1,14*

_____

_____

_____

_____

բ. *Գործք 10.38 (կարդացե՛ք նաև Մատթեոս 12.28, Ղուկաս 5.17)*

_____

_____

_____

_____

3. ՀՈԳԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԷՐ ՈՐԴՈՒ ՀՈՀԱԲԵՐՄԱՆ ՄԵՋ: Ի՞նչ է սովորեցնում Եբրայեցիների 9.14-ը այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Թեև անկարելի է հասկանալ այս խոսքի լիարժեք իմաստը կամ դրանից բխող հետևությունները, ակնհայտ է, որ Սուրբ հոգին ինչ-որ կերպով օգնել կամ զորացրել էր Որդուն՝ Իրեն Գողգոթայում զոհաբերելու համար: Ինչպես որ Սուրբ Հոգին զորացնում էր Որդուն կատարյալ կյանքով ապրելու և Իր ծառայությունը կատարելու համար (Ղուկաս 4.18, Գործք 10.38), այնպես էլ Նա զորացրեց Նրան՝ Ինքն Իրեն որպես քավության զոհ մատուցելու համար:

4. ՀՈԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑ ՈՐԴՈՒՆ: Որդու հարությունը մեռելներից՝ ոչ միայն Հոր և Որդու աշխատանքն էր, այլև՝ Սուրբ Հոգու: Ի՞նչ է Հռոմեացիների 8.11-ը սովորեցնում մեզ այս ճշմարտության մասին:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածում գլխավոր միտքն այն է, որ Որդուն մեռելներից հարություն տվեց Հայրը: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ Հայրը հարություն տվեց Որդուն Հոգու զորությամբ:

ՀՈԳՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԱՐԴՈՒ ԴԱՐՁԻ ԳԱԼՈՒ ՄԵՋ

Աստվածաշունչը սովորեցնում է, որ ինքն իրենով՝ մարդը բարոյապես կործանված է, և նրա փրկությունը լիովին կախված է Սուրբ Հոգու աշխատանքից: Ինչպես մենք կտեսնենք ստորև, որպեսզի մարդը փրկություն ստանա, Հոգին պետք է վերածնի, հանդիմանի և հայտնություն տա նրան, ներբնակվի նրանում և կնքի նրան:

1. ՀՈԳԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՄ Է ՄԵՂԱՎՈՐԻՆ: «Վերածնել» բառը լատիներենում «***ռեգեներարե***» բայն է («***ռե***» = «կրկին» + «***գեներարե***» = «ստեղծել, ծնել»): Աստվածաշունչը սովորեցնում է, որ մարդը հոգևորապես մահացած է (Եփեսացիների 2.1-3). այսպիսով, նա չի արձագանքում Աստծո փրկությանը: Որպեսզի

մարդն արձագանքի, Հոգին պետք է նախ՝ հոգևոր կյանք փոխանցի նրան: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածներն այս ճշմարտության մասին:

ա. *Հովհաննես 3.3-6*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Վերստին ծնվել» բառակապակցությունը թարգմանվել է երկու հունարեն բառերից. «***գեննա՛ո***» (ծնել, ծնունդ տալ կամ սերել) և «***անոթեն***» (վեր կամ նորից): Տիեզերքի արարման ժամանակ Աստծո Հոգին «շրջում էր ջրերի վրայով»՝ բերելով կարգ ու կանոն և կյանք (Ծննդոց 1.2): Հոգու միևնույն կենսատու աշխատանքը պետք է կատարվի մեղավորի մեջ, մինչև որ նա կկարողանա լսել, ընդունել կամ հնազանդությամբ արձագանքել Ավետարանի փրկարար ուղերձին:

բ. *Տիտոս 3.4-6*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս խոսքում օգտագործված է «մյուս անգամ ծնվել» բառակապակցությունը («***պալիգգենեսի՛ա***» «***պա՛լին***» = «կրկին» + «***գենեսիս***» = «ծագում, ծնունդ») և «նորոգություն» բառը («***անակաինոսիս***». «***անա***» = «վեր» + «***կաինո՛ս***» = «նոր»): Անկարելի է գերագնահատել Սուրբ Հոգու դերի կարևորությունը հավատացյալի վերածնման մեջ: Նրա սկզբնական աշխատանքը մեր սրտում և մտքում՝ մեր փրկարար արձագանքի, այսինքն՝ ապաշխարության և հավատքի հիմքն է:

2. ՀՈԳԻՆ ՀԱՆԴԻՄԱՆՈՒՄ Է ՄԵՂԱՎՈՐԻՆ ՄԵՂՔԻ ՄԵՋ: Մինչև որ մեղավորը կարողանա հասկանալ, որ փրկության կարիք ունի, նա պետք է գիտակցի իր մեղքի ծանրությունը և այն դատաստանը, որին նա արժանանալու է դրա արդյունքում: Անհնար է, որ սա տեղի ունենա առանց Սուրբ Հոգու աշխատանքի: Քրիստոսն ուղարկեց Սուրբ Հոգուն այս աշխարհ: Համաձայն Հովհաննես 16.7-11-ի՝ ո՞րն է Հոգու հիմնական աշխատանքը:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Հանդիմանել» բառը թարգմանվել է հունարեն «***էլեգչո***» բառից, որը նշանակում է «բացահայտել, հանդիմանել կամ նախատել»: Այն նկարագրում է մեղադրող դատախազի աշխատանքը, ով փաստարկներ և օրինակներ է ներկայացնում՝ հանցագործի մեղքը բացահայտելու համար: Թեև սա կարող է խիստ թվալ, իրականում, սա Աստծո սիրո մեծ դրսևորումներից մեկն է: Մինչև որ մահացու հիվանդություն ունեցող մարդը կսկսի բուժում փնտրել, նա պետք է համոզված լինի, որ իր վիճակն իրականում ծանր է: Հոգին հանդիմանում է մեղավորին (1) իր իսկ մեղքի համար, որը Քրիստոսին չհավատալն է, (2) Քրիստոսի արդարության համար, որը հայտնվեց՝ երբ Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, և (3) գալիք դատաստանի համար. Քրիստոսի խաչի արդյունքում սատանան պարտվեց, և դատաստանը՝ ապացույց է այն մասին, որ բոլոր նրան հետևողները կարժանանան միևնույն ճակատագրին:

3. ՀՈԳԻՆ ՀԱՅՏՆՈՒՄ Է ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ: Հոգու մեծագույն գործերից մեկն այն է, որ Նա հայտնում է Որդուն մեղավոր մարդկանց, որպեսզի նրանք կարողանան փրկվել: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածներն այս ճշմարտության մասին:

ա. *Համաձայն Ա Կորնթացիների 2.10-12-ի՝ ինչպե՞ս է ճշմարտությունն Աստծո մասին հայտնվում մարդուն: Բացատրե՛ք ձեր պատասխանը:*

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Սուրբ Հոգին այն Միջնորդն է, Ով հայտնում է Աստծո ճշմարտությունը մարդկանց: Այնուամենայնիվ, շատ կարևոր է հասկանալ, որ Հոգին հիմնականում հայտնում է ճշմարտությունը և՛ հավատացյալներին, և՛ անհավատներին աստվածաշնչյան ուսմունքների միջոցով: Նա լուսավորում է մեր մտքերը և կարողություն է տալիս հասկանալու այն, ինչ Ինքը գրել է (Բ Պետրոս 1.20,21):

բ. Համաձայն Հովհաննես 16.13,14-ի՝ ի՞նչ կամ ո՞վ է լինելու հիմնական թեման, որը Հոգին հայտնելու է մարդկանց, որպեսզի նրանք փրկվեն: Արդյոք Հոգին նրանց ուշադրությունը կուղղի Իրեն, թե՞ մեկ ուրիշին: Բացատրե՛ք ձեր պատասխանը:

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. Հիսուսի այս խոստումներն առաջին հերթին ուղղված են առաքյալներին, որոնց միջոցով գրվելու էր Նոր կտակարանը: Այնուամենայնիվ, այս հատվածում կան ճշմարտություններ, որոնք կիրառելի են բոլոր հավատացյալների հանդեպ: Սուրբ Հոգուց եկած ցանկացած գործ կամ հայտնություն մշտապես կփառավորի Քրիստոսի Անձը և Նրա քավության աշխատանքը: Սուրբ Հոգին չի գրավի մարդկանց ուշադրությունն Իր հանդեպ:

4. ՀՈԳԻՆ ՆԵՐԲՆԱԿՎՈՒՄ Է ՀԱՎԱՏԱՑՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԵՎ ԿՆՔՈՒՄ Է ՆՐԱՆՑ: Ամենագեղեցիկ և զորավոր ճշմարտություններից մեկը Սուրբ Հոգու մասին այն է, որ Նա ներբնակվում է Քրիստոսին ճշմարտապես հավատացող յուրաքանչյուր մարդու ներսում և կնքում է՝ որպես Աստծո փրկված զավակների: Հայրը և Որդին բնակվում են մեզանում Հոգու միջոցով:

ա. *Ի՞նչ են սովորեցնում մեզ հետևյալ աստվածաշնչյան հատվածները այն մասին, որ Հոգին բնակվում է հավատացյալների ներսում:*

(1) Հովհաննես 7.37-39

_____

_____

_____

_____

(2) Հովհաննես 14.23

_____

_____

_____

_____

ՆՇՈՒՄՆԵՐ. «Բնակություն» բառը թարգմանված է հունարեն «***մոնե՛***» բառից, որը նշանակում է «սենյակ, բնակավայր կամ բնակատեղ»:

(3) Հռոմեացիների 8.9

ՆՇՈՒՄՆԵՐ. Այս հատվածը պետք է դիտարկել ոչ միայն որպես զգուշացում, այլև՝ որպես մեծ քաջալերանք: Սուրբ Հոգին բնակվում է ամեն իրական հավատացյալի ներսում՝ սկսած ամենահասուն քրիստոնյայից մինչև վերջերս դարձի եկածը:

բ. *Ի՞նչ է սովորեցնում Եփեսացիների 1.13,14-ը Հոգու կնիքի մասին հավատացյալների կյանքում:*

ՆՇՈՒՄՆԵՐ. «Կնքված» բառը թարգմանված է հունարեն «***սփրագի՛զո***» բառից, որը նշանակում է «դրոշմել կնիքով կամ նշան դնել»: Աստվածաշնչում այս բառը փոխանցում է երեք գաղափար. (1) սեփականություն կամ տիրապետում (Բ Կորնթացիների 1.22, Հայտնություն 7.2,3), (2) ապահովություն (Մատթեոս 27.66, Եփեսացիների 4.30) և (3) վավերացում ու հավանություն (Հովհաննես 3.33, 6.27): «Գրավ» բառը թարգմանված է հունարեն «***արրաբո՛ն***» բառից, որը նշանակում է «ավանդ, գրավ կամ կանխավճար՝ վերջնական գնումը երաշխավորելու համար» (օրինակ՝ կանխավճար՝ ամբողջական վարձատրության խոստմամբ): Սուրբ Հոգին, Ով ներբնակվում է հավատացյալի մեջ, արթնացնում և զորացնում է նրան, նույնպես Աստծո սեփականության կնիքն է և Նրա երաշխիքը, որ մենք վերջնական և ամբողջական փրկություն կստանանք Նրա ներկայության մեջ: Մեր Աստված՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, փրկիչ Աստված է: Հայրը, Ով ծրագրեց մեր փրկությունը և վերահսկում է այն ամենայն մանրամասնությամբ, Աստված է: Որդին, Ում Անձից և աշխատանքից կախված է մեր փրկությունը, Աստված է: Հոգին, Ով ներբնակվում է մեզանում և կնքում է մեզ փրկության օրվա համար, Աստված է (Եփեսացիների 4.30): Երրորդության ամեն Անձ, Ով ներգրավված է մեր փրկության մեջ, լիարժեք Աստված է: Այդ իսկ պատճառով, մենք կարող ենք անսասան վստահություն ունենալ, որ Աստված, Ով սկսեց Իր բարի գործը մեզանում, անպայման կավարտի այն (Փիլիպեցիների 1.6):

Գլուխ 48. Աստծո անունները

ԱՆՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Եբրայերեն մշակույթում անունը՝ պարզապես մարդուն անվանելու միջոց չէ, այլ՝ անձի արտահայտում կամ հայտնություն: Աստվածաշնչում կան բազմաթիվ նման օրինակներ: «Աբրահամ» անունը նշանակում է «բազմության հայր» (Ծննդոց 17.5): «Հակոբ» անունը նշանակում է «նա, ով բռնում է կրունկից» կամ «նա, ով գրավում է մեկ ուրիշի դիրքը» (Ծննդոց 25.26, 27.36): «Նաբաղ» անունը նշանակում է «անզգամ» (կամ՝ «հիմար») (Ա Թագավորաց 25.25): «Բառնաբաս» անունը նշանակում է «մխիթարության որդի» (Գործք 4.36): Բոլոր այս անուններն արտացոլում են դրանք կրողների ինքնությունը: Նմանապես, Աստծո անունն անբաժանելի է Նրա Անձից և ճշմարտապես հայտնում է, թե ով է Նա: Աստծո ամեն անունը ինչ-որ ճշմարտություն է ցույց տալիս Նրա էության մասին:

ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Այս վերջին գլխում մենք կուսումնասիրենք Աստծո անունները: Մեր ուսումնասիրության այս մասում չկա ոչ մի վարժություն: Պարզապես ուշադրությամբ և աղոթքով ուսումնասիրեք Աստծո անուններից ամեն մեկը:

***Աստված* (եբրայերեն *«Էլ»*)**

«Էլ» բառն Աստծուն վերագրվող ամենահին և ամենատարածված անունն է սեմական ժողովուրդների մոտ (բաբելերենով, փյունիկերենով, արամեերենով և եբրայերենով): Այս բառի ճշգրիտ իմաստը պարզ չէ: Այն, հավանաբար, իշխանության, զորության, մեծության և արքայական վեհության իմաստ է կրում: Այս անունն Աստվածաշնչում օգտագործվում է 208 անգամ (օրինակ՝ Ելից 34.14, Սաղմոս 19.1, Եսայի 43.12):

***Աստված* (եբրայերեն *«Էլոահ»*)**

«Էլոահ» բառի ճշգրիտ իմաստը պարզ չէ: Ամենայն հավանականությամբ, այն նույնպես իշխանության, զորության, մեծության և արքայական վեհության իմաստ է կրում: Այս բառը Հին կտակարանում օգտագործվում է 56 անգամ, որից 41-ը՝ Հոբի գրքում (օրինակ՝ Հոբ 22.12, 27.3, 27.8, 33.12, 37.22, 40.2):

***Աստված* (եբրայերեն *«Էլոհիմ»*)**

«Էլոհիմ» բառը՝ Աստծո առաջին անունն է, որը հայտնվում է Աստվածաշնչում (Ծննդոց 1.1) և վերագրվում է Աստծուն ավելի հաճախ (2.570 անգամ), քան ցանկացած այլ անուն Աստվածաշնչում՝ ***բացառությամբ մեկի***: *«Էլոհիմ»* անունը, հավանաբար, *«Էլոահ»* անվան հոգնակի ձևն է և փոխանցում է նույն գաղափարը զորության և իշխանության մասին: Աստվածաշնչում *«Էլոհիմ»* բառը թարգմանվում է չորս տարբեր կերպով՝ կախված համատեքստից: Այս խոսքը կարող է վերաբերել (1) Աստծուն, (2) այլ աստվածների, (3) հրեշտակների կամ (4) դատավորների: Այն, որ *«Էլոհիմ»* բառը հոգնակի ձևով է, ունի երկու հնարավոր մեկնություն: Առաջինը՝ բոլոր սեմական լեզուներն օգտագործում են հոգնակի ձևը՝ բացառիկություն կամ եզակիություն արտահայտելու համար: Օրինակ՝ փոքրիկ լճակը պարզապես անվանում են

«ջուր», իսկ մեծ ծովը կամ օվկիանոսը՝ «ջրեր»: Հոգնակի *«Էլոհիմ»* բառն օգտագործվում է Աստծո վերաբերյալ ոչ թե այն պատճառով, որ կա մեկից ավելի Աստված, այլ որովհետև Նա մեծ և անզուգական է և միակ ճշմարիտ Աստված է, Ով վեր է բոլոր աստվածներից: Երկրորդը՝ հոգնակի *«Էլոհիմ»* բառը կարող է վերաբերել Երրորդության Անձերին:

***Աստված* (արամերեն *«Էլահ»* / հունարեն *«Թեոս»*)**

Արամերեն *«Էլահ»* բառը թարգմանվում է «Աստված» բառով (Եզրասի 4.8-6.18, 7.12-26) և (Դանիելի 2.4-7.28) գրքերի արամերենով գրված հատվածներում: Հունարեն «թեոս» բառը Նոր կտակարանում թարգմանվում է «Աստված» բառով: Այս երկու բառերը որևէ նոր հասկացություններ չեն ներմուծում Աստծո մասին՝ այն ամենից բացի, ինչ արդեն գրված է Աստվածաշնչում: Օգտագործելով դրանք՝ Աստվածաշնչի հեղինակները չեն առաջադրում այն սխալական գաղափարները, որոնք հույն և արամեացի ժողովուրդներն ունեին Աստծո մասին:

***Բարձրյալ* (եբրայերեն «Էլիոն» / արամերեն *«Իլլայ»* / հունարեն *«Հուպսիստոս»*)**

Եբրայերեն *«Էլիոն»* բառը թարգմանվում է «Բարձրյալ» բառով և փոխանցում է Աստծո բարձր դիրքի և աննկարագրելի մեծության իմաստը: Սաղմոս 97.9-ում գրված է. «Որովհետև Դու, ո՛վ Տեր, բարձրյալ ես ամբողջ երկրի վրա, շատ բարձրացար բոլոր աստվածներից»: Դանիելի գրքի արամերենով գրված հատվածներում «Բարձրյալ» բառը թարգմանված է արամերեն *«իլլայ»* բառից (Դանիել 3.26, 4.34): Նոր կտակարանում այս բառը թարգմանված է հունարեն «հուպսիստոս» բառից (Մարկոս 5.7, Ղուկաս 1.32,35,76, 6.35, 8.28, Գործք 16.17, Եբրայեցիների 7.1):

***Ամենակարող* (եբրայերեն *«Շադդայ»* / հունարեն *«Պանտոկրա՛տոր»*)**

Եբրայերեն *«շադդայ»* բառը թարգմանվում է «Ամենակարող» բառով և փոխանցում է Աստծո անսահման զորության իմաստը: Յոթանասունից թարգմանության մեջ (եբրայերեն Հին կտակարանի հունարեն թարգմանությունը) այս բառը թարգմանված է «պանտոկրատոր» (ամենազոր) բառով: Լատիներեն Վուլկաթայի մեջ այն թարգմանված է «օմնիպոտենս» բառով, որից էլ առաջացել է անգլերեն «ամենակարող» բառը:

***Տեր* (եբրայերեն *«Ադոն», «Ադոնայ»*)**

«Ադոն» անունն ունի և՛ իշխանության, և՛ սեփականատիրության իմաստ: Երբ այս անունն Աստվածաշնչում հոգնակի թվով է (այսինքն՝ *Ադոնայ*), այն մշտապես վերաբերում է Աստծուն: Հոգնակի ձևն ուժգնացնում է իմաստը. Աստված ամեն ինչի բացարձակ Տերն է՝ առանց բացառության (նման՝ *«Էլոհիմ»* անվանը՝ վերևում): «Ադոնայ» տիտղոսը ցույց է տալիս Աստծո իշխանությունը ամբողջ ստեղծագործության վրա: Այն նույնպես շատ բան է ցույց տալիս մեզ Աստծո և Իր ժողովրդի հարաբերությունների մասին: Որպես Սեփականատեր և Տիրակալ՝ Աստված հանձն է առնում հոգալ Իր ժողովրդի մասին և լրացնել նրանց կարիքները: Որպես Տիրոջ ծառաներ՝ մենք պետք է հանձն առնենք ծառայել Նրան բացարձակ հնազանդությամբ: «Ադոնայ» անունն օգտագործվում է Աստվածաշնչում 456 անգամ:

***Տեր* (եբրայերեն *«Յահվեհ»* կամ *«Եհովա»*)**

«Յահվեհ» անունը՝ Աստծո անձնական անունն է, որն ամենից հաճախ է օգտագործվում Աստվածաշնչում (6.825 անգամ): Եբրայերենում այս անունը գրված է քառատառով՝ *«ՅՀՎՀ»*: *«Յահվեհ»* բառի ճշգրիտ ար-

տասանությունը հայտնի չէ: Աստվածաբանների մեծ մասը համարում է, որ *«Յահվեհ»* բառն առաջանում է եբրայերեն «հայահ» բառից, որը նշանակում է «լինել» (կարդացե՛ք Ելից 3.14): Այս անունը փոխանցում է Աստծո հավիտենական, անփոփոխ և եզակի լինելը: Կարևոր է հասկանալ, որ Տեր Հիսուս Քրիստոսը վերագրեց այս անունն Իրեն (Հովհաննես 8.58, 59)՝ դրանով իսկ հաստատելով Իր աստվածությունը:

***Տեր* (եբրայերեն *«Յահ»*)**

«Յահ» անունը *«Յահվեհ»* անվան կրճատ ձևն է: Աստվածաշնչում այն հայտնվում է 48 անգամ, հիմնականում՝ Սաղմոսների գրքում, *«Ալելուի՛ա»* բացականչության մեջ (որը նշանակում է «Փա՛ռք Յահվեհին» կամ «Փա՛ռք Տիրոջը»): *«Յահ»* բառը նույնպես կազմում է Աստվածաշնչում եղող մի շարք անձնանունների մասը (*օրինակ*՝«Եղիա» - «Իմ Աստված՝ Յահվեհն է» կամ «Յահվեհը՝ Աստված է»):

***Տեր* (հունարեն *«կյո՛ւրիսոս»* կամ *«կիրիոս»*)**

Հույների համար *«կյուրիոս»* բառը կարող է նշանակել բարձր դիրք և իշխանություն ունեցող մարդ կամ գերբնական էակ (այսինքն՝ աստված): Այս բառն օգտագործվում է Յոթանասունից թարգմանության մեջ (եբրայերեն Հին կտակարանի հունարեն թարգմանությունը) եբրայերեն *«Յահվեհ»* կամ *«Եհովա»* անվան փոխարեն, ինչպես նաև Նոր կտակարանում՝ փոխանցելու համար հրեական գաղափարը Տեր Աստծո մասին: Այս բառը Նոր կտակարանում օգտագործվում է 640 անգամ՝ Աստծո վերաբերյալ: Հատկանշական է, որ այս բառն օգտագործվում է առանց որևէ վերապահման, երբ խոսքը Հիսուսի մասին է:

***Տեր* (հունարեն *«դեսպո՛տես»*)**

Հունարեն *«դեսպոտե՛ս»* բառն ունի սեփականության և բացարձակ իշխանության իմաստ: Անցյալում «*դեսպոտե՛ս»* էին անվանում տան տիրոջը, ով իշխում էր բացարձակ իշխանությամբ: Ժամանակի ընթացքում այս բառը ձեռք բերեց նոր իմաստ՝ «անսահմանափակ և նույնիսկ բռնապետական քաղաքական իշխանություն ունեցող մարդ», այսինքն՝ բռնակալ: Այնուամենայնիվ, երբ այս բառը վերագրվում է Աստծուն՝ Յոթանասունից թարգմանության մեջ և Նոր կտակարանում, այն չունի որևէ բացասական իմաստ: Աստված Իր ստեղծած ամեն ինչի լիիրավ Իշխանն ու Տերն է: Նրա սրբությունը և արդարությունը երաշխավորում են, որ Նա մշտապես կգործադրի Իր բացարձակ իշխանությունը կատարյալ արդարությամբ: Նոր կտակարանում «*դեսպոտե՛ս»* բառը վերագրվում է Աստծուն վեց անգամ (Ղուկաս 2.29, Գործք 4.24, Բ Տիմոթեոս 2.21, Բ Պետրոս 2.1, Հուդա 4 և Հայտնություն 6.10): Երկրորդ Պետրոս 2.1-ում և Հուդա 4-ում այն հատկապես վերագրվում է Հիսուս Քրիստոսին:

«ՅԱՀՎԵՀ» ԱՆՎԱՆ ԱՎԵԼԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ստորև սեղմ ձևով կդիտարկենք Աստծո բաղադրյալ անունները՝ կազմված *«Յահվեհ»* անվան հետ: Այս անուններից ամեն մեկն ավելի խորը հայտնություն կտա մեզ Աստծո Անձի և գործերի մասին:

***Զորքերի Տեր* (եբրայերեն *«Յահվեհ-Սաբաովթ»*)**

Այս անունը ներկայացնում է Աստծուն որպես ամենակարող Թագավորի և Պատերազմողի, Ով տիրում է Իր ժողովրդին և պաշտպանում է նրանց: «Զորքեր» բառը կարող է վերաբերել (1) հրեշտակներին կամ (2) տիեզերքին՝ արևին, աստղերին և բնության ուժերին: Այս անունը ցույց է տալիս, որ Տերն իշխում է բոլոր

էակների, երևույթների և առարկաների վրա՝ երկրի վրա, տիեզերքում և երկնքում: Նա իրագործում է Իր կատարյալ կամքը, և ոչ ոք չի կարող հակառակվել Նրան (Սաղմոս 24.10, Եսայի 6.1-5, Եսայի 31.4,5):

Բարձրյալ Տեր **(եբրայերեն *«Յահվեհ-Էլիոն»*)**

Այս անունը ցույց է տալիս Յահվեհի գերիշխանությունը, բարձր լինելը և մեծությունը: Աստված՝ ամենի Տերն է, և Նա արժանի է ամբողջ երկրպագությանը և փառաբանությանը (Սաղմոս 7.17, 47.2, 97.9):

Տերը կհոգա (կամ՝ կմատակարարի) **(եբրայերեն *«Յահվեհ-Յիրեհ»*)**

Այս անունը վերագրվեց Աստծուն Աբրահամ նահապետի կողմից Ծննդոց 22.14-ում: Հնազանդվելով Աստծո պատվերին՝ Աբրահամը զոհասեղանին դրեց իր որդի Իսահակին՝ նրան զոհաբերելու համար: Մինչև նա կզարկեր իր որդուն, Աստված արգելեց նրան և մի խոյ տվեց Իսահակի փոխարեն: Այն փրկությունը, որն Աստված տվեց այդ օրը Մորիա սարի վրա, դրդեց Աբրահամին՝ անվանել այդ վայրը *Յահվեհ-Յիրե*: Թեև ճշմարիտ է, որ Աստված զորավոր և հավատարիմ է՝ մեր բոլոր կարիքները հոգալու համար, *Յահվեհ-Յիրեհ* անունը՝ տնտեսական բարգավաճման խոստում չէ, այլ՝ մեղքերից փրկելու խոստում: Մենք պետք է մահանայինք մեր մեղքերի պատճառով (Հռոմեացիների 6.23), բայց *Յահվեհ-Յիրեհը* զոհ մատակարարեց մեր փոխարեն՝ Իր միածին և սիրելի Որդուն: Նա է այն Գառը, որը վերցնում է այս աշխարհի մեղքը (Հովհաննես 1.29): Տնտեսական բարգավաճումը փրկությունից ավելի շեշտադրելը գրեթե հայհոյություն է: Հիսուսը չթափեց Իր արյունը մեր նյութական շահի համար, այլ՝ մեր անձերի փրկության: Անձի փրկությունը թանկ արժե (Սաղմոս 49.8):

Տերը իմ Դրոշն է **(եբրայերեն *«Յահվեհ-Նիսսի»*)**

Այս անունը վերագրվեց Աստծուն Մովսեսի կողմից Ելից 17.15-ում, այն բանից հետո, երբ Աստված պարտության մատնեց ամաղեկացիների բանակը: Հին ժամանակներում զորքերը հավաքվում էին դրոշների շուրջ, երբ պատրաստվում էին կռվի: Այս անունը ցույց է տալիս, որ Տերը՝ Իր ժողովրդի դրոշն է: Երբ մենք հավաքվենք Նրա շուրջ, հաստատ հաղթանակ կտանենք:

Տերը, Ով սրբացնում է **(եբրայերեն *«Յահվեհ-Կադեշ»*)**

Այս անունն առաջին անգամ հայտնվում է Ելից 31.13-ում և մի քանի անգամ էլ՝ Ղևտացիների գրքում (20.8, 21.8,15,23, 22.9,16,32): «Սրբացնել» բառը (եբրայերեն «կադաշ») նշանակում է «առանձնացնել ինչ-որ բան (կամ ինչ-որ մեկին) սովորական գործածությունից և նվիրել կամ ընծայել այն ինչ-որ հատուկ նպատակի»: *Յահվեհ-Կադեշ* անունը բազմաթիվ հրաշալի ճշմարտություններ է հայտնում Աստծո ժողովրդին: Աստված առանձնացրել է մեզ երկրի մնացած ժողովուրդներից, նվիրել է մեզ Իրեն ծառայելուն և գործում է՝ մեզ Իր նման դարձնելու համար:

Տերը իմ Հովիվն է **(եբրայերեն *«Յահվեհ-Ռաահ»*)**

Այս անունը գրված է Աստվածաշնչի ամենահայտնի և ամենասիրելի գլուխներից մեկում՝ Սաղմոս 23-ում: Աստծո ժողովրդի համար *Յահվեհ-Ռաահ* անունը՝ ամենագնահատելի անուններից է: Աստված Իր ժողովրդի Հովիվն է: Նա սիրում է նրանց, կերակրում է, առաջնորդում և պաշտպանում է նրանց թշնամիներից (Ծննդոց 48.15, 49.24, Սաղմոս 28.9, Եսայի 40.11, Եզեկիել 34.12, Միքիա 7.14, Հովհաննես 10, Հայտնություն 7.17): Նոր կտակարանում Աստված ներկա է Հիսուս Քրիստոսում՝ որպես Բարի Հովիվ, Ով դնում է Իր կյանքն Իր ոչխարների համար (Հովհաննես 10.11):

***Տերը քո Բժիշկն է* (եբրայերեն *«Յահվեհ-Ռաֆահ»*)**

Այս անունը գրված է Ելից 15.26-ում, որտեղ Մովսեսը հայտնում է Իսրայելին Աստծո խոստումը. «Եվ ասաց. «Եթե իրավ լսես քո Եհովա Աստծո ձայնին և ինչ որ Նրա աչքի առջև ուղիղ է՝ անես, և Նրա պատվիրաններին ականջ դնես և Նրա բոլոր կանոնները պահես, այն ախտերից ոչ մեկը քեզ վրա չեմ բերի, որոնք եգիպտացիների վրա բերեցի, որովհետև Ես եմ Եհովան՝ քո Բժիշկը»: *Յահվեհ-Ռաֆահ* անունը հավաստիացնում է, որ մենք կարող ենք վստահել Տիրոջ կանխորոշված հոգատարությանը: Նա բժշկել է մեզ մահացու հիվանդությունից՝ մեղքից: Նա նույնպես ի զորու է բժշկելու մեր մարմինը, և մենք կարող ենք վստահ լինել, որ Նա կանի դա, եթե այդ բժշկության միջոցով կատարվի Նրա կամքը և հայտնվի Նրա փառքը:

***Տերը խաղաղություն է* (եբրայերեն *«Յահվեհ-Շալոմ»*)**

Այս անունը գրված է Դատավորաց 6.22-24-ում և ցույց է տալիս Աստծո և Իր ժողովրդի հարաբերությունների ամենակարևոր կողմերից մեկը՝ խաղաղությունը: Այս հատվածում Գեդեոնը զարմանալի հայտնություն ստացավ Աստծո մասին: Նա տեսավ Նրա Հրեշտակին և համոզված էր, որ դրանից հետո մահանալու է: Նման սարսափը բնական է, երբ մեղավոր մարդը հանդիպում է ունենում Սուրբ Աստծո հետ: Այնուամենայնիվ, Աստծո շնորհքը խաղաղության է վերածում սարսափը թե՛ Գեդեոնի, թե՛ Աստծո ամեն զավակի կյանքում: Այս ճշմարտությունը լիարժեք կերպով հայտնվում է Տեր Հիսուս Քրիստոսում, Ով մեր խաղաղությունն է (Եփեսացիների 2.14):

***Տերը այստեղ է (կամ՝ Անձամբ ներկա է)* (եբրայերեն *«Յահվեհ-Սամա»*)**

Այս անունը գրված է Եզեկիել 48.35-ում, որտեղ Աստված խոստանում է Իր ներկայությունը, երբ Նա լիարժեք կերպով վերականգնի Իր ժողովրդին վերջին օրերում: Աստծո ներկայությունը մշտապես հատուկ օրհնություն է եղել Աստծո ժողովրդի համար: Ադամը քայլում էր Աստծո հետ՝ մինչև իր անկումը և իր դատավճիռն ստանալը (Ծննդոց 3.8): Ելից 33.12-16-ում Մովսեսը խնդրեց, որ Աստծո ներկայությունն ուղեկցեր Իսրայելին անապատում: Գ Թագավորաց 8.10,11-ում Աստված օրհնեց Իր ժողովրդին՝ լցնելով տաճարն Իր ներկայությամբ:

Նոր կտակարանում Աստծո ներկայության խոստումը կատարելապես իրականացավ Հիսուս Քրիստոսի միջոցով: Նրանում Աստված մարմին դարձավ և բնակվեց մարդկանց մեջ (Հովհաննես 1.1,14): Եկեղեցում Աստված բնակվում է ոչ միայն Իր ժողովրդի հետ, այլև Իր ժողովրդի ներսում՝ Սուրբ Հոգու միջոցով (Հովհաննես 14.17): Երբ ամեն ինչ ավարտվի, Աստված կբնակվի Իր ժողովրդի հետ Նոր երկնքում և Նոր երկրի վրա (Հայտնություն 21.1-3):

***Տերը մեր Արդարությունն է* (եբրայերեն *«Յահվեհ-Ցիդկենու»*)**

Այս անունը գրված է Երեմիա 23.5,6-ում: Այս հատվածում Աստված խոստանում է, որ Մեսիան և՛ «կփրկի» Իր ժողովրդին, և՛ «կթագավորի» նրանց վրա կատարյալ արդարությամբ: Այս մարգարեությունը կատարելապես իրականացել է Հիսուս Քրիստոսում: Իր կատարյալ կյանքի և քավող զոհի միջոցով Քրիստոսն արդարացրել է Իր ժողովրդին և թագավորում է նրանց վրա կատարյալ արդարությամբ: Մեր արդարությունը մեզնից չէ. Տեր Հիսուս Քրիստոսն է մեր արդարությունը:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐ, ՏԻՏՂՈՍՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր դասընթացն ամփոփելու համար մենք արագորեն կդիտարկենք այն բազմաթիվ անունները, տիտղոսները և փոխաբերությունները, որոնք վերագրվում են Աստծուն Աստվածաշնչում: Ամեն մի անուն ավելի խորը հայտնություն կտա մեզ Աստծո Անձի և գործերի մասին:

Անուններ, որոնք արտացոլում են Աստծո փառքը և մեծությունը (8)

Աստվածների Աստված. Երկրորդ Օրինաց 10.17, Սաղմոս 136.2, Դանիել 2.47, 11.36
Փառքի Աստված. Սաղմոս 29.3, Գործք 7.2
Աստված վերևում՝ Երկնքում, և ներքևում՝ երկրի վրա. Հեսու 2.11
Աներևույթ Աստված. Կողոսացիների 1.15
Երանելի Աստված. Ա Տիմոթեոս 1.11
Մեծավայելչության փառքը. Բ Պետրոս 1.17
Մեծափառությունը Երկնքում. Եբրայեցիների 8.1
Սիավորը. Սաղմոս 76.11

Անուններ, որոնք արտացոլում են Աստծո հավիտենական էությունը (6)

Հավիտենական Աստված. Ծննդոց 21.33, Երկրորդ Օրինաց 33.27, Եսայի 40.28, Հռոմեացիների 16.26
Հինավուրցը. Դանիել 7.9,10,13,14,22
Ես Եմ. Ելից 3.13,14, Հովհաննես 8.56-58
Ալֆա և Օմեգա. Հայտնություն 1.8, 21.6, 22.13
Սկիզբը և Վերջը. Հայտնություն 21.6
Առաջինը և Վերջինը. Եսայի 41.4, 44.6, Հայտնություն 22.13

Անուններ, որոնք արտացոլում են Աստծո սրբությունը և արդարությունը (6)

Ամենասուրբը կամ Սուրբը. Առակաց 9.10, Եսայի 40.25, 43.15, Ովսե 11.9, Ամբակում 1.12
Սուրբ Աստված. Ա Թագավորաց 6.20
Նախանձոտ Աստված. Հեսու 24.19
Իրավունքի Աստված. Եսայի 30.18
Արդար Դատավոր. Սաղմոս 7.11

Անուններ, որոնք արտացոլում են Աստծո զորությունը և գերիշխանությունը (28)

Ստեղծողը. Հռոմեացիների 1.25
Ճարտարապետը և Արարիչը. Եբրայեցիների 11.10
Տեր երկնքի և երկրի. Ծննդոց 14.19,22
Բրուտը. Հռոմեացիների 9.20,21
Հզորը. Ղուկաս 1.49
Ամեն մարմնի Աստված. Երեմիա 32.27
Ամբողջ երկրի Աստված. Եսայի 54.5
Երկրի բոլոր թագավորությունների Աստված. Եսայի 37.16

Հզոր Աստված. Եսայի 9.6
Մեծ և ահեղ Աստված. Նեեմիա 1.5
Մեծ, հզոր և ահեղ Աստված. Երկրորդ Օրինաց 10.17
Մեծ թագավոր ամեն աստվածների վրա. Սաղմոս 95.3
Մեծ թագավոր ամեն երկրի վրա. Սաղմոս 47.2
Կենդանի Աստված և հավիտենական Թագավոր. Երեմիա 10.10
Հավիտենից, Անեղծ (Անմահ, NASB) և Աներևույթ Աստված. Ա Տիմոթեոս 1.17
Իմ Թագավորն սկզբից. Սաղմոս 74.12
Ամեն երկրի Թագավորը. Սաղմոս 47.7
Ազգերի Թագավոր. Երեմիա 10.7
Երկնքի Թագավոր. Դանիել 4.37
Թագավորների Թագավոր. Ա Տիմոթեոս 6.15, Հայտնություն 17.14, 19.16
Երկնքի Տեր. Դանիել 5.23
Ամեն երկրի Տերը. Սաղմոս 97.5 (NASB)
Թագավորների Տերը. Դանիել 2.47
Տերերի Տեր. Երկրորդ Օրինաց 10.17, Սաղմոս 136.3, Ա Տիմոթեոս 6.15, Հայտնություն 19.16
Հունձքի Տերը. Մատթեոս 9.37,38
Երանելին և միակ Հզորը. Ա Տիմոթեոս 6.15
Օրենսդիրը. Եսայի 33.22, Հակոբոս 4.12

Անուններ, որոնք արտացոլում են Աստծո դատաստանը և բարկությունը (7)

Նախանձոտ Աստված. Ելից 20.4,5, Երկրորդ Օրինաց 4.24, Հեսու 24.19,20
Մաշող կամ Փչացնող Կրակ. Երկրորդ Օրինաց 4.24, Եբրայեցիների 12.29
Նախանձոտ և վրեժխնդիր Աստված. Նաում 1.2
Հատուցող Աստված. Երեմիա 51.56
Մարդիկ Դիտող. Հոբ 7.20
Ամբողջ երկրի Դատավորը. Ծննդոց 18.25, Սաղմոս 94.2
Արդար Դատավոր. Սաղմոս 7.11

Անուններ, որոնք արտացոլում են Աստծո հարաբերություններն Իր ժողովրդի հետ

Աստված՝ Իր ժողովրդի միակ աստված և արարիչն է (4)

Ճշմարիտ Աստված. Երեմիա 10.10, Հովհաննես 17.3
Ստեղծողը. Եսայի 43.15, 44.2,21, 43,7
Հավատարիմ Ստեղծող. Ա Պետրոս 4.19
Ստեղծողը (Կազմողը, NASB) Սաղմոս 95.6, 149.2,3, Սաղմոս 54.5

Աստված մտերիմ է Իր ժողովրդի հետ (10)

Հայր. Սաղմոս 103.13, Եսայի 64.8, Մաղաքիա 1.6, 2.10, Հովհաննես 20.17, Ա Հովհաննես 3.1
Սուրբ Հայր. Հովհաննես 17.11
Արդար Հայր. Հովհաննես 17.25
Գթությունների Հայր. Բ Կորնթացիների 1.3

Լույսի Հայր. Հակոբոս 1.17
Փառքի Հայր. Եփեսացիների 1.17
Երկնավոր Հայր. Մատթեոս 6.14
Հոգիների Հայր. Եբրայեցիների 12.9
Աբբա Հայր. Հռոմեացիների 8.15, Գաղատացիների 4.6
Այր (Ամուսին, NASB). Եսայի 54.5

ԱՍՏՎԱԾ ՀԱՎԱՏԱՐԻՄ Է. ՆԱ ՍԻՐՈՒՄ ԵՎ ՆԵՐՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ (9)

Ճշմարիտ Աստված. Սաղմոս 31.5, Եսայի 65.16
Հավատարիմ Աստված. Երկրորդ Օրինաց 7.9
Ողորմած Աստված. Երկրորդ Օրինաց 4.31
Գթած և ողորմած Աստված. Նեեմիա 9.31, Սաղմոս 86.15
Ներող Աստված. Սաղմոս 99.8
Ամեն շնորհքի Աստված. Ա Պետրոս 5.10
Խաղաղության Աստված. Հռոմեացիների 15.33, 16.20, Ա Թեսաղոնիկեցիների 5.23, Եբրայեցիների 13.20
Սիրո և խաղաղության Աստված. Բ Կորնթացիների 13.11
Ամեն մխիթարության Աստված. Բ Կորնթացիների 1.3

ԱՍՏՎԱԾ ԹԱԳԱՎՈՐՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՎՐԱ (4)

Թագավոր. Եսայի 33.22, 43.15
Մեծ Թագավոր. Սաղմոս 48.2
Օրենսդիր. Եսայի 33.22, Հակոբոս 4.12
Դատավոր. Եսայի 33.22, Հակոբոս 4.12, 5.9

ԱՍՏՎԱԾ ՓՐԿՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ (9)

Փրկիչ (Փրկագնող, NASB). Հոբ 19.25, Սաղմոս 19.14, Եսայի 44.24, 54.5, Երեմիա 50.34
Փրկիչ (Փրկագնող, NASB)՝ վաղուց ի վեր. Եսայի 63.16
Իմ փրկության Եղջյուրը. Բ Թագավորաց 22.3
Փրկիչ (Ազատող, NASB). Բ Թագավորաց 22.2, Սաղմոս 40.17. Սաղմոս 144.2
Փրկության Զորություն. Սաղմոս 28.8
Փրկություն. Ելից 15.2, Սաղմոս 27.1, 62.1,2, 118.14, Եսայի 12.2
Փրկիչ կամ Ազատիչ. Բ Թագավորաց 22.3, Եսայի 45.21, Ղուկաս 1.47, Ա Տիմոթեոս 1.1, Հուդա 25
Ամեն մարդկանց Փրկիչ. Ա Տիմոթեոս 4.10
Իմ փրկության Զորությունը. Սաղմոս 140.7

ԱՍՏՎԱԾ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ (26)

Ժայռը կամ Վեմը. Երկրորդ Օրինաց 32.4 (NASB), Երկրորդ Օրինաց 32.31, Բ Թագավորաց 22.2,32,47, Սաղմոս 62.6,7
Հավիտենական Վեմ. Եսայի 26.4
Մեր փրկության Վեմը. Սաղմոս 95.1
Զորավոր Վեմ. Սաղմոս 31.1,2

Իմ զորության Վեմը. Սաղմոս 62.7
Ապավինության Վեմ. Սաղմոս 71.3
Բերդ (Ամրոց, NASB). Բ Թագավորաց 22.2, Սաղմոս 71.3, 91.2, 144.2
Ապավեն կամ Ապաստարան. Սաղմոս 59.9,16,17, 144.2, Երեմիա 16.19
Զորավոր Աշտարակ. Սաղմոս 61.3
Ամուր Աշտարակ. Առակաց 18.10
Սրբարան. Եսայի 8.13,14
Ապավեն (Փախստավայր, NASB). Սաղմոս 59.16, 61.3, 62.7, 91.2
Ապաստարան նեղ օրում. Երեմիա 16.19
Ապավեն փոթորկից. Եսայի 25.4
Ապաստան կամ Հովանի (Թաքստոց, NASB). Սաղմոս 32.7, 119.114
Ապավեն (Բնակավայր, NASB). Երկրորդ Օրինաց 33.27, Սաղմոս 91.9
Հովանի տաքությունից. Եսայի 25.4
Իմ կյանքի Զորությունը (Պաշտպանությունը, NASB). Սաղմոս 27.1
Ապաստան աղքատին. Եսայի 25.4
Ապաստան չքավորին նրա նեղության մեջ. Եսայի 25.4
Վահան, Ասպար, Պահապան. Ծննդոց 15.1, Բ Թագավորաց 22.3,31, Սաղմոս 3.3, 28.7, 115.9-11, 119.114, 144.2, Առակաց 2.7, 30.5
Օգնության Ասպար. Երկրորդ Օրինաց 33.29
Հրեղեն Պարիսպ. Զաքարիա 2.5
Որբերի Հայր. Սաղմոս 68.5
Որբևայրիների Դատավոր. Սաղմոս 68.5
Իմ սրտի Ուժը. Սաղմոս 73.26

<u>Աստվածը պայքարում է իր ժողովրդի համար</u> (6)

Հզոր, Պատերազմող. Ելից 15.3, Եսայի 42.13
Պատերազմի Մարդ. Եսայի 42.13
Զորավոր Ախոյան. Երեմիա 20.11
Քո հաղթության Սուրը. Երկրորդ Օրինաց 33.29
Մաշող Կրակ. Երկրորդ Օրինաց 9.3
Առյուծ. Եսայի 31.4,5

<u>Աստվածը օգնում է իր ժողովրդին</u> (4)

Զորություն. Ելից 15.2, Սաղմոս 18.1, 28.8, Երեմիա 16.19, Ամբակում 3.19
Օգնական. Սաղմոս 30.10, Եբրայեցիների 13.6
Նեցուկ. Սաղմոս 18.18
Շատ Օգնական նեղությունների մեջ. Սաղմոս 46.1

<u>Աստվածը պահպանում է իր ժողովրդին</u> (7)

Արև. Սաղմոս 84.11, Մաղաքիա 4.2
Հովանի. Սաղմոս 121.5, Եսայի 25.4
Ցող. Ովսե 14.5

ՃԱՆԱՉԵԼ ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏԾՈՒՆ

Կենաց ջրի Աղբյուր. Երեմիա 2.13, 17.13
Կյանք. Հովհաննես 14.6, Կողոսացիների 3.4
Լույս. Սաղմոս 27.1, Միքիա 7.8, Ա Հովհաննես 1.5
Հավիտենական Լույս. Եսայի 60.19,20

Աստված հոգում է իր ժողովրդի համար (10)

Աստված, Ով տեսնում է. Ծննդոց 16.7-14
Հովիվ. Սաղմոս 23.1, Եսայի 40.11, Եզեկիել 34.11-16
Հովվապետ. Ա Պետրոս 5.4
Մեծ Հովիվ. Եբրայեցիների 13.20
Բարի Հովիվ. Հովհաննես 10.11,14
Մեր հոգիների (կամ՝ անձերի) Հովիվը և Տեսուչը. Ա Պետրոս 2.25
Մշակ (խաղողի այգու). Հովհաննես 15.1,2
Բրուտ. Եսայի 64.8, Երեմիա 18.1-6
Ճրագ. Բ Թագավորաց 22.29
Պահապան. Սաղմոս 121.5

Աստված իր ժողովրդի վարձատրությունն է (6)

Ժառանգություն. Թվոց 18.20, Երկրորդ Օրինաց 10.9, 18.2, Հեսու 13.33, Եզեկիել 44.28
Կալվածք. Եզեկիել 44.28
Բաժին. Թվոց 18.20
Զարդի Պսակ. Եսայի 28.5
Շքեղ Թագ. Եսայի 28.5
Գովություն կամ Գովասանք (Երգ, NASB). Ելից 15.2, Եսայի 12.2

HeartCry

ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայացք «HeartCry» Միսիոներական ընկերությանը.

«HeartCry» Միսիոներական ընկերությունը հիմնադրվել է 1988 թվականին, Պերուի Հանրապետությունում: Մենք ցանկանում էինք աջակցել տեղացի միսիոներներին՝ իրենց ժողովրդին հասնելու և աստվածաշնչյան եկեղեցիներ հիմնելու համար: Այդ ժամանակվանից ի վեր Տերն ընդլայնել է մեր սահմանները. ներկայումս աշխատանք ենք իրականացնում ոչ միայն Հյուսիսային Ամերիկայում, Լատինական Ամերիկայում, այլև Աֆրիկայում, Ասիայում, Եվրասիայում, Եվրոպայում և Մերձավոր Արևելքում:

Մեր ծառայության նպատակն է՝ օժանդակել տեղացի միսիոներների աշխատանքն ամբողջ աշխարհում: Մեր ռազմավարությունն ունի չորս հիմնական ուղղություն. ֆինանսական աջակցություն, աստվածաբանական ուսուցում, Աստվածաշնչերի և հոգևոր գրականության տարածում և ցանկացած միջոցների տրամադրում, որոնք անհրաժեշտ են Մեծ Հանձնարարականն իրականացնելու համար:

Ներկայումս, աշխարհի շուրջ 40 երկրներում մենք աջակցում ենք ավելի քան 240 միսիոներական ընտանիքի:

Ծանոթացում «HeartCry»-ի հետ

«HeartCry» Միսիոներական ընկերությունը հիմնադրվել է և մինչև օրս գոյություն ունի՝ չորս հիմնական նպատակ իրագործելու համար.

- Փառք բերել Աստծուն
- Ծառայել մարդկանց
- Հիմնել աստվածաշնչյան եկեղեցիներ
- Հայտնել Աստծո հավատարմությունը

1. Փառք բերել Աստծուն

Մեր առաջին գլխավոր նպատակը՝ Աստծուն փառք բերելն է: Ամենից առավել մենք ցանկանում ենք, որ Նրա անունը մեծարվի ազգերի մեջ «արեգակի ելքից մինչև նրա մուտքը» (Մաղաքիա 1.11), և որ մորթված Գառն ստանա Իր չարչարանքների լիարժեք վարձատրությունը (Հայտնություն 7.9,10): Մեր գլխավոր նպատակը և դրդապատճառը ո՛չ մարդն է, և ո՛չ նրա կարիքները, այլ՝ Աստված, Նրա նվիրվածությունն Իր փառքին, և մեր աստվածատուր ցանկությունը, որ Նա երկրպագություն ստանա բոլոր ազգերից, ցեղերից, ժողովուրդներից և լեզուներից: Մենք վստահում ենք ոչ թե այն փաստին, որ Եկեղեցին ի զորու է կատարել Մեծ Հանձնարարականը, այլ՝ որ Աստված ունի անսահմանափակ և անարգել զորություն, որպեսզի իրականացնի այն ամենը, ինչ որոշել է:

2. Ծառայել մարդկանց

Մեր երկրորդ գլխավոր նպատակը՝ կորսված և մահվան մատնված մարդկանց փրկությունն է: Այն քրիստոնյան, ով ճշմարտապես ձգտում է փառավորել Աստծուն և վստահ է, որ գերագույն իշխանությունը պատկանում է Նրան, անտարբեր չի լինի ամբողջ աշխարհում ապրող միլիարդավոր մարդկանց հանդեպ, ովքեր դեռ պետք է լսեն Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Եթե մենք ճշմարտապես նման ենք Քրիստոսին, մարդկության կորսված բազմությունները մեզանում կառաջացնեն գթասրտություն (Մատթեոս 9.36), նույնիսկ՝ մեծ տրտմություն և չփարատվող վիշտ (Հռոմեացիների 9.2): Մեր քրիստոնեական դավանությունը պետք է վիճարկելի համարել, եթե մենք չենք ցանկանում անել այն ամենը, ինչ կարող ենք, որպեսզի հայտնի դարձնենք Քրիստոսի անունն ազգերի մեջ և ամեն բան կրենք Աստծո ընտրյալների համար (Բ Տիմոթեոս 2.10):

3. Հիմնել աստվածաշնչյան եկեղեցիներ

Մեր երրորդ գլխավոր նպատակը՝ աստվածաշնչյան եկեղեցիներ հիմնելն է: Թեև մենք գիտակցում ենք, որ մարդկությունն ունի բազմաթիվ կարիքներ և ապրում է տառապանքի մեջ, մենք համոզված ենք, որ այդ ամենը ունի մեկ պատճառ. մարդու սիրտը խիստ ապականված է, թշնամաբար է տրամադրված Աստծո հանդեպ և մերժում է ճշմարտությունը: Այդ իսկ պատճառով, մենք հավատում ենք, որ մարդկանց ծառայելու լավագույն միջոցն է՝ քարոզել Ավետարանը և հիմնել տեղական եկեղեցիներ, որոնք կհռչակեն Աստվածաշնչի ամբողջ խորհուրդը և կծառայեն՝ համաձայն Աստծո Խոսքի պատվիրանների, դրույթների և իմաստության: Այսպիսի աշխատանքը չի կարող կատարվել մարդկային ուժերով, այլ միայն Աստծո գերբնական կանխատեսմամբ և այն միջոցներով, որոնք Նա սահմանել է՝ Աստծո Խոսքի քարոզումը, բարեխոսական աղոթքը, զոհաբերող ծառայությունը, անպայմանական սերը և ճշմարիտ քրիստոսանմանությունը:

4. Հայտնել Աստծո հավատարմությունը

«HeartCry» Միսիոներական ընկերության չորրորդ և վերջին գլխավոր նպատակն է՝ ցույց տալ Աստծո ժողովրդին, որ Նա ճշմարտապես կարող է և ցանկանում է հոգալ մեր բոլոր կարիքներն Իր հարստության չափով, փառքով: Ծառայության կարիքները լրացված կլինեն աղոթքի միջոցով: Մենք չենք պատրաստվում միջոցներ ձեռք բերել ինքնագովազդման միջոցով, և ո՛չ էլ Քրիստոսի մեջ մեր եղբայրներին և քույրերին պարտադրելով կամ շահարկելով: Եթե այս ծառայությունը Տիրոջից է, ուրեմն Նա էլ կլինի մեր Հովանավորը: Եթե Նա մեզ հետ է, Նա կառաջնորդի մարդկանց՝ մեզ միջոցներ տրամադրելու համար, և մենք կբարգավաճենք: Եթե Նա մեզ հետ չէ, մենք հաջողություն չենք ունենա և չպետք է ունենանք: Պետք է խոստովանենք, որ այս ծառայության գոյության տարիների ընթացքում մեր հավատքը ոչ բավարար և թույլ է եղել, բայց Աստված միշտ հավատարիմ է եղել: Ինչպես մի հրաշալի եղբայր ասում է. «Մեր Աստծուն հաճելի է պաշտպանել նույնիսկ նվազագույն վստահությունը, որն ունեն Իր զավակները»:

Կոչ

Որպես քրիստոնյաներ՝ մենք ունենք կոչում, հանձնարարություն և պատվիրան՝ դնելու մեր կյանքը, որպեսզի Ավետարանը քարոզվի երկնքի տակ ապրող ամեն ստեղծվածի: Աստծուն սիրելուց հետո սա պետք

է լինի մեր երկրորդ «մոլուցքը»: Չկա առավել ազնվագույն առաջադրանք, որի համար արժե տալ մեր կյանքը, քան Աստծո փառքը տարածելը, այսինքն՝ մարդկանց փրկության բերելը Հիսուս Քրիստոսի Ավետարանը քարոզելու միջոցով: Եթե քրիստոնյան ճշմարտապես հնազանդ է Մեծ Հանձնարարականին, նա կա՛մ կտա իր կյանքը՝ հանքը իջնելու համար, կա՛մ կպահի իջնողի պարանը (Վիլյամ Քերի): Երկու դեպքում էլ անհրաժեշտ է նույն վճռական նվիրվածությունը:

Իմացե՛ք ավելին.

Այցելե՛ք մեր **«www.heartcrymissionary.com»** կայքը՝ մեր ծառայության մասին ավելին իմանալու համար. թե որն է մեր նպատակը, ինչին ենք հավատում և ինչպես ենք գործում: Բացի այդ՝ դուք կարող եք ծավալուն տեղեկություններ ստանալ այն միսիոներների մասին, որոնց մենք ծառայելու արտոնություն ունենք:

«ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՄԱՐ», ՀԱՍՏԱՏԵԼ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

«Փոլ Վոշերի ուսումնական ձեռնարկը՝ Աստծո մասին վարդապետությունը ներկայացնող լավագույն ներածական աշխատանքն է, որը հայտնի է ինձ»:

— **Յան Հ. Մյուրի,** «Ճշմարտության դրոշ» հիմնադրամի համահիմնադիր և գլխավոր խմբագիր

Միայն աստվածաշնչյան ճշմարտությունները, որոնք փոխանցվում են վարդապետական ուսմունքի միջոցով և հասկացվում են մտքով, կարող են լինել այն հաստատ հիմքը, որի վրա պետք է կառուցենք մեր համոզմունքները և վարքը, և որոշենք մեր զգացմունքների ու փորձառությունների վավերական լինելը: Վարդապետական ուսուցումը և՛ զարգացնում է մեր միտքը, և՛ ամրացնում մեր նվիրումը: Այն ջերմեռանդ որոնում է, ձգտում՝ առ Աստված, որը պետք է առաջնորդի ուսանողին ավելի մեծ անձնական վերափոխման, հնազանդության և սրտանց երկրպագության:

«Ճանաչել կենդանի Աստծուն» գիրքը գլխավորապես աստվածաշնչյան ուսումնական ձեռնարկ է և չի պարունակում զուսնազարդ պատկերներ, հետաքրքրաշարժ պատմություններ և նույնիսկ՝ աստվածաբանական մեկնություններ: Հեղինակը ցանկացել է ստեղծել այնպիսի աշխատություն, որը պարզապես մատնացույց է անում Աստվածաշունչը և թույլ է տալիս, որ Աստծո Խոսքը խոսի իր փոխարեն:

Այս դասընթացի մեծագույն նպատակն է, որ ուսանողը հանդիպում ունենա Աստծո հետ Նրա Խոսքի միջոցով: Այս ուսումնական ձեռնարկը հիմնված է այն համոզմունքի վրա, որ Աստվածաշունչը Աստծո ոգեշնչված և անսխալական Խոսքն է, և այնպես է կազմված, որ ուսանողը բառացիորեն անկարող է ընթերցել՝ առանց Աստվածաշունչը բացելու:

Փոլ Վոշերի նախորդ աշխատություններից մեկը՝ **«Միակ ճշմարիտ Աստված»** գիրքը, զգալիորեն ընդլայնվել է, վերանայվել և փոփոխությունների է ենթարկվել: Գրքի նյութը համալրվել է մոտավորապես հարյուր էջով: Ներկայումս այն առաջին գիրքն է նրա՝ «Աստվածաշնչյան հիմունքներ քրիստոնեական հավատքի համար» շարքում, որը հրատարակվել է «Media Gratiae» հրատարակչության կողմից:

Փոլ Դեյվիդ Վոշերը տասը տարի շարունակ միսիոներ է եղել Պերուի հանրապետությունում: Այդ ընթացքում նա հիմնադրել է «HeartCry» Միսիոներական ընկերությունը, որի նպատակն է՝ աջակցել նոր եկեղեցիներ հիմնադրող ծառայողներին Պերուի հանրապետությունում: Ներկայումս Փոլը «HeartCry»-ի Միսիոներական բաժնի տնօրենն է (heartcrymissionary.com), որը Աստծո օրհնությամբ կարողանում է աջակցել միսիոներների՝ աշխարհի տարբեր հատվածներում գտնվող ավելի քան երեսունհինգ երկրում: Նա և կինը՝ Զարոն, ունեն չորս զավակ՝ Յանը, Էվանը, Ռոուենը և Բրոնվինը: